ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ԱԿՆԱՐԿՆԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ



9(47 925)
Կ-53

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ԱԿՆԱՐԿՆԵՐ
## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

3586

ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941 (479.25):32.001
ԳՄԴ 63.3(2Հ)+66
Կ 530

Հրատարակվել է պետական պատվերով և
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Կիրակոսյան Արման
Կ - 530 Ակնարկներ հայկական հարցի և եղեռնի միջազգային ճանաչման պատմության - Եր.: «Տիգրան Մեծ», 2006. - 264 էջ:

Հայկական հարցի պատմության և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրներին նվիրված սույն ժողովածուն կազմված է պատմական գիտությունների դոկտոր Արման Կիրակոսյանի կողմից 1980-ական թթ. վերջին - 90-ական թթ. սկզբին հայերենով և ռուսերենով հրապարակված գիտական և գիտա-հրապարակախոսական հոդվածներից: Այն նախատեսվում է պատմաբանների, քաղաքագետ-միջազգայնագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև հանրապետության և սփյուռքի լայն շրջանակի համար:

Կ 0503020913 / 774(01) 2006 2006թ.

ԳՄԴ 63.3(2Հ)+66

ISBN 99941-0-152-8

© Ա Կիրակոսյան, 2006թ.

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընթերցողին ներկայացվող սույն ժողովածուի մեջ ընդգրկված են հեղինակի կողմից 1980-ական թթ. - 90-ական թթ. սկզբին հրապարակված գիտական, գիտա-հրապարակախոսական, հանրագիտարանային հոդվածներն ու գրախոսականները, որոնք նվիրված են Հայկական հարցի պատմության, տերությունների քաղաքականության, Օսմանյան կայսրության և արևմտահայության խնդիրների առնչությամբ նրանց միջև դիվանագիտական պայքարի, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսական էջերի, 1894-96 թթ. հայկական կոտորածների և 1915 թ. Մեծ Եղեռնի, այս հարցերին վերաբերող արևմտյան պատմագրության, Եղեռնի միջազգային ճանաչման գործընթացի լուսաբանմանն ու պատմության կեղծարարության քննադատությանը: Գրքի մաս չեն կազմել գիտական այն հոդվածները, որոնք հետագայում ընդգրկվել են հեղինակի հրապարակած մենագրություններում (տես՝ Արման Կիրակոսյանի աշխատությունների ամբողջական ցանկը): Հոդվածների մի մասը հրապարակվել է հեղինակի հոր՝ Ջոն Կիրակոսյանի, Ռուբեն Սահակյանի, Ռուբեն Սաֆրաստյանի, Անդրանիկ Միհրանյանի, Գառնիկ Ասատրյանի, Լևոն Էյրամջյանցի, Արտյոմ Օհանջանյանի և Սեդրակ Մանուկյանի համահեղինակությամբ:

Հոդվածներում արծարծված խնդիրների լայն ընդգրկումը, որոնք առ այսօր էլ չեն կորցրել իրենց քաղաքական և գիտական այժմեականությունը, պայմանավորված է դեռևս 1960-70-ական թթ. Հայաստանում հիմնված և ձևավորված քաղաքական հայագիտության երիտասարդ դպրոցի առկայությամբ, որի ներկայացուցիչների նպատակն էր գիտա-հրապարակախոսական ու հանրամատչելի հրապարակումների միջոցով մշտապես տեղյակ պահել հանրապետական, միութենական և սփյուռքահայ լայն ընթերցողին հայ ժողովրդի քաղաքական պատմության,

Եղեռնի միջազգային ճանաչման խնդիրներին, լուսաբանել արևմտյան պատմագրության և մամուլի նյութերը, քննադատել Թուրքիայում, ինչպես նաև այլ երկրներում հրապարակվող պատմության խեղաթյուրումները:

Գիրքը նախատեսված է հայ ժողովրդի քաղաքական պատմության, խորհրդային շրջանի և պատմագրության մասնագետների, թուրքագետների, քաղաքագետ-միջազգայնագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև հանրապետության և սփյուռքի ընթերցող լայն շրջանակի համար:

*Արման Կիրակոսյան*

*Պատմական գիտությունների դոկտոր*



# ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ*

Հայկական հարցը հայ ժողովրդի քաղաքական պատմության, այն է՝ օտարների տիրապետությունից Հայաստանի ազատագրման, Հայկական լեռնաշխարհում ինքնուրույն հայկական պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակներին հասնելու համար մղված հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերի ամբողջությունն է: Հայկական հարցը, որի առաջացումը պայմանավորված էր հայկական պետականության անկումով, դարձել է Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, կարևոր տեղ գրավել միջազգային հարաբերություններում, մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականության մեջ, Օսմանյան կայսրությունում ազդեցության ոլորտների և նրա տիրույթների բաժանման համար նրանց պայքարում: Հայկական հարց տերմինը միջազգային դիվանագիտության մեջ սկսել է գործածվել 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո:

19-րդ դարի 1-ին կեսին Մերձավոր Արևելքի ամենախոշոր պետությունը՝ Օսմանյան կայսրությունը, դարձել էր Եվրոպայի մեծ տերությունների մրցակցության առարկա: Առաջնորդվելով սեփական շահերով և չցանկանալով թույլ տալ մրցակիցների քաղաքական կամ տնտեսական առավելություն Օսմանյան կայսրությունում՝ տերություններից յուրաքանչյուրը բողարկում էր իր ձգտումները կայսրության «ստատուս քվոյի» խմաստագուրկ սկզբունքով, ինչը ձեռնտու էր սուլթանական ինք-

* Հայկական Հարց. Հանրագիտարան, Երևան, Հայկական Հանրագիտարանի Գլխավոր Խմբագրություն, 1992 /ռուս./, 1996, էջ 232-238:

նակալության նրա վարած հետադիմական քաղաքականության մեջ: Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի ծանր վիճակն օգտագործելով իբրև Բարձր Դռան (օսմանյան կառավարության) վրա ճնշում գործադրելու և նրա գործերին միջամտելու պատրվակ, մեծ տերությունները ոչ միայն չէին նպաստում ազգային փոքրամասնությունների դրության բարելավմանը, այլև ավելի էին վատթարացնում այն: Թուրքական բազմադարյան լծից ազատվել ցանկացող քրիստոնյա բնակչության մեջ Բարձր Դուռը վտանգ էր տեսնում իր բազմազգ և բազմակրոն կայսրության ապագայի համար: Օսմանյան կառավարությունը, ձգտելով կասեցնել կայսրության փլուզումը, երկիրը դուրս բերել ծայրահեղ հետամնացությունից, ինչպես նաև Եվրոպայի աչքում երևալ բարեկիրթ, 19-րդ դարի կեսին հրապարակեց բարենորոգումների ծրագիր, որը հռչակում էր բոլոր հպատակների կյանքի, գույքի ու պատվի անձեռնմխելիություն, մահմեդական և ոչ մահմեդական բնակչության հավասարություն, տնտեսական վերափոխումներ: Սակայն բարեփոխումները կիսատ-պռատ էին և էական փոփոխություններ չմտցրին կայսրության պետական և հասարակական կյանքում ու ճնշված ժողովուրդների վիճակի մեջ:

19-րդ դարի 60-ական թթ.-ից նկատելիորեն ուժեղացավ հայ ազգային-ազատագրական պայքարն Արևմտյան Հայաստանում (ապստամբություններ Վանում և Զեյթունում 1862-ին, Մուշում՝ 1863-ին են): 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Բալկանյան ճակատում ռուսական զորքերը մոտեցան Կոստանդնուպոլսին, իսկ Կովկասյան ճակատի զորքերը գրավեցին համարյա ամբողջ Արևմտյան Հայաստանը: Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ վայրերում բնակվում էին ավելի քան 3 մլն հայեր, որոնք ենթարկվում էին ազգային, տնտեսական, քաղաքական և կրոնական ճնշման ու հալածանքների: Ռուս-թուրքական պատերազմը, բալկանյան ժողովուրդների ազատագրական հաջող պայքարը նոր թափ հաղորդեցին հայ ազգային-ազատագրական շարժմանը՝ հանուն ազգային ազատագրության, Հայաստանի երկու մասերի միավորման Ռուսաստանի հովանավորության ներքո: Ռուսական կայսրության նվաճողական քաղաքականությունը, Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողո-





վուրդների «հովանավորի» նրա դիրքը օբյեկտիվորեն համընկնում էին թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրության կենսական շահերին:

Հայկական հարցն առաջին անգամ իր արտահայտությունը գտավ Սան Ստեֆանոյի պայմանագրում (1878), որի 16-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվում էր բարեփոխումներ անցկացնել հայաբնակ վայրերում: Հոդվածի առավելությունն այն էր, որ Ռուսաստանը հանդես էր գալիս իբրև հայ ժողովրդի պաշտոնական հովանավոր, իսկ Արևմտյան Հայաստանի զգալի մասի միացումը Ռուսաստանին՝ հայերին ազգային համախմբության, տնտեսական և մշակութային զարգացման հնարավորություն էր տալիս: Սակայն պայմանագիրը կնքվեց միջազգային լարված պայմաններում. Ռուսաստանին հակադրվեց անգլո-ավստրիական ուժեղ դաշինքը: Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան նախաձեռնեցին հրավիրել միջազգային համաժողով, որի նպատակն էր խոչընդոտել Ռուսաստանին օգտվելու իր հաղթանակի պտուղներից:

Բեռլինի կոնգրեսի (1878) հրավիրման նախօրեին Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ Եվրոպա ուղարկվեց հայ ազգային պատվիրակությունը՝ հօգուտ Հայկական հարցի լուծման բանակցություններ վարելու եվրոպական պետությունների կառավարությունների հետ: Չստանալով իրական երաշխիքներ՝ հայ ազգային պատվիրակությունը, այնուամենայնիվ, մեկնեց Բեռլին, սակայն նրան չթույլատրվեց մասնակցել կոնգրեսի նիստերին: Բեռլինի կոնգրեսում, Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման հետևանքով, արևմտաեվրոպական դիվանագիտությանը հաջողվեց Ռուսաստանին զրկել Հայկական հարցում նրա ունեցած մենաշնորհից: Բեռլինի կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածում նշվում էր, որ Բարձր Դուռը պարտավոր է պարբերաբար տերություններին տեղեկացնել բարեփոխումների անցկացման միջոցառումների մասին, իսկ մեծ տերությունները պետք է հետևեն դրանց կենսագործմանը: Այդպիսով Հայկական հարցը վերածվեց միջազգային հարաբերությունների առարկայի, ինչը Բարձր Դռանը չխանգարեց այն լուծել յուրովի: Բեռլինի կոնգրեսի որոշումով Արևմտյան Հայաստանի մեծ մասը մնաց թուրքական տիրապետության տակ, ինչը ճակատագրական դեր խաղաց Արևմտյան Հայաստանի բնակչության համար՝ նրանց դատապարտելով բնաջնջման:

19-րդ դարի 70-ական թթ. վերջին – 80-ական թթ. սկզբին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու պահանջով առավել գործուն հանդես էր գալիս Մեծ Բրիտանիան: Բրիտանական կառավարությունը ձգտում էր Հայկական հարցի շահարկումով, Բարձր Դռան վրա մշտական ճնշում գործադրելու միջոցով, նվաճել Կիպրոսն ու Եգիպտոսը:

Համկանալով, թե ինչ դեր կարող է խաղալ Հայկական հարցը տերությունների քաղաքականության մեջ, Աբդուլ Համիդ 2-ի կառավարությունը որոշեց վերջ տալ Հայկական հարցին՝ ուժեղացնելով հայ բնակչության հալածանքը (մահմեդական մոլեռանդության և հակահայկական տրամադրությունների բորբոքում, մշտական սպանություններ և թալան, տեղական իշխանությունների կամայականություն և անօրինություն, հայերի բռնի մահմեդականացման փորձեր, գրաքննության սաստկացում, քրդական անկանոն հեծելազորի ստեղծում են), ինչը, ի վերջո, հանգեց հայ ժողովրդի բնաջնջմանը:

19 դարի 80-ական թթ. վերջին – 90-ական թթ. սկզբին հայ ազգայինազատագրական շարժման մեջ սկսվեց նոր փուլ. առաջացան հայկական քաղաքական կուսակցություններ, Արևմտյան Հայաստանում ուժեղացավ զինված ազատագրական պայքարը (ապստամբություններ Զեյթունում՝ 1878-ին, 1885-ին, Վանում՝ 1886-ին, Վասպուրականում, Սասունում, Ալաշկերտում են):

Ի պատասխան Սասունի հայերի ելույթի թուրքական իշխանությունները կազմակերպեցին այդ շրջանի կոտորած, որին զոհ գնաց շուրջ 10 հազար հայ: Եվրոպական տերությունների ճնշման տակ սուլթանի կառավարությունը հարկադրված հանձնաժողով ստեղծեց Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ քննելու Սասունի իրադարձությունները: 1895 թ. ապրիլին բրիտանական կառավարությունը մշակեց բարենորոգումների մի ծրագիր, որի համաձայն Արևմտյան Հայաստանին տրվում էր փաստորեն ինքնավարություն եվրոպական տերությունների հովանավորության ներքո: Բարեփոխումների բրիտանական քաղաքականության գլխավոր նպատակը բրիտանացիների իրավունքների պաշտպանության պատրվակով այդ տարածքները զավթելու հնարավորությունից Ռուսաստանին զրկելն





էր: Այն բանից հետո, երբ Ֆրանսիան և Ռուսաստանը միացան բարենորոգումների պահանջին, 1895 թ. մայիսի 11-ին Բարձր Դռանը ներկայացվեց բարեփոխումների բրիտանական ծրագրի փոփոխված տարբերակը: 1895 թ. սեպտեմբերի 17-ին հայերը Կոստանդնուպոլսում խաղաղ ցույց կազմակերպեցին բարենորոգումների իրագործումը ձգձգելու դեմ: Ի պատասխան օսմանյան կառավարությունը մայրաքաղաքում կազմակերպեց հայերի կոտորած, որին զոհ գնաց 6 հազար հայ: Հոկտեմբերի 15-ին Աբդուլ Համիդ 2-ն ընդունեց եվրոպական տերությունների դեսպաններին, որոնք, հանուն կայսրության ամբողջականության պահպանման, պահանջեցին հանգստացնել Եվրոպայի հասարակական միտքը, բավարարել հայերի պահանջները՝ բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում: Հոկտեմբերի 20-ին հայտարարելով շուտով բարենորոգումներ իրականացնելու մասին՝ սուլթանի կառավարությունը ոչ միայն չիրականացրեց դրանք, այլև, օգտվելով եվրոպական տերությունների միջև հակասություններից, կազմակերպեց Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի հայերի զանգվածային կոտորածներ: 1894-96 թթ. ընթացքում կոտորվեց ավելի քան 300 հազար հայ:

Չնայած հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերի և գործունեության ձևերի միջև եղած տարբերություններին, նրանք միասնական էին Արևմտյան Հայաստանի ազատագրության, հայկական անկախ պետության ստեղծման հարցում: Բայց հայկական կուսակցությունները այդպես էլ չհամախմբվեցին ազգային այդ գաղափարի շուրջ, չմիացրին իրենց ուժերը ժողովրդական միասնական հզոր շարժում առաջացնելու համար, ինչպես վարվեցին կայսրության մյուս ճնշված ժողովուրդները:

Անհաջողության մատնվեցին նաև ոչ թուրք ժողովուրդների (մասնավորապես՝ քրդերի) հետ միասնական ճակատ ստեղծելու փորձերը: Ընդհակառակը, թուրքական իշխանություններին հաջողվեց քրդական ցեղերին օգտագործել իրենց նպատակների համար, լարել հայերի դեմ:

19 դարի վերջին – 20 դարի սկզբին հայ ազատագրական շարժման վերելքը, այդ շարժումը բացառապես սուլթանի դեմ օգտագործելու ձգտումն ընդդիմադիր երիտթուրքական կուսակցությանը հանգեցրեց հայկական կուսակցությունների հետ հարաբերություններ հաստատելու

մարին. թեև ազգային հարցում երիտթուրքերի և Աբդուլ Համիդ 2-ի միջև սկզբունքային տարբերություններ չկային: Հայկական կուսակցությունները, շարունակելով Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարը, եռանդուն մասնակցություն ունեցան Աբդուլ Համիդ 2-ի վարչակարգի դեմ ընդդիմադիր ուժերի միություն ստեղծելու գործին: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո հայերի վիճակը չբարելավվեց, իսկ 1909 թ. ապրիլին երիտթուրքերն իրագործեցին Ադանայի նահանգի հայերի կոտորածը, որին զոհ գնաց ավելի քան 30 հազար հայ:

1912-14 թթ., երբ բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետևանքով նոր հարված հասցվեց թուրք բռնատիրությանը, Հայկական հարցը վերստին դարձավ մեծ տերությունների և Թուրքիայի միջև բանակցությունների առարկա: Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցի շուրջ սկսվեց բուռն պայքար, որը շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի (1914-18) սկիզբը:

Պատերազմի մեջ մտնելով Գերմանիայի կազմում՝ Թուրքիայի կառավարող շրջանները հույս ունեին իրականացնել Կովկասից Ռուսաստանին հեռացնելու, Մերձավոր Արևելքի, Կովկասի, Ռուսաստանի, Միջին Ասիայի մահմեդականներին միավորելով «Մեծ Թուրան» ստեղծելու վաղեմի գաղափարը: Այդ նպատակին հասնելու ճանապարհին խոչընդոտ էր հանդիսանում ոչ միայն Ռուսաստանը, այլև հայ ժողովուրդը, որն ապրում էր Հայաստանի երկու՝ Արևմտյան և Արևելյան մասերում: Երիտթուրքական կառավարությունը գտնում էր, որ ամենից առաջ պետք է ոչնչացնել Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը, որի ռուսական կողմնորոշումը հանրահայտ էր:

Երիտթուրքերը, Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության մյուս մասերում ապրող հայերին ոչնչացնելու և այդ ձևով Հայկական հարցը լուծելու նպատակով, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, մերձճակատային շրջաններից հայերին տեղահանելու անվան տակ կազմակերպեցին և իրականացրին 1,5 մլն հայերի տեղահանություն ու կոտորածը: Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան զրկվեցին բնիկ հայ բնակչությունից:

Կովկասյան ճակատում հաջող գործողությունների շնորհիվ ռուսա-





կան զորքերը հայկական կամավորական ջոկատների հետ մինչև 1916 թ. գրավեցին Արևմտյան Հայաստանի զգալի մասը: Այդ պարագան աշխուժացրեց Անգլիայի և Ֆրանսիայի միջև բանակցությունները՝ Օսմանյան կայսրության տիրույթները բաժանելու վերաբերյալ: Վերսկսվեց Մերձավոր Արևելքը, այդ թվում Հայաստանը ազդեցության ոլորտների բաժանելու հարցի շուրջ դիվանագիտական առևտուրը, ընդ որում չկար ոչ մի հիշատակություն Հայաստանի անկախության կամ ինքնուրույնության, հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ: 1916 թ. հունիսին Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում Ռուսաստանը ստեղծեց «Պատերազմի իրավունքով Թուրքիայի գրաված մարզերի զինվորական գեներալ-նահանգապետություն»: Եթե պատերազմի նախօրեին և սկզբնական շրջանում ցարիզմը ներկայանում էր իբրև Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի պաշտպան, աղմկում էր հայերի տեղահանությունների և կոտորածների համար, կամավորական ջոկատներ էր ստեղծում, ապա այժմ ձգտում էր Հայկական հարցը հանել ռուսական դիվանագիտության գործունեության ոլորտից և զրոյի հավասարեցնել հայերի քաղաքական նշանակությունը: Պատերազմի իրավունքով գրավված հայկական նահանգները պետք է վերածվեին Ռուսաստանի սովորական ծայրամասային նահանգների՝ գործնականում զրկված բնիկ՝ հայ բնակչությունից:

Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո ստեղծված ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլի 25-ի որոշումով իր իրավասության տակ վերցրեց Արևմտյան Հայաստանի գրավված մարզերի կառավարումը: Տեղահանված և աքսորված հայերին թույլատրվեց վերադառնալ հայրենի տները: Միևնույն ժամանակ ժամանակավոր կառավարությունը շարունակեց ցարիզմի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում՝ ամեն կերպ ոտնահարելով հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: 1917 թ. մայիսից ռուս-թուրքական ճակատում ստեղծվեց ոչ պաշտոնական զինադադարի իրադրություն: Սակայն այստեղ էլ, ինչպես արևմտյան ճակատում, զինվորներին համակել էին հեղափոխական տրամադրությունները, ինչպես նաև ճակատը լքելու և տուն վերադառնալու ռուս զինվորների ձգտումը առավել զգալի դարձան 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Կովկաս-

յան ճակատը մերկանում էր, և բարենպաստ պայմաններ էին ստեղծվում թուրքական արշավանքի համար:

Ռուսաստանում իշխանության գլուխ անցած խորհրդային կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց «Դեկրետ Թուրքահայաստանի մասին» փաստաթուղթը, որը ճանաչում էր հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, վաղուց կորցրած պետականության վերականգնումը: Խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարում էր, որ պաշտպանում է «Արևմտյան Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»: Դեկրետի իրագործումը մեծապես կախված էր հայ ազգային ուժերի համախմբումից, տարածաշրջանում կարգուկանոնի հաստատումից, միլիցիայի ստեղծումից, զանգվածային դասալքությունը կասեցնելուց, ռուսական բանակի զորամասերի օգտագործումից և, ամենակարևորը, խորհրդային կառավարության դեկրետն իրագործելու ցանկությունից: Սակայն ստեղծված ծանր իրավիճակը, 1917 թ. նոյեմբերին Թիֆլիսում կազմավորված Անդրկովկասյան կոմիսարիատի և, մասնավորապես, հայ Ազգային բյուրոյի դիրքը Խորհրդային Ռուսաստանի հանդեպ առավել վատթարացրին հայ ժողովրդի առանց այդ էլ բշվառ վիճակը: Խախտելով 1917 թ. դեկտեմբերի 18-ին Երզնկայում կնքված ռուս-թուրքական զինադադարը՝ 1918 թ. փետրվարին թուրքական զորքերը հարձակման անցան ամբողջ ճակատով և դարձյալ նվաճեցին Արևմտյան Հայաստանը: Իր դաշնակցի՝ Գերմանիայի նման Թուրքիան ևս ռուսական հեղափոխությունը համարեց հարմար առիթ տարածքային նոր նվաճումների համար: Իր նպատակներին ծառայեցնելով Բրեստի հաշտության (1918) պայմանները՝ թուրքական կառավարությունը շարունակեց ճնշում գործադրել Այսրկովկասի վրա՝ պահանջելով նրա անջատվելը Ռուսաստանից՝ հետագա խնդիր ունենալով Այսրկովկասը բաժանել մասերի («բաժանիր և տիրիր» սկզբունքով) և այնտեղ հաստատել իր գերիշխանությունը: Ընդհատելով բանակցությունները Այսրկովկասի կառավարության հետ՝ Թուրքիան վերսկսեց հարձակումը: 1918 թ. մայիսի կեսին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը՝ ստեղծելով Երևանը գրավելու իրական վտանգ: Հայ ժողովուրդը հայտնվեց ծայրահեղ օրհասական վիճակում: Սակայն Սարդարապատում, Ղարաքիլիսայում և Բաշ Ապարանում հայկական





զորքերն ու աշխարհազորը կանգնեցրին թշնամուն, ջախջախեցին նրան հիմնական ուղղություններում և վերացրին հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վտանգը: Միաժամանակ վերսկսվեցին բանակցությունները Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի միջև: Թուրքիան շարունակում էր պահանջել Այսրկովկասի անջատումը Ռուսաստանից և իր նվաճումների ճանաչումը: 1918 թ. մայիսի 26-ին հռչակվեց Վրաստանի Հանրապետության, 27-ին՝ Ադրբեջանի Հանրապետության, 28-ին՝ Հայաստանի Հանրապետության ստեղծումը: Հայաստանի Հանրապետության հռչակումը, չնայած ծանր պայմաններին, հայ ժողովրդի պատմության կարևորագույն իրադարձություններից էր. վերականգնվում էր ազգային պետականությունը բազմադարյան կորստից հետո: Իր ստեղծման պահին հանրապետության տարածքը կազմում էր 9 հազար քառ. կմ-ից մի փոքր ավելի, իսկ բնակչությունը՝ 326 հազար: Թուրքիային, բացի ողջ Արևմտյան Հայաստանից, անցան նաև Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների զգալի մասը: Պատերազմում Թուրքիայի պարտությունից և Մուդրոսի զինադադարի (1918) կնքումից հետո թուրքական զորքերը հեռացան Հայաստանի Հանրապետության և Կարսի մարզի տարածքից, վերականգնվեց 1914 թ. սահմանը, Հայաստանի Հանրապետության տարածքը կազմեց 55 հազար քառ. կմ:

1919-20-ին Հայաստանի Հանրապետությունը մեծ ջանքեր գործադրեց Հայկական հարցը լուծել արևմտյան տերությունների աջակցությամբ, մեկ միասնական անկախ պետության կազմում միավորել Հայաստանի արևելյան և արևմտյան մասերը: Հայկական հարցը քննարկվեց Փարիզի հաշտության կոնֆերանսում (1919-20), որտեղ որոշում ընդունվեց ԱՄՆ-ին տրամադրել Հայաստանի մանդատը: Այդ որոշումը հաստատեց Ազգերի լիգան: Սակայն ԱՄՆ-ի սենատը մերժեց նախագահ Վուդրո Վիլսոնի առաջարկը Հայաստանի մանդատը վերցնելու վերաբերյալ: 1920 թ. օգոստոսի 10-ին Անտանտան հաշտություն կնքեց պարտված Թուրքիայի հետ, համաձայն որի Թուրքիայի սուլթանական կառավարությունը ճանաչում էր Հայաստանն իբրև ազատ և անկախ պետություն, ԱՄՆ-ի նախագահին հանձնարարվում էր որոշել Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը՝ Հայաստանի համար ելքով դեպի Սև ծով:

Թուրքիայում իշխանության գլուխ անցած ազգայնամոլ կառավարությունը՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, չընդունեց Սևրի պայմանագիրը: Խորհրդային կառավարությունը, ձգտելով Թուրքիայում սկսված ազգայնամոլ շարժումն ուղղել Անտանտի դեմ, վերջինիս զրկել Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի դեմ պատվար դարձնելու հնարավորությունից, փորձեց իր միջնորդությամբ կայունացնել վիճակը տարածաշրջանում, կանխել պատերազմը, հասնել Հայաստանի և Թուրքիայի միջև կայուն սահմանների հաստատման: Սակայն խորհրդա-հայկական և խորհրդա-թուրքական բանակցությունները բազմիցս ընդհատվեցին և ձգձգվեցին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժամանակ էր շահում մինչև Սևրի հաշտության կնքումը, իսկ թուրքական կողմը չէր ուզում հրաժարվել արևմտահայկական հողատարածքներից: 1920 թ. ամռանը Խորհրդային Հայաստանը Թուրքիային տրամադրեց ռազմական և դրամական զգալի օգնություն, որը նա օգտագործեց արևմուտքում՝ Հունաստանի, արևելքում՝ Հայաստանի Հանրապետության դեմ: 1920 թ. սեպտեմբերին թուրքական բանակն անցավ հարձակման: Անկարայի կառավարությունը, նորանոր հողեր զավթելով, հայ ժողովրդի արևելյան հատվածը կոտորելով, ձգտում էր զրկել հայերին սեփական պետություն վերստեղծելու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ենթադրում էր, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Իտալիան, իրականացնելով Սևրի հաշտության պայմանները, անմիջապես հանդես կգան հօգուտ հայերի և հակահարված կտան Թուրքիային: Հայկական կառավարությունը դիմեց Ազգերի լիգային՝ խնդրելով միջոցներ կիրառել Թուրքիայի դեմ՝ համաձայն Սևրի պայմանագրի: Սակայն այդ դիմումները չտվին ցանկալի արդյունք: Միայն Ռումինիայի կառավարությունը առաջարկեց օգնել Հայաստանի Հանրապետությանը, սակայն հաջողության չհասավ: Թուրքական զորքերը շարունակեցին հարձակումը: Թուրքիայի անհաշտ ու ռազմատենչ դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ պայմանավորված էր ստեղծված միջազգային բարենպաստ իրադրությամբ, որից հաջողությամբ օգտվեց քեմալական կառավարությունը, և Անտանտայի ու Խորհրդային Ռուսաստանի միջև ռազմական առճակատումով: Իրենց հերթին, կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր Թուրքիային օգտագործել իր շահերի համար:





Հեղափոխական քարոզչությամբ բարոյալքված, հարևանների ոտնձգությունների դեմ անընդհատ պատերազմելու հետևանքով թուլացած հայկական բանակը պարտվեց: Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով հանրապետությանն էին մնում միայն Երևանի և Սևանի շրջակա տարածքները, հայկական կառավարությունը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, Թուրքիան իր հսկողությունն էր սահմանում հաղորդակցության ճանապարհների վրա ևն: Նույն օրը, Խորհրդային Ռուսաստանի ճնշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվեց իշխանությունից: 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց բարեկամության և եղբայրության մասին պայմանագիր, որը թալանչիական էր Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ: Այդ պայմանագրի համաձայն՝ որոշված էր Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի սահմանը. Թուրքիային էին անցնում ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի մարզը, Կաղզվանի օկրուգը և Սուրմալուի գավառը: Պայմանագրում մտցվեց հատուկ հոդված, որի համաձայն Նախիջևանի մարզում կազմվում էր «ինքնավար տարածք՝ Ադրբեջանի հովանավորության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն հովանավորությունը չի զիջի մի երրորդ պետության»: Մոսկվայի պայմանագիրը խորապես հակասում էր հայ ժողովրդի շահերին, չէր նպաստում իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում, համախմբվելու նրա ձգտմանը: 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ՌԽՖՍՀ-ի մասնակցությամբ կնքվեց պայմանագիր մի կողմից Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Վրաստանի, Խորհրդային Ադրբեջանի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև, որն աննշան տարբերությամբ կրկնում էր Մոսկվայի պայմանագիրը և ձեռնտու էր բոլորին, բացի Հայաստանից: Նախիջևանի այդ վիճակը (հովանավորյալ տարածք) հակասում է ժամանակակից միջազգային օրենքներին, որոնց համաձայն հովանավորյալ տարածքը համարվում է գաղութային ճնշման տակ գտնվող տարածք և պետք է ապագաղութացվի:

Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կառավարությունները փորձում էին Հայկական հարցը ծառայեցնել իրենց ծրագրերին և երբեք լրջորեն չմտահոգվեցին հայ ժողովրդի ճակատագրով: 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբե-

րին Լոնդոնի կոնֆերանսում, իսկ 1921 թ. հունվարին Փարիզում Անտանտայի գլխավոր խորհրդի նիստում Ֆրանսիան հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու պահանջով: Մինչև Լոզանի կոնֆերանսը (1922-23) Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Իտալիան նահանջել էին Սևրի հաշտության դրույթները պաշտպանելու և Հայկական հարցը լուծելու դիրքերից: 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսի որոշումներում «Հայկական անկախ պետություն» արտահայտությունը փոխարինվեց Թուրքիայի տարածքում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու մասին վերացական ձևակերպումով, ինչը Լոզանի կոնֆերանսում ջնջվեց այդ նույն դիվանագետների ձեռքով: Ազգերի լիգան նույնպես անկարող եղավ ինչ-որ կերպ թեթևացնել ցեղասպանության ենթարկված և տեղահանված ժողովրդի վիճակը. Հայկական հարցի առիթով բազմաթիվ հռչակագրերը և արևմտյան դիվանագիտության երաշխիքները, պայմանագրերը, ուղերձները, առատ խոստումները ոչ մի օգուտ չտվին հայ ժողովրդին:

Հայկական հարցի անբաժանելի մաս է կազմում Լեռնային Ղարաբաղի հարցը: 1918-20 թթ. Ադրբեջանի Հանրապետության մուսավաթական կառավարությունը բազմիցս փորձեց զավթել Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանն ու Զանգեզուրը: Սակայն Հայաստանի այդ շրջանների բնակչությունը զենքով պաշտպանեց իր հողն ու իրավունքներն այդ ոտնձգություններից: Հայաստանի Հանրապետության մի մասում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո Ադրբեջանի Հեղկոմը 1920 թ. դեկտեմբերի 1-ին հատուկ հռչակագրով հայտարարեց, որ հրաժարվում է «վիճելի» տարածքներից և Ղարաբաղը, Նախիջևանն ու Զանգեզուրը ճանաչում է իբրև Հայաստանի անբաժանելի մաս: Սակայն շուտով Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության դիրքորոշումը արմատապես փոխվեց. նա պահանջեց Ղարաբաղը ներառնել Ադրբեջանի կազմի մեջ: 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի նիստում որոշվեց Լեռնային Ղարաբաղը տալ Ադրբեջանին: Այդ ոչ սահմանադրական, կուսակցական, այսինքն՝ անիրավական որոշմամբ բուն հայկական հողերը՝ հայ բնակչությամբ, արհեստականորեն անջատվեցին Հայաստանից, իսկ 1923 թ. սահմանազատման հետևանքով մարզը զրկվեց Խորհրդային Հայաստանի հետ ընդհանուր սահման ունենալուց և անջատվեց «ադրբեջանական» տարածքի բարակ շերտով:





20-րդ դարի սկզբին հայ ժողովուրդը, չնայած ահավոր ցեղասպանությանը և տեղահանությանը, կարողացավ վերապրել և անգամ վերականգնել պետականությունն իր բուն հայրենիքի մի հատվածում, իսկ ցեղասպանությունից ու տեղահանությունից փրկվածները ցրվեցին աշխարհով մեկ՝ առաջացնելով հայ սփյուռքը: Ամրապնդվելով և զարգանալով իրենց ապաստանած երկրներում, չկորցնելով ազգային ինքնագիտակցությունը՝ իրենց պապերի հողերից վտարված հայերը շարունակեցին պայքարը հանուն ազգային գոյատևման ու կորսված հարազատ հողի իրավունքի, հանուն մեկ միասնական պետության մեջ համախմբման:

Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939-45) ավարտին նկատելիորեն ուժեղացավ սփյուռքահայերի շարժումը՝ Թուրքիային անցած Արևմտյան Հայաստանի տարածքը Խորհրդային Հայաստանին միացնելու համար: Սփյուռքահայ կազմակերպություններն ու գործիչները այդ պահանջով դիմեցին հաղթող տերությունների ղեկավարներին, Միավորված ազգերի կազմակերպության Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսին (1945 թ. ապրիլ), երեք տերությունների ղեկավարների Բեռլինի կոնֆերանսին (1945 թ. օգոստոս), արտաքին գործերի նախարարների խորհրդի Լոնդոնի նստաշրջանին (1945 թ. սեպտեմբեր), երեք տերությունների արտաքին գործերի նախարարների Մոսկվայի խորհրդակցությանը (1945 թ. դեկտեմբեր), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Լոնդոնի 1-ին նստաշրջանին (1946 թ. հունվար) ևն: 1945 թ. նոյեմբերի 29-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ-ն դիմեց ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ղեկավարներին՝ պահանջելով Խորհրդային Հայաստանին միացնել Արևմտյան Հայաստանը: 1945 թ. մարտին խորհրդային կառավարությունը, ելնելով երկրորդ աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային նոր իրադրությունից, հայտարարեց 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին: 1945 թ. հունիսին Մոսկվայում տեղի ունեցան խորհրդա-թուրքական բանակցություններ՝ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունները կարգավորելու շուրջ, որը պայմանավորված էր խորհրդային կառավարության կողմից իբրև ժամանակի ոգուն չհամապատասխանող և արմատական բարելավման կարիք ունեցող 1925 թ. պայմանագիրը չեղյալ



ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

հայտարարելու հետ: Թուրքական կողմն առաջարկեց կնքել դաշնակցային պայմանագիր: Դրան խորհրդային կողմը պատասխանեց, որ դեմ չէ որոշակի պայմաններով այդպիսի պայմանագիր կնքելուն, մասնավորապես՝ եթե Թուրքիան վերադարձնի 1921 թ. Խորհրդային Հայաստանից և Վրաստանից խլված Կարսը և Արդահանը: Սակայն դաշնակցային պայմանագիրը Թուրքիայի հետ չկնքվեց: Երեք դաշնակից տերությունների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) ղեկավարների 1945 թ. Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսում, ի թիվս այլ հարցերի, քննվեց նաև Հայկական հարցը:

1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը, անտեսելով հայ ժողովրդի ակնկալիքներն ու ձգտումները, հայտարարեց, որ «հանուն բարիդրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր գտան հրաժարվել Թուրքիայի նկատմամբ ունեցած իրենց տարածքային պահանջներից…: Այդպիսով, խորհրդային կառավարությունը հայտարարում է, որ Խորհրդային Միությունը տարածքային ոչ մի պահանջ չունի Թուրքիայից»: ԽՍՀՄ-ի նման դիրքը հաստատվել է հետագայում ևս՝ միջազգային մի շարք փաստաթղթերում:

Հայկական հարցը լուծելու, համաշխարհային ընկերակցության կողմից հայերի ցեղասպանությունը ճանաչել տալու համար սփյուռքահայերի պայքարը առավել գործուն դարձավ 1960-ական թթ. կեսից՝ հայերի ցեղասպանության 50-ամյակի նախօրեին: 1965 թ.-ից, ստալինականության կողմից պարտադրված քառասնամյա լռությունից հետո, Խորհրդային Հայաստանում արագորեն սկսեց զարգանալ քաղաքական հայագիտությունը: Հրատարակվեցին տասնյակ գիտական աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ, բազմաթիվ գիտական և հրապարակախոսական հոդվածներ: 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց Օրենք Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին փաստաթուղթը:

1960-80-ական թթ. նկատելիորեն ուժեղացավ համաշխարհային հասարակական մտքի հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ և այն քննարկվեց միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտական և հասարակական համաժողովներում, կոնֆերանսներում և գիտաժողովներում: 1960-ական թթ. վերջից Հայկական հարցը դարձավ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների պաշտպանության և խտրականության կանխման ենթահանձնաժողովի քննարկման առարկա: Հայկական հարցին հատուկ նվիրվեց Փարիզի Ժողովուրդների մշտական ատյանի նիստը 1984 թ. ապրիլին, «Հայկական հարցը և թուրքական էքսպանսիոնիզմը» միջազգային կոնֆերանսը (Աթենք, 1987 թ. մայիս), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համագումարը (ԱՄՆ, 1989 թ. մայիս) ևն, որոնց որոշումներում նշվեց հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի իրագործած ցեղասպանության վնասների փոխհատուցման անհրաժեշտությունը, սփյուռքահայերին իրենց հայրենիքը վերադառնալու իրավունքի ապահովումը: Հայերի ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման և դատապարտման հարցին 1970-80-ական թթ. գործուն աջակցություն ցույց տվեցին մի շարք երկրներ (Հունաստան, Ֆրանսիա, Արգենտինա, Ուրուգվայ ևն): ԱՄՆ-ի սենատում և ներկայացուցիչների պալատում բազմիցս քննարկվեցին Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին բանաձևեր, որոնք, սակայն, Թուրքիայի ճնշմամբ մերժվեցին: Այժմ էլ Թուրքիայի ղեկավարները նախազգուշացնում են ԱՄՆ-ին՝ բանաձև ընդունելու դեպքում թուրք-ամերիկյան հարաբերություններում լուրջ բարդությունների հնարավոր առաջացման մասին, ընդհուպ մինչև ՆԱՏՕ-ից Թուրքիայի դուրս գալը: Թուրքիան վարում է հայերի ցեղասպանության փաստը չճանաչելու և մերժելու քաղաքականություն: 1987 թ. հունիսի 18-ին Եվրոխորհրդարանն ընդունեց բանաձև «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»:

Ժամանակակից պայմաններում Հայկական հարցն ընկալվում է որպես ամբողջ աշխարհի հայության ձգտումը՝ վերականգնել պատմական արդարությունը, ստեղծել իրական պայմաններ հայ ազգի համախմբման, սփյուռքահայերի ազգային ինքնության պահպանման համար:

*Գրկ. Լեո, Հայոց հարցը, Թ., 1906: Նույնի, Հայոց հարցի վավերագրերը, Թ., 1915: Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թ., 1906: Բրանդես Գ., Հայաստանը և Եվրոպան, Ժնև, 1907: Եվրոպացիների կար-*

ծիրը Հայկական դարի մասին, Ժնև, 1907: Սարուխան, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1869-1910), Թ., 1912: Արամ, Բարենորոգումների հարցը, ԿՊ, 1914: Բաբկեն Վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղ-պատ, 1914: Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Թ., 1915: Բյուրատ Սմբատ, Արևելյան խնդիր և Հայկական հարց, ԿՊ, 1919: Սանդալջյան Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, Մաս I, ԿՊ, 1919: Ամիրխանյան Ս., Ռուս և թուրք զինադադար. Պատմական անցքեր 1917-1918, Ֆրեզնո, 1921: Հայաստանի ավտոնոմիան և Անտանտան, Ե., 1926: Սասունի Կ. Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Բոստոն, 1927: Քրաֆթ-Բոնար Ա., Հայկական խնդիրը, Ժնև, 1927: Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937: Գաբիկյան Խ., Հայկական հարցը, Բեյրութ, 1938: Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Բոստոն, 1943: Աղբաշյան Հ., Հայկական հարցը երեկ և այսօր, Կահիրե, 1946: Լազյան Գ., Հայաստան և Հայ դատը, Ե., 1991: Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850-1870 թթ.), Ե., 1955: Նույնի խմբ., Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1991: Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Ե., 1965: Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1965: Նույնի, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), Ե., 1978: Նույնի, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.), Ե., 1980: Նույնի, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Ե., 1982, 1983: Նույնի խմբ., Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972: Անդրեասյան Ա., Հայկական դատին նոր հանգրվանը, Բեյրութ, 1967: Արզումանյան Մ., Հայաստան. 1914-1917, Ե., 1969: Մսըրլյան Զ., Արևմտահայ բռնագրաված հողերու հարցը 1921-1971 թթ., Բեյրութ, 1971: Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային օրենքը, Բեյրութ, 1976: Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Ե., 1977: Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Ե., 1979: Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Ե., 1983: Սիմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությու-





նը և քաղաքականությունը, Ե., 1986: Սահակյան Ռ., Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990:

Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1898; Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, М., 1911; Дживелегов А., Будущее Турецкой Армении, М., 1911; Ошеровский Л., Идея автономного строя Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915; Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, М., 1918; Чалхушьян Г., Красная книга, Ростов-на-Дону, 1919; Армянский вопрос на Лозаннской конференции, Тифлис, 1926; Борьян Б.А., Армения, международная дипломатия и СССР, М.-Л., 1928-29; Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, М., 1957; Акопян С., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Е., 1967; Кургинян Е., Армянская проблема в международных отношениях 1876-1890 гг., М., 1969; Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX – начале XX в., Е., 1988; Киракосян Дж., Младотурки перед судом истории, Е., 1989; Киракосян А., Великобритания и Армянский вопрос (90-е гг. XIX в.), Е., 1990; Его же, Армянский вопрос, 1878-1983. Библиография литературы на русском яз., Е., 1985; Adonz N., Towards the Solution of the Armenian Question, L., 1920; Anderson M., The Eastern Question, 1774-1923, N.Y. 1965; Beylerian A., Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Fransaises (1914-1918), P., 1983; Rolin-Jacquemyns G., Armenia, Armenians and the Treaties, L., 1891; Green F., The Armenian Crisis in Turkey, N.Y., 1895; Argyll G., Our Responsibilities for Turkey, L., 1896; Bliss E., Turkey and the Armenian Atrocities, Philadelphia, 1896; Bryce J., Transcaucasia and Ararat, L., 1896; Bryce J., The Treatment of the Armenians in the Ottoman Empire, 1915-1916, L., 1916; Charmetant F., L'Arménie agonisante et l'Europe chrétienne, P., 1896; Clayton C. Britain and the Eastern Question, L., 1971; Davison R., The Armenian Crisis, 1912-1914. – American Historical Review, 1948, vol. 1; Gabrielian M., Armenia. A Martyr Nation, N.Y., 1918; Gladstone W., The Armenian Question. – The Christian Literature, 1896, vol. 14; Gürün K. Le Dossier Arménien, Paris, 1983; Hovannisian R., The Republic of Armenia (1918-1919), L., 1971; Karal E., Armenian Question (1878-1923), Ankara, 1975; Krafft-Bonnard A., Le Probléme Arménienne, Genéve, 1924; Krikorian H., The Mandate for Armenia, C-pole, 1919; Lang D., The Armenians, L., 1981; Lanne P., Armenien: Der erste Völkermord des 20. Munchen,

1977; Lepsius J., Deutchland und Armenien, 1914-1918, Potsdam, 1919; Mandelstam A., Le Sort de l'Empire Ottoman, P., 1917; MacColl M., The Sultan and the Powers, L., 1896; Morgenthau H. Ambassador Morgenthau's Story, N.Y., 1926; Nansen F. Armenia and Near East, L., 1928; Nassibian A., Britain and the Armenian Question, 1915-1923, N.Y., 1984; Ternon Y., La Cause Arménienne, Paris, 1983; Toriguian Sh. Armenian Question and the International Law, Beirut, 1983; Walker Ch., Armenia: The Survival of the Nation, N.Y., 1980.



# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

## 1. ՈՒՇԱԳՐԱՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ*

Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը ռուսերեն լեզվով լույս է ընծայել Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սաֆրաստյանի «Օսմանիզմի դոկտրինան Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում (19-րդ դարի 50-70-ական թթ.)» մենագրությունը[1]: Հեղինակի խնդիրն է եղել առաջին անգամ խորհրդային թուրքագիտության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա դարձնել թուրքական կառավարող շրջանների կողմից առաջ քաշված անդրանիկ գաղափարա-քաղաքական դոկտրինը, որի նպատակն էր հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերել-
քի շրջանում փրկել բազմազգ Օսմանյան կայսրությունը փլուզումից:

Օգտագործելով թուրքերեն և այլ լեզուներով բազմաթիվ սկզբնաղբյուրներ, Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի հարուստ ֆոնդերը՝ Ռ.Սաֆրաստյանը մանրակրկիտ վերլուծության է ենթարկում Թանզիմաթի (բարեփոխումների) առաջին շրջանի (19-րդ դարի 30-50-ական թթ.) թուրքական ղեկավար գործիչներ Մուստաֆա Ռեշ-

* ՀԽՍՀ ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1986, հ. 7, էջ 88-91:

1 Сафрастян Р.А., Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), Ереван: Изд-во АН Арм.ССР, 1985, 147 с.

իդ փաշայի, Մեհմեդ Էմին Ալի փաշայի ու Մեհմեդ Ֆուադ փաշայի հայացքները հպատակ ժողովուրդներին կայսրության կազմում պահելու միջոցների մասին: Այդ «գործիչները» հասկացել էին, որ քրիստոնյա ժողովուրդների հանդեպ հարյուրամյակներ շարունակ կիրառվող բռնի մահմեդականացման և ջարդերի քաղաքականությունը նոր պայմաններում այլևս իրեն չէր արդարացնում: Հույները, հայերը, սլավոնները բնակվում էին ազգային համախմբման, ազգային-ազատագրական գաղափարների տարածման բուռն շրջան, իսկ օսմանյան պետականությունը քայքայվում էր՝ կորցնելով իր գոյության գլխավոր հիմքը՝ ռազմական հզորությունը: Ուստի հիշյալ գործիչները ձևակերպեցին ազգային հարցում նոր քաղաքականության հիմնադրույթները: Իրենք՝ Թանզիմաթի գործիչները, նախընտրում էին դա անվանել «ձուլման» քաղաքականություն, որը հետագայում կոչվեց օսմանիզմի քաղաքականություն:

Թանզիմաթի երկրորդ շրջանի (19-րդ դարի 50-60-ական թթ.) բարեփոխումների շարժման առաջնորդներ Ալի փաշայի և Ֆուադ փաշայի քաղաքական կտակների. գաղտնի հուշագրերի և նամակների, ինչպես նաև արխիվային նյութերի ուսումնասիրումը հեղինակին հնարավորություն է տալիս պարզելու «ձուլման» ծրագրի հիմնադրույթները: Ալին և Ֆուադը կայսրության ամբողջականության պահպանման միակ միջոցն էին համարում երկրի բոլոր բնակիչների միաձուլումը, «օսմանյան հպատակների միատարր հասարակության» ստեղծումը: Նրանք լայնորեն քարոզում էին քրիստոնյա ժողովուրդներին մահմեդականների հետ հավասար քաղաքական իրավունքներ շնորհելու գաղափարը: Սակայն գաղտնի բնույթ կրող փաստաթղթերում նրանք շեշտը դնում էին թուրքերի և իսլամի գերիշխող դերի պահպանման վրա ապագա բարենորոգված կայսրությունում: Վերլուծելով սկզբնաղբյուրները՝ հեղինակը ցույց է տալիս, որ «ձուլումը» ոչ այլ ինչ էր, քան Օսմանյան կայսրության բազմազգ բնակչության «խաղաղ» օսմանացման և ազգային հարցի վերջնական «լուծման» փորձ: Այն, ինչ հասցրին իրագործել Ալին և Ֆուադը, մեծ վտանգ էր ներկայացնում հպատակ ժողովուրդների համար:

Օգտագործելով արխիվային և այլ բնույթի բազմաթիվ նյութեր՝ Ռուբեն Սաֆրաստյանը մանրամասնորեն ուսումնասիրում է թուրքական իշխանությունների քաղաքականությունը Դանուբի վիլայեթում, այսինքն Բուլղարիան «օսմանացնելու» ուղղությամբ: Հեղինակը ցույց է տալիս, որ հատկապես Դանուբի վիլայեթում առավել ցցուն բացահայտվեց օսմանիզմի դոկտրինայի մեծապետական-շովինիստական բնույթը:

Վիլայեթի իշխանությունները՝ նախանձապես, հայտնի պետական գործիչ Միդհատ փաշայի ղեկավարությամբ, փակում էին բուլղարական դպրոցները, ամեն կերպ փորձում խոչընդոտել բուլղարների ազգային և մշակութային կյանքի զարգացումը, սահմանափակում էին նրանց քաղաքական իրավունքները: Բուլղարիան, սակայն, զոհ գնաց, և օսմանացման քաղաքականությունն այստեղ չհասավ իր նպատակին: Բուլղար ժողովուրդը ճնշումներին պատասխանեց իր և ազգային-ազատագրական պայքարի ուժեղացմամբ:

Օսմանիզմի դոկտրինայի հետագա զարգացումը կապված է ձևավորվող թուրքական բուրժուազիայի առաջին գաղափարախոսների՝ «նոր օսմանների» սահմանադրական շարժման առաջնորդներ Նամըք Քեմալի, Ալի Սուավիի և այլոց գործունեության հետ: Նրանք ոչ միայն ընդունեցին Թանզիմաթի գործիչների կողմից առաջարկված «ձուլման» գաղափարը, այլ նաև տալով նրան «տեսական» հիմնավորում՝ դարձրին իրենց քարոզած «սահմանադրական օսմանիզմի» հիմնաքարը: «Նոր օսմանների» աշխատություններում օսմանիզմը ստացավ իր վերջնական տեսքը: Հեղինակը, դիմելով «նոր օսմանների» հրատարակած գրքերի և թերթերի հրապարակումներին, բացահայտում է նրանց ուսմունքի առանձնահատկությունները, ցույց է տալիս, որ առաջին թուրք սահմանադրականների կողմից առաջարկված բարենորոգումների գլխավոր նպատակն էր ամեն գնով պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Հենց այդ նպատակին էր ծառայում օսմանիզմի դոկտրինան, որը նախատեսում էր քրիստոնյա ժողովուրդների բռնի «դաստիարակում» «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով, թուրքերի գերիշխող դիրքի ամրապնդում, թուրքերենի համընդհանուր տարածում որպես «օսմանյան ազգի» միակ լեզու:

Ռուբեն Սաֆրաստյանը եզրակացնում է, որ եթե «նոր օսմանների» գաղափարները լիովին իրականանային, ապա դա կնշանակեր բազմազգ Օսմանյան կայսրության համատարած թուրքացման սկիզբ:

19-րդ դարի 70-ական թթ. կեսերին սահմանադրական շարժումը

Թուրքիայում ուժեղացավ: Այն գլխավորեց Միդհատ փաշան, որն արղեն ձեռք էր բերել «օսմանացման» քաղաքականության կիրառման փորձ: Դանուբի վիլայեթում կրած անհաջողության ազդեցության տակ Միդհատը ձգտում էր գտնել հպատակ քրիստոնյա ժողովուրդներին «օսմանյան ազգի» մեջ ընդգրկելու նոր, ավելի մեղմ ձևեր, համագործակցում էր քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչների հետ: Պատահական չէ, որ սահմանադրության նախագծի վրա նրա ղեկավարությամբ տարվող աշխատանքներին մասնակցում էին նաև լիբերալ ուղղության հայ գործիչների առաջնորդ Գ.Օտյանը և ուրիշներ: Ինչպես զտնում է հեղինակը, հնարավոր է՝ հենց նրանց առաջարկով սահմանադրության նախագծի շարադրանքի մեջ մտցվեց այն հոդվածը, որի համաձայն կայսրության ժողովուրդներին իրավունք էր շնորհվում օգտվել մայրենի լեզվից: Սակայն այդ հոդվածի դեմ հանդես եկան Նամըք Քեմալը և մյուս «նոր օսմանները»՝ փակատար «օսմանացման» ջատագովները, և այն վերանայվեց: Սահմանադրության վերջնական շարադրանքի մեջ մնաց թուրքերենը պետական լեզու հայտարարելու մասին կետը: Բացի դրանից, սահմանադրության մեջ կային նաև մի շարք այլ հոդվածներ, որոնք կազմված էին օսմանիզմի դոկտրինայի ոգով: Այսպիսով, 1876 թ. առաջին թուրքական սահմանադրությունը դարձավ այն համընդհանրապետական փաստաթուղթը, որտեղ իրենց վերջնական ձևավորումը գտան օսմանիզմի դրույթները:

Ազգային-ազատագրական շարժման վերելքը, 1876 թ. ապրիլյան զինված ապստամբությունը և դրան հաջորդած 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո բուլղարների ազատագրումը թուրքական լծից և, վերջապես, սահմանադրական շարժման պարտությունը 19-րդ դարի 70-ական թթ. վերջին ցույց տվին օսմանիզմի սնանկությունը որպես Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման միջոցի: Իշխանության գլուխ եկած «արյունարբու» սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը հրաժարվեց օսմանիզմի քաղաքականություն վարողների նախընտրած ձևերից՝ գերադասելով դիմել ավելի անմիջական ու բիրտ միջոցի՝ պարզապես կայսրության հպատակ ժողովուրդների բնաջնջման: Դրա ցայտուն արտահայտություններն էին 1894-96 թթ. նրա, ինչպես նաև 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքերի կողմից 1909 և 1915-





16 թթ. կազմակերպած ջարդերն ու ցեղասպանությունը: Սակայն օսմանիզմի գաղափարները մոռացության չտրվեցին, մերողները հետագայում օգտագործվեցին թուրքական հանրապետության ազգային փոքրամասնությունների բռնի ձուլման քաղաքականությունն անցկացնելիս:

Հանրագումարի բերելով աշխատության հիմնադրույթները, հեղինակը նշում է, որ օսմանիզմն անցել է երկարատև, գրեթե կեսդարյա տևափոխության ճանապարհ: Միայն 19-րդ դարի 50-70-ական թթ. այն դարձավ պետական ուսմունք: Ներկա աշխատության հեղինակը օսմանիզմի տեսության և գործնականի մանրակրկիտ ուսումնասիրությամբ ակնհայտ է դարձնում քաղաքական այդ դոկտրինայի հետադիմական մեծապետական-շովինիստական և ասիմիլյատորական էությունը՝ ի հակադրություն թուրքական և արևմտյան այն պատմաբանների, որոնք, շրջանցելով իրողությունը, իրական պատմական փաստերը, փորձում են օսմանիզմը ներկայացնել որպես «եղբայրության և հավասարմության» դոկտրինա:

Աշխատությունը կշահեր, եթե հեղինակն ավելի լայնորեն օգտագործեր հայկական սկզբնաղբյուրները: Դա իրեն հնարավորություն կտար ավելի ամբողջական քննության ենթարկելու և վերլուծելու հայ հասարակայնության տարբեր շրջանների վերաբերմունքը դոկտրինայի նկատմամբ, բացահայտելու օսմանիզմի արտահայտությունները հայ իրականության մեջ:

## 2. 1877-78-Ի ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ*

1877 թ. ապրիլի 12-ին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը (1877-78), որը թուրքական լծի տակ գտնվող բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման և Արևելյան հարցում միջազգային հակասությունների սրման հետևանք էր: Ռազմական գործողություններ ծավալվում էին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: 1877 թ. հունիս–1878 թ. հունվարին ռուսական զորքերը Բալկանյան ճա-

* Հայկական Սովետական Հանրագիտարան, Հ. Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 146-147:

կատում պարտության մատնեցին թուրքական զորքերին, 1878 թ. հունվարի 8 (20)-ին գրավեցին Այրիանուպոլիսը: Կովկասյան ռազմաճակատում ռուսական բանակը 1877 թ. ապրիլի 17 (29)-ին գրավեց Բայազետը, մայիսի 5 (17)-ին՝ Արդահանը, նոյեմբերի 6 (18)-ի գիշերը՝ Կարսը, 1878 թ. փետրվարին առանց դիմադրության մտավ Էրզրում:

Պատերազմը մեծ վնաս հասցրեց Արևմտյան Հայաստանին, որտեղ թուրքական իշխանությունները քրդերին հրահրում էին հայկական կոտորածների: Դրա հետևանքով միայն Բայազետի և Ալաշկերտի գավառներում սպանվեց 30 հազար հայ:

Հայ ժողովուրդը ազատագրական մեծ հույսեր էր կապում պատերազմի հետ և մեծ օգնություն ցույց տվեց ռուսական զորքերին: Շուրջ 42 հազար հայ մասնակցեց ռազմական գործողություններին: Ռուսական բանակի ռազմական գործողությունները ղեկավարում էին նաև հայ ազգի գեներալներ Մ.Լորիս-Մելիքովը, Ա.Տեր-Ղուկասովը, Հ.Լազարևը, Բ.Շելկովնիկովը և ուրիշներ: Հայերը ռուսական զորքերին օգնում էին պարենով, հանդերձանքով, փոխադրամիջոցներով: Ազատագրության հույսը կապելով Ռուսաստանի հետ, հայ ազատագրական շարժման ղեկավար շրջանները դիմումներ ուղղեցին ցարական կառավարությանը՝ ազատել արևմտահայությանը թուրքական լծից:

Ռուսաստանի և պարտված Թուրքիայի միջև 1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին Սան Ստեֆանոյում (Կոստանդնուպոլսի մոտ) կնքվեց հաշտության պայմանագիր:

Պայմանագրով սուլթանական կառավարությունը ճանաչեց Չեռնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի անկախությունը, Բուլղարիային տրվում էր ինքնավարություն, իսկ Բոսնիայում և Հերցեգովինայում կատարվելու էին բարեփոխումներ: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանին: 16-րդ հոդվածում մասնավորապես ասված էր. «...Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հառաջացող բարելավումներ և բարենորոգություններ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից» (Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. Ե., 1972, էջ 92):





Այդ հոդվածը էականորեն տարբերվում էր Թուրքիայի եվրոպական տիրույթներին վերաբերող ձևակերպումներից: Այստեղ բառ անգամ չկար ինքնավարության, կոնկրետ անելիքների մասին: Մինչդեռ Բալկաններին վերաբերող հոդվածները կոնկրետ սահմանումներ էին պարունակում: 16-րդ հոդվածի սահմանումը հետևանք էր այն բանի, որ միջազգային դիվանագիտության մեջ առաջին անգամ արծարծված Հայկական հարցը հարուցվեց հանկարծակի: Հոդվածը մշակած ռուս դիվանագետ Ն.Իգնատևին չէր հետաքրքրում հայ ժողովրդի ազատագրության հարցը. այդ հոդվածը Ռուսաստանին հարկավոր էր ժամանակ առ ժամանակ Բարձր Դռան վրա ճնշում գործադրելու համար: Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Բալկաններում և Փոքր Ասիայում հակասում էր եվրոպական տերությունների, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի շահերին: Իրենց շահերին զոհելով հայ ժողովրդի անկախության օրինական և արդարացի ձգտումները, Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան պահանջեցին վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագիրը: 1878 թ. հունիսի 1 (13)-ին Բեռլինում հրավիրվեց կոնգրես՝ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Թուրքիայի մասնակցությամբ: Հունաստանի, Իրանի, Ռումինիայի, Չեռնոգորիայի, Սերբիայի ներկայացուցիչները հրավիրված էին իրենց վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցելու համար: Բեռլին էր մեկնել նաև հայ ազգային պատվիրակությունը՝ Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ) գլխավորությամբ, սակայն պատվիրակությանը մասնակից չդարձրին կոնգրեսի նիստերին: Կոնգրեսի որոշմամբ Բուլղարիան հռչակվում էր ինքնավար պետություն, Չեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան ճանաչվում էին անկախ: Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում Ռուսաստանին էին մնում Կարսը, Արդահանը և Բաթումը, Թուրքիային էին վերադարձվում Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը: Հայ ազգային պատվիրակությունը Բեռլին էր ժամանել Արևմտյան Հայաստանի համար վարչական ինքնավարություն պահանջելու նպատակով: Կոնգրեսին ներկայացվեց հուշագիր, Արևմտյան Հայաստանի քարտեզը (կազմել էր գերմանացի պրոֆեսոր Ռ.Կիպերտը) և վիճակագրություն Հայաստանի վերաբերյալ: Չնայած հայկական պատվիրակության ջանքերին,

Բեռլինի կոնգրեսն ընդունեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի անգլիական խմբագրումը, որը կազմեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը. դա հերթական հարված էր Հայաստանի ազատագրության խնդրին: Հոդվածում ասված էր. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը» (Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ե., 1972, էջ 128):

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով փոխարինելը նշանակում էր հայերին հետաքրքրող խնդիրների լուծումը վերցնել Ռուսաստանի ձեռքից և հանձնել եվրոպական տերությունների տնօրինությանը: Հայկական հարցն Օսմանյան կայսրության ներքին խնդրից՝ ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ լուծվելու հնարավորությունից, վերածվում էր միջազգային հարցի, որի համար պատասխանատվություն էին ստանձնում և երաշխիքներ տալիս Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունները: Հայկական հարցը դրանով իսկ դառնում էր իմպերիալիստական տերությունների շահադիտական քաղաքականության և միջազգային դիվանագիտության չարաշահման առարկա, մի պարագա, որը բացասական հետևանքներ ունեցավ արևմտահայերի պատմական ճակատագրի համար:

Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով սկզբնավորվել է Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը: Հայ հասարակական-քաղաքական կյանքում սկզբնավորվել է դիվանագիտության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու, ժողովրդի միավորումն իրականացնելու, սեփական պետականություն ստեղծելու մտածելակերպն ու գործելակերպը:





## 3. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ*

1876 թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը սկզբնավորեց «զուլումի»՝ ռազմաոստիկանական բռնի վարչակարգի ժամանակաշրջանը: Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների արտահայտված անտարբերությունը Աբդուլ Համիդ 2-րդն օգտագործեց այդ հարցը յուրովի լուծելու համար: 19-րդ դարի 80-ական թթ. ուժեղացան հակահայկական հալածանքները, փակվեցին հայկական դպրոցները, թերթերը, արգելվեց «Հայաստան», «ազատություն», «հեղափոխություն» ևն բառերի գործածությունը, բանտարկվեցին բազմաթիվ մարդիկ, առավել վատթարացավ հայ գյուղացիության վիճակը, ավերվեցին ու թալանվեցին բազմաթիվ գյուղեր: Սուլթանը մշակում էր հայկական կոտորածների ծրագիր: Հրահրվում էր մահմեդականների մոլեռանդությունը «գյավուրների» դեմ: Քրդական ֆեոդալական վերնախավի հակահայկական խժդժությունները Վանի ու Կարինի նահանգներում ստանում էին պետության հովանավորությունը: 1890-92 թթ. ստեղծվեցին հեծյալ գնդեր (սուլթանի անունով կոչվեցին «համիդիե»), որոնք արյունոտ դեր էին խաղալու հայկական կոտորածների ժամանակ: Աբդուլ Համիդ 2-րդը պետական քաղաքականության մակարդակի բարձրացրեց պանիսլամիզմը, որը քարոզում էր բոլոր երկրների մահմեդականների միավորում, պահանջում խեղդել ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Հայահալած քաղաքականությունն ամենից շատ վնասում էր արևմտահայ աշխատավոր զանգվածներին: Հայ գյուղացիների հողազրկությունը հասավ մեծ չափերի: 19-րդ դարի վերջին հայ գյուղացիների հողերի վրա մահմեդական գաղթականներին ամրացնելու քաղաքականությունը համապարփակ բնույթ էր ստացել:

Այդ ամենը առաջ բերեց խոր դժգոհություն, որի արտահայտություններից մեկը ժողովրդական վրիժառուների՝ ֆիդայիների (հայդուկների), պայքարն էր հարստահարողների դեմ: Մուշ-Սասունում գործում էին սասունցի Արաբոն ու նրա զինակիցները, Երզնկայի ու Սեբաստիայի տա-

* Հայկական Սովետական Հանրագիտարան, Հ. Սովետական Հայաստան, Երևան, 1987, էջ 147-149:

յամբրում՝ Գալուստ Արխանյանի, Ռուբեն Շիշմանյանի, Հովհաննես Մինասյանի ղեկավարած հայդուկային խմբերը: Շապին-Գարահիսարի 1895 թ. հերոսական ինքնապաշտպանության ժամանակ աչքի ընկավ Դանիել Չաուշի խումբը: 1893 թ. զոհվեցին դեռևս 1880-ական թթ. թուրքական բռնապետության դեմ պայքարի ելած բազմաթիվ ֆիդայիներ և հասարակական գործիչներ, իսկ թուրքական բանտերը ծայրեծայր լցվեցին հայ «կասկածյալներով» ու նրանց համախոհներով:

Աբդուլ Համիդ 2-րդի քաղաքականությունը նոր թափ հաղորդեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժմանը: Այդ շարժման գաղափարախոսության մշակման գործում մեծ դեր խաղացին գրողներ Րաֆֆին, Ռաֆայել Պատկանյանը, հասարակական-քաղաքական գործիչներ Գրիգոր Արծրունին, Մկրտիչ Խրիմյանը, Մկրտիչ Փորթուգալյանը և ուրիշներ: Ստեղծվեցին մի շարք գաղտնի ընկերություններ: Դեռևս 1872 թ. Վանում հիմնվել էր «Միություն ի փրկություն» գաղտնի խմբակը, որի նպատակն էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը: 1881 թ. Կարինում ստեղծվեց Արևմտյան Հայաստանն ազատագրելու նպատակ հետապնդող առաջին հեղափոխական գաղտնի կազմակերպությունը՝ «Պաշտպան հայրենյաց» ընկերությունը, որի անդամների թիվը հասնում էր մի քանի հարյուրի: Կազմակերպությունը ճյուղավորված էր, տարածված Արևմտյան Հայաստանի շատ շրջաններում: Նրա անդամներն էին գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, մտավորականներ: 1882 թ. հայ ուսանողները Մոսկվայում ստեղծեցին «Հայրենասերների միությունը»: 1885 թ. Մարզվանի ամերիկյան քոլեջում ստեղծվեց «Փոքր Հայքի կազմակերպությունը», որը ձգտում էր ժողովրդին զինել ինքնապաշտպանության նպատակով: Սակայն այդ կազմակերպությունները չկարողացան ծավալել լայն գործունեություն և երկար կյանք չունեցան:

Հայկական իրականության մեջ սկսեցին ստեղծվել քաղաքական կուսակցություններ, որոնց նպատակն էր Հայկական հարցի վերջնական լուծումը:

Մ.Փորթուգալյանի գաղափարակիցներ Մ.Ավետիսյանը, Գ.Թերլեմեզյանը, Ռ.Շատվորյանը, Գ.Աճեմյանը և ուրիշներ 1885 թ. Վանում հիմնեցին Արմենական կազմակերպությունը (Մարսելում Մ.Փորթուգալյանի հրատարակած «Արմենիա» թերթի անունով)՝ առաջին քաղաքական կուսակցությունը հայ իրականության մեջ: Նպատակն էր հեղափոխության միջոցով ազատության իրավունք ձեռք բերել արևմտահայերի համար: Արմենականները գտնում էին, որ հարկավոր է միավորել հայ հայրենասերներին, հեղափոխական գրականությամբ արթնացնել ժողովրդին, կազմակերպել զինավարժեցում, նախապատրաստել ինքնապաշտպանություն, ստեղծել զինված խմբեր ևն: Իր ժամանակի պատմական որոշակի պայմաններում կուսակցության գործունեությունն առաջադիմական էր: Այն իր մասնաճյուղերն ուներ Մուշում, Քիթլիսում, Կ.Պոլսում, Պարսկաստանի հայկական տարածքներում, Թիֆլիսում, Բուլղարիայում: Արմենականները գործուն մասնակցություն ունեցան Վանի 1896 թ. և 1915 թ. ինքնապաշտպանական մարտերին:





1887 թ. Ժնևում Ավետիս Նազարբեկը, Մարո Նազարբեկը, Գաբրիել Կաֆյանը, Ռուբեն Խանազատը և ուրիշներ ստեղծեցին Հնչակյան կուսակցությունը: Ծրագիրն էր թուրքական լծից ազատագրել Արևմտյան Հայաստանը, միավորել հայկական հողերը, ստեղծել անկախ հայկական պետություն («մոտավոր նպատակ»), հասնել ընկերվարական հասարակարգի, որտեղ արտադրության միջոցների տերը լինելու էին աշխատավորները («հեռավոր նպատակ»): Կուսակցության գործունեության հիմնական ասպարեզը Արևմտյան Հայաստանն էր: Մասնաճյուղեր ուներ Կովկասում և Անդրկովկասում, Պարսկաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հունաստանում, ԱՄՆ-ում, Եգիպտոսում, հայկական համարյա բոլոր գաղթավայրերում: Հնչակյանները 1890-ական թթ. կազմակերպեցին մի շարք զինված ելույթներ՝ Զեյթունում, Սասունում, ցույցեր՝ Կ.Պոլսում, (Գ-ում Գափու, Բաբը Ալի): Հնչակյանները հայ իրականության մեջ առաջին անգամ թարգմանեցին և տարածեցին մարքսիստական գրականությունը:

1890 թ., Թիֆլիսում, Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը և ուրիշներ հիմնեցին Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը: Դաշնակցության խնդիրն էր ակտիվ գործունեություն ծավալել Արևմտյան Հայաստանում, պաշտպանել հայերի իրավունքները զինված ելույթների ու ահաբեկչական գործողությունների միջոցով, արևմտյան տերությունների օգնությամբ ձեռք բերել

Արևմտյան Հայաստանի ինքնավարություն օսմանյան պետության կազմում: Ագրարային հարցում նախատեսվում էր հողը տալ գյուղական համայնքներին: Դաշնակցությունը, ընդհարվելով հայկական մյուս կուսակցությունների և կազմակերպությունների հետ, ձգտում էր իր ձեռքը վերցնել հայ ազատագրական շարժման ղեկավարությունը: Կուսակցությունը ղեկավար բյուրոներ ուներ Կովկասում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում: Եվրոպական բյուրոն հետամուտ էր եվրոպական պետությունների դիվանագիտական միջամտությամբ Հայկական հարցի լուծմանը: Մերձավորարևելյան բյուրոն Արևմտյան Հայաստանում կազմակերպում էր ինքնապաշտպանական խմբեր:

Հայ քաղաքական կուսակցությունները գործում էին անջատ-անջատ ու չհամաձայնեցված և չկարողացան լուծել իրենց առջև դրված խնդիրները:

1890-ական թթ. սկզբից թուրքական կառավարությունը արշավանք էր նախապատրաստում իր կիսանկախ վիճակը պահպանող Սասունի դեմ: Իշխանությունների դրդմամբ 1891 թ. Տալվորիկ, Անդոկ և Ծովասար մտան քրդական հրոսակախմբերը, սակայն հանդիպելով սասունցիների համառ դիմադրությանը, հեռացան: 1893 թ. Բիթլիսի կուսակալի կանոնավոր զորքերի և քրդերի հարձակումը ևս հաջողություն չունեցավ: 1894 թ. գարնանն իր փոքրաթիվ խմբով Տալվորիկ ժամանած Համբարձում Բոյաջյանը (Մուրադ) ստանձնեց Սասունի ինքնապաշտպանության կազմակերպման ընդհանուր ղեկավարությունը: 1894 թ. ամռանը Սասունի վրա արշավեց թուրքական 4-րդ բանակը Զեքի փաշայի գլխավորությամբ: Նրա տրամադրության տակ գտնվող 12 հազարանոց զորքի հետ Դիարբեքիրից Սասուն շարժվեցին Օսման փաշայի հետևակային կորպուսը, Երզնկայից ու Մուշից՝ հեծելազորային երկու գունդ, Էրզրումի 26-րդ հետևակային գունդը և մի քանի տասնյակ հազար քուրդ և թուրք բաշիբոզուկներ: Չնայած հայերի հերոսական դիմադրությանը, թուրքական գերակշիռ ուժերը օգոստոսին մտան Սասուն: Թուրք բարբարոսներին զոհ գնաց ավելի քան 10 հազար հայ, ավերվեց շուրջ 40 գյուղ: Հերոսի մահով զոհվեց ազատագրական շարժման հայտնի գործիչ Գրգոն (Գ.Մոսեյան), իսկ ֆիդայիներ Գևորգ Չաուշը, Հ.Բոյաջյանը և ուրիշներ գերվեցին: Թուրք և քուրդ ջարդարարները պարգևատրվեցին կառավարության կողմից:





Հայկական ջարդը Սասունում մեծ արձագանք գտավ Եվրոպայում: Հասարակական կարծիքի ճնշման տակ 1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները մշակեցին և Թուրքիայի կառավարությանը ներկայացրին հայկական վեց վիլայեթներում (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի) բարենորոգումներ անցկացնելու ծրագիր («Մայիսյան բարենորոգումներ»): Նախագիծը հիմնականում նախատեսում էր հայաքնակ նահանգներում կենտրոնական իշխանության ամրապնդում, հասարակական կյանքի զարգացում, արդարության և տնտեսական դրության կարգավորում: Նահանգների վալիները պետք է նշանակվեին Օսմանյան կայսրության ընդունակ և բարեխիղճ պաշտոնյաներից, առանց կրոնի խտրության: Մեծ տերությունների կիսապաշտոնական հովանավորությամբ Բարձր Դռանը կից կազմվելու էր մշտական հանձնաժողով, որը պետք է հսկեր բարենորոգումների գործադրությունը: Ծրագրի գործադրությունը հսկելու էր սուլթանի կողմից ընտրված և տերությունների հավանությանն արժանացած գերագույն կոմիսարը: Թեև ծրագիրը խիստ չափավոր էր, այնուամենայնիվ հանդիպեց սուլթանական կառավարության դիմադրությանը: Օգտվելով մեծ տերությունների միջև եղած հակասություններից, թուրքական կառավարությունը ոչ միայն դիմեց սովորական դարձած ձգձգումների քաղաքականությանը, այլև շարունակեց հայկական կոտորածները: 1895 թ. սեպտեմբերին-դեկտեմբերին հայկական զանգվածային ջարդեր տեղի ունեցան Ակհիսարում, Տրապիզոնում, Բաբերդում, Դերջանում, Երզնկայում, Բիթլիսում, Գյումուշխանեում, Եղեսիայում, Շապին-Գարահիսարում, Էրզրումում, Արաբկիրում, Մալաթիայում, Խարբերդում, Ակնում, Դիարբեքիրում, Մարզվանում, Սեբաստիայում: Կոտորածները կատարվում էին կանոնավոր զորամասերի, «համիդիե» գնդերի, ոստիկանության միջոցով՝ ամենադաժան ու անմարդկային եղանակներով:

Շատ տեղերում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: 1895 թ. հոկտեմբերին զեյթունցիները Ղազար Շովրոյանի և Աղասի Թուրսարգսյանի գլխավորությամբ ապստամբեցին, զինաթափեցին տեղի թուրքական կայազորը և ավելի քան երկու ամիս հերոսական մարտեր մղեցին Զեյթուն արշաված թուրքական տասնապատիկ գերազանց զոր-

քերի դեմ: Զեյթունը մնաց անառիկ: 1896 թ. հունվարին մեծ տերությունների միջամտությամբ թուրքական զորքերը հեռացան գավառի սահմաններից, Զեյթունում նշանակվեց քրիստոնյա կառավարիչ, բնակչությունը հինգ տարով ազատվեց հարկերից:

1896 թ. հունիսին Վանի հայ բնակչությունը Մ.Ավետիսյանի, Գ.Պեռզիկյանի, Ա.Տերոյանի, Ն.Տեր-Հակոբյանի գլխավորությամբ դիմադրեց և ետ շպրտեց թուրքական զորքերին: Չկարողանալով գրավել Վանը, թուրքական բանակը հրետակոծեց և հրդեհեց այն: Մարտնչող հայերը դիմեցին անգլիական հյուպատոսի միջնորդությանը և որոշեցին դադարեցնել կռիվն ու հեռանալ երկրից: Թուրքական իշխանությունները խոստացան ապահովել նրանց մեկնումը Պարսկաստան, սակայն ճանապարհին նրանց վրա հարձակվեցին թուրքական զորքերը և քրդերը: Հայերի մեծագույն մասը զոհվեց: Քաղաքից ինքնապաշտպանության մարտիկների հեռանալուց անմիջապես հետո թուրք զինվորները, քրդական հրոսակները Հալիմ փաշայի առաջնորդությամբ խուժեցին հայկական թաղամասերը, թալանի և ավերի մատնեցին ամեն ինչ, որի քաշեցին անզեն ու անմեղ մարդկանց: 1896 թ. Սասունի ինքնապաշտպանական մարտերին մասնակցեցին ազատագրական շարժման գործիչներ Անդրանիկը (Օզանյան Անդրանիկ), Աղբյուր Սերոբը, Սպաղանցի Մակարը:

1896 թ. օգոստոսի 14(26)-ին հայկական կոտորածներից վրդովված մի խումբ զինված հայ երիտասարդներ (հնչակյաններ և դաշնակցականներ) Բաբկեն Սյունիի գլխավորությամբ գրավեցին Կ.Պոլսի Օտտոմանյան բանկը՝ եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելու և հայկական բարենորոգումների մայիսյան ծրագրի գործադրումն արագացնելու նպատակով: Եվրոպական դեսպաններին ուղղած իրենց հայտագրում նրանք սպառնում էին պայթեցնել բանկը: Սուլթանական կառավարությունը հարկադրված դիմեց մեծ տերությունների դիվանագիտական միջնորդությանը: Ռուսական դեսպանության ներկայացուցիչ Մաքսիմովին 3-ժամյա բանակցություններից հետո հաջողվեց համոզել բանկը գրավողներին թողնել այն և մեկնել արտասահման:

Սուլթանական կառավարությունը հայերի արդարացի գործողությունները առիթ դարձրեց մահմեդական բնակչության մեջ հակահայ





կական տրամադրություններ գրգռելու համար: Հատուկ նախապատրաստված զինված ամբոխը երեք օր շարունակ անխնա կոտորում էր Կ.Պոլսի անմեղ և անպաշտպան հայ բնակչությանը: Զոհվեց մոտ 10 հազար հայ:

1894-96 թթ. հայկական կոտորածների հետևանքով Օսմանյան կայսրությունում սպանվեց շուրջ 300 հազար հայ, 100 հազար հայ բռնի մահմեդականություն ընդունեց, իսկ 100 հազար հայ տարագրվեց Ռուսաստան, աշխարհի տարբեր երկրներ:

## 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՄՆ-Ի ԱՄՍԱԳՐԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ

### (19-րդ դարի 90-ական թվականների կեսեր)*

Թուրքական սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի սատանայացող հակահայկական քաղաքականությունը, հայ խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներն Օսմանյան կայսրության մեջ 19-րդ դարի 90-ական թթ. կեսերին լայնորեն լուսաբանվեցին ԱՄՆ-ի թերթերի և ամսագրերի էջերում: Ծանոթությունը մի շարք հասարակական գործիչների կարծիքին, որոնք հանդես էին գալիս ամերիկյան պարբերական հրատարակությունների էջերում, թույլ է տալիս ավելի խորն ու լիակատար բացահայտելու մեծ տերությունների քաղաքականության էությունը Հայկական հարցում[1]:

Հայաստանի և Հայկական հարցի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով հանդես են գալիս ճանապարհորդներ, առևտրականներ, ԱՄՆ-ի համալսարանների պատմաբան դասախոսներ, ամերիկյան միսիոներներ, լրագրողներ, դիվանագետներ, եկեղեցական գործիչներ: Ոմանք ընթերցողին ծանոթացնում են հայ ժողովրդի, հայ եկեղեցու պատմությանը, նկարագրում 1894-96 թթ. արյունալի ջարդերը, մյուսները վերլուծում են Հայկական հարցի շուրջը ստեղծված դիվանագիտական բարդությունները:

* Հայկական ԽՍՀ ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1980, h. 3, էջ 37-48; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1980, 18, 25 հոկտեմբերի, 1 նոյեմբերի:

1 Հոդվածը շարադրված է ամերիկյան *Atlantic Monthly ,Arena, Century Magazine, Catholic World, Forum, Nation, Outlook, Review of Reviews* ամսագրերի նյութերի հիման վրա:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն նյութերը, որոնք վկայում են 19-րդ դարի 90-ական թթ. Օսմանյան կայսրության չափազանց ծանր ներքին դրության մասին: Հիմնվելով զրկանքներով ու տառապանքներով լի իրենց ուղին անցած հայ փախստականների պատմությունների վրա, ամերիկահայ հեղինակ Մ.Գյուլեսյանը «Հայ փախստականները» հոդվածում ընթերցողին ծանոթացնում է թուրքական իրականության զարհուրելի պատկերին: Նա մանրամասն նկարագրում է հայ խաղաղ բնակչության կոտորածները, այն դաժանությունը, կաշառակերությունն ու կոռուպցիան, որոնք այնքան հատուկ էին ժամանակի թուրքական վարչակազմին[1]: «Մեծ մարդասպանը և Հայաստանի քրիստոնյաները» հոդվածի հեղինակ Ջ.Մակդերմոթը Օսմանյան կայսրությունը համարում էր «քաղաքակիրթ աշխարհի վարակի աղբյուր»[2]:

«Սենչրի մագազին» ամսագրում հրատարակված է Թուրքիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար, դեսպանորդ Ա.Տերրելի «Զրույց Աբդուլ Համիդի հետ» հոդվածը: Այնտեղ նկարագրված է ամերիկյան դիվանագետի հանդիպումը թուրքական սուլթանի հետ և ցույց է տրված Համիդի և նրա կառավարության անմիջական մասնակցությունը հայերի կոտորածի կազմակերպմանը: Ա.Տերրելի հետ ունեցած զրույցի ժամանակ սուլթանը, կարծես արդարացնելով իրեն և իր նախորդներին, բերում էր հայ ժողովրդի նկատմամբ լավ վերաբերմունքի բազմաթիվ վկայություններ[3]: Սակայն սուլթանը նկատի ուներ այն հայերին, որոնք ամբողջությամբ նվիրել էին իրենց Բարձր Դռանը ծառայելուն և միվին հեռացել արևմտահայ աշխատավոր բնակչության շահերից:

«Թուրքիան և հայկական ճգնաժամը» հոդվածի հեղինակ Թ.Պետերսոնը սուլթան Աբդուլ Համիդի արյունախում քաղաքականության ակունքները որոնում էր մահմեդական մոլեռանդության մեջ: Նրա կարծիքով, սուլթանը մեղավոր չէ, քանի որ «նա տիպիկ մահմեդական է՝ և ամենաուղղահավատ մահմեդականն այն տիրակալների շարքում,

1 Gulesian M.H., The Armenian Refugees. - *The Arena*, 1897, vol. 77, p. 659-662.

2 McDermot G., The Great Assassin and the Christians of Armenia. - *The Catholic World*, 1896, vol. 64, p. 295.

3 Terrell A.W., An Interview with Sultan Abdul Hamid. - *The Century Magazine*, 1897, vol. 55, p. 133.



որոնք երբևէ նստել են կայսրության գահին: Նա անում է այն, ինչ նրան հրամայում է Մուհամեդը Ղուրանի 47-րդ սուրահում»: Ամերիկյան հեղինակը գրել է, որ մի անգամ Նեջիբ փաշան Դամասկոսում քրիստոնեական հյուպատոսության գաղտնի գործակալին ասել է, թե իբր թուրքական կառավարությունը կարող էր իր իշխանությունը պահպանել միայն քրիստոնյա հպատակների թիվը կրճատելու դեպքում: Հոդվածում Թ.Պետերսոնը բերել է մեծ վեզիրի հետևյալ խոսքերը. «Ազատվել հայկական հարցից, նշանակում է ազատվել հայ ժողովրդից»[1]:

Եվ ահա շուտով, սկսած 1894 թ., այդ խոսքերը հաստատվեցին հայ խաղաղ բնակչության մի շարք զարհուրելի ջարդերով:

19-րդ դարի 90-ական թթ. ԱՄՆ-ի ամսագրերում հրապարակվել են Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածի պատկերը ներկայացնող հոդվածներ, վկայություններ, հաղորդումներ և նամակներ: Այսպես, Լ.Աբբոտի կարծիքով, Թուրքիայում հայ բնակչության կոտորածը արդյունք է ոչ թե զազրելի ամբոխի գործողությունների, այլ սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության, որը կիրառվում էր հետևողականորեն, համառորեն և անխնա կերպով[2]:

Նյու Յորքի «Նեյշն» ամսագրում զետեղված է ազգությամբ հույն Դ.Կալոպոտակեսի «Կոստանդնուպոլսի ջարդերը» հոդվածը, որն ուղարկվել էր Աթենքից: Նա հայտնում է 1200 հայ փախստականների մասին, որոնք ապաստան էին գտել Աթենքում և Պիրեյում: Կալոպոտակեսը նշում է, որ հայ գաղթականները, որպես կանոն, մնում էին առանց աշխատանքի և քարշ էին տալիս իրենց ողորմելի գոյությունը: Նույն հեղինակը բերում է ականատես հայերի մի շարք վկայություններ, որոնք ապացուցում են թուրքական պաշտոնական իշխանությունների մասնակցությունը կոտորածին: Ականատեսներից մեկը պատմել էր, որ հայերին կոտորող մահմեդական ամբոխի գլուխ էին կանգնած 25 ոստիկան: Մյուս ականատեսը վկայում է, որ թուրք զինծառայողները ղեկավարում էին 400 սոֆթաների գործողությունները, որոնք հայերի վրա էին նետվում բացականչելով՝ «Երկար կյանք սուլթան Համիդին»: Երկու փախստական հայեր պատմում էին, թե ինչպես թուրք

1 Peterson T., Turkey and Armenian Crisis. - *The Catholic World*, 1895, vol. 61, p. 667.

2 Abbott L., Armenian Question. - *The Outlook*, 1896, vol 54, p. 1036.

մասվածառը բռնել էր մի հայի և իր խանութի վաճառասեղանի վրա կտոր-կտոր արել[1]:

Բոստոնի «Ատլանտիկ մանթլի» ամսագրում հրապարակված հոդվածում Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանության աշխատակից Չ.Ռոբերտսը հանգամանորեն նկարագրում է 1896 թ. Կոստանդնուպոլսի կոտորածի սարսափելի տեսարանները: Նրա վկայությամբ, երեք օրվա ընթացքում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում սպանվել է յոթից մինչև տասը հազար հայ[2]: Հոդվածի հեղինակը բերում է դեսպանության աշխատակից Լեմմեի պատմածը հայուհի Մանեյանի՝ սուլթան Աբդուլ Մեջիդի քարտուղար Հակոբ Հակոբյանի դստեր մասին, քարտուղար, որը ժամանակին փրկել էր սուլթանի կյանքը: Կոստանդնուպոլսի կոտորածի ժամանակ զոհվեցին այդ կնոջ երեք որդիները: Ամբողջ երկու օր երեք եղբայրները ետ էին մղում թուրք զինվորների հարձակումը: Երբ փամփուշտները վերջացան, եղբայրները վերջ տվեցին իրենց կյանքին: Թշվառ կինը մի մեռնող որդուց մյուսին էր նետվում: Տուն ներխուժած թուրք զինվորները որոշ ժամանակ լուռ դիտում էին այդ սարսափելի տեսարանը: Հետո նրանցից մեկն ասաց. «Այս քավթառ շանը մենակ թողեք իր մեռած լակոտների հետ»[3]:

Թ.Պետերսոնը «Թուրքիան և հայկական ճգնաժամը» հոդվածում մեջ է բերում Վ.Հյուգոյի դիպուկ արտահայտությունն Օսմանյան կայսրության մեջ կատարված ողբերգական իրադարձությունների առթիվ. «Երբ Փարիզում են մարդ սպանում, ապա այդ արարքը կոչվում է մարդասպանություն, իսկ Արևելքում հիսուն հազար մարդու կոտորածը հարց է համարվում»[4]:

Այս շրջանում ամերիկյան տարբեր բարեգործական ընկերություններ կոտորածներից տուժած հայերին ցուցաբերում էին աջակցություն և օգնություն. այդ բանը ևս արտացոլվել է ԱՄՆ-ի ամսագրերի էջերում: Ամերիկյան որոշ կազմակերպություններ ստանձնել էին Թուրքիայից փախածներին տեղավորելու գործը: Մ.Գյուլեսյանը հատկապես նշում է

1 Kalopothakes D., The Constantinople Massacres. - *The Nation*, 1896, vol. 63,p. 265-266.
2 Roberts Ch., A Mother of Martyrs. - *The Atlantic Monthly*, 1899, vol. 83, p. 90.
3 Նույն տեղում, էջ 94-96:
4 Peterson T., Նշվ. հոդվ., էջ 667:





Օգնության հայկական ասոցիացիայի և Նյու Յորքի դոկտոր Այվազյանի գործունեությունը: Ինքը՝ Մ.Գյուլեսյանը, իր ֆաբրիկայի հարկերից մեկը տրամադրել է փախստական հայերին, նրանց ապահովելով սննդով և հագուստով[1]: «Օգնություն Հայաստանին» հոդվածում «Աութլուկ» ամսագիրը գրել է, որ Կարմիր խաչի ընկերությունը, Օգնության հայկական ասոցիացիան և Ավետարանական միությունը միավորել են իրենց ջանքերը՝ հայերին օգնելու նպատակով նվիրատվություններ հավաքելու համար:

Անհրաժեշտ է նշել, որ ամերիկյան միսիոներների ակտիվ գործունեության նպատակները չէին սահմանափակվում Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների աջակցությամբ և հովանավորությամբ: Միսիոներությունը ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության իրականացնողն էր, կառավարություն, որը ձգտում էր յուրովի ամրապնդել իր ազդեցությունը քայքայվող Օսմանյան կայսրությունում:

Որոշ հեղինակներ պատմական էքսկուրսներ էին կատարել, իրենց ընթերցողներին ծանոթացնելով հայ ժողովրդի անցյալին: Այդ հոդվածները ժամանակին ունեին ճանաչողական նշանակություն և ընթերցողին պատկերացում էին տալիս մի ժողովրդի մասին, որը զգալի ներդրում է կատարել համաշխարհային մշակույթի գանձարանում:

Նյու Յորքի «Ֆորում» ամսագրում զետեղված է գերմանացի աչքի ընկնող քաղաքական գործիչ Պ.Ռոըբախի «Աջակցություն Հայկական հարցին» հոդվածը: Իր հոդվածում նա խնդրի իմացությամբ ամերիկյան ընթերցողին ծանոթացնում է հայ ժողովրդի պատմությանը, Հայկական հարցին: Հեղինակը նշում էր, որ Հռոմում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմների ժամանակ Հայաստանը դարձել է աշխարհի մեծ պետություններից մեկը, իսկ մեր թվարկության 301 թ. պատմության մեջ առաջին անգամ քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն[2]:

Ամերիկյան ամսագրերի կրոնական հրատարակություններում ընդգծվում էր, որ հայերը քրիստոնեական քաղաքակրթության հնագույն ժողովուրդ են, որ նրանք միշտ բարեկամաբար և խաղաղասիրությամբ

1 Gulesian M.H., The Armenian Refugees. - *The Arena*, 1897, vol. 77, p. 654-655.
2 Rohrbach P., A Contribution to the Armenian Question. - *The Forum*, 1900, vol. 19, p. 482-483.

են վերաբերվել հարևան ժողովուրդներին: Բազմաթիվ օրինակներ էին բերվում հին պատմությունից, ցույց էր տրվում հայերի բարձր մակարդակը գրականության, գիտության և արվեստի բնագավառում[1]:

Ամերիկյան հրապարակախոս Թ.Պետերսոնը գրել է, որ «նրանք, ովքեր ճանապարհորդել են Թուրքիայում, ուսումնասիրել են պատմությունը կամ հետաքրքրվել հնագույն քաղաքակրթություններով, կհամաձայնվեն, որ անցյալում հայերը եղել են ավելի քաղաքակրթված, ավելի շատ են առաջադիմել արվեստի, առևտրի և գրականության զարգացման գործում, քան թուրքերն այսօր»[2]: Հենց նա էլ նկատել է, որ հայերը, որոնց քանակն Օսմանյան կայսրության մեջ հասնում էր 3 միլիոնի, ունեին ավելի քան 30 պարբերական հրատարակություն, այն դեպքում, երբ 15 միլիոն թուրքերն ունեին 20 հրատարակություն: Ավելին, թուրքական հրատարակությունների մեծ մասի գլուխ կանգնած էին հայ խմբագիրներ[3]:

«Հայաստան. անցյալը և ներկան» հոդվածում, որը հրապարակվել էր Նյու Յորքի «Կաթոլիկ աշխարհ» ամսագրում, Կաթոլիկ համալսարանի հնագիտության և արևելյան լեզուների պրոֆեսոր Հ.Հիվերնատը ամերիկյան ընթերցողին ամենասեղմ ձևով ներկայացրել է հայ ժողովրդի անցած փշոտ ճանապարհը: «Դրախտի ենթադրյալ երկիրը», «Սուրբ ընդունումը», «Մահմեդական նվաճողները» գլուխներում հեղինակը տալիս է Հայաստանի աշխարհագրական դիրքի նկարագրությունը, հայ ժողովրդի, հայ եկեղեցու համառոտ պատմությունը[4]: Իհարկե, չի կարելի համաձայնվել Հ.Հիվերնատի բոլոր դրույթների հետ: Սակայն ակներև է, որ նա ձգտել է այն ժամանակվա գիտական տվյալների հիման վրա համապատասխան պատկերացում տալ հայ ժողովրդի պատմության և քաղաքակրթության մասին:

19-րդ դարի 90-ական թթ. ամսագրերի էջերում զգալի տեղ էր հատկացվում Հայկական հարցում եվրոպական տերությունների քաղաքականության վերլուծությանն ու քննադատությանը:

---

1 Ryan R.M., Why we Catholics Sympathize with Armenia. - *The Catholic World*, 1895, vol. 62, p. 181-182.

2 T.Peterson, Նշվ. աշխ., էջ 668:

3 Նույն տեղում, էջ 669:

4 Hyvernat H., Armenia. Past and Present. - *The Catholic World*, 1895, vol. 62,p. 312-322.





Քննարկելով Օսմանյան կայսրության մեջ հայերի դրության վատթարացման պատճառները, շատ հեղինակներ մատնանշում էին Հայկական հարցում Դիզրայելիի, Սոլսբերիի և անգլիական կառավարության մյուս պարագլուխների դիվանագիտական քայլերի բացասական դերը, սկսած Սան Ստեֆանոյի պայմանագրի ժամանակներից և վերջացրած 1894-96 թթ. արյունալի իրադարձություններով:

Ամերիկյան հասարակական կարծիքի, մասնավորապես, հրապարակախոսների քննադատական դիրքավորումը Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի քաղաքականության, Հայկական հարցում անգլիական կառավարողների գործողությունների նկատմամբ, անկասկած, ուշադրության է արժանի: Իհարկե, դա բխում էր ոչ թե հայ ժողովրդի նկատմամբ ունեցած «մարդասիրական զգացմունքներից»: Իմպերիալիստական միջպետական մրցակցության ուժեղացման պահին անգլիական արևելյան քաղաքականության շատ տեսանկյուններ վրդովմունք էին առաջ բերում ԱՄՆ-ի քաղաքական շրջաններում: Նման դիրքավորումը բացատրվում է նաև Կենտրոնական Ամերիկայում Վենեսուելայի պատճառով անգլո-ամերիկյան հակասությունների սրմամբ: 1895 թ. ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարեց, որ Անգլիայի կողմից Վենեսուելայի տարածքի որևէ մասի զավթումը հանդիսանում է Մոնրոյի դոկտրինայի խախտում, և նույնիսկ սպառնաց պատերազմով:

«Դժբախտ Հայաստան» հոդվածում, որ հրապարակվել էր «Կաթոլիկ աշխարհում», որն առանձին ակտիվություն էր դրսևորում լուսաբանելու և մեկնաբանելու Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունները, Ջ.Օ'Շին վերլուծել է 1895 թ. Արևմտյան Հայաստանում կատարված արյունալի իրադարձությունների արմատներն ու պատճառները, ցույց տալով, որ թուրքական իշխանությունների բարբարոսական քաղաքականությունն Արևելյան Եվրոպայի և Անատոլիայի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ նոր չէ և տեղի է ունեցել չորս դարերի ընթացքում: Այն, որ Հայաստանը տնքում է թուրքական կառավարման «երկաթյա կրնկի» տակ, Ջ.Օ'Շին համարում էր Մեծ Բրիտանիայի քաղաքականության ուղղակի հետևանքը: Նա հանգուցյալ «լկտի» վարչապետ լորդ Բիկոնսֆիլդին (Դիզրայելի) լիովին պատասխանատու էր համարում 1895 թ. կոտորածի ժամանակ թափված հայկական արյան

ամեն մի կաթիլի համար, «ամեն մի որբի համար, ամեն մի մոր համար, որը ողբալով երկնքին էր դիմում օգնության աղերսով»: Դատապարտելով Դիզրայելիի մեքենայությունները, որը ցարական կառավարությանը հարկադրեց 1878 թ. զորքերը դուրս բերել Օսմանյան կայսրության այն մարզերից, որոնք խիտ բնակեցված էին հայերով, հեղինակը բրիտանական կառավարողների քաղաքականությունը անվանում էր մաքիավելիական քաղաքականություն[1]:

Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը ճիշտ նույն կերպ է գնահատում Թ.Պետերսոնը, որը «Թուրքիան և հայկական ճգնաժամը» հոդվածում գրում է, որ Մեծ Բրիտանիան ընդդիմացավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սան Ստեֆանոյի պայմանագրի ստորագրմանը, որի համաձայն Թուրքիան պարտավորվում էր ռեֆորմներ անցկացնել հայկական մարզերում մինչև այնտեղից ռուսական զորքերի դուրս բերումը: Հեղինակը ոչ առանց հիմքի նկատել է, որ ապագայում մարդկության պատմության մեջ կգրվեն հետևյալ տողերը. «Ախայում գոյություն ուներ փոքրաթիվ, բայց քաղաքակիրթ քրիստոնյա մի ժողովուրդ, որն Անգլիայի եսամոլության զոհը դարձավ[2]»:

«Աութլուկ» ամսագրում հրապարակված «Թուրքերը և հայերը» վերնագրով հոդվածում Է.Բոլդուինը գրում է, որ անգլիական կառավարությունը թույլ չավեց իրականացնել Սան Ստեֆանոյի պայմանագիրը և ստորագրեց Կիպրոսի կոնվենցիան, որի համաձայն պարտավորվում էր Թուրքիային պաշտպանել այն դեպքում, եթե Ռուսաստանն անցնի նրա սահմանները: Է. Բոլդուինի կարծիքով, Անգլիայի մեղքը չի կարող արդարացվել[3]:

19-րդ դարի 90-ական թթ. կեսերին Հայկական հարցին վերաբերող բազմաթիվ հոդվածներ ու հաղորդումներ են տպագրվել «Ռևյու օֆ Ռևյուզի» էջերում: Ամսագրերի համարներից մեկում տպագրված «Արևելյան մարդակերը կամ սուրբ Գրիգորի փրկությունը» հոդվածում Մեծ Բրիտանիայի արևելյան քաղաքականությունը, սկսած 1878 թ.: Նա

1 O'Shea J., Unhappy Armenia - *The Catholic World*, 1895, vol. 60, p. 554-556.

2 Peterson T., Նշվ. աշխ., էջ 674-675:

3 Baldwin E., The Turks and the Armenians. - *The Outlook*, 1896, vol. 53, p. 242.





նկատում է, որ քանի դեռ բրիտանական դրոշը առանց եվրոպական համերգի թույլտվության ծածանվում է Կիպրոս կղզու վրա, ուղղակի խախտելով միջազգային իրավունքի բոլոր սկզբունքները, Անգլիան իրավունք չունի միջամտելու քայքայված Օսմանյան կայսրության գործերին[1]:

«Անգլիայի ձեռքը թուրքական ջարդերի մեջ» վերնագրով հետաքրքիր հոդված է հրապարակվել Բոստոնի «Արենա» ամսագրում: Մեզ արդեն հայտնի հեղինակ Մ.Գյուլեսյանը անհրաժեշտ չի գտնում նկարագրել վերջին երկու տարվա իրադարձությունները Հայաստանում, երբ Անգլիայի անմիջական թողտվությամբ կոտորվել է 100 հազար մարդ, քանի որ դրանց մասին չափազանց լավ գիտեր հասարակական կարծիքը: Հոդվածում խոսքեր են մեջբերվում 1878 թ. Կրոյդոնում լորդ Շերբրուքի արտասանած ճառից. «Անգլիական քաղաքականությունը դժոխքի դարպասները բացեց Թուրքիայի քրիստոնյաների համար[2]»: Դատապարտելով Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը, Մ.Գյուլեսյանը նշում է, որ «մարդասեր» Անգլիան քննադատում էր այն, որ ԱՄՆ-ում նեգրերին Լինչի դատաստանի էին ենթարկում, պառլամենտի նիստերում բանաձևեր ընդունելով ստրուկների առևտուրը դադարեցնելու մասին, և միևնույն ժամանակ թույլ էր տալիս հազարավոր հայերի կոտորածը Օսմանյան կայսրության մեջ, ելնելով իր գաղութային նկրտումներից[3]:

Բրիտանական Կապույտ գրքերը բառացիորեն լցված են Բարձր Դռան հասցեին ուղղված բողոքներով և հայտարարություններով: Սակայն երկու տարի շարունակ տեղի ունեցող հայերի կոտորածները չկարողացան անգլիական կառավարությանը ստիպել թուրքական կառավարությանը հայտագրեր ներկայացնելուց անցնելու վճռական գործողությունների:

1895 թ. Նյու Յորքի «Սենչրի մագազին» ամսագրի էջերում «Հայկական հարցը» հոդվածով հանդես եկավ Անգլիայի հայտնի քաղաքական

1 Stead W.T., The Eastern Ogre; or st. George to Rescue. - *The Review of Reviews*, 1896, vol. 14, pp. 576-577.

2 Gulesian M.H., England's Hand in Turkish Massacres. - *The Arena*, 1897, vol. 17, pp. 271-272.

3 Նույն տեղում, էջ 281:

գործիչ Ջ.Բրայսը: Ջ.Բրայսը, որը մշտապես խիստ քննադատության էր ենթարկում իր կառավարության արտաքին քաղաքականությունը, այս անգամ փորձում էր արդարացնել Անգլիային: Նա մեղքը գցում է եվրոպական տերությունների վրա, որոնք չեն աջակցել բրիտանական կառավարությանը, որն, իբր, բազմիցս բողոքել է թուրքական կառավարության հակահայկական ներքին քաղաքականության դեմ և փորձել է իր հյուպատոսների և Կոստանդնուպոլսում իր դեսպանության միջոցով որևէ կերպ խոչընդոտել բռնապետության անկարգություններին[1]:

19-րդ դարի 90-ական թթ. ամերիկյան ամսագրերի նյութերին ծանոթանալը մեր առջև «անսպասելի» պատկեր է բացում: «Նեյշն» ամսագրի վկայությամբ պարզվում է, որ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ, լիբերալների պարագլուխ Ու.Գլադստոնի բազմաթիվ ելույթները հօգուտ հայերի լոկ քատերախաղ են եղել: Ամսագիրը նշում էր, որ, չնայած հակառակորդ կուսակցության պարագլուխ Ռ.Սոլսբերիի հետ ունեցած հակամարտությանը, Ու.Գլադստոնի հասարակական ելույթները նպատակ են ունեցել աջակցել կառավարող կուսակցության ազդեցության աճին: Եվ 1895 թ. օգոստոսի 6-ին Չեսթերում կայացած միտինգը և Ու.Գլադստոնի ելույթն այնտեղ տեղի են ունեցել վարչապետ Ռ.Սոլսբերիի գիտությամբ և համաձայնությամբ[2]:

Մերձավոր Արևելքում վարած ավանդական քաղաքականությունից Ռ.Սոլսբերիի նահանջը «Նեյշն» ամսագիրը «Արևելյան հարցը» հոդվածում բացատրում է անգլիական ծրագրերին Ռուսաստանի հակազդեցությամբ, ծրագրեր, որոնք միշտ ձգտում էին «հիվանդ մարդու» (sick man) խնդիրը լուծել հիվանդության՝ «մահմեդական կառավարման գանգրենայի», պատճառի վերացման միջոցով[3]:

Անգլիան մշտապես ձգտել է Ռուսաստանի սահմաններին հարող մարզերում իր ազդեցությունը հաստատել բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ հայտարարությունների օգնությամբ: Սակայն Օսմանյան կայսրության մեջ Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը հակադրվել է Ռուսաստանը, որը չէր ցանկանում թույլ

1 Bryce J., The Armenian Question. - *The Century Magazine*, 1895, vol. 51, p. 151.
2 Lord Salisbury and Armenia. - *The Nation*, 1895, vol. 61, pp. 110-111.
3 The Eastern Question. - *The Nation*, 1896, vol. 62, p. 27.





տալ բրիտանական ազդեցության ուժեղացումն իրեն սահմանակից մարզերում:

Բնութագրելով Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը, խորհրդային ականավոր պատմաբան Ե.Տարլեն գրել է. «Մտավոր և ֆիզիկական ուժի պաշտամունքը, նվաճման, օգտագործման և տիրապետության պաշտամունքը, խորագույն, գիտակցական օպորտունիզմը, խոսքը գործից տարբերելու որոշակի ընդունակությունը, որևէ զսպվածության անհնարինության քամահրանքն այնտեղ, որտեղ խոսքը վերաբերում է կայսրության տնտեսական և քաղաքական շահերին և միևնույն ժամանակ այդ քամահրանքի առթիվ ոչ թե հոխորտալու, այլ նրա մասին խոր լռություն պահպանելու ունակությունը, վերջապես, բնածին հնարամտությունն ու զգայունությունը կարիքի դեպքում ակնթարթորեն, բառացիորեն մի քանի օրում, ծանր պետական նավի ամբողջ ուղղությունը կտրուկ կերպով փոխելու, դիվանագիտական դարավոր ավանդույթները մոռանալու, եթե դա է պահանջում փոփոխվող իրադրությունը, բնածին ընդունակությունը՝ ահա անգլիական քաղաքականության բնորոշ գծերը»[1]:

Մ.Գյուլեսյանը չի համաձայնում անգլիական որոշ հեղինակների կարծիքին, որոնք պնդում են, թե իբր Անգլիան ցանկանում էր օգնել Հայաստանին, բայց նրա ճանապարհին կանգնած էր Ռուսաստանը: Նա նշում է, որ իր ամբողջ պատմության ընթացքում Ռուսաստանը համակրել է Թուրքիայի քրիստոնյա հպատակներին և ամեն կերպ աշխատել է բարելավել նրանց դրությունը: Բայց Մեծ Բրիտանիան այդ ճանապարհի վրա մշտապես խոչընդոտներ է ստեղծել: Եթե Անգլիան ազնվությամբ և անկեղծորեն Ռուսաստանին հավաստիացներ, որ ինքը, բացի հայերի փրկությունից, ուրիշ շահեր և նպատակներ չունի Թուրքիայում, Ռուսաստանը, անկասկած, մեկընդմիշտ վերջ կտար հայկական սարսափներին[2]: «Անգլիայի ձեռքը թուրքական ջարդերի մեջ» հոդվածում Մ.Գյուլեսյանը բերում է լորդ Պալմերստոնի հետևյալ խոսքերը. «Մենք Թուրքիային պաշտպանում ենք հանուն մեր սեփական շահերի»[3]: Ամե-

1 Тарле Е.В., Англия и Турция. - *Анналы*, т. 3, 1923, с. 22.
2 Gulesian M.H., Englands Hand in Turkish Massacres. - *The Arena*, 1897, vol. 17, p. 279.
3 Նույն տեղում, էջ 272-273:

բիկահայ հեղինակը հայերին կոչ էր անում իրենց հայացքն ու հույսերն ուղղել ռուսական կառավարությանը, որը կարող էր նրանց օգնել առանց որևէ հետին մտադրության: Նա այդ որոշումը միակ ճիշտն էր համարում հայ ժողովրդի փրկության համար[1]:

Իրոք, շատ դարերի ընթացքում Ռուսաստանը վարել է Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդներին աջակցելու ավանդական քաղաքականություն: Սակայն, ինչպես նշում է ակադեմիկոս Վ.Խվոստովը, «90-ական թթ. ցարական կառավարությունն իր ոխերիմ թշնամիների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ միասին հանդես էր գալիս Օսմանյան կայսրության մեջ ազգային-ազատագրական շարժման դեմ: Սուլթանի քրիստոնյա հպատակներին աջակցելու ռուսական ավանդույթները դեն նետվեցին ցարական կառավարության կողմից»[2]:

Որոշ ամերիկյան հեղինակներ նկատել են, որ Ռուսաստանի ուշադրությունը սևեռված էր Հեռավոր Արևելքին, և ոչ մի տերություն, բացի Անգլիայից, չէր կարող լրջորեն զբաղվել հայկական խնդրով[3]: Իսկ մյուսները նշում էին Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանը գրավելու անհնարինությունը, գտնելով, որ ցարական կառավարության շահերն ուղղված էին ոչ թե Փոքր Ասիայի հայկական մարզերին, այլ Բոսֆոր և Դարդանել նեղուցներին[4]:

Իր հոդվածում Սթեդը գրել է, որ Մոսկվայում Նիկոլայ 2-րդի թագադրման ժամանակ արտաքին գործերի նախարար, իշխան Ա.Լոբանով-Ռոստովսկին հայտարարել է, թե Հայկական հարցում Ռուսաստանի դիրքավորումը պայմանավորվում է 1878 թ. անգլո-թուրքական կոնվենցիայի գոյությամբ: «...Ինչպես կարող ենք մենք՝ ռուսներս, զանց առնել Կիպրոսի կոնվենցիայի նշանակությունն ու կարևորությունը, որը Անգլիային պարտավորեցրել է խոչընդոտել Ռուսաստանին՝ Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող լուրջ վտանգի դեպքում», - ասել է նա: Երբ նրան առարկել էին, ասելով, որ անգլիական կառավարությունը, իբր, փոխել է իր հայացքները կոնվենցիայի վերաբերյալ և ձգտում է եր-

1 Նույն տեղում, էջ 280:
2 Хвостов В.М., История дипломатии, т. II, М., 1963, с. 347.
3 What must be done in Armenia?- *The Review of Reviews*, 1896, vol. 13, p. 338.
4 Stride W.K., The Immediate Future of Armenia: A Suggestion. - *The Forum*, 1896, vol. 22, pp. 315-316.





կու տերությունների փոխադարձ մերձեցմանը, իշխան Ա. Լոբանով-Ռոստովսկին պատասխանել էր, որ կոնվենցիան, այնուամենայնիվ, գոյություն ունի և նույնիսկ, եթե Անգլիան չեղյալ հայտարարի իր պարտավորությունները, Ռուսաստանը չի պատրաստվում անհապաղ փոխել իր արտաքին քաղաքական կուրսը[1]:

Հիմքեր և ապացույցներ չունենալով, Կաթոլիկ համալսարանի հնագիտության և արևելյան լեզուների պրոֆեսոր Հ.Հիվերնատը ցարական կառավարությանը մեղադրում է Օսմանյան կայսրության մեջ հայկական ջարդերին մասնակցելու հարցում: Նրա կարծիքով, ցարիզմը միջամտել է Թուրքիայի գործերին այն հաշվով, որպեսզի տիրանա նաև Արևմտյան Հայաստանին[2]: Ծանոթանալով Հ.Հիվերնատի «Հայաստան. անցյալը և ներկան» հոդվածին, կարելի է նշել, որ ուսումնասիրելով հայ ժողովրդի, հայ եկեղեցու պատմությունը, հեղինակը բավականաչափ լավ չի պատկերացրել Հայկական հարցի խնդիրները, նրանում Բարձր Դռան և մեծ տերությունների քաղաքականության դերը: Հայկական հարցի շուրջն ստեղծված բարդությունները Հ.Հիվերնատը միակողմանիորեն վերագրում է ցարական կառավարության մերձնայությունների ն:

Ամերիկահայ հեղինակ Մ.Մանգասարյանի կարծիքով, Ռուսաստանը երբեք չի մոռանա, թե ինչպես Ղրիմի պատերազմի ժամանակ Անգլիան, համաձայնության գալով Նապոլեոն 3-րդի և Սարդինիայի թագավորի հետ, փրկեց թուրքական սուլթանին: 19-րդ դարի 90-ական թթ. ցարական Ռուսաստանի կառավարությունը նույնպիսի ուշադրություն էր ցույց տալիս «Բոսֆորի բանալուն»: Օսմանյան կայսրության ամբողջությունը պաշտպանում էր նաև Ֆրանսիան: Մ.Մանգասարյանը նկատում է, որ 1894-96 թթ. հայկական ջարդերի ընթացքում Գերմանիայի կառավարությունը բողոքի ոչ մի հայտարարություն չի ներկայացրել Բարձր Դռանը[3]:

ԱՄՆ-ի ամսագրերի էջերում առանձնապես սուր ու անխնա քննադա-

1 Stead W.T., Նշվ. հոդվ., էջ 578:
2 Hyvernat H., Նշվ. հոդվ., էջ 325:
3 Mangasarian M.M., Armenia's Impending Doom. Our Duty. - *The Forum*, 1896, vol. 21, pp. 457-458.

տության էր ենթարկվում գերմանական կայզերի թուրքամետ դիրքը: 1899 թ. Նյու Յորքի «Նեյշն» ամսագրում զետեղվել է Ու.Սթիլմանի «Գերմանիան և հայերը» հոդվածը, որտեղ հեղինակը ձգտել է բնութագրել Գերմանիայի քաղաքականությունը Օսմանյան կայսրության մեջ հայ բնակչության 1894-96 թթ ջարդերի ժամանակ: Նրա կարծիքով, Եռյակ դաշինքի պետությունների ազդեցությունը Կոստանդնուպոլսում ուժեղացնելու համար գերմանական կառավարությունը թշնամական դիրք էր գրավել Ռուսաստանի նկատմամբ, փաստորեն սպառնալով Ռուսաստանի դեմ պատերազմի դեպքում պաշտպանել սուլթանին: Ու.Սթիլմանը գտնում էր, որ Գերմանիան ձգտում էր կաթվածի ենթարկել ռուս-ֆրանսիական հարաբերությունները Արևելքում, միևնույն ժամանակ Մեծ Բրիտանիային թույլ տալով իրականացնելու իր արևելյան ծրագրերը[1]:

Հայտնի է, որ 19-րդ դարի 80-ական թթ. սկսվում է գերմանական կապիտալի ավելի մեծ ներթափանցումն Օսմանյան կայսրություն: Օսմանյան կայսրության «ստատուս քվոյի» հարցում այժմ համընկնում էին և Գերմանիայի, և՛ նրա դաշնակից Ավստրո-Հունգարիայի շահերը: Վիեննան չէր կարող թույլ տալ Օսմանյան կայսրության անկումը, քանի որ սուլթանի իշխանության տակից սլավոնների ազատագրումը կսպառնար բազմազգ ավստրո-հունգարական միապետության ամբողջականությանը: Խորհրդային պատմաբան Ա.Սիլինը գրում է, որ Գերմանիային հետ սուլթանի մերձեցման ներքին քաղաքական շարժառիթներից մեկն այն էր, որ նա հույս ուներ «Գերմանիայից աջակցություն ստանալ Հայկական հարցում և ընդհանրապես իր ներքին քաղաքականությունը իրականացնելու գործում...»[2]:

Ամերիկյան ամսագրերի էջերում հանդես եկող հեղինակները երբեմն էլ մեծ տերություններին կոչ էին անում վճռական գործողությունների անցնել Հայկական հարցում: Այսպես, Ջ.Մակդերմոթը գրում է, որ այն ժամանակ, երբ քրիստոնյա բնակչությունը Բրիտանիայի կղզիներից մինչև Հունաստան, Պետերբուրգից մինչև Լիսաբոն, ԱՄՆ-ի ամբողջ ժողովուրդը կրքով պաշտպանում էին հայերին, մեծ տերությունների կառավարողներն ու դիվանագետները հավատարիմ մնացին Օսմանյան կայսրության «ստատուս-քվոն» պահպանելու քաղաքականությանը[1]: «Նեյշն» ամսագիրը նշում էր, որ եվրոպական տերությունները պատասխանատու են հայ խաղաղ բնակչության ջարդերի համար, քանի որ բոլոր միջոցներով սուլթանին պահում էին գահի վրա[2]: Ջ.Օ'Շին եկել է այն եզրակացության, որ եվրոպական տերությունները ոչ մի բանով ավելի լավ չեն իրենց հովանավորյալից՝ Բարձր Դռնից[3]:

Ամերիկյան հեղինակներն առաջ էին քաշում հայկական բարենորոգումների պատրանքային ծրագրեր, առաջարկություններ էին մտցնում Հայաստանի ապագա կառուցվածքի մասին, թեկնածուներ էին առաջադրում հայկական մարզերի կառավարչի պաշտոնի համար, երբեմն ծանոթ չլինելով Օսմանյան կայսրության դրությանն ու ներքին խնդիրներին:

Բոստոնյան «Արենա» ամսագրում Ռ.Սթայնի «Հայաստանին հարկավոր է եվրոպացի նահանգապետ» հոդվածի հրատարակման առթիվ նույն համարում այդ մասին արտահայտվեցին ԱՄՆ-ի աչքի ընկնող հասարակական գործիչներ՝ պրոֆեսոր Հ.Հիլերնատը, Հռոմում ամերիկյան քոլեջի ռեկտոր Օ'Կոննելը, Ս.Համլինը և ուրիշներ, որոնք հիմնականում համաձայն են հեղինակի այն կարծիքին, որ Հայաստանը կփրկվի այն պայմանով, եթե Փոքր Ասիայի հայկական գավառների նահանգապետի պաշտոնում նշանակվի եվրոպացի: Մասնավորապես Հ.Հիլերնատը գրում էր, որ Հայաստանին անհրաժեշտ է «ազնիվ և գործունյա նահանգապետ»[4]: Օ'Կոննելը նկատում է, որ երաշխիք չի տեսնում հայերի կյանքի անվտանգության ապահովման համար, քանի դեռ հայերով բնակեցված մարզերի գլուխ չկանգնի քրիստոնյա[5]: Ս.Համլինը նշում էր, որ ինքը համաձայն է քրիստոնյա կառավարիչ նշանակելու անհրաժեշտության վերաբերյալ Ռ.Սթայնի հոդվածի գլխավոր գծին: Ս.Համլինի կարծիքով, իր գործունեության մեջ այդ կառավարիչը պետք է հենվի մեծ տերությունների աջակցության վրա[6]:

Left page footnotes:

1 Stillman W.J., Germany and Armenians. - *The Nation*, 1899, vol. 68, p. 352.

2 Силин А.С., Германская военная миссия Фон Дер Гольца в Турции в 1882-1895 гг. - *Ученые записки по новой и новейшей истории*, т. 2, М., 1956, с. 327.





Right page footnotes:

1 McDermot G., Նշվ. հոդվ., էջ 300-301:

2 Turkey in Extremis. - *The Nation*, 1896, vol. 63, p. 173.

3 O'Shea J., Նշվ. աշխ., էջ 599:

4 Stein R., Armenia must have a European Governor. - *The Arena*, 1895, vol. 12, p. 368.

5 Նույն տեղում, էջ 370:

6 Նույն տեղում, էջ 368:

Ռ.Սթայնը գրել է, թե իբր Եվրոպայում միայն մեկ մարդ կկարողանար հաջողությամբ վարել Հայաստանի նահանգապետի պատասխանատու պաշտոնը: Այդ մարդը Բ. դե Կալլեյն էր՝ Բոսնիա-Հերցոգովինայի հունգարացի կառավարիչը: Ռ.Սթայնի կարծիքով, միայն նա կկարողանար ավերակների միջից վերստեղծել միմյանց թշնամի քրիստոնյաներով և մահմեդականներով բնակեցված Հայաստանը[1]: Կարելի է նաև օրինակներ բերել, երբ արևմտահայերի ազգային, սոցիալական և քաղաքական լուրջ խնդիրները, նրանց ծանր դրության բարելավման գործը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում ներկայացվում և մեկնաբանվում էին նման պարզունակ և ոչ իրական դիրքերից: «Նեյշն» ամսագրի խմբագրական հոդվածի հեղինակը, օրինակ, հայ ժողովրդի փրկության համար միակ ուղին համարում էր անգլիական ինտերվենցիան[2]: Իսկ Թ.Պետերսոնի պնդմամբ՝ հայ բնակչության ընդհանուր կոտորածից խուսափելու համար անհրաժեշտ էր հայերի արտագաղթը այն մարզերից, որոնք ենթակա էին թուրքերի և քրդերի հարձակմանը: Ամերիկյան հեղինակը ստեղծված դրությունից միակ ելքը համարում էր հայերի վերաբնակեցումը Ռուսաստանում[3]:

Սակայն մեծ տերություններն ամենևին չէին ցանկանում փչացնել առանց այդ էլ լարված հարաբերությունները Բարձր Դռան հետ: Նրանք բազմիցս սուլթանին ներկայացրել են նրա սուվերեն իրավունքները նվազեցնող պահանջներ, սպառնալով բացել Հայկական հարցը: Եվ ամեն անգամ Աբդուլ Համիդը ստիպված է եղել զիջել մեծ տերություններին, բայց փոխարենը կազմակերպել հայ բնակչության նոր ջարդեր, բնակչություն, որը ծառայում էր որպես եվրոպական տերությունների առուծախի առարկա:

Այսպիսով, Հայկական հարցը 19-րդ դարի 90-ական թթ. զգալի տեղ է գրավել ԱՄՆ-ի ամսագրերի էջերում: Ամերիկյան ամսագրերի նյութերի ուսումնասիրությունը, նյութեր, որոնք արտացոլում են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայ խաղաղ բնակչության զանգվածային կոտորածները և մեծ տերությունների դիվանագիտական պայքարը, կնպաստի Հայկական հարցի համակողմանի լուսաբանմանը:

1 Նույն տեղում, էջ 386-387:
2 The Eastern Question. - *The Nation*, 1896, vol. 62, p. 27.
3 Peterson T., Նշվ. հոդվ., էջ 668:





## 5. ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1894-96 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ (ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՈՒԼԹԱՆԻ ՄՏՔԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՑԻՆԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ)*

Այսօրվա Թուրքիայի պաշտոնական շրջանները, պատմագիտությունն ու մամուլը ջանք ու եռանդ չեն խնայում խեղաթյուրելու պատմությունը՝ Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայ բնակչության զանգվածային կոտորածների և 1915 թ. հայերի ցեղասպանության փաստերն աղավաղելու գործում: Վավերագրական նյութերի ուսումնասիրությունը հաստատում է այն փաստը, որ թուրք ղեկավարների ու հեղինակների անցյալի ու ներկայիս փորձերի միջև՝ արդարացնելու սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի և երիտթուրքական կառավարության հետապնդական, հակաժողովրդական քաղաքականությունը, գոյություն ունի անմիջական ու հաջորդական կապ:

Եվրոպական երկրների և ԱՄՆ-ի պարբերական մամուլը մեծ բանակությամբ փաստական նյութ է պարունակում Հայկական հարցի վերաբերյալ, որը, ցավոք, մինչև այժմ փաստորեն ուսումնասիրված չէ և դուրս է մնացել գիտնականների տեսադաշտից:

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում ամերիկյան դիվանագետ, Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանորդ Ալեքսանդր Տերրելի «Զրույց Աբդուլ Համիդի հետ» հոդվածը, որը տպագրվել է Նյու Յորքի «Սենչըրի Մեգըզին» ամսագրում 1897 թ.[1]:

Ամերիկյան դեսպանորդի վերամբարձ և գովերգական կարծիքները թուրքական սուլթանի և նրա կայսրության մասին լիակատար չափով բացատրվում են ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշմամբ Հայկական հարցում: ԱՄՆ-ի կառավարող շրջանները՝ ի դեմս նախագահ Քլիվլենդի, պետական քարտուղար Օլնիի, դիվանագետ Տերրելի, ամեն կերպ գովաբանում և աջակցում էին սուլթանին՝ իրենց անող կայսերապաշ-

* *Ազգային մշակույթ* (Բեյրութ), 1986, 16, 23 մարտի; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1986, 19 ապրիլի:
1 Terrel A.W., An Interview with Sultan Hamid. – *The Century Magazine*, 1897, vol. 55, pp. 133-138.

տական շահերն ապահովելու նպատակով: 1895-97 թթ. մերձավորարևելյան ճգնաժամի պահին նրանք մեծ նշանակություն էին տալիս Հայկական հարցին, ինչպես իրավիճակից օգուտ քաղելու մի միջոցի: Պաշտոնական Ամերիկային հետաքրքրում էր ոչ թե հայ ժողովրդի բախտը, այլ իր միսիոներների վիճակը, որոնք հանդիսանում էին կառավարության քաղաքականության ուղեկիցները՝ ապագայում Թուրքիայում ուժեղ ամերիկյան ազդեցություն հաստատելու համար: ԱՄՆ-ի կառավարությունը տարեկան կես միլիոն դոլար էր ծախսում Օսմանյան կայսրությունում միսիոներական հաստատությունները պահպանելու համար[1]:

Թուրքիայում առաջատար մի միսիոներին ուղղված իր նամակում Տերրելը զգուշացնում էր, որ սուլթանի «հայտարարությունը բարենորոգումներ...իրականացնելու մասին հայերի ջարդի կբերի և վտանգ կստեղծի մեր հայրենակիցների համար»: Այնուհետև նա տեղեկացնում էր, որ ինքն «անհապաղ կերպով միջոցներ է ձեռնարկել մեր հայրենակիցների կյանքն ապահովելու ուղղությամբ»[2]: Իհարկե, չի կարելի նախատել դիվանագիտական առաքելության ղեկավարին այն բանի համար, որ նա պաշտպանում էր իր հայրենակիցների շահերը, սակայն նա կարող էր և պետք է օգտագործեր ԱՄՆ-ի ազդեցությունը՝ կանխելու համար քրիստոնյաների ջարդը, որոնց հետ «աշխատում էին» միսիոներները:

Թեև Տերրելը գոհասանքով էր արտահայտվում հայկական «անկարգությունների» (այսպես էր սուլթանը կոչում հայ բնակչության կոտորածները՝ Ա.Կ.) ժամանակ ամերիկյան քաղաքացիների անվտանգության ապահովելու ուղղությամբ սուլթանի կողմից կազմակերպված միջոցառումների մասին[3], 1895 թ. դեկտեմբերի 4-ին, երբ հայտնի դարձավ, որ թուրքական իշխանությունների վայրագ քաղաքականությունից վնաս են կրել նաև ամերիկյան միսիոներները, ԱՄՆ ծերակույտը բանաձև ընդունեց, անհապաղ պահանջելով Բարձր Դռնից վնասի փոխհատուցում[4]: Գործի դրվեցին և սպառնալիքը, և ռազմանավերը, և դի-

[1] Abbott L., Armenian Question. – *The Outlook*, 1896, vol. 54, p. 1037.
[2] Terrel A.W., Op.cit., p. 134.
[3] Ibid, p. 134.
[4] Gordon L.J., American Relations with Turkey (1830-1930), Philadelphia, 1932, p. 26.





վանագիտական խորամանկությունը: Ի վերջո, ԱՄՆ-ի կառավարությունը 95 հազար դոլար կորզեց Բարձր Դռնից[1]:

Չնայած այն բանին, որ ԱՄՆ-ի կառավարությունը օգուտ քաղելու քաղաքականություն էր վարում Թուրքիայի նկատմամբ, հայերի ջարդը բողոքի ալիք բարձրացրեց երկրում: Տուժած հայերին նյութական և ֆինանսական օգնություն ցույց տալու նպատակով հիմնվում էին տարբեր տեսակի բարեգործական կազմակերպություններ և կոմիտեներ: ԱՄՆ-ի թերթերի և ամսագրերի էջերում տպագրված հասարակական-քաղաքական գործիչների բազմաթիվ հոդվածները, նյութերն ու նամակները վկայում էին ամերիկյան հասարակայնության զայրույթի մասին՝ սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության հանդեպ: Հայաստանի և Հայկական հարցի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներով հանդես են գալիս ճանապարհորդներ, առևտրականներ, ԱՄՆ-ի համալսարանների դասախոսներ, ամերիկյան միսիոներներ, լրագրողներ, եկեղեցական գործիչներ: Նրանք ծանոթացնում էին ընթերցողին հայ ժողովրդի, հայ եկեղեցու պատմությանը, նկարագրում 1894-96 թթ. արյունալի ջարդերը, մյուսները վերլուծում են Հայկական հարցի շուրջ ստեղծված դիվանագիտական բարդությունները: Մինչև իսկ Տերրելն էր գրում, որ սուլթանը «...որոշ չափով պատասխանատու է (հայերի) ջարդի համար, որն ավերեց նրա կայսրությունը», և որ իր անձնական կարծիքն այդ մասին գտնվում է ԱՄՆ-ի պետական քարտուղարի մոտ, սակայն մինչև այժմ մնում է անպատասխան»[2]:

Պետական քարտուղար Օլնին պնդում էր, որ «մամուլի հաղորդագրությունները հայերի ջարդերի մասին խիստ չափազանցված են», իսկ նախագահ Քլիվլենդը հայտարարում, որ ԱՄՆ-ի կառավարությունը չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը և, ուստի, այդ պատճառով էլ իրավասու չէ խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Թուրքիայում եվրոպական տերությունների քաղաքականության վերաբերյալ ամերիկացի դիվանագետը իրավացիորեն նշում է, որ «նրանք բոլորը ոչ միայն ձգտում են պահպանել կայսրության... ամբողջականությունը

[1] Шпилькова В.И., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920), М., 1960, с. 29.53 Terrell A.W., Op.cit., p., 134.
[2] Terrell A.W., Op.cit., p., 134.

նությունն, այլև սպանում են Կրետեի հույն-քրիստոնյաներին, ապացուցելու համար սուլթանին իրենց հավատարմությունը»[1]: Աբդուլ Համիդը ուշադիր հետևում էր եվրոպական մամուլի և պետությունների դիրքորոշմանը, համապատասխանաբար գնահատելով իր շանսերը նրանց կողմից առաջ քաշված պահանջներին ընդդիմանալու նպատակով, և այդ իսկ պատճառով հանգիստ պատասխանում էր Տերրելին, որ «իմ բնական ցանկությունն է զգուշանալ նրանց միջև ծագած կոնֆլիկտից»[2]: Սակայն եվրոպական տերությունները ամենևին էլ չէին ցանկանում փչացնել առանց այդ էլ լարված հարաբերությունները Բարձր Դռան հետ: Նրանք բազմիցս սուլթանին ներկայացրել են նրա գերիշխան իրավունքները նվազեցնող պահանջներ, սպառնալով բացել Հայկական հարցը: Եվ ամեն անգամ Աբդուլ Համիդը ստիպված է եղել զիջել տերություններին, բայց փոխարենը կազմակերպել է հայ բնակչության նոր ջարդեր:

Աբդուլ Համիդ 2-րդի կողմից առաջ քաշված դրույթներն ու տեսակետները հպատակ քրիստոնյա ժողովուրդների հանգիստ և ապահով կյանքի, սուլթանական տիրակալների հայերի հանդեպ վարած հանդուրժողական և բարյացակամ վերաբերմունքի մասին շատ նման են ժամանակակից թուրք հեղինակների պատմության խեղաթյուրված լուսաբանմանը[3]:

Տերրելի հետ ունեցած զրույցի ժամանակ սուլթանն ասում էր. «Փոքր Ասիայում վաղ օսմանյան նվաճումների շրջանում՝ նեղված թաթարների ու պարսիկների հաճախակի ասպատակություններից, հայերը մեծ քանակությամբ գաղթեցին և ապաստան գտան օսմանյան տիրակալների մոտ: Նրանք ջերմորեն ընդունվեցին, նրանց խոսք տրվեց կյանքի ու ունեցվածքի անվտանգության ապահովում»[4]: Արդարացնելով նվաճողների վայրագությունները, ժամանակակից թուրք պատմաբանները նույնպես փորձում են ներկայացնել թուրք-օսմաններին որպես հայ ժողովրդի «փրկարարներ»: Իրականում թուրքական ցեղերի ներխուժումը

1 Ibid, p. 136.

2 Ibid.

3 Cemal A., Tarihin Isiginda Ermeni Dosyasi, Istanbul: Turan Kitabevi, 1982, 432 s.; Kamuran G., Le Dossier Armnnien, Paris: Triangle, 1983, 356 p.

4 Terrell A.W., Op. cit., pp. 134-145.





Փոքր Ասիա անուղղելի հարված հասցրեց այդ շրջանի ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացմանը[1]:

Աբդուլ Համիդն ամենևին էլ չի թաքցնում այն փաստը, որ կայսրության ամբողջ արդյունաբերությունն ու առևտուրը գտնվում էին քրիստոնյա ժողովուրդների և, մասնավորապես, հայերի ձեռքին[2]: Այս հանգամանքը սակայն պայմանավորված էր ոչ թե քրիստոնյա հպատակների նկատմամբ սուլթանական կառավարության բարյացակամությամբ կամ հոգատարությամբ, ինչպես տվյալ դեպքում փորձում է ներկայացնել սուլթանը, այլ կարևորագույն անհրաժեշտություն էր Օսմանյան կայսրության գոյության համար: Ֆ.Էնգելսը գրել է, որ «խոշոր ծովային նավահանգիստներում հաստատված հույները, հայերը, սլավոնները ու արևմտաեվրոպացիները պահում են իրենց ձեռքում ամբողջ առևտուրը և միանգամայն ոչ մի հիմք չունեն շնորհակալ լինելու թուրք բեյերին և փաշաներին՝ նրանով զբաղվելու հնարավորության համար»[3]:

Սուլթանը Տերրելին բազմաթիվ վկայություններ էր բերում իր վարած բարյացակամ քաղաքականության մասին Կոստանդնուպոլսի հարուստ և ազդեցիկ հայերի նկատմամբ, որոնք ամբողջությամբ նվիրել էին իրենց Բարձր Դռանը ծառայելուն և հեռացել արևմտահայկական աշխատավոր բնակչության կենսական շահերից[4]: Աբդուլ Համիդի այս դրույթները հաճախակի կրկնվում են ժամանակակից թուրք հեղինակների հրապարակումներում: Այսպես, օրինակ, Ռեշադ Իլերին «Հյուրրիեթ» թերթի էջերում գրում է. «Երկար ժամանակ Թուրքիայում ամենաարտոնյալ ազգային փոքրամասնությունը հայերն էին: Մայրաքաղաքի բոլոր հայերը, առանց բացառության, ապրում էին բարեկեցության մեջ և կարևոր դիրքեր զբաղեցնում առևտրի և արվեստի բնագավառում» (1982, 9 սեպտեմբերի): Ինչպես սուլթանը, այնպես էլ նրա հետևորդները ձգտում են ներկայացնել Կոստանդնուպոլսի և նրա բնակիչների կյանքը որպես ամբողջ կայսրության ընդհանուր կացության չափանիշ: Ստամբուլն իր շքեղ պալատներով, խայտաբղետ շուկաներով, հա-

1 Зулалян М.К., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии. Ереван, 1970, с. 61.

2 Terrell A.W., Op.cit., p. 135.

3 К.Маркс, Ф.Энгельс, Соч., т. 9, с. 25.

4 Terrell A.W., Op. cit., pp. 135-136.

բուստ վերնախավի մեծաշուք կյանքով միշտ էլ ցուցափեղկ է հանդիսացել Եվրոպայի առջև:

Հիմնականում հին թագավորական նախարարական ընտանիքներից ծագող Կոստանդնուպոլսի հայ արիստոկրատիան դեռևս թուրք-օսմանական քոչվոր հորդաների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքը գրավելուց շատ առաջ զբաղեցնում էր ազդեցիկ դիրք: Ֆինանսա-տնտեսական, մշակութա-ստեղծագործական հարաբերությունների բնագավառում Բարձր Դուռը միշտ էլ կախման մեջ է գտնվել Կոստանդնուպոլսի հույն և հայ բնակչությունից: Սուլթանն ու իր իշխանությունը կարիք ունեին արդյունաբերողներ Դադյանների, ճարտարապետներ Բալյանների, ֆինանսիստներ Հակոբ-էֆենդիների, դիվանագետներ Նորատունկյանների. Բաղդադլյանների մեջ, թեև, ինչպես ճիշտ նկատել է Կ.Մարքսը, մինչև անգամ «...ամենաբարձրաստիճան քրիստոնյան պարտավոր էր հանդիպման ժամանակ ճանապարհը զիջել հասարակության ստորին խավին պատկանող մահմեդականին»[1]:

Սուլթան Աբդուլ Համիդի հանձնարարությամբ հայկական ծագում ունեցող հպատակների «բարեկեցությունը», բարձր դիրքը ցույց տալու նպատակով Թուրքիայում ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին հանձնվեց հայ աստիճանավորների և նրանց միամսյա աշխատավարձի ցուցակը: Ցուցակում ներկայացված էին զանազան Միքայելներ, Արթիններ, Հակոբներ, Մարգարներ՝ սկսած նախարարից, բարձրաստիճան չինովնիկներից և վերջացրած խոհարարներով, բաղնեպաններով, ժամագործներով, այգեգործներով և այլն[2]: Սակայն այս ամենը բնավ չէր կարող թեթևացնել Օսմանյան կայսրության ներքին շրջաններում, բուն Արևմտյան Հայաստանում գտնվող հայ աշխատավոր գյուղացիության վիճակը, որը ենթարկվում էր ճնշման և հալածանքների տեղական թուրք իշխանությունների և քոչվոր ցեղերի կողմից:

19-րդ դարի 90-ական թթ. կեսերին սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հակահայկական քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին: Հայ ժողովրդի քաղաքական զարթոնքը, բարենորոգումների և Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի իրականացման պահանջը սաստիկ զայրույթ

1 К.Маркс, Ф.Энгельс, Соч., т. 9, с. 6.
2 Terrell A.W., Op.cit., p. 138.





և զանգվածային թշնամական գործողություններ էին առաջացնում թուրքական իշխանությունների շրջանում: Դպրոցներում արգելվեց Հայաստանի պատմություն և աշխարհագրություն առարկաների դասավանդումը, «Հայաստան» բառի ընդհանրապես հիշատակումը: Թուրքական թերթերը մահմեդական մոլեռանդությունը բորբոքող, քրիստոնեությունը խայտառակող բազմաթիվ հոդվածներ էին հրատարակում: Ի վերջո, սուլթանական կառավարության կողմից կազմակերպված ջարդի հետևանքով զոհվեց 300 հազարից ավելի հայ: 1894-96 թթ. հայկական կոտորածները մանրամասնորեն և լայնորեն լուսաբանված են ռուսական, եվրոպական, ամերիկյան մամուլի և գրականության էջերում:

Աբդուլ Համիդի կարծիքով, ամբողջ մեղքն այսպես կոչված «անկարգությունների» համար ընկնում է հայ ժողովրդի վրա, որն «ի նշան երախտագիտության կառավարության կողմից... տրված արտոնությունների համար..., դավադրություններ է կազմակերպում՝ Օսմանյան կայսրությունը կործանելու նպատակով»[1]: Ամերիկյան միսիոներ Սայրուս Համլինը գրում էր, որ սուլթանը միշտ էլ կկարողանա գտնել որևէ կեղծ վկայություն՝ ապացուցելու համար երկրում տիրող բռնության վերաբերյալ կարծիքների անհիմն լինելը[2]:

Շարունակելով նախկին օսմանյան տիրակալների կեղծարարական ավանդույթները, ժամանակակից թուրքական պատմագրությունն ու մամուլը լիովին ժխտում են ջարդերի փաստը: Ընդհակառակը, նրանք պնդում են, որ 19-րդ դարի 90-ական թթ. հայերը՝ Ռուսաստանի դրդմամբ, սկսեցին կազմակերպել խաղաղ թուրք բնակչության զանգվածային կոտորածներ[3]:

Խաղաղ ժամանակ դաժանության արգելման և բոլոր հավատացյալների պաշտպանության վերաբերյալ Ղուրանի դրույթների մեկնաբանումները սուլթանի կողմից ոչ մի առնչություն չունեին պատմական իրողության, օսմանյան տիրակալների դաժան, հակաժողովրդական քաղաքականության հետ[4]: Չնայած Ղուրանի «խաղաղասիրությանը», դարե-

1 Ibid, p. 135-136.
2 Hamlin C., The Armenian Massacres. – *The Outlook*, 1895, vol. 52, December 7, p. 944.
3 Ileri R., Ermeni Dosyasi. - *Hurriyet*, 1982, 7.09.
4 Terrell A.W., Op.cit., p. 136.

րի ընթացքում ոչնչացվում էին սերբերը, չեռնոգորցիները, բուլղարները, հույները, հայերը, ինչպես նաև արաբ մահմեդականները: Այսպես, Էդվին Փիրսի վկայությամբ, Աբդուլ Համիդի տիրակալության օրոք Պարսից ծոցի ափին ոչնչացվեց արմավենիների մի ամբողջ անտառ՝ ոչ միայն զրկելու համար արաբ բնակչությանը եկամուտի աղբյուրից, այլև սովի միջոցով հնազանդեցնելու նրան թուրքական իշխանություններին[1]: Օսմանյան կայսրությունում տիրող ներքին ծանր վիճակը, ժողովուրդների ճնշումը, կաշառակերությունն ու գանձագողությունը չէին հակասում Ղուրանին, որովհետև իշխանությունների տրամադրության տակ էին գտնվում սոֆթաները ու չեյխուլիսլամը, որոնք այն քարոզում էին գոյություն ունեցող կարգերին համապատասխան: Իհարկե, քրիստոնյա ժողովուրդների ճնշման, հալածանքների և ջարդի քաղաքականության հիմքում ընկած էին խորը սոցիալ-քաղաքական և ազգային-տնտեսական պատճառներ: Սակայն ամեն անգամ սուլթանական կամարիլիան, տիրող դասակարգը դիմում էր կրոնական մոլեռանդության օգտագործմանը, մասնավորապես գործի դնելով մոլեռանդ խաժամուժի կենդանական բնազդները: Ռուս պատմաբան Երեմեևը գրում է. «Քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ Աբդուլ Համիդը վարում էր կատաղի շովինիստական քաղաքականություն: Լինելով մոլի պանիսլամիստ, նա չէր վստահում անգամ թուրքերին և իրեն շրջապատում էր չերքեզական, քրդական, լազական, աջարական ծագում ունեցող մերձավորներով: Դրանցով էլ համալրվում էր նաև սպայական կազմը» [2]:

Սուլթան Աբդուլ Համիդի մտքերն ու դրույթները հայ ժողովրդի պատմության, հայերի նկատմամբ Բարձր Դռան քաղաքականության, Օսմանյան կայսրության հայ բնակչության ջարդերի վերաբերյալ ամբողջովին փոխառված են և զինել են ժամանակակից Թուրքիայի քարոզչությունը, հետաղիմական պատմագիտությունն ու ղեկավար շրջանները:

1 Pears E., Life of Abdul Hamid, New York, 1917, p. 105.
2 Երեմեև Դ.Ե., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 261.





## 6. ՉԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԷՋԵՐ*

Ոչ վաղ անցյալի լճացման երևույթները, անհատի պաշտամունքի տարիներին բնորոշ մտածելակերպը, պատմագիտության մեջ կիրառվող դոգմատիկ ստերեոտիպերը խոր հետք են թողել խորհրդահայ պատմագիտության, հատկապես նրա կարևորագույն մասի՝ քաղաքական հայագիտության զարգացման վրա: Մեր ժողովրդի քաղաքական պատմության խնդիրները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացումը, ազգային-ազատագրական շարժման առանձնահատկությունները, քաղաքական կուսակցությունների ծնունդն ու գործունեությունը չեն դարձել խոր, օբյեկտիվ ու համակողմանի ուսումնասիրության, տեսական իմաստավորման առարկա, ընթերցողների լայն շրջանակի, հանրապետության ողջ աշխատավորության սեփականությունը: Նման բախտի են արժանացել նաև հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատմությունը, նրա հիմնադիրների ու գործիչների կյանքն ու գործը:

Հնչակյան կուսակցությունն Օսմանյան կայսրությունում գործող առաջին ազգային կուսակցությունն էր: Իր կազմավորումից (1887 թ.) անմիջապես հետո կայսրության հայաբնակ շրջաններում նա ստեղծեց իր տեղական կազմակերպությունները, գլխավորեց արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը, բուռն գործունեություն ծավալեց մարքսիզմի և ընկերվարական գաղափարների քարոզման և տարածման բնագավառում:

Ստորև ներկայացնում ենք հայ հասարակական-քաղաքական խոշոր գործիչ, հնչակյան կուսակցության հիմնադիր, հրապարակախոս և բանաստեղծ Ավետիս Նազարբեկյանի (Նազարբեկի) «Զեյթուն» հոդվածը, որը տպագրվել է լոնդոնյան «Քոնթեմփորարի Ռևյու» ամսագրում 1896 թ., նվիրված 1895-96 թթ. Զեյթունի ապստամբությանը, նրա կազմակերպման և իրականացման գործում հնչակյան կուսակցության դերի գնահատմանը: Այժմ մի քանի խոսք հեղինակի կյանքի ու գործունեության մասին, որի գնահատման և իմաստավորման գործում դեռ շատ անելիք ունի հայ պատմագրությունը:

* *Երեկոյան Երևան*, 1990, 14 մայիսի; *Հնչակ Հայաստանի*, 1990, 30 հոկտեմբերի:

Ա.Նազարբեկը ծնվել է 1866 թ. Թիֆլիսում, սկզբնական կրթությունը ստացել տեղի արական գիմնազիայում: Սովորել է Պետերբուրգի, իսկ 1883-ից՝ Փարիզի (Սորբոնի) համալսարաններում: Ա.Նազարբեկի քաղաքական հայացքների վրա զգալի ազդեցություն են գործել Ա.Գերցենի և ռուսական հեղափոխական նարոդնիկությունը: 1886-87 թթ. աշխատակցելով Մ.Փորթուգալյանի «Արմենիա» հանդեսին, Ա.Նազարբեկը գրում էր. «Թուրքիայում հայերի դրությունը վերջ տալու միակ միջոցն է հեղափոխությունը, և մենք պետք է դա անենք... Միայն արյունն է, որ հայ ժողովրդին կարող կլինի փրկել այն ախտից, որով նա հիմա տանջվում է. միայն արյունն է քաղաքականությունը թուրք կառավարության դեմ. միայն արյունն է, որ կարող է սարսափեցնել բռնավորներին... Դիպլոմատիական գործունեությունը գուցե կարող լինի օգուտ բերել հեղափոխությանը, ծառայելով նրան իբրև մի միջոց: Ես չեմ ուրանում այդ գործունեության նշանակությունը, բայց մեզ հարկավոր է մեկ արմատական գործունեություն, այն է՝ հեղափոխություն»[1]:

Ա.Նազարբեկը կոչ էր անում Եվրոպայում, Հայաստանում և այլ երկրներում ստեղծել հայ երիտասարդական խմբեր՝ կապված միմյանց հեղափոխական և գաղափարական հիմքի վրա: «Այսպիսով, անջատված խմբերը կկազմեն մեկ ընդհանուր երիտասարդական հայրենասիրական խումբ, ունենալով իրենց նպատակը՝ հեղափոխական գործունեությունը: Այդպես միացած մի նպատակով, մեկ ընդհանուր ծրագրով երիտասարդներս կկանգնենք մի դրոշակի տակ, իբրև մի բանակի համեմիապետնն իր անընդհատ հետաքրքրությամբ ու հետազոտություններով Տաճկահայաստանի հայերի կացության վերաբերությամբ և անգլիական միախոներները մեր երկրում՝ մեր դեմ օձային խարդախ քաղաքականության որոգայթն են լարում...»[2]:

Չբավանելով Մ.Փորթուգալյանի գաղափարները, «Արմենիա»-ի լիբերալ-բուրժուական ուղղվածությունը, Ա.Նազարբեկը մեկնում է Ժնև, որտեղ 1887 թ. մի խումբ կովկասահայ ուսանողների հետ հիմնում է «Հնչակ» թերթը և Հնչակյան կուսակցությունը: Խմբի անդամներից էին Մա-

1 *Արմենիա*, 1886, h. 89:

2 *Արմենիա*, 1886, h. 3:





րո Վարդանյանը (հետագայում Ա.Նազարբեկի կինը), Մարևոս Շահազիզյանը, Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը, Գևորգ Ղարաջյանը, Միքայել Մանվելյանը և ուրիշներ: Ա.Նազարբեկը, «իր բազմակողմանի զարգացումով, մարքսիստական դաստիարակությամբ, արվեստագետ-բանաստեղծի խառնվածքով, հռետորական ձիրքով և գեղեցիկ արտաքինով, կհանդիսանար այս խմբակին ոգին ու ղեկավարը»[1]: Ա.Նազարբեկն էր, որ առաջարկեց «հայացնել» Գերցենի «Կոլոկոլ» թերթի անունը, թերթը կոչել «Հնչակ», իսկ կազմակերպությունը՝ Հնչակյան: «Հնչակ»-ի առաջին համարը լույս տեսավ 1887 թ. նոյեմբերին, թերթը սկզբնական շրջանում շարում էր Ա.Նազարբեկը, հոդվածներն էլ հիմնականում ինքն էր գրում:

«Արմենիա»-յի, «Հայաստան»-ի համեմատությամբ, Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրում առավել արմատական դիրք բռնեց «Հնչակ»-ը: Հենց սկզբից նա ժխտեց արևմտաեվրոպական դիվանագիտության դրական դերի հնարավորությունը, հակվեց ժողովրդի կողմից սեփական ուժերի վրա կռթնելու տեսակետին: «Հնչակ»-ը ասպարեզ իջավ Արևմտյան Հայաստանի ազատագրությունն ապստամբական միջոցներով ձեռք բերելու նպատակով: Նա պայքարում էր միապետական կարգերի դեմ, անկախ թուրքական, պարսից և ցարական միապետական կառավարությունների օգնությունից ու համակրանքից: Նա չէր սահմանափակվում Բեռլինում ընդունված, բայց չիրագործված 61-րդ հոդվածի բարենորոգումներով, այլ պահանջում էր Արևմտյան և Արևելյան Հայաստանի անկախություն, իբրև միացյալ հայրենիքի պետության: Նորություն էր նաև այն, որ հայ իրականության մեջ առաջին անգամ այդ կուսակցությունը մեջտեղ էր բերում ընկերվարական գաղափարներ, թեև դրանց իրագործումը ամփոփվում էր հեռավոր ծրագրի մեջ:

1890 թ. Ա.Նազարբեկը ընտրվում է Հնչակյան կուսակցության Կենտրոնի նախագահ, իսկ վերջինիս պառակտումից հետո (1896 թ.) գլխավորում է հնչակյանների ձախ՝ ընկերվարական հոսանքը: Հիմնում է «Սոցիալիստական գրադարան» մատենաշար, հայերեն թարգմանում ու

1 Պատմություն Ս.Դ. Հնչակյան կուսակցության, 1887-1962, Բեյրութ, 1962:

հրատարակում Կ.Մարքսի, Ֆ.Էնգելսի, Ֆ.Լասսալի, Պ.Լաֆարգի, Գ.Պլեխանովի երկերը: 1894 թ. Աթենքում հրատարակում է «Գաղափար», 1894-97 թթ. Աթենքում, ապա Լոնդոնում՝ «Ապտակ» հանդեսները, 1903-04 թթ. Բուլղարիայում՝ «Վերածնություն» շաբաթաթերթը:

Հնչակյան կուսակցության հիմնադիր Ա.Նազարբեկը միևնույն ժամանակ մի շարք չափածո գործերի հեղինակ է: Իբրև բանաստեղծ հանդես է եկել Լեռենց գրական անունով՝ Սասունի, Զեյթունի և Փոքր Հայքի լեռնցիների ցասումն ու պահանջն արտահայտելու նպատակով: 1883 թ. Թիֆլիսում հրատարակել է «Ազատ ժամեր» գրքույկը, 1890 թ. Պետերբուրգում՝ բանաստեղծությունների ժողովածու: Հետագայում լույս տեսան նրա «Փախստականը» (1891), «Ավազակը» (1892), «Մարտում» (1893), «Դարբնոր» (1904) և այլ գործեր, նվիրված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, աշխատավոր ժողովրդի կյանքին:

Ռուսաստանի բանվորական, սոցիալ-դեմոկրատական շարժման ազդեցության ներքո Հնչակյան կուսակցությունը 1903 թ. ընդունեց նաև «արևելահայ հարցը» և միացավ ցարիզմի դեմ պայքարին: 1905-07 թթ. հնչակյան որոշ կազմակերպություններ համագործակցեցին ՌՍԴԲԿ-ին՝ հարց բարձրացնելով միանալ նրա հետ կազմակերպչորեն: Կուսակցության ընդհանուր ժողովը, որը կայացավ 1905 թ. Փարիզում, մերժեց այդ պահանջը:

1905 թ. Ա.Նազարբեկը, Ռ.Խանազատը և Գ.Վարդանյանը, մշակելով նոր ծրագիր, առաջարկեցին անջատել արևմտահայ հարցը արևելահայից՝ ցարիզմի դեմ հեղափոխական պայքարից: Որպես Հնչակյան կուսակցության կենտրոնի ներկայացուցիչ Ա.Նազարբեկը Ժնևում երկար բանակցություն էր վարում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչներ Գ.Պլեխանովի, Վ.Լենինի և Լ.Մարտովի հետ: Հիմնականում բոլոր կետերում տիրում էր կատարյալ համաձայնություն կողմերի միջև, բացառությամբ Արևմտյան Հայաստանի հարցի: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը պահանջում էր անջատել իրարից «ռուսահայ» և «թուրքահայ» հեղափոխական պայքարը և Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը վերապահել արևմտահայերին: Այլ խոսքով, Հնչակը մնում էր զուտ արևմտահայկական կուսակցություն իր ծրագրով, բայց դադարում էր





գոյություն ունենալուց Անդրկովկասի հայության մեջ, իսկ նրա տեղական կազմակերպությունները լուծվեցին հիմնականում ՌՍԴԲԿ-ի կովկասյան շրջանային կազմակերպության մեջ:

1909 թ. կուսակցությունը վերանվանվեց «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն»: Հնչակյանները շարունակեցին զինված պայքար մղել Արևմտյան Հայաստանում, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ակտիվորեն մասնակցեցին հայ կամավորական խմբերի կազմակերպմանը:

1923 թ. Կոմինտերնի որոշման համաձայն, Ռուսաստանի հնչակյան կազմակերպությունները դադարեցրին գոյություն ունենալուց: Ա.Նազարբեկը Ֆրանսիայից անցավ ԱՄՆ, ընդունվեց ԱՄՆ-ի համայնավարական (բանվորական) կուսակցության շարքերը, նպաստեց ձախ հնչակյանների միավորմանն այդ կուսակցությանը, ստեղծելով հայկական սեկցիա: ԱՄՆ-ում Ա.Նազարբեկը մասնակցում է «Երիտասարդ Հայաստան» և «Շինարար» թերթերի հրատարակմանը, Հայաստանի օգնության կոմիտեի աշխատանքներին: 1934 թ. վերադառնում է Խորհրդային Միություն, մահանում է Մոսկվայում 1939 թ.:

1890-ական թթ. Ա.Նազարբեկը հանդես է եկել Անգլիայում Հայկական հարցին նվիրված մի շարք գրքույկներով և հոդվածներով, որոնցից մեկն է ստորև ներկայացվող «Զեյթունը»: Հոդվածի հեղինակը չի հավակնել ամբողջությամբ վերցված ներկայացնելու արևմտահայերի հակասուլթանական, ազգային-ազատագրական պայքարը: Նրա ուշադրության կենտրոնում է Զեյթունը, բաց զեյթունցիների ապստամբությունը: Ա.Նազարբեկը ծանոթացնում է ընթերցողին Զեյթունի բնության, աշխարհագրական դիրքի հետ, ճշմարտացի փաստեր բերում Կոստանդնուպոլսի 1895 թ. հայերի ջարդի մասին, բացահայտում ինչպես թուրքական պաշտոնական շրջանների, այնպես էլ եվրոպական մամուլի խեղաթյուրումները, քննադատում տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում: Քչերին է հայտնի, որ Ա.Նազարբեկի «Զեյթուն» հոդվածը 1981 թ. Ջոն Կիրակոսյանի և Վարդան Ոսկանյանի ռուսերեն թարգմանությամբ, պաշտոնեական օգտագործման համար, սահմանափակ տպաքանակով լույս է տեսել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի

կենտրոնում: Հոդվածի տպագրումը մայրենի լեզվով ևս մի ավանդ է հայ հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս Ավետիս Նազարբեկի գրական ժառանգության ժողովրդականացման գործում: Հոդվածը տպագրվում է մասնակի կրճատումներով:

## ԱՎԵՏԻՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ

# ԶԵՅԹՈՒՆ

I

Հայկական Կիլիկիայից հյուսիս, որտեղ ձգվում է փառահեղ Տավրոսի լեռնաշղթան, իր լեռնաճյուղավորումները տարածելով Կիլիկիայի սարահարթից հյուսիս, լեռները աստիճանաբար ցածրանում են, բաժանվելով ավելի մանր բարձրությունների: Դրանց գագաթները տարվա մի մասի ընթացքում ձյունապատ են, իսկ նրանց միջև կորած հովիտները մեծ բարձրության վրա են գտնվում: Այդ հովիտներից մեկում ամֆիթատրոնի պես լեռնալանջին ծեփված թաքնված է Զեյթուն քաղաքը:

...Զեյթուն անունը թանկ է յուրաքանչյուր հայի համար: Թանկ է մեզ համար, որովհետև այն պատկանում է հայկական Կիլիկիային, որտեղ մինչև 1393 թ. բարգավաճում էր հայոց թագավորությունը, որն այդ տարվանից ընկավ սելջուկների լծի տակ: Հայ թագավորները Կիլիկիայում թագավորել են չորս դար, իրենց գահն այնտեղ տեղափոխելով այն բանից հետո, երբ թաթարներն ու պարսիկներն ավերեցին մեծ Հայաստանը, իսկ փոքր Հայաստանի մեծ մասը հայտնվեց հույների ձեռքին:

Զեյթունը մեզ համար թանկ է անկախության իր ավանդույթներով, որոնք նա սրբորեն պահում է մինչև օրս: Զեյթունը թանկ է մեզ համար, որովհետև ընդհուպ մինչև 1862 թ. իր խիզախության և հարմար լեռնային դիրքի շնորհիվ պահպանում էր իր կիսանկախ վիճակը: Դեռևս պահպանելով սեփական իշխաններին, ժողովուրդը սովորաբար կամավոր վստահում էր նրանց գործադիր իշխանությունը: Իսկ ամբողջ երկրում հայտնի քաղաքի ավագները օգնում էին նրանց: Բայց օրենքները միշտ





կազմում ու իռչակում էր հենց ժողովուրդը իր ընդհանուր ժողովում: Զեյթունը թանկ է մեզ համար, որովհետև իր կիսանկախ վիճակով նա բարձր էր պահում (և մինչև օրս պահում է) հայերի ազգային դրոշը: Մեր դարի սկզբից ի վեր նա հաղթականորեն դիմադրում է իր կիսանկախ վիճակին ոտնձգություն կատարելու օսմանյան կառավարության բոլոր փորձերին, հրաշքով պահպանելով իր գոյությունը որպես օազիս կայսրության անապատում, որը դարձել է ամուլ իր բարբարոսական ու բռնատիրական օրենքների շնորհիվ, ինչպես Սահարան իր ավազով: Կայսրության այդ փորձերը հաջողություն չունեին մինչև 1872 թ.:

Այդ տարի զեյթունցիներն ապստամբության դրոշ պարզեցին և պաշտպանվում էին մեկ ամիս, քանի դեռ չէին հայտնվել խորամանկորեն պատրաստված ծուղակում, հավատալով թուրքական կառավարության խորամանկ պաշտոնյաների խոսքերին: Այն ժամանակ նրանք ստիպված էին ճանաչել իրենց պարտությունը և դառնալ այն բանի ականատեսը, թե ինչպես թուրք պաշտոնատար անձինք առաջին անգամ մտան ու հիմնավորվեցին իրենց սիրելի քաղաքում: Բայց բանը չավարտվեց այդ ստորացմամբ: Թուրքիայի կառավարությունը նվաճեց Զեյթուն քաղաքը, որի բնակչությունը կազմում էր 18 հազար մարդ՝ բացառապես հայեր, եվրոպական տիպի հզոր ամրոցի օգնությամբ: Այդ ամրոցը գտնվում է անմիջականորեն քաղաքի դիմաց, միակ մուտքի մոտ, և թնդանոթները 18 տարի շարունակ, բացելով իրենց ահավոր սև երախները, նայում են քաղաքին՝ պատրաստ ակնթարթորեն ոչնչացնել այն բնակչության հետ, այն դեպքում, եթե նրա համարձակությունը բավականացնի մտածել նոր ապստամբության կամ թեկուզ դիմադրության մասին: Վերջին չորս ամիսների իրադարձությունները, որոնք տեղի ունեցան ինչպես Զեյթունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ցույց տվեցին, որ այդ ամրոցը իր մշտապես լիցքավորված Կրուպի թնդանոթներով չի կանգնեցնի ժողովրդին, որը, խեղդվելով սեփական արյան մեջ, որոշել էր ամեն ինչ անել իր պաշտպանության համար, պայքարել մինչև վերջ:

...Զեյթունը դա մի երկիր է, որտեղ մենք պահպանում էինք ազատության մեր հույսերը, իսկ զեյթունցիները հերոսներ են, որոնք երազանքները դարձնում են իրողություն: Զեյթունը մեր սրտերի երգն է, և զեյթունցիները մեր հույսն են:

II

Ո՞րն էր 1895 թ. հոկտեմբերին տեղի ունեցած զեյթունցիների վերջին
ապստամբության կամ խռովության պատճառը: Արդյո՞ք այն անսպասելի
էր: Արդյո՞ք այն հրահրվել էր թուրքական կառավարության գործողու-
թյուններով, թե՞, ինչպես կառավարությունն է պնդում, այն հայերի չար
կամքի արդյունքն էր:

Դեռևս ոչ ոք չի մոռացել Կոստանդնուպոլսի հայերի ցույցը անցյալ
տարվա սեպտեմբերի 18-ին: Այն կազմակերպվել էր և որպես խնդրագիր,
և որպես բողոք Հայաստանի շրջաններում հայերի դրության դեմ, որի
մասին, որպես ինչ-որ «ահավոր» բանի, խոսում էին բոլորը, սկսած նորին
մեծություն թագուհուց և մարկիզ Սոլսբերիից և վերջացրած եվրոպական
շարքային լրագրողներով: Հենց ցույցի մասնակիցների անվտանգության
համար այն նախատեսվում էր անցկացնել խաղաղ, որի նպատակն էր
խնդրագրով դիմել Բարձր Դռանը, նրանից պահանջելով վերջ դնել կոտո-
րածին, որը շարունակվում էր, չնայած Եվրոպայի որոշ մեծ տերություն-
ների միջամտությանը: Ավելի լրիվ ցույց տալու համար, որ ցույցը մար-
տական մտադրություններ չուներ, բավական է հիշատակել, որ Հնչակյան
կուսակցության կազմկոմիտեն իր պարտականությունն էր համարել ցույ-
ցից 2-3 օր առաջ իրազեկ պահել վեց երկրների դեսպանություններին
Կոստանդնուպոլսում պատրաստվող ցույցի մասին, իսկ սուլթանի կառա-
վարությանն իրազեկ էր պահվել ցույցի նախօրյակին: Կշտամբանքների
համար առիթ ծառայեց այն փաստը, որ ցուցարարները կրում էին զենք,
ինչն ընդունվեց որպես թշնամության դրսևորում: Բայց եթե մտածելու լի-
նենք, ապա կշտամբանքը կթվա բավական տարօրինակ ու ծիծաղելի:
Կոտորածների կազմակերպման հակված կառավարության մարդասպան
զինվորների հետ ցուցարարները չէին կարող այլ կերպ վարվել, քան ձեռ-
նարկել նախազգուշական այդ խելամիտ միջոցը:

Հայտնի է, որ մի քանի օր հետո ուղղակի պալատից տրված հրաման-
ներով մահմեդական խաժամուժը հայերին կոտորում էր սուլթանի հենց
մայրաքաղաքում: Բայց արյունահեղությունից հետո շուտով սուլթանը
ստիպված էր ենթարկվել եվրոպական որոշ տերությունների ճնշմանը և
համաձայնել որոշակի բարենորոգումների (իհարկե՝ խոսքով): Բայց այդ





ժամանակ տեղի ունեցավ մի իրադարձություն, որն ավելի քան պարզ է
լույս սփռում հետագա կոտորածի վրա, որը տեղի ունեցավ այսպես կոչ-
ված Աբդուլ Համիդի համաձայնությունից հետո: Մի ձեռքով գրելով այն,
մյուսով նա ջնջում էր գրվածը և իր նախարարների բերանով հայտարա-
րում, որ ինքը չի կարող բացահայտորեն բարենորոգումներ խոստանալ
հայերին և համաձայնել դրանց անցկացմանն առանց մահմեդականների
մեջ դրանով դժգոհություն արտահայտելու վտանգի, իսկ վերջիններս
բարենորոգումներ թույլ չտալու համար կարող էին դիմել Հայաստանում
բոլոր քրիստոնյաներին կոտորելուն: Անելով այդ ցինիկ հայտարարու-
թյունը, ստոր և այդ ահավոր բռնապետը գերադասում էր ավելի շուտ
անօգնական տեսք ունենալ (նա մահմեդականների խալիֆն է), քան ճն-
շել իր դժգոհությունը, ասիական վրիժառությունը և վատ թաքնված դա-
ժանությունը անպաշտպան հայերի նկատմամբ, որոնք իրենց անհամար
թշնամիների իշխանության տակ էին: Իսկ ինչ կանխատեսում էր Համիդը,
ոչ միայն մարգարեություն էր, այլև ավելի շուտ գործողության ուղղակի
առաջարկություն, հրաման և նշանակում էր ահա թե ինչ. «Հայկական
հարցին վերջ դնելու համար եկեք վերջ տանք հայերին»:

Հանցավոր մտահղացումների ևս մեկ վկայություն է այն փաստը, որ
կենտրոնական կառավարությունը մինչև կոտորածը սկսելը հրաման էր
արձակել մանրամասն խուզարկություն կատարել բոլոր հայերի տներում
և վերցնել ոչ միայն զենքը, այլև նույնիսկ գրչածայրի երկարությամբ հա-
սարակ դանակները և դրանով անհրաժեշտության դեպքում հայերին զր-
կել ինքնապաշտպանության ամեն մի միջոցից:

Այդ ծուղակը, որն ասիական աղվեսների քաղաքական խաղ էր, և որը
պահպանվում ու մշտապես կիրառվում էր Թուրքիայում, սուլթանը կազ-
մակերպել էր ամենահեռատես ձևով: Վստահ լինելով Ռուսաստանի հո-
վանավորությանը, նա ոչ մի բան վտանգի չէր ենթարկում: Հայերի համար
այդչափ աղետալի այդ հովանավորչությունը Ռուսաստանը երաշխավո-
րում էր նրան՝ նրա մաքիավելիստական քաղաքականությանն աջակցե-
լով:

...Ամեն առավոտ հայերի համար սկսվում էր կոտորածով. ամբողջ
կայսրությունում նրանց կոտորում էին հազարներով: Այդպիսիք էին պայ-
մաններն անցյալ տարվա հոկտեմբերին, երբ Մարաշի նահանգապետը

Զեյթուն ուղարկեց մի պաշտոնատար անձի՝ չերքեզ Հաջի Ասլանին, որին ուղեկցում էին զափթիեները, և որը հրաման էր ստացել խուզարկություն կատարել բոլոր տներում: Զեյթունցիները հիանալի իմանալով, թե դա ինչի կարող էր հանգեցնել ամբողջ Հայաստանում զանգվածային կոտորածի պայմաններում, վճռականապես հրաժարվեցին ենթարկվել չերքեզի կոպիտ պահանջներին: Վերջինս՝ շփոթված լինելով դրանից, հաջորդ օրը մեկնեց Բերտուս, այնտեղ հավաքեց հարյուրից ավելի բաշիբոզուկների և անմիջապես շարժվեց դեպի Ալաբաշ հայկական գյուղը, փորձելով իրի մտնել այն: Հայերն սկսեցին խիզախաբար պաշտպանվել: Այդ անհաջող գրոհից հետո Հաջի Ասլանը ոտքի կանգնեցրեց ևս մի հարյուրակ բաշիբոզուկների և հոկտեմբերի 6-ին երկրորդ անգամ հարձակվեց գյուղի վրա: Բայց այս անգամ էլ հայերը վճռական դիմադրություն ցույց տվեցին ու հետ մղեցին թշնամուն, փախուստի մատնելով նրան: Ամսի 13-ին Ալաբաշի հայերը սուրհանդակ ուղարկեցին զեյթունցիների մոտ, խնդրելով օգնություն ցուցաբերել իրենց, քանի որ հազարավոր բաշիբոզուկներ ու կանոնավոր զորքը պատրաստվում էին հարձակվել իրենց վրա: Խիզախ զեյթունցիները, որոնք միշտ պատրաստ էին մարտնչել իրենց եղբայրների համար, շտապ կարգով երկու հարյուր կտրիճից բաղկացած մի խումբ կազմեցին և շարժվեցին դեպի Ալաբաշ: Շաքիր Դերում, որտեղ պատմական Ջահան գետը միախառնվում է Բերտուսի հետ, զեյթունցիները հանդիպեցին օսմանյան զորքերին ու բաշիբոզուկներին, որոնք ճամբար էին խփել մահմեդական Փաշիիթլի գյուղից ոչ հեռու գտնվող բլրի գագաթին: Վիճակը ցցված էր:

Հաջորդ օրը լուսաբացին սկսվեց փոխհրաձգությունը: Մարտը տևեց մի քանի ժամ: Թեև զեյթունցիներն ավելի լավ դիրք չունեին, իսկ հակառակորդը մարդկանց թվով ութ անգամ ավելի շատ էր, այնուամենայնիվ, նրանց հաջողվեց պահել իրենց դիրքերը և շարժվել առաջ: Թուրքերն անհամեմատ ավելի շատ կորուստ կրեցին, քան հայերը: Մոտավորապես հավասար մարտի վերջին զեյթունցիների ճամբար ժամանեց սուրհանդակը և հաղորդեց, որ թուրքերի ու բաշիբոզուկների մի մեծ միավորում պատրաստվում է հարձակվել Զեյթուն քաղաքի վրա: Երբ մթնեց, զեյթունցիները դիրքում թողնելով 100 մարդ շտապ վերադարձան: Նույն գիշեր նրանք հարձակում կազմակերպեցին մահմեդական ճամբարի վրա և հա-





կառակորդին փախուստի մատնեցին: Այդ առաջին հաղթանակից հետո նրանք նույնպես շտապ վերադարձան Զեյթուն:

Այստեղ արդեն ընթանում էր կատաղի ու վճռական մարտ: Հրաձգությունը ոչ մի րոպե չէր դադարում: Զեյթունը պաշարված էր տասը հազար հոգուց բաղկացած կանոնավոր զորքերով ու բաշիբոզուկներով: Այդ մարտի ելքից կախված էր Զեյթունի ճակատագիրը: Մեր արյունը եռում էր: Միտքն այն մասին, որ հազարավոր անմեղ մարդիկ ենթարկվում են սարսափելի տառապանքների, կատաղեցնում էր ռազմիկներին: Յուրաքանչյուր քայլի նրանց շրջապատում էր վայրենի մարդասպանների, անողոք գազանների ամբոխը, որոնք ընդունակ էին ցանկացած գազանության իրենց արյան ծարավը հագեցնելու համար: Այդ վտանգի պայմաններում զեյթունցիները գրոհի ձեռնարկեցին: Նրանք բաժանեցին զորքը և խմբերով պաշարեցին ահավոր ամրոցը, որտեղից ժամանակ առ ժամանակ իրենց վրա կրակում էին թնդանոթները: Մարտը և անընդհատ փոխհրաձգությունը տևեց 50 ժամից ավելի, որից հետո զեյթունցիներին հաջողվեց հետ մղել պաշարող մահմեդականներին և չեզոքացնել 600 հոգիանոց կայազորը:

Դա տեղի ունեցավ անցյալ տարվա հոկտեմբերի 18-ին:

600 թուրքեր գերի վերցվեցին զեյթունցիների կողմից, որոնք տիրեցին ամրոցին՝ ռազմամթերքի ու Կրուպի 2 թնդանոթներով հանդերձ: Նույնը տեղի ունեցավ Զեյթունի պաշտոնատար անձինք հանդիսացող բոլոր թուրքերի հետ: Գերիներին տեղավորելու համար հատկացվեցին դպրոցի շենքը և մեծ տները: Ամրոցի վրա ծածանվում էր հայերի ազգային դրոշը, ժողովուրդը մի քանի օր տոնում էր այդ հիշարժան հաղթանակը: Առաջին իսկ օրից հայերը թուրք ռազմագերիների հետ վարվում էին եղբայրների պես:

...Հաղթանակից հետո ժողովուրդն ընտրեց 16 հոգուց բաղկացած ժամանակավոր վարչություն: Ապա նրանք ստեղծեցին ազգային գվարդիա՝ կարգուկանոնը պահպանելու նպատակով: Գուցե դա տարօրինակ թվա, բայց հոկտեմբերի 18-ից սկսած Զեյթունում ոչ մի գողություն, ավազակային ձեռնարկում կամ որևէ այլ հանցավոր գործողություն չկատարվեց: Ուտելիքն ու անհրաժեշտ իրերը ժամանակավոր վարչությունը տալիս էր ինչպես հայ բնակչությանը, այնպես էլ թուրք ռազմագերիներին:

Զեյթունցիների առաջին հաղթանակներից հետո պաշարող զորքերի հզորությունն աճեց, հասավ 30-40 հազար մարդու:

Այս տեղեկատվությունը ես քաղում եմ այն նամակներից, որոնք Զեյթունից ստանում եմ գրեթե կանոնավորապես և համապատասխանաբար պատասխանատու եմ դրանց հավաստիության համար: Նույն աղբյուրները վկայում են փաստերի ու իրադարձությունների մասին, որոնց մասին ես պետք է ասեմ, միաժամանակ նշելով դրանց ժամկետը:

III

Ես արդեն ասացի, որ հոկտեմբերի սկզբին թուրքերը հարձակվել էին Ալաբաշ գյուղի վրա: Մյուս կողմից, ուրիշ շրջանների հայկական գյուղերը դարձել էին ահավոր կոտորածի ասպարեզ: Տեղական իշխանությունների պահանջով՝ հանձնելով իրենց սակավաթիվ զենքը և հպատակության երդում տալով սուլթանին, նրանք դրանով ջանում էին խուսափել կոտորածից, որով սպառնում են թուրքական սուրհանդակները: Չարկ չկա ասել, որ խեղճ հայերը խորապես մոլորվեցին: Հոկտեմբերի 20-ի գիշերը բաշիբոզուկները չերքեզ մյուդիր Մուհամեդ Բեյի հրամանատարությամբ հարձակվեցին հայկական գյուղերի վրա: Իմաստ չունի նկարագրելու նրանց գազանությունները: Եվրոպական հասարակայնությունը, հատկապես անգլիացիները, բավականին լավ գիտեն այդ մասին, ավաղ, շատ լավ:

Թուրքերը կոտորած, ավերածություններ և կանանց ծաղրուծանակ կազմակերպեցին Անդերունի գայմագամությանը պատկանող հայկական Շիվիլկի գյուղում, ինչպես նաև Ենիջե Կալեի և Անապատի շրջանների գյուղերում:

Այդ գազանությունները շարունակվեցին վեց օր: Այդ իրավիճակում Շիվիլկի գյուղի հարևան Թավուդ գյուղի հայերը որոշեցին պաշտպանել իրենց եղբայրներին: Նրանք կռվի բռնվեցին Յայջու Օղլիի հրոսակախմբի հետ և կարողացան փախուստի մատնել նրանց:

Հոկտեմբերի 29-ին թուրքերը կատաղի հարձակում գործեցին Թելեմելիք հայկական գյուղի վրա: Տեղի բնակիչները զեյթունցիների ջոկատի հետ քաջաբար պաշտպանվում էին և հակառակորդին փախուստի մատնեցին Մարաշի ուղղությամբ:





Նոյեմբերի 1-ին մի խումբ զեյթունցիներ ուղևորվեցին Բունդուկ և Կապան, որպեսզի տեղի բնակիչներին օգնեին փրկելու չերամապահական արդյունաբերությունը, որը կարևոր նշանակություն ուներ: Այդ շրջանների թուրքական գյուղերի բնակիչները, վախենալով, որ իրենց հարևան հայերի նկատմամբ բաշիբոզուկների կատարած հանցագործությունների համար իրենք են պատասխան տալու, գրություն հայցեցին և հայտարարեցին իրենց հնազանդության մասին, որին զեյթունցիները, որոնք միշտ վեհանձն էին, համաձայնեցին, և այսպիսով ոչ մի կաթիլ արյուն չհեղվեց:

Այդ ժամանակ հայտնի դարձավ, որ Անդերոնի կամ Անդրին գայմագամության տեղական իշխանությունները նշանավոր հայերին բանտարկել են վարակված խցերում, բռնաբարել երիտասարդ աղջիկներին, կողոպտել տներն ու գույքը: 350 զեյթունցիներից բաղկացած ջոկատն իսկույն մեկնեց Անդրին: Նոյեմբերի 3-ին այնտեղ կատաղի ընդհարում տեղի ունեցավ 950 հոգուց բաղկացած թուրքական միավորման հետ: Զեյթունցիները թեև քանակապես զիջում էին, կրկին փայլուն հաղթանակի հասան, ջախջախեցին թշնամուն և գյուղ մտան հենց այն պահին, երբ թուրքերը պատրաստվում էին վառել այն տունը, որտեղ գտնվում էին կալանավոր հայերը: Ազատագրելով նրանց, զեյթունցիները հավաքեցին բոլոր հայերին ու նրանց գույքի մնացորդների հետ ուղարկեցին Ֆեռնուզ:

Նոյեմբերի 5-ին զեյթունցիների մի քանի խմբեր շտապեցին Ենիջե Կալեի, Դումկալայի և Անապատի շրջաններ, որտեղ հայկական գյուղերը կատաղի գրոհի էին ենթարկվում կանոնավոր զորքերի ու բաշիբոզուկների կողմից: Նրանք, ճանապարհին հանդիպելով թուրքական ուժերին, մի քանի փայլուն հաղթանակ տարան: Սակայն քանի դեռ զեյթունցիները իրենց ճանապարհին մարտեր էին մղում թուրքերի դեմ, Մարաշից եկան կանոնավոր զորքեր, որոնք ամայացնում, ոչնչացնում և վառում էին բոլոր հայկական տները:

Այդ նույն ժամանակ մի խումբ զեյթունցիներ ժամանեցին Քեշիրջե, վռնդեցին թշնամուն և այնտեղից անցան Ենիջե Կալե: Այնտեղ ամրապնդվելով իրենց շարքերը, նրանք հայ բնակչության մի մասի հետ ուղևորվեցին Ֆեռնուզ: Նրանք չէին հասցրել դուրս գալ Ենիջե Կալեից, երբ թուրքերը հարձակվեցին գյուղի վրա և ամեն ինչ քարուքանդ արեցին: Բարեբախտաբար, թուրքերը չէին հասցրել սկսել կոտորածը, երբ զեյթունցինե-

րի մի խումբ Կապանից օգնության հասավ այդ շրջանի բնակիչներին:

Սկսվեց դժվարին մարտ, որը տևեց մինչև կեսգիշեր: Այս անգամ էլ զեյթունցիները պարտության մատնեցին թուրքերին, իսկ հաջորդ օրը նրանք օգնություն ցուցաբերեցին ենիջե Կալեի շրջանի երեք ուրիշ հայկական գյուղերի: Սակայն օսմանյան զորքերն ու բաշիբոզուկները լիովին ավերեցին Անապատը, Դումկալայը, այդ գյուղերի բնակիչներին մինչև վերջին մարդը ոչնչացնելով: Այդ ամենը տեղի ունեցավ Զեյթունում ու հարևան շրջաններում 1895 թ. հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի վերջը:

Կան մանրամասներ նաև ուրիշ մարտերի մասին, որոնք չէին դադարել մինչև այս տարվա հունվարը: Դրանք միշտ ավարտվել են զեյթունցի կտրիճների կայծակնային հաղթանակներով: Ապստամբությունն ավելի ու ավելի էր ընդլայնվում, թեև Զեյթունի և Ֆեռնուզի բնակիչները պետք է պահեին Կիլիկիայի տարբեր շրջանների 25 հազար հայերի, որոնք զրկվել էին ամեն ինչից:

## IV

Զեյթունցիների ապստամբության մասին որևէ եզրակացություն անելու համար անհրաժեշտ է ընդհանուր գծերով պարզել այն դերը, որը խաղաց Հնչակյան կուսակցությունն այդ ապստամբության մեջ, և առհասարակ Հայկական հարցում:

Մեր հակառակորդները, գլխավորապես թուրքական կառավարության գործակալներն այնպես են աղավաղել այս կուսակցության նպատակները, որ Անգլիայի հասարակական կարծիքը այդ հայրենասիրական կուսակցությունը ձգտում է դիտել որպես ժողովրդի թշնամու: Մեր հակառակորդները փորձում են ապացուցել, որ հնչակյաններն անարխիստներ են, որ հանդես են գալիս օրենքի դեմ, աղետների, անկարգությունների ու սպանությունների նախաձեռնողներ են, կարճ ասած՝ հանցագործներ: Այդ առասպելն ապացուցելու համար նրանք քրքրում են Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանության արխիվը, հուսալով այնտեղ գտնել «հավաստի փաստաթղթեր»: Ես հիանալի գիտեմ, որ հնչակյանների դեմ այդպիսի հավաստի փաստաթղթերի որոնման համար ավելի լավ տեղ չկա, քան Համիդի կառավարության ու հիշյալ դեսպանության արխիվնե-





րը: Բայց ինչ վերաբերվում է ինձ, ապա ես կգերադասեի նայել այդ կուսակցության կենտրոնական օրգանի՝ «Հնչակ»-ի բոլոր համարները, որտեղ անարխիստական բնույթի ոչինչ չկա: Մինչդեռ ես կարող եմ ներկայացնել անարխիզմի դեմ գրված ամբողջ էջեր:

Մեկ տարի առաջ Լոնդոնում գրած գրքույկում ես հնարավորություն ունեցա շարադրել Հնչակյան կուսակցության քաղաքական ծրագիրը, որն այսօրվա դրությամբ ամենանպատակահարմարն է հայերի խնդիրը լուծելու համար: Դա բնավ էլ անարխիստական ծրագիր չէ: Այն, անշուշտ, չափավոր բնույթ ունի, քանի որ հայերը պահանջում են միայն ինքնավարության իրավունք, որոշակի ժամկետով մեծ տերությունների կողմից նշանակված ու ընտրված քրիստոնյա նահանգապետի կառավարման պայմաններում: Դա, անշուշտ, անարխիստական ծրագիր չէ: Անգլիայում կարող են այն նույնիսկ անվանել բավականին պահպանողական ծրագիր:

Մենք սիրում ենք մեր ժողովուրդը, մենք ուզում ենք, որ նա հնարավորություն ունենա շունչ քաշելու: Երբ եվրոպական դիվանագիտությունը որոշեց ստանձնել միջնորդի դերը, Հնչակյան կուսակցությունը սկսեց հանդես գալ ապստամբական գործողությունների դեմ առհասարակ և դրանով իսկ խաղատախտակի վրա դրեց իր ազդեցությունը ժողովրդի շրջանում: Եվ մենք կարող ենք վստահություն հայտնել, որ հաջողությունն ուղեկցում է մեզ: Մենք ողջունում ենք ցանկացած իսկական զիջում որպես նոր դարաշրջանի սկիզբ մեր ժողովրդի համար: Բայց մենք ավելին սպասելու բան չունենք: Եթե մենք պետք է զոհվենք, ապա եկեք զոհվենք որպես տղամարդիկ, թշնամու դեմ մարտնչելով երես առ երես, այլ ոչ թե վախկոտների պես թիկունքով շրջվենք նրա կողմը:

Հնչակյան կուսակցությունն արդեն գործում է ավելի քան 8 տարի: Իր գոյության առաջին օրվանից նրա մեջ մտավ համալսարանական երիտասարդությունը, բժիշկներ, իրավաբաններ, գրողներ և այլն: Նրանք գրեթե բոլորն էլ հարուստ ընտանիքներից են սերում, իսկ մի քանիսը եվրոպանույնիսկ ամբողջ երկրում հայտնի ազնվական ընտանիքից են: Եվրոպայում նրանք զբաղվում էին գիտությամբ, քաղաքականությամբ ու գրականությամբ, իսկ հայազգի մեծ գրողները նրանց ստիպեցին ուսումնասիրել ազգային պատմությունը:

...Հնչակյան կուսակցությունը գաղտնի կազմակերպություն է և գործում է կոնսպիրատիվ: Ավելի քան պարզ է, որ այլ կերպ նա չէր կարող գոյություն ունենալ Թուրքիայում: Ներկայումս ունի հազարավոր անդամներ: Նրա մեջ մտնում են հայ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ: Կուսակցությունն իր կազմակերպություններն ունի ամբողջ Թուրքահայաստանում և Եվրոպական Թուրքիայում, ինչպես նաև Եվրոպայում ու Ամերիկայում: Բոլոր կազմակերպությունները մի ամբողջություն են կազմում և գործում են միասնական ուղղությամբ: Բայց կուսակցությունը շատ կորուստներ է կրել, մինչև որ այդպիսին է դարձել: Կուսակցության հարյուրավոր անդամներ, որոնց Օսմանյան կայսրության ոստիկանությունը ձերբակալել է, նետվել են բանտեր, աքսորվել, կտտանքների ենթարկվել և դաժան ծեծ ու ջարդ կրել, իսկ 15-ը պաշտոնապես մահապատժի են ենթարկվել: Այդ սկիզբը վատ նախանշան էր հայերի համար, որոնք հետագայում ահավոր ողբերգություն ապրեցին:

Բայց ի՞նչը հայոց հողում «հեղափոխականների» ելույթների պատճառ դարձավ: Պատճառը ժողովրդի կյանքի ծանր պայմաններն էին: Բայց դա դեռ բոլորը չէ:

1878 թ. մինչև օրս չի կիրառվում Բեռլինի պայմանագրի այն հոդվածը, որի համաձայն Եվրոպայի վեց մեծ տերությունները միջազգային մակարդակի վրա պաշտոնապես ճանաչեցին լավագույն կյանք ունենալու հայերի պահանջները: Այդ տերություններն իրենք ստանձնեցին պատասխանատվությունը հայկական նահանգներում անհրաժեշտ բարենորոգումներ անցկացնելու համար: Մյուս կողմից, սկսած 1878 թ. հայերի կյանքը լավանալու փոխարեն էլ ավելի անտանելի դարձավ: Ժողովուրդն աստիճանաբար սկսեց խոսքից գործի անցնել: Երևան եկավ Հնչակյան կուսակցությունը, որը գլխավորեց հեղափոխական շարժումը: Իր ստեղծման պահից նա ժողովրդին բարձրաձայն կոչ արեց մշտական պայքար մղել Թուրքիայի կառավարության ու ոստիկանության դեմ, ժողովրդին ապստամբության նախապատրաստեց, քարոզչություն տարավ այդ ուղղությամբ: Նա հանդես եկավ հանուն ինքնապաշտպանության, ապստամբության, այն բանի օգտին, որ ժողովուրդը հույս դնի միայն սեփական ուժերի վրա: Տրամաբանորեն նա չէր կարող վարվել այլ կերպ: Այն բանից հետո, երբ Եվրոպան, մոռանալով իր խոստումը, հայերին անօգնական





թողեց, ապստամբության իրավունքը դարձավ այդ ստրկացած ժողովրդի սրբազան իրավունքը, և հիմա նա պետք է հենվի սեփական ուժերի վրա:

Մենք այդպես ենք մտածում: Մեզ սեղմել են պատին, ու մենք փաստորեն ընտրություն չունենք: Մենք կարող ենք կամ անլեզու կենդանիների անտարբերությամբ ենթարկվել մեր ճակատագրին, սպասելով այն օրվան, երբ թուրքերը բավարարություն կտան ռևանշի իրենց զգացումին և, հագենալով սպանություններից, մեր ազգի տհաբեկված մնացորդներին թույլ կտան գոյություն քարշ տալ անհուսալի ստրկության մեջ, կամ մենք պետք է անիծենք այն օրը, երբ հավատացինք ազատության երազանքին, պետք է անիծենք այն օրը, երբ հավատացինք ազատության երազանքին, մարդիկ, քաղաքացիներ լինելու հնարավորությանը և նետվեցինք սպիտակ ցարի ոտքի տակ, հուսալով, որ նա կբարեհաճի թուրքական լուծը փոխարինել իր լծով: Եթե մենք չենք ցանկանում ոչ մեկին, ապա մեր բախտը պետք է մեր ձեռքը վերցնենք: Մեր համար միակ հուսահատ եղանակը բացահայտ խռովությունն է, մենք շատ լավ գիտենք, թե ինչ է նշանակում դա մեզ համար Թուրքիայում, բայց մենք փաստորեն ոչինչ չունենք կորցնելու: Պատմության մեջ քիչ չեն փաստերը, երբ ժողովուրդները այդպիսի համարձակություն ստանալով ամեն ինչ խաղասեղանի վրա դնելու համար հաղթող են դուրս գալիս, չնայած իրենց սակավաթիվ լինելուն:

Այդպիսին էին մեր մտքերը Զեյթունի ապստամբությունից առաջ: Դրանք չեն փոխվել նույնիսկ այսօր, երբ իրավիճակը Հայաստանում օրեցօր վատանում է:

Զեյթունում արձագանքեցին մեր հուսահատ կոչին: Հնչակյան ընկերները, ստեղծելով այնտեղ իրենց կոմիտեն, Հնչակյան կուսակցության ղեկավարությամբ վճռական որոշում ընդունեցին պաշտպանվել մինչև վերջին մարդը: Այդպիսով, հնչակյանները՝ որպես իսկական հերոսներ, գլխավորեցին շարժումը: Այդ նրանք գրավեցին ամրոցն ու Զեյթուն քաղաքը և շատ այլ մարզեր, որոնք զեյթունցիներն իրենց ձեռքում էին պահում մոտ 4 ամիս:

V

Ինչպիսի՞ն կլինի զեյթունցիների ճակատագիրը, նրանց հաղթական շարժման վերջը: Մեծ տերություններն ինչպիսի՞ ելք են պատրաստում

նրա համար: Ո՞ւ մ հյուպատոսներն են ներկա պահին Զեյթունում բանակցություններ վարում հայերի հետ: Այդ հարցերը մեզ անհանգստացնում էին այն պահին, երբ բանակցություններ էին վարվում Զեյթունի խռովության առթիվ: Ավելի բարդ բան չկա, քան ուրիշների համար դատավոր լինելը, սակայն այդ դերում հանդես են գալիս համարյա բոլորը և նույնիսկ չարաշահում են այն:

. Ահա հայ ժողովուրդը, որը հետապնդվել, կեղեքվել, ծեծվել է սուլթանի կառավարության ու նրա մոլեգին հորդաների կողմից, խեղդվել է սեփական արյան մեջ, խաբվել մեծ տերությունների, հատկապես Անգլիայի կողմից, այդ ամենադժբախտ ժողովուրդներից մեկը: Ավելին, նա դարձավ եվրոպական շատ հանդեսների անարդարացի մեղադրանքների, վիրավորանքների առարկա: Դրա համար ևս մեկ հիմք էր այն, որ, ինչպես ասվում էր Սասունում եվրոպական հանձնաժողովի հաշվետվության մեջ, սպանված սասունցիների թիվը չափազանցվել էր: Սակայն բոլորը հիշում են, որ Սասունում կոտորածն ուներ այնպիսի ծավալներ ու բնույթ, որ կարելի էր սպանվածների հարցում սկզբում սխալվել, և այդ սխալը թույլ տվեցին ոչ միայն հայերը, այլև ամբողջ եվրոպական մամուլը:

Եվրոպական հանձնաժողովը մոտավոր հաշվումներով հրապարակեց, որ Սասունում զոհվել է մոտ հազար մարդ, իսկ հայերի տվյալներով 6 հազար:

Դրան ամբողջ հակահայկական մամուլը պատասխանեց աղմուկով: Տխուր է, որ քաղաքակիրթ եվրոպացի լրագրողները կարողացան այդքան իջնել: Մարդու կյանքը սրբազան է, լինի դա հայի, գերմանացու կամ անգլիացու կյանք: Եվ երբ այն անարդարացիորեն խլում են մարդուց, այստեղ վեճերը դիակի առթիվ միանգամայն տեղին չեն: Գլխավորն այն է, որ ջարդ է տեղի ունեցել: Եվ դրանից հանցագործությունը չի մեղմանում: Նրանք թուրքական դաժանության զոհեր են:

Բայց ինչո՞ւ վերադառնանք Սասունի կոտորածին: Վերջին մի քանի ամիսներին տասնյակ հազարավոր նոր սպանվածներ եղան: Եվ այնուամենայնիվ, եվրոպական երկրները նույնիսկ այսօր, 20-րդ դարի շեմին չեն համարձակվում կամ չեն ցանկանում հանդարտեցնել կառավարության վայրենի կրքերը, որին նրանք անվանում են «հիվանդ մարդ» կամ «նեխող դիակ»: Ներկայումս կոտորածի նոր սպառնալիք է ստեղծվել ինչպես





Զեյթունում, այնպես էլ Կիլիկիայի մնացած շրջաններում: Եվրոպական երկրների հյուպատոսները եղել են այդ վայրերում: Ինչպիսի՞ դիրքորոշում ունեին նրանք: Նրանք զեյթունցիներին համոզում էին հանուն «պատվավոր հաշտության» զենքը հանձնել թուրքական կառավարությանը, որի զորքերին հայերը ջախջախում էին կանոնավորապես մինչև վերջին ժամանակներս: Այդ խորհրդի արդյունքը կարող էր լինել միայն զեյթունցիների ու նրանց մոտ ապաստան գտած հայ բնակչության ոչնչացումը:

Ըստ երևույթին, հյուպատոսներն իրենց կառավարություններից առաջադրանք էին ստացել վերականգնել այն ամենը, ինչ կար նախքան խռովությունը, այն իրավիճակը, որն էլ հենց խռովության պատճառ դարձավ: Ինչ վերաբերում է Անգլիային, ապա նրա կողմից այդօրինակ ցուցումները միանգամայն հավանական են: Լորդ Սոլսբերին իր վերջին ճառերից մեկում ասաց, որ եվրոպական մյուս տերությունները համաձայնել են իր հետ, որ սուլթանը հավանաբար ինչ-որ բան կաներ հայերի համար, եթե իրեն հանգիստ թողնեին: Մեծ տերությունները ցանկանում են սուլթանին հանգիստ թողնել, միաժամանակ զոհաբերելով շատ հայերի, այդ թվում Զեյթունի բնակչությանը: Պարզ է, որ նրանք ցանկանում են հիմա կոծկել այդ գործը: Սոլսբերիի արտահայտած այդ հույսը դատարկ խոսք է: Դա վկայում է, որ Մեծ Բրիտանիան հեռացել է Հայկական հարցից: Այնուամենայնիվ, հնարավոր չէ համաձայնել այնտեղ նախքան ապստամբությունը տիրող վիճակը վերականգնելուն: Զեյթունի գործերին եվրոպական միջամտությունն իր հետևանքով պետք է ունենա պակաս չարամիտ, պակաս աղետալի բնույթ: Այն պետք է լինի ավելի արդարացի, անաչառ, խելամիտ: Այդ միջամտությունը կքեթևացներ եվրոպական դիվանագիտության մեղքը հայկական ամբողջ ահավոր ճգնաժամի ընթացքում: Եվրոպան չի կարող մերժել մեզ և հատկապես զեյթունցիների ինքնապաշտպանության իրավունքը, երբ դա ճանաչել է յուրաքանչյուր եվրոպական ժողովուրդ ու կառավարություն որպես սրբազան օրենք: Ճանաչելով դա, եվրոպական դիվանագիտությունը չի կարող զեյթունցիներից հնազանդություն պահանջել: Բոլորը պետք է ընդունեն այդ մարդկանց իրավացիությունը, որոնք պահանջում են քրիստոնյա նահանգապետ նշանակել, որ սուլթանի կառավարությունը չմիջամտի իրենց ներքին գործերին, ընդհանուր ներում շնորհվի և այլն: Այդ երկրների ներկայացուցիչները զեյ-

թունցիների հետ բանակցություններում իրենց աննպաստ դիրքորոշմամբ վերջին հարվածը հասցրին հայերի հույսերին, և նրանց ստիպեցին ընդունել Բարձր Դռան պայմանները: Հայերը եվրոպական դիվանագիտությունից արդարություն էին սպասում: Այդ պատճառով հայրենասերները և նրանց հետ մեկտեղ ամբողջ ազգը ստիպված են չհրաժարվել իրենց պաշտպանելու մտադրություններից, իրենց հեղափոխական ծրագրից, որի հետևանքները կարող են կրել ավելի լուրջ բնույթ, քան դա հիմա թվում է եվրոպական երկրներին: Բայց այդ հեռանկարը մեզ այնքան էլ սարսափելի չի թվում: Լողալով սեփական արյան մեջ, դիտելով, թե ինչպես են այրում, կողոպտում, փչացնում ու ավերում մեր ազգային հարստությունը, կորցնելով հարյուր հազարավոր մեր հայրենակիցներին, մենք՝ հայերս, այլևս կորցնելու ոչինչ չունենք: Բայց մյուս կողմից, այն, ինչին կհասնենք, ծառայելու է մեր ժողովրդի բարօրությանը:



# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

## 1. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ*

1914-18 թթ. առաջին համաշխարհային պատերազմը տեղի է ունեցել պետությունների երկու խմբավորումների միջև. մի կողմից՝ ավստրո-գերմանական (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, 1915 թ.-ից՝ Բուլղարիա), մյուս կողմից՝ Անտանտայի (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ֆրանսիա, 1917 թ.-ից՝ ԱՄՆ), ընդամենը 34 պետություն: Իր բնույթով պատերազմը զավթողական էր. նրա բոլոր գլխավոր մասնակիցները հետապնդում էին տարածաշրջանական նպատակներ: 1914 թ. հուլիսի 19-ին (օգոստոսի 1) սկսված համաշխարհային պատերազմի հետ հայ ժողովուրդը որոշակի հույսեր էր կապում. ռուսական զենքի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը և վերականգնել իր պետականությունը: Արևելահայ հասարակական-քաղաքական շրջաններն ու ազգային կուսակցությունները պատերազմը հայտարարեցին արդարացի և իրենց անվերապահ աջակցությունը հայտնեցին Անտանտայի քաղաքականությանը: Դրան շատ բանով նպաստեց Ռուսաստանի պաշտոնական շրջանների կողմից պատերազմի մեջ մտնելու գլխա-

* Հայկական Հարց. Հանրագիտարան, Երևան. Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1992 /ռուս./, 1996, էջ 41-44:

վոր նպատակը Արևելքի քրիստոնյաների «ազատագրումն» ազդարարելը: Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը ոչ միայն չէր հակասում հայ ազգային-ազատագրական շարժման ղեկավարների ձգտումներին, այլև կարևոր տեղ էր զբաղեցնում նրանց քաղաքական ծրագրերում: Սկսված համաշխարհային պատերազմն ու Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը խիստ բարդացրին արևմտահայերի վիճակը: Թուրքիայի կառավարող շրջանները ձգտում էին իրենց կողմը գրավել հայերին և, բանակցությունների մեջ մտնելով նրանց քաղաքական ղեկավարների հետ, առաջարկում էին կամավորական ջոկատներ ստեղծել թուրքական բանակի շարքերում և արևելահայերին ապստամբության դրդել Ռուսաստանի դեմ: Հայերը մերժեցին այդ առաջարկը:

Պատերազմը սկսվելուն պես Արևելյան Հայաստանի քաղաքական շրջանները եռանդուն կերպով ձեռնամուխ եղան հայկական կամավորական շարժման կազմակերպմանը Անդրկովկասում: Բացի այդ, պաշտոնական տվյալներով, Ռուսաստանի յուրաքանչյուր 100 հայից 13-ը զորակոչվել էր բանակ: Ռուսաստանի 2 միլիոնանոց հայությունը պատերազմի տարիներին ռուսական բանակին տվեց ավելի քան 200 հազար զինվոր: Ռուսական իշխանությունները հավանություն տվեցին և ըստ ամենայնի օժանդակեցին հայկական կամավոր զորամասերի ստեղծմանը ռուսական բանակի կազմում:

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները հիմնականում տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանի տարածքում: Պատերազմը սկսվեց թուրքական զորքերի հարձակմամբ, որոնց ճնշման տակ ռուսական Կովկասյան բանակը նահանջեց՝ հակառակորդին թողնելով Ալաշկերտի դաշտը: 1914 թ. դեկտեմբերին թուրքական 3-րդ բանակը Էնվեր փաշայի հրամանատարությամբ ձեռնարկեց Սարիղամիշի օպերացիան՝ Կարսի հետագա գրավման նպատակով: Սակայն թուրքական զորքերի հարձակումը կասեցվեց. ռուսական բանակը, հակահարձակման անցնելով, ջախջախիչ պարտության մատնեց հակառակորդին. թուրքերը կորցրին մոտ 70 հազար մարդ և ստիպված նահանջեցին ելման դիրքերը: 1915 թ. ապրիլին ռուսական զորքերը նոր հաղթանակ տարան Դիլմանի ճակատամարտում (հատկապես որոշիչ դեր խաղաց





Անդրանիկի հայ կամավորների ջոկատը), որի շնորհիվ կանխվեց թուրքական հարձակումը դեպի Թավրիզ՝ ռուսական բանակի թիկունքը:

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների առաջին իսկ շրջանում թուրքական իշխանությունները սկսեցին հայ բնակչության բռնի տեղահանումը Արևմտյան Հայաստանի ճակատամերձ շրջաններից: Թուրքիայում ծավալվեց կատաղի հակահայկական քարոզչություն: Հակառակ իրողության, հերյուրանքներ էին տարածվում արևմտահայերի «դավաճանության», թուրքական բանակից նրանց «զանգվածային դասալքության», հայերի կողմից թուրքական բանակի թիկունքում պատրաստվող «ապստամբության» և այլնի մասին: Մինչդեռ պատերազմի սկզբում թուրքական բանակ էր զորակոչվել մոտ 60 հազար հայ, որոնք շուտով զինաթափվեցին և ուղարկվեցին թիկունք՝ ծանր աշխատանքների, ապա գլխովին ոչնչացվեցին: Այդպիսով Թուրքիայի հայ բնակչությունը զրկվեց իր մարտունակ մասից: Օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքական կառավարությունը, սկսած 1915 թ. ապրիլից, ճակատամերձ գոտուց «վստահություն» չներշնչող հայ բնակչության տեղահանության պատրվակով, ձեռնամուխ եղավ հայերի բարբարոսական բնաջնջմանը. այդ կանխամտածված ցեղասպանության զոհ գնաց շուրջ 1,5 մլն մարդ: Մի շարք վայրերում Օսմանյան կայսրության հայ բնակչությունը դիմեց ինքնապաշտպանության և դիմադրեց թուրք և քուրդ ջարդարարներին:

1915 թ. գարնանը ռուսական զորքերը հարձակողական հաջող գործողություն կազմակերպեցին Վան և Ուրմիա լճերի շրջանում, ազատագրեցին Վան քաղաքը (որտեղ ռուսական զորքերը մնացին 80 օր): Վանի գրավմամբ անխուսափելի ջարդերից փրկվեցին հազարավոր վասպուրականցիներ, որոնք այնուհետև նահանջող ռուսական զորքերի հետ գաղթեցին Արևելյան Հայաստան և Անդրկովկաս: 1915 թ. հուլիսօգոստոսին Ալաշկերտի օպերացիայի ընթացքում ռուսական զորքերը պարտության մատնեցին հակառակորդին, խափանեցին Կարսի ուղղությամբ Կովկասյան ճակատը ճեղքելու թուրքական հրամանատարության ծրագիրը՝ դրանով թեթևացնելով անգլիական զորքերի գործողությունները Միջագետքում: 1915 թ. դեկտեմբերին – 1916 թ. փետրվարին ռուսական բանակը գեներալ Յուդենիչի հրամանատարությամբ հաջո-

ղությամբ իրականացրեց Էրզրումի հարձակողական գործողությունը, որի հետևանքով ռուսական զորքերը փետրվարի 3 (16)-ին գրավեցին Էրզրումը: Թուրքական զորքերի հետապնդումը շարունակվեց մինչև փետրվարի կեսը. ռազմաճակատի գիծը կայունացավ Էրզրումից արևմուտք 70-100 կմ երկարությամբ: Միաժամանակ ռուսական բանակի այլ զորամասեր հարձակման անցան Սև ծովի ափերով և գրավեցին Ռիզե ու Տրապիզոն նավահանգիստները:

1916 թ. ամռանն արդեն Արևմտյան Հայաստանի մեծ մասը գրավված էր ռուսական զորքերի կողմից: Կովկասյան ճակատում ռուսական բանակի հաջողությունները խթանեցին անգլո-ֆրանսիական բանակցությունները Օսմանյան կայսրության ասիական տարածքները, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանը բաժանելու շուրջ և հանգեցրին 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրի կնքմանը: 1916 թ. հունիսին ռուսական զորքերի գրաված Արևմտյան Հայաստանում ստեղծվեց Թուրքահայաստանի գեներալ-նահանգապետությունը: Ռուսական կառավարությունը մշակում էր Արևմտյան Հայաստանի հայաթափ եղած հողերը ռուսներով վերաբնակեցնելու ծրագրեր, ձեռնամուխ լինելով գրավված տարածքի տնտեսական յուրացմանը՝ ձգտում էր Թուրքիայի հայկական նահանգները վերածել Ռուսաստանի սովորական ծայրագավառների: Այդպիսով, ի դերև ելան Արևմտյան Հայաստանում գեթ ինքնավարության ձևով հայկական պետականությունը վերականգնելու հայ հասարակական-քաղաքական շրջանների հույսերը:

1917 թ. մայիսից ռուս-թուրքական ռազմաճակատում փաստացի զինադադարի վիճակ էր ստեղծված. պաշտոնապես զինադադարը ստորագրվեց 1917 թ. դեկտեմբերի 18-ին, Երզնկայում: Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական զորքերը սկսեցին լքել Արևմտյան Հայաստանը: Օգտվելով դրանից՝ թուրքական հրամանատարությունը, խախտելով զինադադարը, հարձակման անցավ ամբողջ ճակատով: Հետ մղելով ռազմաճակատը պահող փոքրաթիվ հայկական ազգային զորամասերը՝ թուրքերը վերագրավեցին Արևմտյան Հայաստանը, 1918 թ. մայիսին՝ Ալեքսանդրապոլը, հասան Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր), ապա Երևանի մերձակա շրջանները: Վտանգված հայրենիքը փրկելու համար ոտքի ելած հայ ժողովուրդը կասեցրեց թուրքական





զորքերի առաջխաղացումը, կանխեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը և պայմաններ ստեղծեց հայ պետականության վերականգնման համար: 1918 թ. հունիսի 4-ին, Բաթումի պայմանագրով, Կարսից ու Արդահանից բացի, Թուրքիային էին անցնում Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի գավառները, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառների մեծ մասը: 1918 թ. հունիս-հոկտեմբերին Հայաստանի Հանրապետությունն ըստ էության գտնվում էր Թուրքիայի վետանի հանրապետությունն ըստ էության գտնվում էր Թուրքիայի վերահսկողության տակ: Եվ միայն առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից ու 1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո թուրքական զորքերը թողեցին Հայաստանի Հանրապետության տարածքը, Կարսի մարզը. վերականգնվեց 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը չեղյալ հայտարարեց Բաթումի պայմանագիրը:

Հետպատերազմյան կարգավորման ժամանակ Հայկական հարցը Անտանտայի երկրների օգնությամբ լուծելու Հայաստանի Հանրապետության կառավարության և արևմտահայերի քաղաքական շրջանների փորձերը ապարդյուն անցան:

*Գրկ. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). Ե., 1972; Արզումանյան Մ.Վ., Հայաստան. 1914-1917, Ե., 1969; Կիրակոսյան Ջ.Ս. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը. 1914-1916 թթ., Ե., 1965; Սարգսյան Ե.Ղ. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Ե., 1964; Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1991; Акопян С.М., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Е., 1967; Арутюнян А.О. Кавказский фронт, 1914-1917, Е., 1971.*

## 2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻ 1915-1916 ԹԹ. ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ*

Համահեղինակներ՝ Ջոն Կիրակոսյան, Անդրանիկ Միհրանյան

Հանգուցյալ Ջոն Կիրակոսյանի, Անդրանիկ Միհրանյանի և Արման Կիրակոսյանի սույն հոդվածը լույս է տեսել ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի պատմության մասնաճյուղի, ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության «Վոպրոսի իստորիի» («Պատմության հարցեր») ամսագրի 1986 թ. 5-րդ համարում[1]:

Ժողովուրդների խիղճը միշտ էլ ընդվզել է ցեղասպանության հանցա-
գործությունների դեմ: Միավորված ազգերի կազմակերպության Գլխա-
վոր ասամբլեան 1948 թ. հատուկ կոնվենցիա ընդունեց «Ցեղասպանու-
թյան հանցագործությունը կանխելու և այդ հանցագործությունը պատ-
ժելու մասին»: Փաստաթղթում ասված է, որ ցեղասպանությունը «որևէ
ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խումբ որպես այդպի-
սին ամբողջապես կամ մասնակիորեն ոչնչացնելու միտումով կատար-
ված գործողություն է»[2]:

20-րդ դարի պատմության ամենամռայլ էջերից մեկն է 1915-16 թթ. Օս-
մանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային տեղահա-
նությունն ու կոտորածը: Ինչպես նշել է «Պրավդա» թերթը, «իմպերիալիզմի
ծնած ցեղասպանության խոշորագույն գործողություն հանդիսացավ Օս-
մանյան Թուրքիայի կառավարիչների հաշվեհարդարը հայ ազգաբնակչու-
թյան նկատմամբ, որ կազմակերպվեց յոթանասուն տարի առաջ»[3]:

* *Սովետական Հայաստան (ամսագիր)*, 1986, հ. 11, էջ 27-30:

1 Киракосян Дж.С., Мигранян А.М., Киракосян А.Дж., Трагедия армян Османской империи в 1915-1916 гг. в освещении буржуазной историографии. – *Вопросы истории*, No 5, 1986, с. 147-154.

2 Официальный отчет первой части третьей сессии Генеральной Ассамблеи. Резолюции 21 сентября – 12 декабря 1948 г. Париж, 1948, с. 90; *Известия*, 17.11. 1985.

3 *Правда*. 24.04.1985.





Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի
ազգաբնակչությունը օսմանյան դարավոր լծի տակ շարունակաբար են-
թարկվել է բռնադատության ու հալածանքի, դրանք անցյալ դարի վեր-
ջին ստացան հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման քաղաքականու-
թյան բնույթ: 1894-96 թթ. հայերի զանգվածային ջարդերը տարան ավե-
լի քան 300 հազար կյանք, 1909 թ. ավելացավ ևս մի քանի տասնյակ հա-
զար զոհ:

Արևմտյան Հայաստանի տարածքում, որը հայերի պատմական հայ-
րենիքն է, և որտեղ նրանք բնակվել են հազարամյակներ շարունակ, ինք-
նուրույն հայկական պետության ստեղծելուն խանգարելու նպատակով
և օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած պայ-
մաններից, երիտթուրքերը իրականացրին Օսմանյան կայսրության հե-
տադիմական շրջաններում վաղուց ի վեր ծրագրված՝ հայ ժողովրդի
ջարդը: Այդ հրեշավոր ծրագիրը իրականացվեց մեթոդիկ կերպով և չլս-
ված դաժանությամբ: Հետևանքը եղավ այն, որ Օսմանյան կայսրության
մեջ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զանգվածա-
բար կոտորվեցին ավելի քան մեկուկես միլիոն հայեր, իսկ նախնիների
հողից հարյուր հազարավոր տեղահանվածներ էլ դարձան փախստա-
կան ու սփռվեցին աշխարհով մեկ[1]:

Օսմանյան կայսրությունում հայերի վիճակը և նրանց կոտորելու օս-
մանյան քաղաքականությունը գրավել է ինչպես մեր երկրի, այնպես էլ
օտարերկրյա պատմաբանների ուշադրությունը: Այդ հարցերին նվիր-
ված հարուստ և համապարփակ գրականություն գոյություն ունի: Հայե-
րի ցեղասպանության խնդիրը լայնորեն լուսաբանվել է մեր երկրում
հրատարակված փաստաթղթերի ժողովածուներում և հետազոտություն-
ներում[2]: Խորհրդային գիտնականները վերականգնել են Թուրքիայում

1 Геноцид армян в Османской империи. Сб. док. и м-лов. Изд. 2-е., Ереван, 1982, с. III.

2 Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915-1916 гг. – *Известия АН Арм. ССР*, 1965, No.3; Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972; Геноцид армян в Османской империи, Ереван, 1982; Акопян С.М., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны. Ереван,

1915-16 թթ. հայ ազգաբնակչության ողբերգության փաստականացված պատկերը: Արտասահմանում նույնպես գոյություն ունի այդ խնդրի ընդարձակ պատմագրություն: Սույն տեսության հեղինակները, չհավակնելով Արևմուտքում լույս տեսած և այս հարցին նվիրված հրատարակությունների համապարփակ քննություն կատարել, իրենց առաջ խնդիր են դրել սոսկ ընդհանուր պատկերացում տալ դրանց մասին, ինչպես նաև բնութագրել արտասահմանյան արխիվային և խնդրո առարկա այլ փաստաթղթերի նոր հրապարակումները[1]:

Ամերիկյան ազգային արխիվների բազմաթիվ փաստաթղթերի բովանդակությունը լիովին հաստատում է, որ Օսմանյան կայսրության կառավարողները վարել են հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականություն: Այդ են վկայում մասնավորապես Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպանության զեկուցագրերը, որոնք հասցեագրված են պետական դեպարտամենտին՝ 1915 և հետագա թվականներին[2]: Հայկական ջարդերի մասին եղած տեղեկություններով այդպիսի առաջին փաստաթուղթն ամերիկյան դեսպանությունն ուղարկել է 1915 թ. ապրիլի 30-ին: ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն 1915 թ. մայիսի 25-ին պետական

1967; Киракосян Дж., Западная Армения в годы первой мировой войны. Ереван, 1971; его же. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1982; Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915 թ. մինչև մեր օրերը), Երևան, 1983.

1 Les Grandes Puissances. L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918). Recueil de Documents. Paris, 1983; Boyajian D.H., Armenia: The Case for a Forgotten Genocide. New Jersey, 1972; The Armenian Genocide – First 20th Century Holocaust. The Events in Turkish Armenia (1914-1916) as reported in the New York Times and various Periodicals of the Time. Berkeley, CA, 1981; Documents; The State Department File; The United States Inquiry and the Armenian Question. 1917-1919. – *The Armenian Review*, 1984, vol. 37; Toriguian Sh., The Armenian Question and International Law. Beirut, 1973; Justicier du Génocide Arménien. Paris, 1981; An Anthology of Historical Writings on the Armenian Massacres of 1915 (Viscount J.Bryce, A.I.Toynbee, H.A.Gibbons, H.Morgenthau, F.Nansen). Beirut, 1971; Hovannisian R.G., The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations, Massacres, and Dispersion of the Armenian People, 1915-1923. Cambridge, 1980.

2 United States National Archives, General Records of the Department of State, Record Group 59 (Decimal File, 1910-1929). – *The Armenian Review*, Spring, 1984, vol. 37.





քարտուղարին հայտնել է Օսմանյան կայսրությունում հայերի շուրջ ստեղծված իրավիճակի մասին: Նույն թվականի մայիսի 28-ի հեռագրում հաղորդվում էր զանգվածային կոտորածների մասին, որոնց մասնակցում էին պետական իշխանությունները: Հուլիսի 10-ին դեսպանը գրում էր զանգվածային ձերբակալությունների և տեղահանությունների մասին: «Ակնհայտ է, որ գոյություն ունի հայկական ցեղը հետևողականորեն ոչնչացնելու ծրագիր», - նշել է նա[1]:

Կալիֆոռնիայի համալսարանի մարդասիրական և սոցիալական գիտությունների բաժնի դեկան, պատմության պրոֆեսոր Ն.Ռավիչը նշում է, որ հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության հանցագործությունն այսօր համարվում է մոռացված և խունացած՝ համեմատաբար վերջերս տեղի ունեցած ավերածությունների և կոտորածների հետևանքով: Ոմանք նույնիսկ կասկածի տակ են դնում ցեղասպանության պատմական իրողությունը: Ընդ որում, եթե հայերի ճակատագիրը «քաղցր» չի եղել, ապա շատ ավելի դառն է կատարված հանցագործության պատմական մեկնաբանությունը: Հեղինակի կարծիքով, ժամանակակից ամերիկյան պատմագրության համար հայերի ցեղասպանությունը մնում է որպես երկրորդական նշանակություն ունեցող իրադարձություն: Ըստ Ն.Ռավիչի, արևմտյան պատմաբանների կողմից Հայկական հարցի թուրքասիրական մեկնաբանությունը գլխավորապես սկզբնավորվում է Օսմանյան կայսրության մեջ գործած ամերիկացի միսիոներներից և նպատակ ունի Թուրքիան օգտագործել ի շահ արևմտյան և ամերիկյան զորքալ նկրտումների[2]:

1915-16 թթ. իրադարձությունները լուսաբանելու միտումնավոր, հաճախ էլ պարզապես զեղծարարության օրինակներ կարող են ծառայել ամերիկացի քաղաքագետներ Մ.Գյունտերի և Ռ.Հոռի հոդվածները: Մ.Գյունտերը գրում է, թե «19-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունների ինքնավարության բազմիկ համակարգը հայերին այնքան էր գոհացնում, որ թուրքերը նրանց համարում էին «լոյալ ազգ»: 19-րդ դարի կեսերին իրադրությունը սկսեց փոխվել ազգայնականության վերելքի և Օսմանյան բազմազգ

1 Ibid, p. 77.

2 Ravitch N., The Armenian Catastrophe. – *Encounter*, 1981, December.

կայսրության տրոհման հետևանքով: Քրիստոնյա տարբեր ազգեր Արևմուտքում մեկը մյուսի հետևից սկսեցին անջատվել կայսրությունից: Արևելքում Ռուսաստանը նվաճեց Կովկասը, և Թուրքիայի հետ ունեցած սահմանի վրա Ռուսահայաստանի գոյությունը հանդիսացավ ևս մի մղիչ ուժ... Թուրքերի համար հայերի անկախությունը տրամաբանական անհեթեթություն էր և սպառնալիք էր ներկայացնում կայսրության գոյությանը»: Գյունտերը հենց սրանով էլ բացատրում է 1894-96 թթ. հայկական ջարդերի պատճառները, այդպիսով մեղքը բարդելով հենց իրենց՝ հայերի և Ռուսաստանի վրա[1]:

Փաստերն աղավաղելով, Արևմուտքի որոշ քաղաքագետներ ձգտում են կեղծել հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի բնույթը, բորբոքել ռուսատյաց տրամադրություններ: Հանուն այս միտումի, ամերիկացի և արևմտաեվրոպացի պատմաբաններից ոմանք, որոնք ամեղես են գալիս ի պաշտպանություն երիտթուրքերի, հանլիշխանությունների պաշտոնական վարկածը, թե միայն ու միայն ռուսասեր կողմնորոշումն էր պատճառը, որ նրանք առաջին համաշխարհային ռուսապատերազմի տարիներին հայտարարվեցին Ռուսաստանի գործակալներ և Օսմանյան կայսրության թշնամիներ: «Ռուսական կայսրությունը փոփոխական հաջողությամբ փորձում էր Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությանն օգտագործել որպես հինգերորդ շարասյուն», - գրում է Մ.Գյունտերը: Նա պնդում է, թե հայերի ցեղասպանությունը իրականացվել է որպես պատասխան այն օգնության, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքահայերը դրսևորել են ռուսական բանակի ներխուժման համար: Այս պնդումով նա անտեսում է նույնիսկ ամերիկացի դիվանագետների՝ երիտթուրքական սև գործերի ականատեսների վկայությունները: Հենց թեկուզ այն, որ Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հ.Մորգենթաուն որևէ կասկած չի ունեցել, թե երիտթուրքական առաջնորդներ Էնվերի ու Թալեաթի իրական նպատակը եղել է հայերին կոտորելը[2]:

«Վաշինգտոն թայմս» թերթը 1983 թ. երեք համարներում զետեղել է

1 Gunter M.M., The Armenian Terrorist Campaign against Turkey. – *Orbis*, 1983, Summer.

2 Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 318.





Ռ.Ու.Հոռլի հոդվածաշարը՝ հետապնդելով Հայկական հարցի էությունը «բացահայտելու» նպատակ: Հեղինակը պնդում է, թե Արևելյան Անատոլիայում ստեղծվում էին հայկական մարտատենչ խմբավորումներ, որոնք ահաբեկում էին քուրդ և մահմեդական հարևաններին: Ռուսաստանն էլ, իբր, այդ խմբավորումներին զենք էր տալիս ու նաև ուղարկում էր զինվորական հրահանգիչներ, ամենայն կերպ զորավիգ կանգնելով հայ անջատողականներին: Հոռլի ասելով, հայերը, որոնց սատարում էին թուրքական հողերը նվաճելու հույս փայփայող ռուսները, «խաչակրաց արշավանք» էին ձեռնարկել թուրքական կառավարողների դեմ: Հեղինակը ցուցաբերում է իր տարրական անգիտությունը պատմության մարզում: Նա 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը շփոթում է 1853-56 թթ. Ղրիմի պատերազմի հետ, դաշնակցական կուսակցության հիմնադիր Ք.Միքայելյանին համարում է Կ.Մարքսի «հավատարիմ աշակերտ»-ը, գրում է, թե առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ազգաբնակչությանը տեղահանելու մասին որոշումը կայացրել է սուլթան Աբդուլ Համիդը և ո՛չ թե երիտթուրքական կառավարությունը: Այնուհետև Հոռն պնդում է, թե իբր Ազգերի լիգայի տվյալների համաձայն՝ կորուստները եղել են ընդամենը 15 հազար հոգի, բայց հիմա այդ թվին զրոներ ավելացնելով զոհերի թիվը հասցնում են մեկուկես միլիոնի, այսինքն ամբողջ աշխարհում ապրող հայերի քանակությանը[1]:

Նույնիսկ Միացյալ Նահանգներում այսպիսի դիրքորոշումը արժանանում է դատապարտման: «Ուոլ Սթրիթ Ջորնըլում» հրապարակվել է հայկական ծագումով ամերիկացի մի խումբ գիտնականների հայտարարությունը, որտեղ ասվում է. «ԱՄՆ-ում բնակվող հայերը երկու սերնդի կյանքի ընթացքում պահանջել են Թուրքիայի պատճառած վնասների համապատասխան փոխհատուցում, բայց չեն կարողացել նույնիսկ պատմական փաստերի խոստովանությանը պատասխանել ստանալ Թուրքիայի կողմից: ԱՄՆ-ի կառավարությունը զորավիգ չի եղել հայերի պահանջներին...: Հայոց պատմությունը լուսաբանելու գործում ԱՄՆ-ի դերը կարելի է համարել եթե ոչ սև, ապա, լավագույն դեպքում, մոգմոխրագույն»[2]:

1 *Washington Times*, 1983, 1-3 August.

2 *Wall Street Journal*, 1982, 1 November.

Հայկական սփյուռքի տարբեր կենտրոններում այժմ որոշակի աշխատանք է կատարվում Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության խնդիրը լուսաբանելու ուղղությամբ: Լույս են տեսնում փաստական նոր նյութերի կիրառումով հետազոտություններ, վերահրատարակվում են եվրոպական, ամերիկյան և այլ հեղինակների՝ իրադարձությունների ականատեսների աշխատությունները, որոնք վաղուց ի վեր համարվում են հազվագյուտ գրքեր: Առանձնակի ուշադրության են արժանի փաստաթղթերի ժողովածուների և արխիվային նյութերի հրատարակությունները: Քեմբրիջում լույս է տեսել Ռիչարդ Հովհաննիսյանի համապարփակ մատենագիտությունը, որի առաջին մասում թվարկված են տարբեր երկրների (Անգլիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Ավստրիա և այլն) արխիվները, ուր պահպանվում են համապատասխան նյութերը: Երկրորդ մասը իրենից ներկայացնում է հայերի ցեղասպանության մասին արտասահմանյան հիմնական հրատարակությունների ցուցակը[1]:

Դրանցից է «Հայերի ցեղասպանությունը» ժողովածուն, որն իրենից ներկայացնում է 1913-ից մինչև 1922 թվականը ԱՄՆ թերթերում և ամսագրերում հրատարակված մի քանի հարյուր հաղորդակցությունների ու հոդվածների հավաքածու: Ժողովածուն կազմող Ռիչարդ Քլոյանի ասածով, իր տրամադրության տակ գտնվող բնավ էլ ո՛չ բոլոր նյութերը: Երիտթուրքերի գազանությունների մասին ամերիկյան մամուլի վկայությունները լիովին հերքում են այն ստահոդ պնդումները, թե ցեղասպանություն իբր հայ և հայերին կարեկցող հեղինակների երևակայության պտուղն է սոսկ: Ժողովածուի նյութերը վկայում են, որ Արևմտյան Հայաստանում ծայր առած սարսափների մասին ամերիկյան մամուլը հաղորդագրություններ է տպագրել գրեթե ամեն օր և գրեթե բոլոր հոդվածներում էլ բացահայտվել է երիտթուրքերի վերջնական նպատակը՝ հայերի ջարդը որպես «Հայկական հարցի» լուծում:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի ժողովածուի մեջ զետեղված մի շարք նյութեր, որոնք հավելյալ լույս են սփռում 1915 թ. իրադարձությունների նկատմամբ կայզերական Գերմանիայի աշխույժ դերի վրա: «Գերմանիան և հայերի տառապանքը», «Գերմանիան և հայկական ջարդերը», «Գերմանիայի մեղքը հայկական արյունահեղության մեջ»՝ այս և ուրիշ հոդվածներ վկայում են երիտթուրքերի հակահայկական քաղաքականության ծրագրման ու իրականացման գործում գերմանական իմպերիալիզմի ուղղակի մեղսակցության մասին: «Գերմանիայի մեղքերը մի գերմանացու ներկայացրած մեղադրանքի համաձայն»՝ այսպես էր վերնագրված «Լիթերարի Դայջեստ» (հոկտեմբեր, 1917 թ.) հանդեսում զետեղված գրախոսությունը գերմանական բանակի սպա և թղթակից Գ.Շտյուրմերի «Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում» գրքի մասին: Գ.Շտյուրմերի բնորոշմամբ, Հայաստանում կազմակերպված զանգվածային սպանությունների պատասխանատվությունն ընկնում է գերմանական իշխանությունների կողմից խրախուսվող «երիտթուրքերի հանցագործ բանդայի» վրա[1]:

Մեծ այժմեականություն ունեն ժողովածուի այն նյութերը, որոնք երևան պատմում են 1918-19 թթ. թուրքական իշխանությունների կողմից երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը դատապարտելու փորձերի մասին: «Նյու Յորք Թայմս» թերթը 1918 թ. դեկտեմբերի 27-ին հաղորդել է, որ թուրքական խորհրդարանը արձակվել է, և ներքին գործերի նախարարը կառավարական հայտարարություն է հրապարակել հայերի կոտորածների համար պատասխանատու բարձրաստիճան պաշտոնատար անձանց պատժելու նպատակով Գերագույն ռազմական ատյան ստեղծելու մասին: Սուլթան Մոհամմեդը Կոստանդնուպոլսում բրիտանական թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ դատապարտել է երիտթուրքերի կաբինետի քաղաքականությունը հայերի նկատմամբ, միաժամանակ ցավակցություն հայտնել կատարվածի առիթով (New York Times, 1918, December 7): 1919 թ. հուլիսի 13-ին նույն թերթը հաղորդել է, որ Թուրքիան դատապարտում է պատերազմական ժամանակների իր առաջնորդներին, և որ ռազմական ատյանը մահապատժի է դատապարտել երիտթուրքական պարագլուխներին՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին և այլոց[2]:

Իրադարձություններն անաչառ կերպով լուսաբանելու ձգտումը հատկանշական է անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ջ.Ուոկերին: Նա

1 Hovannisian R.G., The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations, Massacre, and Dispersion of the Armenian People, 1915-1923, Cambridge, 1980.





1 The Armenian Genocide – First 20th Century Holocaust, Berkeley, CA, 1981, p. 181.

2 Ibid, p. 258.

գրում է, թե 1910 թ. երիտթուրքական կուսակցության կենտկոմում տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Կենտկոմի կազմի մեջ մտան ծայրահեղ ազգայնական հայացքների տեր մարդիկ: Զիա Գյոքալփը դրանցից մեկն էր: Հետագայում նա դարձավ կոմիտեի գլխավոր տեսաբանը, և քաղաքական փիլիսոփայությունը, որ նա զարգացնում էր, ախուր դեր ունեցավ հայերի կյանքում: Գյոքալփի գաղափարները 1910-14 թթ. բացառում էին Թուրքիայի ազգային փոքրամասնությունների համախմբվածության հնարավորությունը երիտթուրքերի քաղաքական ծրագրի շուրջ: Նրա համոզմամբ՝ «ապագայի թուրք ազգը» պետք է բաղկացած լիներ միայն ու միայն թուրքերեն խոսացող մահմեդականներից: Հույները, հայերն ու մյուս փոքր ժողովուրդները կարող էին թուրք համարվել հպատակության առումով, բայց ո՛չ ազգության: Գյոքալփը, Ք.Էդիփը և սրանց համախոհները երազում էին բոլոր թուրքերի միավորումը միասնական իշխանության ներքո, գրում է Ուոքերը: Սակայն նույն քաղաքականությունն անհնարին էր կիրառել լեզվական ու կրոնական դարավոր ավանդություններ և շատ որոշակի ազգային ինքնություն ունեցող հայերի նկատմամբ[1]:

Համաթուրքական (պանթուրքական) ցեղապաշտական ծրագրի իրականացումը, նշում է նույն հեղինակը, պետք է անցներ մի քանի փուլ: Սկզբում օսմանցի թուրքերը պետք է իրենց դիրքերն ամրապնդեին երկրի ներսում, իսկ հետո Թուրքիայի կազմում պետք է ընդգրկեին Ասիայի բոլոր թրքախոս ժողովուրդներին: Մինչ այդ, 1914 թ., Ռուսաստանին հաջողվեց համաձայնության գալ երիտթուրքերի հետ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու մասին և ստորագրել բարենորոգումների մի ծրագիր: Այդ ծրագրի համաձայն, հայկական վեց վիլայեթները վերակազմվելու էին երկու վարչական մարզերի՝ եվրոպական երկրներից ժամանած գլխավոր տեսուչների գլխավորությամբ: Բայց սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, և բարենորոգումների ծրագիրը մնաց թղթի վրա[2]: Ուոքերը գալիս է մի եզրակացության, թե հայերին ոչնչացնելու մասին վերջնական որոշումը թուրքական իշխանությունները կայացրել են 1915 թ. փետրվարի կեսերին: Այդ որոշումը նա համա-

1 Walker C.J., Armenia. The Survival of a Nation. New York, 1980, p. 190.
2 Ibid, pp. 192-193.





րում է նախորդ տարիների ընթացքում թուրքական ցեղապաշտության զարգացման ուղղակի հետևանք: 1914 թ. դեկտեմբերի սկզբին Մուշում, օսմանյան 34-րդ դիվիզիայի շտաբում գտնվում էր Բեհաեդդին Շաքիրը, որը երիտթուրքական կուսակցության կենտկոմի անդամ էր և գաղափարախոսներից մեկը: Նրա ներկայությունը, ըստ Ուոքերի, վկայում է, թե հատկապես Շաքիրն է հանդիսացել ջարդերի գլխավոր կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը[1]:

Երիտթուրքական կառավարության համար պատերազմը ծառայեց որպես մի վարագույր, որի հետևում նա կարող էր գործել միանգամայն անպատիժ կերպով: Ուոքերը ժամանակավոր կարգով է շարադրում Երզնկայի, Էրզրումի, Տրապիզոնի, Խարբերդի, Սվասի, Անգորայի, Դիարբեքիրի, Մուսա Լեռան, Զեյթունի իրադարձությունները: Հեղինակն ընթերցողին տանում է Եփրատ գետի ափերով, ասես ստիպելով ականատես լինել այն հրեշավոր պայմաններին, որոնց մեջ գտնվում էին տեղահանված հայերը: Նա մեջբերումներ է կատարում քաղաքական գործիչների, դիվանագետների, ականատեսների խոսքերից, հայտարարություններից, հիշողություններից: Որոշակի փաստերի հիման վրա, Ուոքերը քննադատության է ենթարկում ամերիկացիներ Ս.Շոուի և նրա կնոջ՝ Ե.Կ.Շոուի գրքում պարունակվող պնդումները, որոնց համաձայն հայերի տեղահանությունն իբր եղել է քրդերի և մյուս մահմեդական ավազակախմբերի կողմից դրսևորվող բռնություններից նրանց պաշտպանելու միջոց[2]:

Թուրքական իշխանությունների հակահայկական գործողությունները 1916 թ. վերջին հիմնականում արդեն ավարտված էին: Ուոքերի կարծիքով, մինչև պատերազմը Օսմանյան կայսրությունում ապրում էին երկու միլիոնից ավելի հայեր: Նրանցից 250 հազարին հաջողվեց փախչել, շուրջ մեկ միլիոնը սպանվեց, ընդ որում զոհերի կեսը եղել են կանայք ու երեխաներ: Մնացյալ 600 հազարից շուրջ 200 հազարը բռնի մահմեդականացվել են, իսկ 400 հազարը սոված ու թշվառ թափառել են երկրով մեկ: 50-100 հազար հայեր սպանվել են թուրքերի Կովկաս ներխուժելու ժամանակ՝ 1918 թ. մայիս-սեպտեմբերին, շուրջ 250 հազար ոչնչացվել են

1 Ibid, p. 200.
2 Ibid, pp. 229-331.

1919-20 թթ., երբ ողջ մնացած հայ աքսորյալները վերադարձան Արևմտյան Հայաստանում գտնվող իրենց տները, որտեղ, սակայն, կազմակերպվեց մի նոր եղեռն[1]:

Ֆրանսիայում լույս տեսած աշխատությունները նույնպես պարունակում են հայերի ցեղասպանության ընդարձակ և հաճախ՝ նոր դրվագներով լցված պատմությունը: Ժան Մարի Գառզուն իր հոդվածում գրում է, թե պատերազմի նախօրյակին Թուրքիայում հայերի թիվը եղել է 2 միլիոն 100 հազար մարդ: Այդ թիվն արդեն 100 հազար էր 1923 թ., երբ Լոզանի պայմանագիրը արհեստականորեն փակեց հարցը: Նախքան Թուրքիան կմտներ առաջին համաշխարհային պատերազմի մեջ, նշում է Գառզուն, ստաբերկրյա տեսուչները, որոնց վրա դրված էր հայկական մարզերում բարենորոգումների իրականացման հսկողությունը, երկրից արտաքսվեցին այն պատրվակով, թե թուրքական կառավարությունն «ի վիճակի չի լինի զբաղվել ներքին բարենորոգչությամբ՝ երկարատև ու ծանր պատերազմական տարիների ընթացքում»: Այսպես էր հայտարարել Ջեմալը, որը Թալեաթի ու Էնվերի հետ միասին հանդիսանում էր երիտթուրքական առաջնորդներից մեկը: 1915-ի մարտին դաշնակիցների Դարդանելյան արշավանքի պարտությունը լիովին ազատ արձակեց թուրքական կառավարության ձեռքերը: Ապրիլի 24-ին սկսվեցին հայության մշակութային ու հասարակական նշանավոր գործիչների ձերբակալությունները[2]:

Ժերար Շալիանի և Իվ Թերնոնի գիրքը[3] գրված է Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում հրատարակված փաստագրական ժողովածուների հիման վրա: Գրքի առաջին մասի հեղինակ, նույն նյութին վերաբերող մեկ այլ աշխատությամբ[4] հայտնի Թերնոնը իրադարձությունների շարադրանքը սկսում է 1915 թ. մայիսից: Անտանտայի երկրների արտաքին գործոց նախարարների մեղադրական հռչակագրին ի պատասխան թուրքական կառավարությունը պաշտոն-

1 Ibid, pp. 241-243.

2 Carzou J.M., Premiere, 1915. Le Genocide des Arméniens. – *Historia*, 1980, No. 405, pp. 94-96.

3 Chaliand G., Ternon Y., 1915-17. La mémoire du siécle. Le Genocide des Arméniens. Bruxelles, 1980.

4 Ternon Y., Les Arméniens, Histoire d'un Génocide, Paris, 1977.





նապես հայտնեց այն միջոցառումների մասին, որպիսիք ձեռնարկել էր հայերի նկատմամբ, որոնք, իբր, «խախտել են հասարակական կարգը և վտանգի տակ դրել երկրի պաշտպանությունը»: Մայիսի 30-ին երիտթուրքական կառավարությունը հրապարակեց հայկական ազգաբնակչությունը տեղահանելու դեկրետը: Սակայն հյուպատոսների զեկուցագրերի, զինվորական թղթակիցների և ողջ մնացած հայերի պատմածների, թուրք ղեկավարների հետ դիվանագետների զրույցների շնորհիվ պարզվեց, որ խոսքը ոչ թե տեղահանության, այլ ոչնչացնելու մասին է: Արդյունքում՝ 1 միլիոն 500 հազար զոհ, քանի որ Թուրքիայում հայերի թիվը, վիճակագրության համաձայն, տատանվում էր 1 միլիոն 800 հազարի և 2 միլիոն 100 հազարի միջև: Այսպիսով, շարունակում է Թերնոնը, հայերն անհետացան Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական կյանքից[1]:

Գառզուն նույնպես բերում է ականատեսների՝ գերմանական սպաների, Կարմիր Խաչի գրության քույրերի, ամերիկյան հյուպատոսների բազում վկայությունները հայերի տեղահանության ու ջարդերի մասին: Տեղական իշխանություններին հղված Թալեաթի հրամանները բացահայտում են երիտթուրքերի կառավարության մտադրությունները: Տեղահանության մասին դեկրետից հետո այդ կառավարությունը 1915 թ. սեպտեմբերին հրապարակեց «Տեղահանվող մարդկանց ունեցվածքին, տներին ու վարկին վերաբերող» օրենքը, որն օրինականացնում էր աքսորվող հայերին կողոպտելը: Բայց տեղահանված ոչ բոլոր հայերը կոտորվեցին: Զնայած չարչարանքներին ու զրկանքներին, ջրի ու ուտելիքի շարունակական պակասին, մարդկանց մի փոքր քանակություն այնուհանդերձ հասավ Սիրիա: Եփրատի ափերով մեկ հողմացրիվ արված
հայ ազգից մնացին հատուկենտ ծերեր, կանայք ու մանուկներ[2]:

Ըստ Գառզուի, ցեղասպանության պատասխանատվությունն, անկասկած, կրում են Թալեաթը, Էնվերը և Ջեմալը: Բայց այդ մարդիկ, թեև նրանք միաժամանակ հանդիսանում էին թե՛ կառավարության և թե՛ երիտթուրքերի կուսակցության ղեկավարները, չէին կարող ոչինչ անել առանց տեղական կոմիտեների անդամների, պաշտոնական ու վարչա-

1 Ibid, pp. 5-14.

2 Carzou J.M., Op.cit., pp. 97-102.

կան ներկայացուցիչների, բանակի ու հատուկ այդ նպատակով ստեղծված ժանդարմերիայի սպաների, կալանավայրից այդ առիթով ազատ արձակված քրեական հանցագործների ընդհանուր համագործակցության: ԱՄՆ դեսպան Հ.Մորգենթաուի հետ ունեցած զրույցի ընթացքում Թալեաթը ասել էր. «Մեզ կտրականապես չեն անհանգստացնում առևտրական վնասները, մենք խոստովանում ենք այդ վնասները և կարծում ենք, թե դրանք չեն անցնի 5 միլիոն լիրայից: Մեզ այդ չի անհանգստացնում: Ես Ձեզ հրավիրել եմ այստեղ, որպեսզի գիտենաք, որ այդ հարցի վերաբերյալ մեր վճիռը հաստատուն է և ոչինչ չի կարող այն փոխել: Մենք այլևս չենք ուզում հայ տեսնել Անատոլիայում, նրանք կարող են ապրել անապատում և ուրիշ ոչ մի տեղ»[1]:

Սորբոնի համալսարանի հայ բանասիրության ամբիոնի վարիչ Ժան Փիեր Մահեն իր հոդվածում ընդգծում է, որ պանթուրքիստները քարոզում էին Թուրքիայից մինչև Սիբիր ձգվող տարածքի միավորման գաղափարը: Հայերը որպես արգելք էին դիտվում այդ ծրագրի իրականացման ճանապարհին: 1914 թ. դեկտեմբերից ի վեր թուրքական կառավարությունն այն պատրվակով, որ ռուսական հպատակություն ունեցող հայ կամավորականները կռվում էին ռուսական բանակի կողմից, սկսեց մահմեդական բնակչությանը լարել հայերի դեմ՝ գործելու անսանձ բռնաճնշումներ: Մեկ ամիս անց իշխանությունները հրամայեցին զինաթափել բոլոր հայազգի զինվորներին և նրանց ուղարկել բանվորական գումարտակներ: Նրանց մեծ մասը հետագայում քշվեց հեռավոր վայրեր և 50-100 հոգանոց խմբերով կոտորածի ենթարկվեց: Այնուհետև իշխանությունները հարկադրեցին, որպեսզի քաղաքացիական բնակչությունը զենքերը հանձնի: Դրան հաջորդեցին ականավոր հասարակական գործիչների, մտավորականների, հոգևորականների ձերբակալություններն ու սպանդը, որից հետո արդեն հնարավոր եղավ անցնել նախկին նպատակ իրագործելով ռազմական գործողությունների թատերաբեմից հայերին «հեռացնելը»:

Իրականում, գրում է Մահեն, նախատեսված էր, որ տեղահանվածների աննշան մի խումբ միայն պետք է հասնի նշված վայրը: «Ճանապարհորդություն» ինքը պետք է վերացներ ծերունիներին, կանանց ու մանուկներին, քանի որ տեղահանվածներին ուտելիք չէին տալիս: Նախատեսված էր նաև, որ ճանապարհին նրանց կոտորելու են ուղեկցող ժանդարմներն ու տեղի մահմեդական բնակչությունը: Տավրոսի լեռներում ծվարած Զեյթունի ազգաբնակչությունը փորձեց դիմադրել, սակայն այդ դիմադրությունը ճնշվեց և բնակչությանը աքսորեցին Սիրիա: Սասունցիները նույնպես ունեցան այդ ճակատագիրը: Մուսա լեռան հայերը թուրքերի դեմ կռվեցին քառասուն օր շարունակ, այնուհետև փրկվեցին Ալեքսանդրեթին մոտեցած դաշնակիցների նավերով: Միակ դիմադրությունը, որի շնորհիվ հայ ազգաբնակչությանը հաջողվեց փրկել, Վանի և շրջակա շեների հերոսական պայքարն էր: Հոդվածում ասվում է, որ այդ պայքարն էլ պարտությամբ կավարտվեր, եթե չլիներ ռուսական զորքի առաջխաղացումը, որը և անխուսափելի կոտորածից փրկեց շուրջ 300 հազար հոգու[1]:

Սորբոնի համալսարանի հրատարակած փաստաթղթերի ժողովածու[2] պարունակում է արխիվային 757 փաստաթուղթ: Դրանք ընդգրկում են 1914-ի սեպտեմբերից մինչև 1917-ի ապրիլն ընկած ժամանակաշրջանը: Ներածությունը գրել է Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ժ.Բ.Դյուրոզելը: Արթուր Բեյլերյանը հեղինակն է առաջաբանի ու ծանոթագրությունների (Ֆրանսիայի արխիվներն ու ֆոնդերը), ինչպես նաև կազմված են «Հայերը և համաշխարհային պատերազմը» ժամանակագրական տախտակը, անվանական ու առարկայական ցանկերը: Այդ բաժինները նույնպես ներկայացնում են որոշակի հետաքրքրություն:

Ժողովածուն հերքում է բոլոր նրանց պնդումները, ովքեր ձգտում են ճերմակացնել երիտթուրքական կառավարության քաղաքականությունը: Վանի ֆրանսիական փոխհյուպատոսի 1914 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանին ուղարկած զեկուցագրից հայտնի է դառնում, որ երիտթուրքական ղեկավարները հատուկ ավազակախմբեր են ուղարկել ռուս-թուրքական սահման, կատարվել են կանոնավոր զորամասերի վերատեղաբաշխում[3]: 1915 թ. ապրիլի 25-ին

1 *Ibid*. p. 105.

1 *Spectacle du Monde*, Avril 1979, No. 206.

2 Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918). Recueil de Documents, Paris, 1983.

3 Ibid, p. 4.

Ֆրանսիայի դեսպանության թարգման Մ.Լեդուլը արտաքին գործերի նախարար Մ.Դելքասեին տեղեկացնում էր, թե ապրիլի 24-ի գիշերը թուրքական ոստիկանությունը ձերբակալել է մեծ թվով հայ գրողների, բժիշկների, փաստաբանների, երաժիշտների, լրագրողների, ուսուցիչների: Թուրքական իշխանություններն իրենց գործողություններն արդարացնում էին Արևելյան Հայաստանում և հայկական 6 վիլայեթներում հայերի դիրքորոշմամբ, հայտարարելով, թե ականավոր հայ գործիչների ձերբակալությունը իբր կանխել է հեղաշրջման հնարավոր փորձը[1]:

Ապրիլի 28-ին Վանից հաղորդեցին հայկական ջարդերի մասին (6 հազար սպանված): Մայիսի 15-ին Ֆրանսիայում ռուսական դեսպանությունը հաղորդեց, թե Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս.Դ.Սազոնովը հերքել է Սալոնիկում ֆրանսիական հյուպատոսի կարծիքն այն մասին, թե հայերի ջարդը կազմակերպված է եղել ի պատասխան Վանի և Զեյթունի ապստամբությունների: Ընդհակառակը, հայերի զինված դիմադրությունը եղել է թուրքական բռնությունների ու կոտորածների բնական պատասխանը: Մեծ թվով քրեական տարրեր հատկապես արձակվել էին բանտերից, որպեսզի օգտագործվեն հայերի վրա հարձակումներ կատարելու համար[2]:

Գրքում զետեղված անգլիական հետախուզության հաղորդակցության մեջ նշվում է հայերի ողբերգական վիճակը: Էրզրումում, Դիարբեքիրում, Բիթլիսում, Խարբերդում, Մարզվանում բոլոր հայերը դուրս են քշվել իրենց տներից: Պահակախմբերի հսկողությամբ նրանք ուղարկվել են անապատ: Ըստ ամենայնի բացահայտ էր, որ երիտթուրքերը հետապնդել են մի նպատակ միայն՝ ոչնչացնել հայերին: Ֆրանսիացի դիվանագետը հաստատում է, որ հայերի նկատմամբ հալածանքը կազմակերպված է եղել ամբողջ երկրով մեկ: Նա սեփական աչքով է տեսել հազարավոր հայերի, որոնք անցել են Հալեպով, ականատես է եղել նրանց նկատմամբ թուրքական իշխանությունների դաժանություններին և ծանակումներին[3]: Եգիպտոսում Ֆրանսիայի դեսպան Դեֆրանսի՝ արտաքին գործերի նախարարին հղված զեկուցագրի մեջ ներկայացված է

1 Ibid, pp. 16-17.
2 Ibid, p. 43.
3 Ibid, pp. 47-48.





Էրզրումի, Կիլիկիայի, Տրապիզոնի, Սամսունի, Կեսարիայի, Դիարբեքիրի, Ուրֆայի, Սվասի, Խարբերդի, Բիթլիսի, Վանի հայերի տեղահանության և կոտորածի պատկերը: «Հայաստանն առանց հայերի. հենց այս է թուրքական կառավարության ծրագիրը», - ասված է փաստաթղթում[1]:

Բուլղարիայի հայերի հոգևոր առաջնորդ Դուրյանը 1915 թ. օգոստոսին Ֆիլիպոպոլսում կազմել է փաստաթուղթ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցածի մասին, որը զետեղված է ժողովածուի մեջ: Փաստաթղթի հավելվածում բերված է սպանվածների, անհետ կորածների, բռնի մահմեդականացվածների կամ տեղահանության ընթացքում առևանգվածների ընդհանուր թիվը: 1915 թ. օգոստոսի 25-ին սպանվածների թիվն արդեն հասել է 835 հազար 600-ի: Փաստաթղթում ներկայացված է ողբերգական իրադարձությունների աշխարհագրությունը[2]: Ժողովածուի մեկ ուրիշ, անգլիական փաստաթղթում նշված է, որ մինչև 1916 թ. գարնանամուտ արդեն մեկ միլիոն հայ էր կոտորված: Նույն փաստաթղթում Կահիրեից ստացված լուրերի հիմամբ ասված է. «Այժմյան քաղաքականությունը աջուահյակ կոտորածներն է, որոնց համար «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի դահիճներին ոչ միայն չեն դատապարտել, այլև ոգևորել են, ինչպես այդ արեց գերմանական մամուլը»[3]:

Ժողովածուի մեջ զետեղված են փաստաթղթեր, որոնք առնչվում են 1915 թ. ապրիլին Իտալիայի թագավորին ուղղված Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի ուղերձին՝ Արևմտյան Հայաստանի ցեղասպանության զոհերին օգնելու խնդրանքով: ԱՄՆ-ում Ռուսաստանի և Իտալիայի դեսպաններին հանձնարարված էր զորավիգ լինել կաթողիկոսի ուղերձին: Սազոնովը հեռագրեց Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում ռուսական դեսպաններին այն մասին, թե տեղեկություններ է ստացել հայերի նկատմամբ թուրքական կառավարիչների կազմակերպած չարագործությունների մասին: Ռուսաստանի կառավարությունը դիմեց Անգլիային և Ֆրանսիային նշված գործողությունների դեմ համատեղ ելույթների առաջարկով և կատարված չարագործությունների ամբողջ պատաս-

1 Ibid, pp. 60-63.
2 Ibid, pp. 128-134.
3 Ibid, p. 195.

խանատվությունը դրեց երիտթուրքական կառավարության, թուրքական քաղաքացիական ու ռազմական իշխանությունների վրա[1]:

Եվրոպական հասարակական կարծիքի հակաթուրքական տրամադրությունները չեզոքացնելու նպատակով *Blätter für Diplomatie* (Ցյուրիխ) թերթի խմբագիր Մ.Վեյզինգերը հրատարակեց հատուկ մի հոդված: Այդ հոդվածը խմբագրել էր թուրք դիվանագետ Սելիմ Ֆուադ Բեյը: Հոդվածը վկայում է թուրքական իշխանությունների կողմից հակահայկական գործողությունները արդարացնելու մտադրությունը[2]:

Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո Թուրքիայի պետական մարմինները ընդունեցին և դատապարտեցին հայերի տեղահանության և կոտորածների փաստը: Այդ իր արտացոլումն ունեցավ Ստամբուլի գլխավոր զինվորական ատյանի՝ Թուրքիայի նախկին կառավարողների գործով մեղադրական եզրակացության մեջ (1919 թ. փետրվար-հուլիս): Հանդես գալով այդ ատյանում, Թուրքիայի հանրապետության ապագա հիմնադիր Մուստաֆա Քեմալն ասաց. «Մեր հայրենակիցները կատարել են չլսված հանցագործություններ, ձեռնարկել են բռնադատության բոլոր հնարավոր միջոցները, կազմակերպել են աքսոր ու կոտորած, վրաները նավթ լցնելով այրել են կրծքի երեխաներին, ուրերն ու ձեռքերը կապած ծնողների առաջ բռնաբարել են կանանց, երիտասարդ աղջիկների, հայրերից ու մայրերից խլել են մանկամարդ ջագետք են բշել խեղճ ու թշվառ մարդկանց՝ ճանապարհին անմարդկավակներ են նստեցրել ու հետո խեղդել ծովում...»[3]: 1918 թ. հուլիսի 3-ին գլխավոր զինվորական ատյանը մահապատժի ենթարկեց երկրից փախած ռազմական հանցագործներ Թալեաթին, Էնվերին, Նազիմին և հայերի ցեղասպանության մյուս կազմակերպիչներին[4]:

---

1 Ibid, pp. 14-15.

2 Ibid, pp. 310-317.

3 Цит. по: Арутюнов Г.А., Епископосов Г.А., Похитители памяти. – *Новое время*, 1981, No. 49, с. 23.

4 Chaliand G., Ternon Y., Op. cit., pp. 121-134.





## 3. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆ*

Փաստաթղթերի ու նյութերի ժողովածու երկու հատորով,
հ.1 (պրոֆեսոր Ստեփան Ս.Ստեփանյանի խմբագրությամբ),
Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1991, 378 էջ[1]:

Հայոց եղեռնի խնդիրը քաղաքական հայագիտության կարևորագույն հարցերից է, որն այսօր էլ չի կորցրել իր ո՛չ գիտական, ո՛չ էլ հասարակական-քաղաքական նշանակությունը: Վերջին տասնամյակների ընթացքում այդ խնդիրը դուրս է եկել զուտ գիտական ուսումնասիրությունների շրջանակներից, դարձել հայ-թուրքական հակամարտության, միջազգային քաղաքական և հասարակական կազմակերպությունների քննարկումների առարկա՝ հանդիսանալով հայ ժողովրդի, մասնավորապես, սփյուռքի ազգային, քաղաքական և հոգևոր կյանքի անբաժանելի մասը: Այս առումով մեծ նշանակություն է ստանում դեռևս լիովին չուսումնասիրված արտասահմանյան արխիվային փաստաթղթերի հետազոտումն ու հրատարակումը:

Հայերի ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ աղբյուրների շարքում հատուկ տեղ են գրավում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի գերմանական աղբյուրները: Այս հանգամանքը բացատրվում է առաջին հերթին պատերազմի ընթացքում Գերմանիայի և Թուրքիայի դաշնակից լինելու հանգամանքով: Գերմանիայի կառավարող շրջանները քաջատեղյակ էին Օսմանյան կայսրության հայ բնակչության վիճակին և թուրքական կառավարության հայաջինջ ծրագրերին: Թուրքիայում գտնվող գերմանական բազմաթիվ դիվանագետներ, սպաներ, զինվորներ, ինժեներներ, ուսուցիչներ և միսիոներներ դարձան հայ բնակչության զանգվածային տեղահանությունների ու կոտորածների կենդանի ականատեսներ: Նրանց օբյեկտիվ վկայություն-

---

* *ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների*, 1991, հ. 4, էջ 176-179:

1 Германские источники о геноциде армян. Период первой мировой войны. Сборник документов и материалов в 2-х томах, т. 1 (под редакцией профессора С.С.Степаняна). Ереван, изд-во "Айастан", 1991, 378 с.

ները տեղ գտան բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերում ու հրապարակումներում: Չնայած հայերի ցեղասպանության խնդրի ուսումնասիրման գործում գերմանական փաստաթղթերի մեծ նշանակությանը, մինչև վերջերս հրապարակում գոյություն ուներ փաստորեն միայն մեկ վավերագրերի ժողովածու: Խոսքը Յոհաննես Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը 1914-18 թթ.» (Պոտսդամ, 1919) գրքի մասին է, որտեղ զետեղված է Հայկական հարցի վերաբերյալ շուրջ 500 դիվանագիտական փաստաթուղթ, որոնք վերցված են եղել հիմնականում Գերմանիայի արտաքին գործերի նախարարության արխիվային ֆոնդերից: Մնացած հարուստ գերմանական նյութերը մինչև օրս փաստորեն մնացել էին չհրապարակված: Եվ ահա, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանի խմբագրությամբ և առաջաբանով ռուսերեն լույս է տեսել «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին» փաստաթղթերի և նյութերի երկհատոր ժողովածուի առաջին հատորը:

Գրքի առաջաբանում Ս. Ստեփանյանն ընթերցողին ծանոթացնում է հայերի ցեղասպանությանը վերաբերող գերմանական աղբյուրների համառոտ տեսության հետ, ցույց տալիս Պոտսդամի կենտրոնական, Դրեզդենի Սաքսոնյան գլխավոր պետական, Մերզեբուրգի գերմանական կենտրոնական, Շվերինի պետական արխիվներում պահվող փաստաթղթերի, Գերմանիայում տպագրված ժողովածուների և գրքերի, պարբերական մամուլի նյութերի նշանակությունն ու կարևորությունը հայերի ցեղասպանության խնդրի ուսումնասիրման գործում: Ի դեպ, նշենք, որ հեղինակը երկար ժամանակ աշխատել է նախկին Գ.Դ.Հ.-ի արխիվներում և գրադարաններում, հայտնաբերել բազմաթիվ նոր փաստաթղթեր ու նյութեր:

Հիմնվելով գերմանական աղբյուրների վրա, Ս. Ստեփանյանը վերլուծում է Գերմանիայի կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում՝ սկսած 19-րդ. 90-ական թթ., քննարկում թուրք-գերմանական հարաբերությունների զարգացման գործընթացը, բացահայտում գերմանական պաշտոնական քաղաքականության բացասական դերը երիտթուրքական կառավարության կողմից կազմակերպված և իրականացված Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանության ու ոչնչաց-





ման գործում: «Այսպիսով, - եզրակացնում է հեղինակը, - ժամանակակիցների վկայությունները, Թուրքիայում գերմանական դիվանագետների հաղորդագրությունները, արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը համոզիչ վկայում են այն մասին, որ Գերմանիան լրիվ պատասխանատվություն է կրում Թուրքիայի հայ բնակչության ոչնչացման գործում թուրքերի մեղսակից լինելու համար, և նույնպես այն բանի համար, որ ոչ մի գործնական քայլ չձեռնարկեց կանխելու հայերի ցեղասպանությունը» (էջ 31): Միաժամանակ, Ս.Ստեփանյանը Հայկական հարցում Գերմանիայի պաշտոնական շրջանների քաղաքականությունը հակադրում է գերմանական հասարակայնության դիրքորոշմանը, դրականորեն է գնահատում հասարակական գործիչների (Յո.Մարկվարտ, Յո.Լեփսիուս, Կարլ Լիբկնեխտ, Արմին Վեգներ, Հարրի Շտյուրմեր և այլն), որոշ դիվանագետների և գերմանա-հայկական ընկերության գործունեությունը:

Ժողովածուն կազմողներ Ս.Ստեփանյանը և Ն.Բաղդասարյանն ընտրել են հետաքրքիր կառուցվածք, գիրքը բաղկացած է վեց բաժիններից՝ 1. Գիտնականները հայերի ցեղասպանության մասին, 2. Ականատեսները ցեղասպանության մասին, 3. Հրապարակախոսները ցեղասպանության մասին, 4. Արխիվային փաստաթղթեր, 5. Գերմանական հրապարակված փաստաթղթերի հավաքածու, 6. Գերմանական արևելյան առաքելության փաստաթղթերը:

Առաջին բաժինը սկսվում է ժամանակակից հայտնի արևելագետ, Լայպցիգի համալսարանի բալկանագիտության բաժանմունքի վարիչ Է.Վերների «Արդյո՞ք հայկական հնարանք են 1915-16 թթ. հայկական սարսափները» (1973) հոդվածով, որում հեղինակն անկողմնակալ վեճի է բռնվում թուրք պատմաբան Սալահի Սոնիելի հետ, բազմակողմանի և հավաստի փաստերի հիման վրա հերքում թուրքական պաշտոնական վարկածը հայերի ցեղասպանության մասին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում շվեյցարական միսիոներ Է.Կրաֆտ-Բոնարի «Մի դրամայի հինգ փուլերը» (1944) աշխատությունը, որն ընթերցողին լիարժեք պատկերացում է տալիս Օսմանյան կայսրության հայ բնակչությանը բազմապիսի օգնություն կազմակերպող Շվեյցարիայի հասարակական կազմակերպությունների գործունեության մասին: Նշենք, որ 1898-1929

թթ. ընկած ժամանակահատվածում մոտավորապես 2 հազար հայ որբեր դաստիարակություն և կրթություն են ստացել շվեյցարական որբանոցներում (ինչպես Շվեյցարիայում, այնպես էլ Թուրքիայում):

Հայտնի է, որ արևմտահայության շահերի պաշտպանության գործում մեծագույն դեր է կատարել մեծ հումանիստ և գիտնական Յո.Լեփսիուսը: Ժողովածուի առաջին հատորում զետեղված է նրա մինչև վերջերս անհայտ մի հոդված, որը Ս.Ստեփանյանը հայտնաբերել է Լեփսիուսի անձնական արխիվում: «Ինչ արեցին հայերի հետ: Ժամանակն է եկել խոսելու» (1948) վերնագրով փոքրածավալ հոդվածում հեղինակը դատապարտում է երիտթուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունը, քննադատում արևմտյան տերությունների, մասնավորապես, Գերմանիայի դիրքորոշումը Հայկական հարցում, նշում, որ հայ ազգը «Համաշխարհային պատերազմի ընթացքում տասնյակ անգամ ավելի շատ է տուժել, քան աշխարհի որևէ ժողովուրդ» (էջ 95): Միևնույն ժամանակ հեղինակը փորձում է ապացուցել, որ գերմանական իշխանություններն արել են ամեն հնարավոր բան՝ կանխելու երիտթուրքերի հակահայկական գործողությունները: Հայերի տեղահանության և ոչնչացման գործում նա Գերմանիայի մեղքը համարում է Անտանտի երկրների, մասնավորապես, Անգլիայի կողմից չափազանցված և իր քրիստոնյա հայրենակիցներին կոչ է անում օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին՝ «հանցագործության ծանր մեղքը մեր ազգի վրայից հանելու համար» (էջ 93):

Գրքում տեղ է գտել վերը նշված ավստրո-հունգարական արխիվային փաստաթղթերի ժողովածուի՝ Վոլֆդիտեր Բիլի գրած առաջաբանը, որում բարձր գնահատական է տրվում Արտյոմ Օհանջանյանի կատարած աշխատանքին, նշվում, որ հայերի ցեղասպանությանը վերաբերող որևէ «անկողմնակալ լուրջ ուսումնասիրություն չի կարող շրջանցել այդ աղբյուրները» (էջ 102):

Գերմանացի պատմաբաններ Հ.Պուդորի «Հայկական հարց» (1917), Յու. Ֆեյի «Հայկական հարց» (1928) և Ռ.Դիկլի «Գերմանիայի դերը հայկական ողբերգությունում» (1919) փոքրածավալ, բայց հետաքրքրական հոդվածներին հետևում է ժամանակակից գիտնական, Արևմտյան Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Տեսսա Հոֆմանի «Ցեղասպանությունը և պատմագիտությունը» ելույթը, որն ընթերցվել է 1990 թ. ապրիլի 28-ին՝ Բոննում տեղի ունեցած Եղեռնի 75-ամյակին նվիրված ժողովում: Խոր վերլուծական բնույթ ունեցող այս ելույթում Տ.Հոֆմանը քննում է Եղեռնի իրագործման պատճառները, վերլուծում հայերի ցեղասպանության ճանաչման հետ կապված պայքարի անցած ճանապարհը, այդ խնդրին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրման իրավիճակը: Նշելով գերմանական արխիվային փաստաթղթերի ամբողջական ուսումնասիրության անհրաժեշտությունը, գիտնականն իրավացիորեն նկատում է, որ հայ քաղաքական հիմնադրամները մինչև օրս թոշակ կամ այլ միջոցներ չեն հատկացրել այս կարևոր նախագիծն իրականացնելու նպատակով:

Ժողովածուի հաջորդ բաժինն ընդգրկում է ցեղասպանության ականատեսների՝ Ա.Վեգների, Հ.Ֆիրբյուխերի և Հ.Շտյուրմերի վկայությունները: Հայտնի գերմանացի քանաստեղծ և լրագրող Ա.Վեգներից ներկայացված է երեք գործ: Առաջինը նրա բաց նամակն է՝ ուղղված ԱՄՆ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին (1919 թ. հունվար), որում նկարագրելով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արևմտահայության զրկանքներն ու տառապանքները, Ա.Վեգներն ամերիկյան կառավարությանը կոչ է անում հանդես գալ հայ ժողովրդի պաշտպանությամբ: Հետաքրքրական և ազդեցիկ է Ա.Վեգների «Ճիչ Արարատից: Հաղթանակած երկրների բոլոր կառավարություններին» (1923 թ. նոյեմբեր) ուղերձը, որում պատերազմի ավարտից հետո հայ ժողովրդի դժբախտ գոյավիճակը նա ամբողջապես բարդում է Առաջին աշխարհամարտում հաղթած բոլոր պետությունների վրա: Երրորդ գործն Ա.Վեգների առաջաբանն է՝ գրված Թալեաթ փաշայի դատավարության սղագրության հրապարակման առիթով: Գրելով, որ «երբեք չի կարելի ներել հայ ժողովրդի նկատմամբ կատարած հանցագործությունը» (էջ 135), Ա.Վեգները միաժամանակ նշում է. «Դա ոչ մի դեպքում չի նշանակում թուրք ժողովրդի դատապարտում: Թուրքական ազգն ամբողջությամբ չի կարող պատասխանատվություն կրել հայերի ոչնչացման համար» (էջ 137):

Ժողովածուի մեջ տեղ է գտել իրադարձությունների անմիջական ականատես, հասարակական գործիչ Հ.Ֆիրբյուխերի «Ի՞նչ է թաքցրել կայզերական կառավարությունը գերմանական ժողովրդից: Հայաստան

1915: Կուլտուրական ազգի ջարդը թուրքերի կողմից» գրքից մի հատված: Ի դեպ, նշենք, որ կարևոր աղբյուր հանդիսացող այս գիրքը վերջերս ամբողջությամբ ռուսերեն լույս է տեսել Երևանում:

Բաժինը եզրափակում է ցեղասպանության ականատես, գերմանացի հայտնի լրագրող Հ.Շտյուրմերի «Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում. նոթագրություն գերմանա-երիտթուրքական բարոյականության և քաղաքականության մասին» (1917) աշխատությունից մի հատված: Վերլուծելով իր սեփական վկայությունները 1915-17 թթ. Թուրքիայում կատարված դեպքերի վերաբերյալ, Հ.Շտյուրմերն արևմտահայության ցեղասպանության իրագործման մեջ մեղադրում է ոչ միայն երիտթուրքական կառավարությանը, այլև նրա դաշնակից կայզերական Գերմանիային:

«Հրապարակախոսները ցեղասպանության մասին» բաժնում զետեղված են գերմանացի հայտնի հեղինակներ Ֆ.Վինֆրիդի «Հայերը և թուրքերը» (1919), բարոն ֆոն Մակկայի «Համաշխարհային պատերազմը և Հայկական հարցը» (1915), Էվալդ Շտիրի «Հայերի վիճակը Թուրքիայում» (1915), «Գերմանա-հայ ընկերության պատմության հարցի շուրջ (1914-39)» (1939), «Գերմանական դիվանագետները Հայաստանի մասին» (1919), «Հայերի բնաջնջումը Թուրքիայում» (1919) հրապարակախոսական հոդվածները:

Գրքի կարևորագույն բաժիններից է մինչև օրս չհրապարակված գերմանական արխիվային փաստաթղթերի ժողովածուն: Այստեղ զետեղված 14 նոր վավերագրերը ներկայացնում են Թուրքիայում գերմանական դեսպանի, հյուպատոսների և դիվանագիտական այլ աշխատողների կողմից Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն ներկայացված զեկուցագրեր, նամակներ, հեռագրեր, որոնք ընդգրկում են 1913-86 թթ. ժամանակահատվածը:

Կազմողները կարևոր նյութեր են քաղել նաև գերմանական գրքերից և ժողովածուներից: Դրանցից մեկն անմիջականորեն վերաբերվում է 1915 թ. Թուրքիայում տեղի ունեցած իրադարձություններին և հիմնված է գերմանական և շվեյցարական թերթերի տեսության, հյուպատոսական զեկուցագրերի և ականատեսների վկայությունների վրա: Կարևոր տեղ են զբաղեցնում մի հատված Թալեաթ փաշայի դատավարության





սղագրությունից և Արամ Անտոնյանի կողմից ներկայացված հայ բնակչության տեղահանության ու բնաջնջման վերաբերյալ Թուրքիայի ներքին գործերի նախարարի հրամանագրերը:

Ժողովածուի նույն բաժնում ընթերցողը կարող է ծանոթանալ դեպքերի ականատես, Հալեպում դպրոցի ուսուցիչ Մարտին Նիպագի Ռայխստագ ներկայացրած հայտարարության (1916), հասարակական գործիչ Կ.Լիբկնեխտի 1916 թ. հունվարի 11-ի Ռայխստագում ունեցած ելույթի, նրա նամակի և այլ նյութերի հետ:

Ժողովածուի վերջին բաժինն ընդգրկում է գերմանական Արևելյան առաքելության նյութերը: Այստեղ ներկայացված փաստաթղթերից կարելի է նշել Թրամբի «Հայաստան» (1916), Ա.Գրաբովսկու «Հայկական հարց» (1914), Մարկ Կոլոսի «Թուրքերը և հայերը» (1915), Ջեյմս Գրինֆիլդի «Հայերի դիրքորոշումը ժամանակակից պատերազմում» (1915), Յո. Լեփսիուսի «Ինչպես է իրագործվել հայերի տեղահանությունը» (1920), Կ.Յոպպեի «Մեր աշխատանքը պատահարից հետո» (1919), Ֆ.Շախարդի «Հայ ժողովրդի բախտը աշխարհամարտում» (1919), Ս.Զաղեյանի «Հայաստանը և արևմտյան տերությունները» (1939) փաստերով հարուստ հոդվածները: Է.Շտիրի «Ժողովուրդը, որը չի կարող մեռնել» (1922) հոդվածում, որը եզրափակում է ժողովածուն, նշվում է. «Հայ ժողովուրդը կյանքի նկատմամբ առողջ կամք ունի, որը հաստատվել է վերջին տասնամյակում նրա կրած սարսափներով և չի կորցրել այն նաև այժմ, նորագույն ժամանակի սարսափելի ճակատագրական պայմաններում: Այդպիսի ժողովուրդը չի կարող մեռնել» (էջ 343):

Ժողովածուի նյութերի թարգմանությունն իրականացրել են փորձառու մասնագետներ Զ.Գ.Նազիկյանը և Ա.Ռ.Իսահակյանը: Գիրքն ունի հարուստ գիտական ապարատ՝ բաղկացած ծանոթագրություններից (հեղինակ՝ Ռ.Պ.Կոնդակչյան), գերմանական աղբյուրների մատենագիտությունից, պարբերական մամուլի հոդվածների ցուցակից և գերմաներեն կազմված ամփոփումից: Հիրավի, գրախոսվող ժողովածուն նոր և կարևոր ներդրում է քաղաքական հայագիտության, թուրքագիտության, ցեղասպանության խնդրի համակողմանի ուսումնասիրման գործում: Մեր կարծիքով, ինչպես մասնագետները, այնպես էլ լայն ընթերցողն անհամբերությամբ են սպասելու ժողովածուի երկրորդ հատորի հրատարակմանը:

## 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԱՄՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ*

### Ա/ Մեծ Բրիտանիայի պատմագրությունը

Հայ ժողովրդի քաղաքական պատմության, Հայկական հարցի խնդիրները, 19-րդ դարի 70-ական թթ. սկսած իրենց արտահայտությունն են գտել բրիտանական պատմագրության մեջ: Արևմտահայերի ծանր դրությունը սուլթանական տիրապետության տակ, թուրքական իշխանությունների կողմից 1870-80-ական թթ. հայերի հալածանքների ու ճնշումների ուժեղացումը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դրսևորումները քննարկվել են անգլիացի հեղինակներ Ու.Դյուքոնի («Թուրքիայի քրիստոնյաները, նրանց դրությունը մահմեդական կառավարման ներքո», 1876), Ջ.Բրայսի («Անդրկովկասը և Արարատը», 1876), Ջ.Ֆարլեյի («Թուրքերն ու քրիստոնյաները. Արևելյան հարցի լուծումը», 1876), Ջ.Փորթինի («Հայաստանը և Լիբանանը», 1877), Հ.Սենդվորթի («Ինչպես են թուրքերը կառավարում Հայաստանը», 1878), Ջ.Սմիթի («Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակ», 1878), Ու.Ռայլի («Քրիստոնյաները և քրդերը արևելյան Թուրքիայում», 1889) աշխատություններում: Ս.Նորմանի («Հայաստանը և 1877-78 թթ. պատերազմը», 1879), Ֆ.Գրինի («Ռուսական բանակը և նրա 1877-78 թթ. պատերազմը», 1879), Չ.Ուիլյամսի («Հայկական ռազմարշավ. Հայաստանի և Քրդստանի 1878 թ. պատերազմի օրագիր», 1878) հետազոտություններում լուսաբանված են 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերի գոյավիճակի, Արևմտյան Հայաստանի տարածքում տեղի ունեցած ռազմական գործողությունների, հայ բնակչության կողմից ռուսական բանակին ցուցաբերված օգնության հարցերը:

Հայկական հարցի շուրջ տերությունների դիվանագիտական մրցակցության, 1878 թ. Սան Ստեֆանոյում և Բեռլինում Հայկական հարցի քննարկումների վերլուծությանն են նվիրված Մ.Մաքկոլի («Արևելյան հարցը. փաստեր ու հերյուրանքներ», 1877), Ս.Աբգարի («Հայերը և Արևելյան հարցը», 1878), Ջ.Արգայլի դքսի («Արևելյան հարցը Փարիզի 1856 թ. դաշնագրից մինչև Բեռլինի 1878 թ. պայմանագիրը», 1879), Ջ.Բրայսի («Ասիական Թուրքիայի ապագան», 1878), Ի.Ուայթերերի («Ասիական Թուրքիայի հեռանկարները», 1880), Թ.Հոլլանդի («Եվրոպական կոնցերտը Արևելյան հարցում», 1885), Մ.Սվազլիի («Հայկական հարցը», 1889) աշխատանքները: Դրանցում արտահայտված է Մեծ Բրիտանիայի հասարակայնության մտահոգությունն արևմտահայերի ճակատագրի հանդեպ, դիտողություններ ու առաջարկություններ են պարունակում Արևմտյան Հայաստանի ապագա կառուցվածքի, բարենորոգումների իրականացման և քրիստոնյա բնակչության կենսապայմանների բարելավման, Բեռլինի կոնգրեսում տերությունների ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտության վերաբերյալ:

Անգլիական պատմագրության մեջ լայն արտացոլում գտան Աբդուլ Համիդ 2-րդի հակահայկական քաղաքականության ուժեղացումը, սուլթանական կառավարության կողմից 1894-96 թթ. կազմակերպված հայկական ջարդերն ու կոտորածները: 1890-1900 թթ. Մեծ Բրիտանիայում հրապարակվեց Հայկական հարցին վերաբերող ավելի քան 100 գիրք ու հոդված: Օսմանյան կայսրության հայերի դրության լուսաբանմանը, 90-ական թթ. հայկական ջարդերի ու կոտորածների նկարագրությանը, հայերի ազգային-ազատագրական շարժմանն են նվիրված Ռ.Դեյվիի («Թուրքիան և Հայաստանը», 1895, «Սուլթանը և նրա հպատակները», 1897), Է.Դիլոնի («Հայաստանը և հայ ժողովուրդը», «Հայաստանի վիճակը», 1895), Ու.Գլադստոնի («Ջարդերը Թուրքիայում», 1896), Ռ.Գինեսի («Թուրքիայի ջարդերը», 1896), Ու.Հարրիսի («Անկողմնակալ հայացք Հայկական հարցի վրա», 1895), Ի.Հոդգեթսի («Հայաստան. Ջարդեր», 1895), Մ.Մաքկոլի («Կոստանդնուպոլսի կոտորածներն ու նրա դասերը», 1895), Ջ.Հարրիսի և Հ.Հարրիսի («Նամակներ Հայաստանում վերջին ջարդի պատկերների մասին», 1897), Ու.Ռամսեի («Երկու կոտորած Փոքր Ասիայում», 1896), Հ.Ռաունսլիի («Հայաստանի տառապանքները», 1896), Ջ.Ռոջերսի («Ջարդեր Թուրքիայում», 1896), Ֆ.Սթիվենսոնի («Հայաստան», 1895), Ու.Ուինթլի («Հայաստանը և նրա տառապանքները», 1896) և շատ ուրիշների աշխատանքները: Որոշ անգլիական հեղինակներ հանդես են գալիս մեծ տերությունների միջև Օսման-

* *Ազգ*, 1991, 15 հունիսի:

յան կայսրության բաժանման կամ նրա տեղում մի շարք ինքնուրույն պետությունների, այդ թվում՝ անկախ Հայաստան ստեղծելու օգտին: Ոմանք էլ դեմ էին սուլթանի վրա ճնշում գործադրելուն և պահանջում էին բարենորոգումներ անցկացնել տերությունների վերահսկողությամբ: Ջ.Բրայսը, Ի.Հոդգեսը, Մ.Մաքկոլը Թուրքիայի հայ բնակչության միակ փրկությունը տեսնում էին եվրոպական տերությունների աջակցությամբ Մեծ Բրիտանիայի ռազմական միջամտության մեջ: Ջ.Արգայլի դքսի («Հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ահ ու սարսափի համար Անգլիայի պատասխանատվության փաստագրական ու պատմական վկայություններ», 1896, «Մեր պատասխանատվությունը Թուրքիայում տիրող իրավիճակի համար», 1896), Ֆ.Գեֆքենի («Արևելյան հարցը. թուրքական բարենորոգումները և Հայաստանը», 1895), Ու.Գլադստոնի («Հայկական հարց», 1896, «Արևելյան ճգնաժամ», 1897), Հ.Լինչի («Հայկական հարց», 1894, 1895, 1896), Մ.Մաքկոլի («Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի հանդեպ», 1895), Ջ.Ռասսելի («Հայաստանը և առաջավոր շարժումը», 1897), Ֆ.Սթիվենսոնի («Անգլիան, Թուրքիան և Հայաստանը», «Փաստեր հօգուտ հայերի», 1896) աշխատանքներում վերլուծվում են եվրոպական տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում, քննադատվում նրանց դիրքորոշումը Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Հայկական հարցի մասին փաստագրական հարուստ նյութ են պարունակում Մեծ Բրիտանիայի արտաքին գերատեսչության 1890-ական թթ. հրատարակած դիվանագիտական վավերագրերի ժողովածուները, ինչպես նաև բրիտանական «Սպեկտեյթր», «Քոնթեմփըրըրի ռեվյու», «Ֆորթնայթլի ռեվյու», «Նայնթին սենչըրի» ամսագրերի հոդվածները:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Թուրքիայի հայ բնակչության դրության, երիտթուրքական կառավարության ներքին քաղաքականության, Ադանայի 1909 թ. ջարդերի և կոտորածների, 1912-14 թթ. Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցի քննարկման, նոր փուլում Հայկական հարցում տերությունների քաղաքականության խնդիրներն են արծարծված Է.Փիրսի («Թուրքիան և նրա ժողովուրդները», 1911, «Թուրքիան և պատերազմը», 1914), Ֆ.Կավենդիշի («Վտանգ Հայաստանում», 1913), Է.Ռոբինսոնի («Ճշմարտությունը Հայաստանի





մասին», 1913), Է.Ջեքիմանի («Երիտթուրքերը և ճշմարտությունը Ադանայի 1909-ի ապրիլյան կոտորածի մասին», 1913), Մ.Փրայսի («Ասիական Թուրքիայի խնդիրները», 1914), Ֆ.Սքեչարդի («Հայկական հարց», 1914) և ուրիշների հոդվածներում և գրքերում: Անգլիացի շատ հեղինակներ Մեծ Բրիտանիայի կառավարությանը նախազգուշացնում էին համաշխարհային պատերազմի նախօրեին Թուրքիայի հայ բնակչության վրա կախված ֆիզիկական ոչնչացման վտանգի մասին:

Առաջին համաշխարհային պատերազմը, Թուրքիայի հայերի ցեղասպանությունն էլ ավելի սրեցին անգլիական պատմագրության ուշադրությունը Հայկական հարցի խնդիրների վրա: Երևան եկան պատերազմի տարիներին Թուրքիայի հայ բնակչության դրության և նրանց զանգվածային տեղահանությունների վերաբերյալ փաստագրական նյութերի արժեքավոր հրապարակումներ, մասնավորապես, Ջ.Բրայսի («Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-16 թթ.», 1916), Ա.Թոյնբիի («Փաստաթղթեր Օսմանյան կայսրության և հյուսիսարևելյան հայերի և քրիստոնյա ասորիների նկատմամբ վերաբերմունքի մասին», 1916), Ա.Անտոնյանի («Նայիմ Բեյի հուշերը», 1920), ժողովածուները: Երիտթուրքերի հայատյաց քաղաքականության, հայերի տեղահանության և ցեղասպանության, հայ գաղթականության ծանր վիճակի մասին փաստական հարուստ նյութեր և վկայություններ են պարունակվում Ա.Սաֆրաստյանի («Հայաստանի ներկա կացությունը», 1915), Է.Ռոբինսոնի («Հայաստանը և հայերը», 1918, «Մեր դաշնակից հայերի դրությունը», 1919), Ա.Թոյնբիի («Հայկական սարսափներ. մի ազգի բնաջնջումը», 1915, «Թուրքիայի արյունարբու բռնակալությունը», 1917), Ու.Ուիլյամսի («Հայաստանի ողբերգական պատմությունը», 1916), Լ.Չամբերսի («Հայաստանի կոտորածը», 1916), Ջ.Դուգլասի («Մահվան ճանապարհը Անատոլիայում և Հայաստանում», 1920), Լ.Էյնշտեյնի («Հայկական ջարդերը», 1917), Ի.Մկրտչյանի («Թուրքական լծից», 1918), Մ.Ուոդի («Տեղահանությունը Փոքր Ասիայում», 1922) և ուրիշ աշխատանքները: Հայկական հարցի նկատմամբ Մեծ Բրիտանիայի և մյուս տերությունների քաղաքականության խնդիրները, բրիտանական կաբինետում և պառլամենտում, հետպատերազմյան միջազգային կոնֆերանսներում Հայաստանի խնդիրների քննարկ-

մանն են նվիրված Ջ.Բրայսի («Հայաստանի ապագան», 1919, «Մերձավոր Արևելքի կարգավորումը», 1920), Հ.Բաքստոնի («Հայաստանը և կարգավորումը, 1919), Ս.Լիզի («Հայաստանը և դաշնակիցները», 1920), Ի.Լիթլի («Հայկական հարցը ներկայացուցիչների պալատում», 1918), Ջ.Մերիոթի («Արևելյան հարցը եվրոպական դիվանագիտության մեջ», 1917), Գ.Միքայելյանի («Հայերի ապագան», 1924), Ռ.Ռոդի («Հայաստան. Բրիտանական պարտավորությունները և Մերձավոր Արևելքը», 1920), Ա.Սաֆրաստյանի («Գերմանիան և Հայաստանը», 1917) և ուրիշների ուսումնասիրությունները:

1920-ական թթ. մինչև մեր օրերը անգլիացի պատմաբանները հետազոտել են Հայկական հարցի պատմության հետ կապված բազմաթիվ հարցեր՝ մասնավորապես, Արևմտյան Հայաստանի նկատմամբ Մեծ Բրիտանիայի և մյուս տերությունների քաղաքականության, թուրքական կառավարության հակահայկական քաղաքականության, միջազգային կոնֆերանսներում Հայկական հարցի քննարկումների, Թուրքիայից արտաքսված և Մերձավոր Արևելքի, Եվրոպայի ու Ամերիկայի երկրներում ապաստանած հայության ճակատագրի, 1944-46 թթ. Հայկական հարցի վերարծարծման խնդիրները: Հայ ժողովրդի քաղաքական պատմության այս և մյուս խնդիրները շոշափված են Ի.Փայի («Հայկական խնդիրը», 1927), Ջ.Բարրի («Հայերի տարաբնակեցումը», 1919), Հ.Վուդսի («Հայերը երեկ և այսօր», 1980), Փ.Շափի («Եվրոպական տերությունները և մերձավորարևելյան հարցը», 1981), Ֆ.Կորբինի («Հայ ժողովրդի ներկա վիճակը», 1982), Ռ.Սեթոն-Ուոթսոնի («Դիզրայելին, Գլադստոնը և Արևելյան հարցը», 1935), Հ.Գուչի և Հ.Թեմփերլիի («Պատերազմի նախօրեին. բրիտանական փաստաթղթեր, 1894-1914», 1936), Դ.Լլոյդ Ջորջի («Ճշմարտությունը հաշտության պայմանագրերի մասին», 1938), Ռ.Լենսի («Հայկական հարցի հարությունը», 1945), Ա.Սարգսյանի («Դիվանագիտական կոնցերտը և հայերը, 1890-97», 1961), Ռ.Դուգլասի («Բրիտանիան և Հայկական հարցը, 1894-97», 1976), Դ.Լանգի («Հայերը», 1976, «Հայաստան. քաղաքակրթության օրրանը», 1970, «Հայերը. Հալածված ժողովուրդ», 1981), Ա.Նասիբյանի («Բրիտանիան և Հայկական հարցը, 1915-23», 1984), Ք.Ուոքերի («Հայաստան. Մի ժողովրդի գոյատևումը», 1980, 1990) հետազոտություններում:





Վերջին շրջանի աշխատություններում օգտագործված են Մեծ Բրիտանիայի և այլ երկրների արխիվներում եղած բազմաթիվ փաստագրական նյութեր: Հայկական հարցի և հայերի ցեղասպանության խնդիրները քննարկելիս տեղեկություններ են տրվում Հայաստանի պատմության և մշակույթի մասին, ընդգծվում է հայ ժողովրդի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ:

## Բ/ ԱՄՆ-ի պատմագրությունը

ԱՄՆ-ի պատմագրությունը Հայկական հարցին և հայերին անդրադարձել է դեռևս 19-րդ դ. 90-ական թթ., մասնավորապես, սկսած Օսմանյան կայսրության հայերի 1894-96 թթ. ջարդերից և կոտորածներից: ԱՄՆ-ի ազդեցիկ շատ ամսագրերում և լրագրերում հրապարակվել են բազմաթիվ նյութեր և հոդվածներ արևմտահայերի կյանքի, նրանց նկատմամբ սուլթանական կառավարության վարած քաղաքականության, Հայկական հարցում մեծ տերությունների դիրքորոշման մասին, դեպքերի ականատես ամերիկյան միսիոներների, դիվանագետների, փախստական հայերի վկայություններ: Թուրքիայի հայության իրավիճակի, հայկական կոտորածների մասին հավաստի վկայություններ են պարունակում ամերիկյան հեղինակներ Ջ.Օ՚Շիի («Դժբախտ Հայաստան», 1895), Թ.Պետերսոնի («Թուրքիան և Հայկական հարցը», 1895), Ջ.Մաքդերմոտի («Մեծ մարդասպանը և Հայաստանի քրիստոնյաները», 1897), Հ.Գիլբերնատի («Հայաստան. Անցյալը և ներկան», 1895), Դ.Գրեգորիի («Քրիստոնեական աշխարհի ոճրագործությունը: Հայկական ճգնաժամը և ջարդերը», 1900), Հ.Թափփերի («Հայաստան. ներկա ճգնաժամը և անցյալի պատմությունը», 1896) և ուրիշների աշխատություններում: Օսմանյան կայսրության պատմության, Արևմտյան Հայաստանի, Հայկական հարցում եվրոպական պետությունների և ԱՄՆ-ի քաղաքականության խնդիրների, 1894-96 թթ. կոտորածների հետազոտման արժեքավոր աղբյուրներ են ամերիկյան միսիոներներ Է.Բլիսի («Թուրքիան և հայկական սարսափները», 1896), Ս.Համլինի («Հայկական ջարդեր», 1895, «Հայաստանի տառապանքները», 1896, «Հայ հպատակների բուրքական կոտորածի քաղաքականության ծագումն ու զարգացումը»,

1899), Ֆ.Գրինի («Հայկական ճգնաժամը Թուրքիայում, 1894 թ. ջարդերը», 1895, «Հայկական ջարդերը», 1896, «Իրավիճակը Հայաստանում», 1896), լրագրողներ Լ.Աբբոտի («Հայկական հարց», 1896), Է.Գոդկինի («Հայկական տագնապներ», 1895, «Հայկական սարսափներ», 1897), Չ.Դոլի («Ի՞նչ կարող է անել ԱՄՆ-ը Հայաստանի համար», 1906), դիվանագետ Ա.Տերրելի («Զրույց սուլթան Աբդուլ Համիդի հետ», 1897) և ուրիշների գործերը: Աբդուլ Համիդ 2-րդի հակահայկական քաղաքականության անհանդուրժողականություն առաջ բերեց նաև հայ ծագում ունեցող ամերիկացիների մոտ, լույս տեսան Ա.Ազդերյանի («Թուրքը և հայի երկիրը կամ Թուրքիան և Հայաստանը», 1896), Կ.Փափազյանի («Հայերի անցյալը և ներկան», 1891), Ա.Վարդանյանի («Հայաստանի փորձությունը», 1896), Մ.Մանգասարյանի («Հայաստանի անխուսափելի կործանումը», 1896) աշխատությունները: Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ս.Գաբրիելյանի («Հայերը կամ Արարատի ժողովուրդը», 1892, «Փաստեր Հայաստանի մասին», 1895, «Արյունաքամ Հայաստանը, նրա պատմությունը և տառապանքները», 1897) ուսումնասիրությունները, որոնք ամերիկացի ընթերցողին ծանոթացնում են հայ ժողովրդի տառապալից պատմությանը, արևմտահայերի վիճակին, Հայկական հարցում պետությունների քաղաքականությանը:

Աղանայի հայ բնակչության կոտորածը, Թուրքիայի հայության տեղահանությունները ու կոտորածները լայնորեն լուսաբանվել են ԱՄՆ-ի պատմագրության մեջ: Երիտթուրքական կառավարության կողմից արևմտահայերի ոչնչացման ու արտաքսման նախօրոք ծրագրված քաղաքականության, հայկական կամավորական շարժման, հայերի ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ ու դրվագներ են ամփոփված Գ.Ռեյնոլդսի («Սարսափելի փորձություններ Վանում», 1916), Ու.Ռոքուելի («Հայերի տեղահանությունը», 1916), Բ.Փափազյանի («Հայաստանի ողբերգությունը», 1918), Գ.Նեպպի («Բիթլիսի ողբերգությունը», 1919), Ն.Տեր-Հակոբյանի («Հալածված Հայաստանը», 1918), Գ.Ջենքինսի («Հայաստանը և հայերը», 1915), Թ.Օ՚Քոննորի («Հայաստանը և նրա ապագան», 1917), Բ.Էբիի («Թուրք ելուզակների իշխանության տակ», 1922), Ու.Քինգի («Թուրքական ջարդերը Փոքր Ասիայում», 1922), Գ.Մոնտգոմերիի («Հայերի ջարդերը 1916-ին», 1933) աշխատանքներում: Հ.Գիբբոնսի գրքերը («Հայաստանը համաշխարհային պատերազմում», 1926, «Նորագույն պատմության ամենասև էջը: Վերջին կոտորածները Հայաստանում. փաստեր և պատասխանատվություններ», 1916) հենվում են հավաստի փաստաթղթերի վրա, որոնց համար աղբյուր են ծառայել, մասնավորապես, Ամերկոմի զեկուցագրերը, գերմանական միսիոներների նամակները, ամերիկյան ու անգլիական թերթերում հրապարակված բազմաթիվ ցուցմունքները: Հայերի ցեղասպանության կարևոր աղբյուրներ են Թուրքիայում ամերիկյան դեսպան Հ.Մորգենթաուի «Հայաստանի ողբերգությունը», «Հայկական ջարդերի առթիվ» (1918) աշխատանքները: 1926 թ. լույս տեսան «Դեսպան Մորգենթաուի հուշերը», որտեղ, մասնավորապես, շարադրված են նրա զրույցները Թալեաթ փաշայի և երիտթուրքական այլ պարագլուխների հետ: Հայերի տեղահանությանն ու Միջագետքի անապատներում նրանց ոչնչացմանը նվիրված գլուխները գրված են Հալեպի ամերիկյան հյուպատոսի զեկույցների հիման վրա: Պատերազմի ժամանակ և նրանից հետո Հայկական հարցում ԱՄՆ-ի և եվրոպական տերությունների քաղաքականության, Հայաստանին անկախություն տրամադրելու, Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատ հաստատելու խնդիրներին են նվիրված Ու.Ջիբերտի («Հայաստանին ինքնավարություն տալու իրավունքը», 1916), Ֆ.Փաուերսի և Գ.Վարդումյանի («Հայաստանը հայերի համար», 1918), Վ.Վիլսոնի («Հայաստանի մանդատը», «Հայաստանի և Թուրքիայի սահմանը», 1920), Գ.Մոսլիի («Հայաստանի մանդատը: Գեներալ Ջ.Հարբորդի հաշվետվությունը», 1920) և ուրիշների աշխատությունները:

1930-ական թթ. վերջին – 1940-ական թթ. սկզբին ԱՄՆ-ում սկսվում է Հայկական հարցի և հայերի ցեղասպանության խնդրի լայն ուսումնասիրություն, որը հետևանք էր ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական կյանքում տեղի հայ համայնքի դերի ուժեղացման, հայերի ցեղասպանության փաստերի միջազգային ճանաչման և Թուրքիայի կողմից զավթված հայկական տարածքների վերադարձման համար հայ սփյուռքի եռանդուն պայքարի: Հայկական հարցի և ցեղասպանության առանձին խնդիրներ են լուսաբանվում հայ ժողովրդի պատմության, նրա ազգային-ազատագրական պայքարի, միջազգային դիվանագիտության ընդ-

հանուր հարցերին նվիրված ամերիկյան հեղինակների ուսումնասիրու-
թյուններում: Դրանց մեջ հիշատակելի են Գ.Փայեյանի «Հայկական
պատմության փուլերը» (1942), Գ.Պողոսյանի «Հայոց պատմության և
քաղաքականության կարևորագույն փուլերը» (1957), Վ.Քյուրքչյանի
«Հայաստանի պատմություն» (1957), Ա.Զարդարյանի «Հայ ազատագ-
րական շարժման պատմության ակնարկներ» (1959), Լ.Նալբանդյանի
«Հայ հեղափոխական շարժում» (1963) աշխատանքները: Հայկական
հարցի 1870-1920-ական թթ. պատմության առանձին խնդիրներ են շո-
շափում Ա.Սարգսյանի «Հայկական հարցի սկզբնավորումը. 1870-81»
(1934), «Հայկական հարցի պատմությունը մինչև 1885-ը» (1938), Ջ.Վր-
թանեսի «Հայկական հարցն այսօր պատմական հեռանկարում» (1946),
Ա.Ըլեքի «Հայկական հարցի քաղաքագիտական խնդիրները» (1946),
Ռ.Դևիսոնի «Հայկական ճգնաժամ. 1912-14 թթ.» (1948), Մ.Միսաքյանի
«Հայկական հարցի կարևորագույն փուլերը, 1879-1950» (1950), Ռ.Ճե-
րահյանի «Հրաժարում Հայկական հարցից որպես միջազգային խնդրի»
(1956), Ռ.Հովհաննիսյանի «Հայկական հարց» (1976) և ուրիշ ուսումնա-
սիրություններ: Լ.Գորդոնի («Ամերիկյան հարաբերությունները Թուրքի-
այի հետ, 1830-1920», 1938), Թ.Բեյլիի («Վուդրո Վիլսոնը և կորուսյալ
աշխարհը», 1941, «Վուդրո Վիլսոնը և մեծ դավաճանությունը», 1945),
Ջ.Գիդնեյի («Հայաստանի մանդատը», 1967) աշխատությունները՝
նվիրված են թուրք-ամերիկյան հարաբերություններին: Նրանցում վեր-
լուծված է ԱՄՆ-ի քաղաքականությունը Հայկական հարցում, մասնավո-
րապես, 1918-23-ին: Հայերի ցեղասպանության խնդիրների վերաբերյալ
ԱՄՆ-ում լույս են տեսել հատուկ ուսումնասիրություններ, որոնք պարու-
նակում են հարուստ փաստագրական նյութեր՝ Ջ.Գուտմանի «Ցեղաս-
պանության սկիզբը» (1948), Տ.Պոյաջյանի «Հայաստան. Մոռացված
ցեղասպանության գործը» (1972), Գ.Բարդակչյանի «Հիտլերը և հայկա-
կան ցեղասպանությունը» (1985), «Հայկական ցեղասպանությունը հե-
ռանկարում» (1981), ականատեսների վկայություններ՝ Ա.Հարությունյան,
Ն.Գաբիկյան, Լ.Դեյվիս և ուրիշներ, փաստաթղթերի ժողովածուներ՝
Ջ.Վրթանեսի «Ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթեր» (1950),
Ջ.Նեյզերի «20-րդ հարյուրամյակի առաջին ցեղասպանությունը»
(1968): 1980 թ. լույս տեսավ Ռ.Քլոյանի «Հայկական ցեղասպանությու-





նը» ժողովածուն, որը ԱՄՆ-ի թերթերում և ամսագրերում հրապարակ-
ված (1915-22) հայկական ցեղասպանությանը վերաբերող մի քանի
հարյուր հաղորդագրությունների և հոդվածների պատճենների ժողովա-
ծու է: Ռ.Հովհաննիսյանը կազմել է «Հայկական կոտորած» (1978) մա-
տենագրությունը, որտեղ բերված է տարբեր երկրների արխիվների ցան-
կը, ուր պահվում են ցեղասպանության մասին փաստաթղթեր, ինչպես
նաև այդ թեմայով արտասահմանյան հիմնական հրատարակությունne-
րի ցուցակը: Ցեղասպանության և, մասնավորապես, հայկական ցեղաս-
պանության խնդրի տեսական հարցերին են նվիրված Վ.Դադրյանի
«Հայկական և հրեական ցեղասպանությունները» (1975), «Ցեղասպա-
նության ուսումնասիրման մեթոդաբանական բաղկացուցիչները»
(1972), «Ցեղասպանության կառուցվածքային ֆունկցիոնալ բաղկացու-
ցիչները» (1974) և այլ հետազոտությունները: Հայ ժողովրդի քաղաքա-
կան պատմությունն է քննարկվում Ռ.Հովհաննիսյանի «Հայաստանը
անկախության ճանապարհին» (1967) և «Հայաստանի Հանրապետու-
թյուն» (1971, 1982) կապիտալ աշխատություններում:

Թուրքական իշխանությունների և Թուրքիայի պատմագիտության
կողմից հայոց պատմության կեղծման, հայերի ցեղասպանության խնդ-
րի վարկաբեկման արշավը աջակցություն է գտնում ամերիկյան առան-
ձին քաղաքագետների ու պատմաբանների մոտ: Պատմական իրադար-
ձությունների միտումնավոր, իսկ հաճախ և պարզապես խեղաթյուրված
լուսաբանության օրինակ կարող են ծառայել Ս.Շոուի («Օսմանյան
կայսրության և ժամանակակից Թուրքիայի պատմություն», 1976, 1977),
Ք.Կարպատի («Թուրքիայի քաղաքականությունը», 1969, Հետազոտու-
թյուն Օսմանյան կայսրության ազգայնականության սոցիալական ար-
մատների«, 1978), Ջ.Մաքքարթիի («Մահմեդականները և փոքրամաս-
նությունները. Օսմանյան Անատոլիայի բնակչությունը և կայսրության
վախճանը», 1983) աշխատանքները: 1986-ին թուրք-ամերիկյան ընկե-
րությունը հրատարակեց «Հայերի պնդումները. առեղծված և իրակա-
նություն» գիրքը՝ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շ.Էլեքդաղի առաջաբա-
նով, որը Հայկական հարցի և հայերի ցեղասպանության պատմությունը
խեղաթյուրող միտումնավոր նյութերի հավաքածու է:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

## 1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ*

Հայկական հարցը Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականության ոլորտն է մտել 19-րդ դարի կեսից՝ որպես հետևանք Մերձավոր Արևելքում անգլո-ռուսական մրցակցության, ռուս-թուրքական պատերազմներում Ռուսաստանի հաջողության և Օսմանյան կայսրության սկսված քայքայման: 19-րդ դարի առաջին տասնամյակներում Մեծ Բրիտանիան հանդես է եկել ընդդեմ Ռուսաստանի դիրքերի ամրապնդման ինչպես Բալկաններում, այնպես էլ Մերձավոր Արևելքում՝ Թուրքիան դիտելով որպես եվրոպական հավասարակշռությունը Մերձավոր Արևելքում պահպանելու անհրաժեշտ գործոն: Այդ ժամանակ է Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության տեսադաշտում հայտնվել Արևմտյան Հայաստանը: Անգլիական դիվանագետներն ու զինվորական գործիչները ճիշտ գնահատեցին Արևմտյան Հայաստանի ռազմավարական նշանակությունը՝ նշելով, որ եթե այն գրավի Ռուսաստանը, ապա վերջինս կվերահսկի ամբողջ Փոքր Ասիան:

Անգլիական կառավարությունը Հայկական հարցով սկսեց զբաղվել 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Ստանալով 1878 թ.

* Հայկական Հարց. Հանրագիտարան, Երևան. Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1992 /ռուս./, 1996, էջ 300-303:





Սան Ստեֆանոյի պայմանագրի տեքստը՝ անգլիական կառավարությունն անհապաղ միջոցների դիմեց Ռուսաստանին զրկելու Թուրքիայի նկատմամբ տարած հաղթանակի պտուղներից: Վարչապետ Բենջամին Դիզրայելին առաջարկեց նույնիսկ զենքի դիմել. անգլիական ռազմանավերը ուղղություն վերցրին դեպի Մարմարա ծով, երկրում հայտարարվեց մասնակի զորահավաք: Այդ աննպաստ պայմաններում Ռուսաստանը հարկադրված ստորագրեց 1878 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը, որով նա հրաժարվեց Արևմտյան Հայաստանում իր գրաված Բայազետ քաղաքից և Ալաշկերտի դաշտից: Բացի այդ, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման հարցով Բարձր Դուռը պետք է դիմեր ոչ միայն Ռուսաստանին, ինչպես նախատեսում էր Սան Ստեֆանոյի պայմանագիրը, այլև Անգլիային: Անգլիական կառավարությանը հաջողվեց նաև գաղտնի պայմանագիր պարտադրել Թուրքիային, որի համաձայն Մեծ Բրիտանիան հնարավորություն էր ստանում զբաղեցնել Կիպրոս կղզին՝ փոխարենը պարտավորվելով Թուրքիային վերադարձնել Ռուսաստանի գրաված հայկական տարածքները, ինչպես նաև առաջիկա եվրոպական համաժողովում պաշտպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու շահերը: 1878 թ. Բեռլինի կոնգրեսում անգլիական պատվիրակությունը Հայկական հարցն օգտագործեց սոսկ Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու և իր դիրքերն Օսմանյան կայսրությունում ամրապնդելու նպատակով: Նրան հաջողվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով, որը նշանակում էր Ռուսաստանին զրկել Արևմտյան Հայաստանի խնդիրների լուծման մենաշնորհի իրավունքից:

19-րդ դարի 70-ական թթ. վերջին և 80-ական թթ. սկզբին Մեծ Բրիտանիան նշանակալի եռանդ ցուցաբերեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցում: Անգլիական կառավարության նախաձեռնությամբ տերությունների համատեղ հայտագրեր հղվեցին (1880 թ. հուլիսի 2-ին և սեպտեմբերի 11-ին) սուլթանական կառավարությանը՝ Բարձր Դռնից պահանջելով անհապաղ իրագործել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ իր ստանձնած պարտավորությունները: Մեծ Բրիտանիայի այդպիսի շահագրգիռ դիրքորոշումը Հայկական հարցում բացատրվում էր Բարձր Դռան վրա մշտական ճնշմամբ Եգիպտոսի

գրավմանը հասնելու ձգտումով: 1882 թ. հօգուտ իրեն լուծելով Եգիպտական հարցը՝ անգլիական դիվանագիտությունը 1880-ական թթ. 2-րդ կեսին թուլացրեց իր դիրքորոշումը Հայկական հարցում, թեպետ Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ անգլիական կառավարության սևեռուն ուշադրության կենտրոնում: 1890-ական թթ. սկսած սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության սաստկացման կապակցությամբ անգլիական կառավարությունը Աբդուլ Համիդ 2-ին սպառնում էր հայտարարություններով, թե իրավունք կտա Ռուսաստանին գրավել Արևմտյան Հայաստանը: Սակայն անգլիական կառավարության ձևական բողոքներն ու սպառնալիքները, հանրային կարծիքի ընդվզումը չկարողացան կանխել Օսմանյան կայսրությունում հայ բնակչության ջարդերը 1890-ական թթ.: 1894 թ. Սասունի իրադարձությունները ցասումնալից բողոքներ առաջ բերեցին Մեծ Բրիտանիայում՝ անգլիական կառավարությանը մեղադրելով հայերի ողբերգության նկատմամբ անտարբերության և նույնիսկ մեղսակցության մեջ: Արչիբալդ Ռոզբերիի լիբերալ կառավարությունը ստիպված էր միանալ եվրոպական տերությունների համատեղ գործողություններին՝ ի պաշտպանություն արևմտահայերի, Բարձր Դռնից պահանջելով հատուկ հանձնաժողով ստեղծել Սասունի գազանությունները հետաքննելու համար: 1895 թ. սկզբին, որպես պառլամենտական ընտրությունների կարգախոս, լիբերալ կառավարությունն առաջ քաշեց Օսմանյան կայսրության հայերի ազատագրումը, իսկ Ուիլյամ Գլադստոնը ծավալեց հակասուլթանական քարոզչություն՝ պահանջելով Մեծ Բրիտանիայի անհապաղ միջամտությունը հայկական բարենորոգումների իրականացման գործում: 1895 թ. ապրիլին Ռոզբերիի կառավարությունը մշակեց բարենորոգումների նախագիծ, որով Արևմտյան Հայաստանին փաստորեն ինքնավարություն էր տրվում եվրոպական տերությունների հովանու ներքո:

Այդ շրջանում անգլիական քաղաքականության գլխավոր նպատակը՝ քրիստոնյաներին պաշտպանելու պատրվակով Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը կանխելն էր: 1895 թ. մայիսին Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը Բարձր Դռանը ներկայացրին բարենորոգումների փոքր-ինչ ձևափոխված անգլիական նախագիծը, որը սուլթանը պարտավորվեց իրագործել մոտակա ժամանակներում:





Բայց քանի որ բարենորոգումների իրագործումը հապաղում էր, 1895 թ. հունիսին անգլիական կառավարությունը քննարկեց Թուրքիայի դեմ նավատորմից օգտագործելու հնարավորությունը, սակայն որոշակի եզրակացության չհանգեց: Ռոզբերիի կառավարության անվճռական դիրքորոշումը Հայկական հարցում նրա հրաժարականի պատճառ դարձավ: Անգլիական հասարակայնությունը մեծ հույսեր էր կապում Ռոբերտ Սոլսբերիի պահպանողական կառավարության հետ՝ հավատացած, որ նա ելք կգտնի դուրս գալու մերձավորարևելյան ճգնաժամից և վերջ կտա սուլթանական կառավարության հակահայ գործունեությանը: Մի կողմից՝ բրիտանական կայսրության շահերը պահանջում էին պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու պաշտպանել սուլթանական կառավարությանը, մյուս կողմից՝ առանց Ռուսաստանի աջակցության ու եվրոպական մյուս տերությունների համաձայնության Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականությունը ոչինչ չէր հանգում: Այդ իսկ պատճառով Սոլսբերին իր ամբողջ ջանքերն ուղղեց Հայկական հարցում անգլո-ռուսական համագործակցություն հաստատելու նպատակին: Հմտորեն քողարկելով Հայկական հարցում իր քաղաքականության իրական իմաստը՝ անգլիական կառավարությունը փորձում էր մերթ Գերմանիայի, մերթ Ռուսաստանի հետ մերձեցմամբ Հայկական հարցն օգտագործել իր ազդեցությունը Մերձավոր Արևելքում ընդլայնելու համար: 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսի հայերի ջարդի ժամանակ անգլիական դեսպանությունը բավականին եռանդ ցուցաբերեց՝ կանխելու հետագա կոտորածները, նրա նախաձեռնությամբ տերությունները բողոքի հայտագիր հղեցին Բարձր Դռանը: Սակայն ո՛չ այդ հայտագիրը, ո՛չ էլ բրիտանական պառլամենտում Թուրքիայի դեմ հնչող ցասումնալից ճառերն ու սպառնալիքները շոշափելի դրական արդյունք չտվեցին. ջարդերը տարածվեցին նաև գավառներում: 1895 թ. վերջին Մեծ Բրիտանիայի կառավարությունը հայտարարեց, որ որևէ մեղք չունի Հայկական հարցում ստեղծված բարդ իրավիճակի համար և հանդես է գալիս հօգուտ տերությունների համատեղ քայլերի: Հայերի ողբերգությունը վերջնականապես ի դերև հանեց Օսմանյան կայսրության բարենորոգումներին վերահսկելու անգլիական կառավարության հույսերը:

Անգլիական կառավարության և հասարակական շրջանների հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ վերստին ուժեղացավ 1896 թ. աշնանը տեղի ունեցած հայկական նոր ջարդերի կապակցությամբ, որոնք հետևեցին Բանկ օտտոմանի միջադեպին (1896 թ. օգոստոս): Հոկտեմբերի 20-ին Սոլսբերին մի շրջաբերականով դիմեց եվրոպական տերությունների կառավարություններին՝ հիմնավորելով համատեղ քայլերի անհրաժեշտությունը Հայկական հարցի լուծման մեջ, և առաջարկեց հրավիրել համաեվրոպական համաժողով՝ մերձավորարևելյան ճգնաժամը վերջնականապես կարգավորելու համար: 1896-97 թթ. Կոստանդնուպոլսում եվրոպական տերությունների դեսպանների համաժողովը Մերձավոր Արևելքում բրիտանական ավանդական քաղաքականության լիակատար ձախողման վկայությունն էր:

Հակառակ կառավարության շահադիտական քաղաքականությանը Հայկական հարցում, Մեծ Բրիտանիայի հասարակայնությունը 19-րդ դարի 90-ական թթ. կարեկցանքով էր վերաբերվում Օսմանյան կայսրության հայ բնակչության ծանր վիճակին: Այդ շրջանում Մեծ Բրիտանիայում զգալի ազդեցություն ձեռք բերեցին անգլո-հայկական միությունները, որոնց կազմում էին բրիտանական պառլամենտի և կառավարության անդամներ, հասարակական ու կրոնական գործիչներ: Այդ ընկերակցությունների գլխավոր նպատակն էր Մեծ Բրիտանիայի հանրային կարծիքի կազմակերպումը կառավարությանն անհրաժեշտ ուղղությամբ, չնայած շատ անդամներ (Ջ.Բրայս, Ֆ.Սթիվենսոն, Ֆ.Կավենդիշ, Է.Դիլոն, Մ.Մաքկոլ և ուրիշներ) քիչ ջանք չեն գործադրել հասարակայնությանը ներկայացնելու հայության ծանր վիճակը, նրան նյութական օգնություն կազմակերպելու գործում:

20-րդ դարի սկզբին, հղանալով Եգիպտոսից մինչև Հնդկաստան «մերձավորարևելյան բրիտանական կայսրություն» ստեղծելու ծրագրեր, անգլիական կառավարող շրջանները կարևոր տեղ էին տալիս Արևմտյան Հայաստանի աշխարհաքաղաքական նշանակությանը՝ այն դիտելով որպես անգլիական տիրույթների անվտանգության և Մեծ Բրիտանիայի ասիական առևտրի ապահովման կարևոր օղակ: Հենց այդ ծրագիրն էլ որոշում էր Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական հարցում, որը ձգտում էր կասեցնել Ռուսաստանի ազդեցության ու-





ժեղացումն Արևմտյան Հայաստանում և կանխել նրա առաջխաղացումը դեպի Միջերկրականի ափերը: Քաջ գիտակցելով, որ Արևմտյան Հայաստանի համար պայքարում նա զրկված կլինի իր հզոր ռազմածովային ուժերն օգտագործելու հնարավորությունից՝ Մեծ Բրիտանիան գործադրում էր բոլոր ջանքերը՝ պանթուրքիզմի ազգայնամոլ վարդապետությանը հակառուսական ուղղվածություն հաղորդելու համար: Դրա հետ մեկտեղ, ձգտելով հնարավորին չափ քողարկել իր քաղաքականությունը Հայկական հարցում, բրիտանական կառավարությունը ոչ միայն խուսափում էր բացահայտորեն հանդես գալ հայ ազգային-ազատագրական շարժման դեմ, այլև փորձում էր հայերին համոզել իր «ավանդական հայասիրության» մեջ: Հայկական հարցում անգլիական քաղաքականությունը հատկապես ակտիվացավ 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ և հետո: Բրիտանական մամուլը, քաղաքական ու հասարակական գործիչներն այդ օրերին հանդես էին գալիս հակաթուրքական, հայանպաստ հայտարարություններով:

1912 թ. առաջին Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությունը միայն անուղղակիորեն էր շոշափում Մեծ Բրիտանիայի շահերը: Նրա համար ամենամեծ վտանգը կարող էր լինել Ռուսաստանի հաջողություն Արևմտյան Հայաստանում, որը կսպառնար անգլիական գաղութատիրական նկրտումներին Մերձավոր և Միջին Արևելքում: Տերությունների միջև ստեղծված ուժերի հավասարակշռության պայմաններում Թուրքիայի ամբողջականության պահպանումը նրա արևելյան սահմաններում համապատասխանում էր Մեծ Բրիտանիայի շահերին: Հենց այդ դիրքերից էր անգլիական կառավարությունը մոտենում այդ ժամանակ վերստին արծարծված հայկական բարենորոգումների հարցի քննարկմանը՝ ձգտելով այդ բանակցություններն առավելագույնս օգտագործել իր քաղաքական նպատակների համար: 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ ամբողջությամբ չէր հակասում անգլիական արտաքին քաղաքականության նպատակային ուղղվածությանը: Բրիտանական կառավարությունը, որն իրեն իրավունք էր վերապահել միջամտել Հայկական հարցին, եթե անմիջականորեն շոշափվեին անգլիական շահերը, գիտակցում էր, որ այդ սուր պայքարում ո՛չ Ռուսաստանին, ո՛չ էլ Գերմա-

նիային չհաջողվեց գերակա ազդեցություն ստանալ Օսմանյան կայսրությունում:

Սկսված առաջին համաշխարհային պատերազմի (1914-18) պայմաններում երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտահայերի զանգվածային տեղահանության ու ջարդերին, այդ նույն ժամանակ Անգլիայի ու Ֆրանսիայի զինված ուժերը հաջողություններ էին արձանագրում Կոստանդնուպոլսի մատույցներում, այսպես կոչված, Դարդանելի գործողության ժամանակ: 1915 թ. մայիսի 24-ին բրիտանական կառավարությունը Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարությունների հետ համատեղ հանդես եկավ հայտարարությամբ՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանության և կոտորածների կապակցությամբ: 1915-16 թթ. անգլիական կառավարությունը հայկական ջարդերն օգտագործում էր բորբոքելու հանրային կարծիքն ինչպես իր, այնպես և չեզոք երկրներում՝ եռյակ դաշինքի և, առաջին հերթին, Գերմանիայի դեմ: Այն ժամանակ, երբ 1916 թ. փետրվարին Լոնդոնում, Ռուսաստանից գաղտնի, բանակցություններ էին գնում Արաբական հարցի և Թուրքիայի բաժանման շուրջ, ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը: Անգլիական և ֆրանսիական կառավարությունները վերստին բանակցություններ սկսեցին ասիական Թուրքիայի բաժանման շուրջ՝ ռուսական քաղաքականության հաղթանակը թույլ չտալու և Մերձավոր Արևելքում ռուսական առաջխաղացումը կանխելու մտադրությամբ: Անգլո-ֆրանսիական բանակցություններն ավարտվեցին Թուրքիայի տարածքի բաժանման վերաբերյալ 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրով: Բրիտանական կառավարության ղեկավարներն իրենց պաշտոնական թե անպաշտոն հայտարարություններում կեղծավորաբար շարունակում էին պաշտպանել հայերին: Դեռևս պատերազմի սկզբին լորդ Կրոմերը պառլամենտում հայտարարեց, թե «այս պատերազմի նպատակներից մեկը՝ թուրքական լծից Հայաստանի ազատագրումն է»: 1916 թ. նոյեմբերին վարչապետ Ասքվիտը հանդիսավոր հայտարարեց, թե թուրքական տիրապետությանը վերջ կտրվի և հայ ժողովրդի համար կստեղծվի «ազատ երկիր»: Բայց այն ժամանակ, երբ բանակցություններ էին գնում Մերձավոր Արևելքի թուրքական տարածքների, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանի բաժանման շուրջ, Հա-





յաստանի անկախության ու ինքնուրույնության մասին խոսք չկար: Ավելին, անգլիական կառավարության արտակարգ լիազոր Մ.Սայքսը 1916 թ. մարտի 12-ին Պետերբուրգի անգլիական դեսպան Ջ.Բյուքենենին ուղղված գրության մեջ հնարավոր չէր համարում հայկական պետության ստեղծումն ու Արևմտյան Հայաստանի լիովին հանձնումը Ռուսաստանին:

1917 թ. աշնանը, Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, Կովկասյան ճակատի մերկացման պայմաններում, բրիտանական կառավարությունը փորձեց հայկական կամավորական շարժումն օգտագործել Թուրքիայի դեմ (Կովկասում, Իրանում և Միջագետքում)՝ այդ նպատակին հատկացնելով հատուկ ֆինանսական միջոցներ: Իսկ անգլիական արտաքին քաղաքականության ղեկավարները շարունակում էին ի լուր աշխարհի հայտարարել, թե պաշտպանում են հայերին, որոնք պատերազմից հետո կունենան իրենց «ազգային պետական միավորը» (Դեյվիդ Լլոյդ Ջորջ), կիրականանա նրա «ազատության ու անկախության» ձգտումը (Արթուր Բալֆուր):

1918 թ. Մուդրոսի զինադադարը նոր հարված եղավ հայերի համար, համաձայն որի Արևմտյան Հայաստանը մնում էր թուրքական տիրապետության տակ: Անգլիական կառավարության կարծիքով, զինադադարը պայմաններ պետք է ապահովեր Օսմանյան կայսրության վերջնական բաժանման համար: Մինչև փաստաթղթի ստորագրումը բրիտանական կառավարությունը քննարկեց ապագա փաստաթղթի մեջ Հայաստանի տեղի, նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող տերության հարցը ևս: Ակնհայտ էր, որ Մեծ Բրիտանիան փորձում էր իր վրայից գցել Արևմտյան Հայաստանի ապագա կազմակերպման պատասխանատվությունը: Արդյունքը եղավ այն, որ զինադադարի 24-րդ հոդվածը նախատեսում էր հայկական վեց վիլայեթների գրավումը դաշնակիցների կողմից «նրանցից որևէ մեկում անկարգությունների դեպքում», այսինքն՝ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մի նոր տարբերակ: 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Արևմտյան Հայաստանի ապագայի հարցերը քննարկվեցին անգլիական կառավարական շրջաններում: Ոմանք գտնում էին, որ Հայաստանի և Անդրկովկասի մանդատը պետք է հանձնել Ֆրանսիային, ոմանք էլ՝ ԱՄՆ-ին: Վերջապես 1918 թ. դեկտեմբերին

ռազմական նախարարությունը որոշում ընդունեց Անդրկովկասի իրադրությունը վերահսկելու համար ձեռնարկել մի շարք ռազմական ու քաղաքական միջոցներ՝ բրիտանական շահերը Ասիայում «բոլշևիզմի վտանգից» զերծ պահելու նպատակով: Անդրկովկասի երեք հանրապետություններից Հայաստանը ամենանվազագույն հետաքրքրությունն էր ներկայացնում Մեծ Բրիտանիայի համար՝ նրա կայսերապետական շահերի տեսակետից: Այդ բանն առանձնապես ցայտուն դրսևորվեց Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանային վեճերի ժամանակ, երբ վճռական նշանակություն ունեցան Բաքվի նավթը և անգլիական գեներալ Թոմսոնի մահմեդականամետ դիրքորոշումը: Այսպես, երբ 1918 թ. դեկտեմբերի 2-ին գեներալ Անդրանիկն իր զորքով մտավ Արցախ, և մի քանի օր այն գտնվում էր Հայաստանի Հանրապետության իրավասության տակ, գեներալ Թոմսոնը Բաքվից կարգադրեց՝ անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վերադառնալ Զանգեզուր: 1919 թ. հունվարին Թոմսոնը հայտարարեց, որ Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը մինչև հաշտության կոնֆերանսի վերջնական որոշումը պետք է ենթարկվեն Ադրբեջանին:

Բրիտանական ներկայացուցչի միջամտությունը հայ-վրացական միջադեպին (1919) հանգեցրեց նրան, որ Ախալքալաքի հայաքնակ մարզը հայտնվեց Հայաստանի կազմում, իսկ Լոռու գավառը հայտարարվեց «չեզոք գոտի» և դրվեց անգլիական զինվորների վերահսկողության տակ: Մուդրոսի զինադադարի համաձայն, թուրքական բանակը պետք է ազատեր Կարսի մարզը և վերականգներ 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Սակայն բրիտանական զինվորական հրամանատարության անվճռական գործողությունների հետևանքով թուրքական զորքերի դուրսբերումը ձգձգվեց մինչև 1919 թ. ապրիլը: 1919 թ. օգոստոսին բրիտանական կառավարությունը քննարկեց անգլիական զորքերը Կովկասից դուրս բերելու հարցը, և, չնայած պառլամենտի անդամներից ու նախարարներից շատերը պնդում էին հայերին պաշտպանելու համար այդ զորքերը ժամանակավորապես թողնել այնտեղ, գլխավոր սպայակույտը որոշեց զորքերը դուրս բերել: 1919 թ. վերջին – 1920 թ. սկզբին բրիտանական պառլամենտը վերստին անդրադարձավ Հայաստանի մանդա-





տի հարցին. ակնհայտ էր, որ անգլիական կառավարությունը Հայկական հարցի միակ լուծումը տեսնում էր այդ մանդատը ԱՄՆ-ին կամ Ազգերի լիգային հանձնելու մեջ: Դ.Լլոյդ Ջորջն այդ տեսակետը պաշտպանեց նաև 1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսում: Եվ, վերջապես ստորագրելով 1920 թ. Սևրի հաշտության պայմանագիրը, անգլիական կառավարությունը լիովին ազատվեց նրա կատարման վերահսկողությունն իրականացնելու պարտավորություններից: Չնայած Հայաստանի Հանրապետության բազմաթիվ դիմումներին, Մեծ Բրիտանիան այդպես էլ շատ թե քիչ էական օգնություն ցույց չտվեց նրան: Անգլիական կառավարությունը մերժեց Հայաստանին 1 միլիոն ֆունտ ստեռլինգ փոխառություն տրամադրելու առաջարկը (1920 թ. փետրվար), պաշտպանություն չգտավ դաշնակից զորքերի կողմից Տրապիզոնի նավահանգստի ժամանակավոր գրավման գաղափարը (1920 թ. հոկտեմբեր) ևն: Հայաստանի կառավարությունը ստացավ սոսկ աննշան քանակությամբ ռազմական հանդերձանք և վառելահեղուկ: Անգլիական ներկայացուցչի խորհրդով Հայաստանի կառավարությունը հրաժարվեց 1914 թ. սահմանների վերականգնման հարցում Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունից:

Անդրկովկասյան հանրապետություններում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո բրիտանական կառավարությունը վերջնականապես ճշտեց իր դիրքորոշումը Թուրքիայի հանդեպ: Դեռևս 1920 թ. ապրիլին բրիտանական պառլամենտի ներկայացուցիչները շփման մեջ մտան Անկարայի հետ, հանդիպումներ ունեցան Մուստաֆա Քեմալի հետ: 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Լոնդոնի կոնֆերանսում և 1921 թ. հունվարին Անտանտի Գերագույն խորհրդի նիստում (Փարիզ) բրիտանական կառավարությունը պաշտպանեց Սևրի պայմանագիրը վերանայելու Ֆրանսիայի պահանջը: 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսում անգլիական ներկայացուցչի աջակցությամբ «հայկական անկախ պետականություն» հասկացությունը փոխարինվեց «հայկական ազգային օջախ» անորոշ ձևակերպմամբ: Եվ չնայած լորդ Կերզոնի կողմից պատերազմի տարիներին հայ բնակչության նկատմամբ երիտթուրքական քաղաքականության ձևական դատապարտմանը, Թուրքիայի տարածքում հայկական ազգային օջախ ստեղծելու առաջարկը նույնպես մերժվեց 1922-23 թթ. Լոզանի կոնֆերանսում:

*Գրկ. Տեր-Պետրոսյան Հ., Ջեյմս Բրայս և հայերը, Կահիրե, 1975; Կիրակոսյան Ջ.Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), Երևան, 1978; Նույնի, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 80-ական թթ.), Երևան, 1980; Բայրամյան Լ.Ա., Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում 19-րդ դարի վերջին քառորդում, Երևան, 1982; Борьян Б.А., Армения, международная дипломатия и СССР, М.-Л., т. 1-2, 1928, 1929; Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, М., 1957; Киракосян А.Дж., Великобритания и Армянский вопрос (90-е гг. XIX века), Ереван, 1990; MacColl M., England's Responsibility towards Armenia, London, 1895; Grenville J.A.S. Lord Salisbury and Foreign Policy, London, 1964; Walker Ch., Armenia. The Survival of a Nation, New York, 1980; Nassibian A., Britain and the Armenian Question, 1915-1923, London, 1984.*

## 2. ԱՆԳԼԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (ԱԳԱՊԻ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ)*

Արևմուտքի հասարակական, քաղաքական շրջաններում, մամուլի էջերում վերջերս մեծացել է հետաքրքրությունը Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, արևմտաեվրոպական դիվանագիտության դիրքորոշման, հայ ժողովրդի քաղաքական կյանքի խնդիրների նկատմամբ:

Թուրքիայի պաշտոնական շրջանները, պատմագիտությունն ու մամուլը ջանք ու եռանդ չեն խնայում խեղաթյուրելու հայ ժողովրդի պատմությունը: Մամուլի երեկվա լռության փոխարեն այսօր առատ են հակահայկական նյութերը, ինչպես նաև ռադիոհեռուստատեսային հաղորդումները: Թուրքական քարոզչական մեքենան ամեն ինչ հակահայկական դիրքերից է մատուցում, «արդարացնում» ինչպես համիդյան շրջանի, այնպես և երիտթուրքական իշխանության տարիներին արևմտահայության նկատմամբ կիրառված հանցավոր քաղաքականությունը:

Թուրք կեղծարարներին օգնության են շտապում որոշ արևմտյան երկրների քաղաքագետները և տարբեր տեսակի գրչակները, որոնք հանուն արևմտյան տերությունների ռազմաքաղաքական շահերի, հանգիստ խղճով զոհաբերում են պատմական ճշմարտությունը, գիտական անաչառության սկզբունքները: Սրանք շահագրգռված են, որ Թուրքիան ավելի հաստատուն դիրք գրավի ՆԱՏՕ-ի հակախորհրդային, ռազմաքաղաքական ամբողջ համակարգում:

Թուրքական, ամերիկյան, արևմտաեվրոպական կեղծարարությանը հակահարված են տալիս տարբեր երկրների և սփյուռքի առաջադեմ ու արդարամիտ մարդիկ, հասարակական-քաղաքական գործիչները, պատմաբանները, բոլոր նրանք, ովքեր հանուն մարդկության շահերի անհրաժեշտ են համարում հանդես գալ պատմական ճշմարտության պաշտպանության դիրքերից:

Հայկական հարցում արևմտյան տերությունների քաղաքականության ճշմարիտ և օբյեկտիվ գնահատական տվող արտասահմանյան հրատարակությունների շարքում հարկ է նշել սփյուռքահայ պատմաբան Ագապի Նասիբյանի «Բրիտանիան և Հայկական հարցը» աշխատությունը[1]:

Կիպրոսի Մելքոնյան վարժարանն ավարտելուց հետո Ա.Նասիբյանն աշխատել է վարժարանում որպես պատմության ուսուցչուհի: Այնուհետև շարունակել է ուսումը Լոնդոնի և Գլազգոյի համալսարաններում, ստացել մագիստրոսի աստիճան և փոխադրվել Օքսֆորդի համալսարան, որտեղ նրա երկարատև պրպտումների ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծվել է սույն աշխատությունը: Ա.Նասիբյանն առաջին հայն է, որ 1981 թ. արժանացել է Օքսֆորդի համալսարանի փիլիսոփայության դոկտորի աստիճանին: 1985 թ. սեպտեմբերից նա Կիպրոսի Մելքոնյան վարժարանի տնօրենուհին է:

Ա.Նասիբյանի ուսումնասիրության առարկան այժմեական նշանակություն ունի: Վերջին տարիներս անգլիական քաղաքագետներն ու պատմաբանները առանձնակի հետևողականությամբ աշխատում են շրջանցել պատմական ճշմարտությունները, երբեմն խեղաթյուրել դրանք, զգուշորեն են վերաբերում Օսմանյան կայսրության՝ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի պատմության, Թուրքիայի հետ Անգլիայի ունեցած հարաբերությունների հարցերին: Անգլիական պատմաբանների

* *Սովետական Հայաստան (ամսագիր)*, 1987, h. 5, էջ 28-30:

1 Nassibian A., *Britain and the Armenian Question. 1915-1923*. London & Sydney: Croom Helm, New York: St. Martin's Press, 1984, 294 p.

օրինակին են հետևում ամերիկացիները: Երբ ժամանակին Անգլիան, ելնելով իր արտաքին քաղաքականության հակառուսական ուղղվածությունից, ամեն կերպ պաշտպանում և աջակցում էր Օսմանյան կայսրությանը, ապա այսօր այդ դերը կատարում են Միացյալ Նահանգները, որոնք Թուրքիան դիտում են որպես ՆԱՏՕ-ի հարվածային ուժ ընդդեմ Խորհրդային Միության:

Ա.Նասիբյանի ուսումնասիրությունն ընդգրկում է պատմության շատ կարճ, բայց հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող մի ժամանակաշրջան՝ 1915-23 թթ.:

19-րդ դարի առաջին տասնամյակներին Եվրոպայի քաղաքական մթնոլորտն ու միջպետական հարաբերություններն այնպիսին էին, որ Անգլիայի նախաձեռնությամբ Օսմանյան կայսրությանը սկսեցին վերաբերվել ոչ թե որպես առաջադիմության արգելակի, այլ եվրոպական հավասարակշռության անհրաժեշտ պայմանի, սկսեցին մտածել ոչ թե նրա փլուզման, այլ բարեփոխման մասին: Անգլիական դիվանագիտությունը առաջ քաշեց Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը պահպանելու քաղաքականություն, որը «ստատուս քվո» անվան տակ տասնամյակներ շարունակ դառնալու էր դիվանագիտական պրակտիկայում ամենահաճախ կրկնվող արտահայտությունը, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի արգելակը:

1874-80 թթ. Անգլիայում իշխանությունը գտնվում էր Դիզրայելիի (Բիքոնսֆիլդի) գլխավորած պահպանողական կուսակցության ձեռքում: Սա անգլիական գաղութային քաղաքականության ինտենսիվ ծավալման շրջանն էր, երբ բուրժուազիայի ճնշող մեծամասնությունը նոր գաղութների նվաճման և նրանցում իր դիրքերի ամրապնդման մեջ էր տեսնում Անգլիայի փրկությունը տերությունների հարաճուն մրցակցության մեջ:

70-ական թթ. բալկանյան իրադարձությունների ժամանակ, երբ Բոսնիան, Հերցեգովինան, Չեռնոգորիան Սերբիայի օգնությամբ պայքարի ելան թուրքական տիրապետության դեմ, անգլիական կառավարությունը հանդես եկավ սուլթանական ռազմաֆեոդալական ռեժիմը պահպանելու և հավերժացնելու պաշտպանությամբ: Անգլիան ընդդիմանում էր այն բանին, որ Ռուսաստանը հաջողության հասներ ճնշված ժողովուրդների պայքարին օժանդակելու գործում:





1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը ավարտվեց ռուսական զենքի հաղթանակով: 1878 թ. մարտի 3-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, որի 16-րդ հոդվածի համաձայն ռուսական բանակը մնում էր Արևմտյան Հայաստանում այնքան ժամանակ, մինչև որ սուլթանական կառավարությունը չկենսագործեր «հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ ու բարենորոգումներ» և զերծ չպահեր «հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»:

Հաշտության պայմանագրի շուրջ ծավալվեց նրբին ու բարդ դիվանագիտական պայքար, որի հիմնական բովանդակությունը Բալկաններում և Հայաստանում ռուսական զենքի հաղթանակի նսեմացման, Օսմանյան կայսրության ժառանգությունից իրենց համար առավելագույն օգուտ քաղելու նպատակին ուղղված արևմտաեվրոպական տերությունների ջանքերն էին: Եվրոպական տերությունների և, մասնավորապես, Անգլիայի համար թույլ թուրքական կայսրության պահպանումն ավելի օգտավետ էր, քան հօգուտ Ռուսաստանի նրա փլուզումը:

Անգլիական կառավարությանը ամենևին էլ չէր հետաքրքրում հայերի ծանր վիճակը, նրանց ձգտումները՝ միայն թե չտուժեին բրիտանական շահերը: Թուրքիայում անգլիական դեսպան Լայարդը գրում էր արտաքին գործերի նախարար Սոլսբերիին, որ Հայաստանի ինքնավարությունը «արտառոց բան է, ռուսների սադրանք», թե «Հայաստանի հողերը բոլորովին անպատրաստ են ինքնավարության»: Նրա համոզմամբ, անգլիական շահերին համապատասխանում էին միայն Թուրքիայի ընդհանուր բարենորոգումներն ու ամրապնդումը: Դեսպանը գտնում էր, որ լավ կազմակերպված կառավարման համակարգի դեպքում Թուրքիան ուժեղ բանակ կունենար և կկարողանար դիմագրավել հայկական բարձրավանդակի վրայով դեպի հարավ ձգտող ռուսական տարածմանը:

Ի վերջո, անգլիական կառավարությանը հաջողվեց ստիպել Ռուսաստանին համաձայնագիր կնքելու (1878 թ. մայիսի 30-ի Սոլսբերի-Շուվալովյան համաձայնագիրը), որը նսեմացնում էր պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակը, ռուս-թուրքական խաղաղության հարցը վերածելով միջազգային խնդրի: Անգլո-ռուսական համաձայնագրով Ռուսաստանը հրաժարվում էր Ալաշկերտի հովտից և Բայազետ բերդաքա-

ղաքից, համաձայնում էր, որ հայերի նկատմամբ հովանավորությունն իրականացվեր ոչ թե միայն Ռուսաստանի, այլև եվրոպական տերությունների կողմից, պարտավորվելով այլևս սահմանները չտարածել դեպի Ասիական Թուրքիայի խորքը:

Միաժամանակ անգլիական դիվանագիտությունը թուրքական կառավարությանն ապակողմնորոշում էր այն կարծեցյալ վտանգով, որն իբր շարունակվում էր Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի կողմից: Անգլիական կառավարությունը թուրքերից թաքցնում էր ռուսական ներկայացուցիչների հետ ձեռք բերված համաձայնությունը և շիկացնում մթնոլորտը Բարձր Դռնից ավելի մեծ զիջումներ կորզելու համար որպես հատուցում Անգլիայի «թուրքապաշտպան» դիրքի դիմաց:

Հաստատ համոզված լինելով, որ Ռուսաստանը նոր պատերազմ վարելու ոչ մի հնարավորություն ու մտադրություն չուներ, Դիզրայելին ու Սոլսբերին խորամանկորեն խաբեցին սուլթանի կառավարությանը և 1878 թ. հունիսի 4-ին կորզեցին Կիպրոսի մասին կոնվենցիան: Դիվանագիտական այդ հաջողությունը խաբեության ու խորամանկության արգասիք էր և ուղղված էր, նախ, Ռուսաստանի, դրանով իսկ հայ ժողովրդի կենսական շահերի դեմ: Անգլո-թուրքական համաձայնագրով Անգլիան ստացավ ոչ միայն Կիպրոսը, այլև Ասիական Թուրքիայի վրա հսկողություն սահմանելու իրավունք:

1878 թ. հունիսի սկզբին անգլիական պառլամենտի Համայնքների պալատում առաջին անգամ արծարծվեց հայկական խնդիրը: Երեք օր անց, Լորդերի պալատում, պատասխանելով իրեն ուղղված հարցապնդմանը, Սոլսբերին անհնարին էր համարում հայերի համար առանձին բարենորոգումների իրագործումը, դա պատճառաբանելով Թուրքիայում հայ բնակչության ցրվածությամբ: Միակ ելքը նա տեսնում էր Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումներ անցկացնելու մեջ:

Բեռլինի կոնգրեսի 12-րդ նիստում խոսք բացվեց Հայաստանի մասին: Սոլսբերին անդրադարձավ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին: Չառարկելով հոդվածի այն տողերին, որոնք վերաբերում էին բարենորոգումների կիրառմանը, նա պահանջեց կրճատել նրա վերջին մասը, այսինքն առաջարկեց ռուսական զորքերը դուրս բերելու հարցը:





Նա գտնում էր, որ բարենորոգումները կարող են իրականացվել և առանց ռուսական զորքերի ներկայության:

Հայերին վերաբերող հոդվածի վերջնական խմբագրությունը Սոլսբերին անգլիական և թուրքական պատվիրակությունների անունից կոնգրեսին ներկայացրեց հուլիսի 9-ի նիստում: Թուրք լիազորները համերաշխել էին անգլիացիների հետ, որովհետև համոզվել էին, որ 16-րդ հոդվածի փոխարինումը նոր ձևակերպումով իրենց ազատում էր Ռուսաստանի ռեալ հսկողությունից: Այդ ձևակերպումը հայտնի է որպես Բեռլինում ստորագրված պայմանագրի 61-րդ հոդված: Դա նշանակում էր հայերին հետաքրքրող խնդիրների լուծումը վերցնել Ռուսաստանի ձեռքից և հանձնել եվրոպական տերությունների տնօրինությանը: Հայկական հարցն Օսմանյան կայսրության ներքին խնդրից՝ ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ լուծվելու հնարավորությունից, վերածվում էր միջազգային հարցի, որի համար պատասխանատվություն էին ստանձնում, երաշխիքներ տալիս Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունները:

1880 թ. սկզբին պահպանողականները պարտություն կրեցին: Դիզրայելին և Սոլսբերին հեռացան իշխանությունից: Հաղթանակ տարած լիբերալները կազմեցին իրենց կառավարությունը, որը գլխավորեց Ուիլյամ Գլադստոնը: Առաջին հայացքից կարծես թե ամեն ինչ փոխվում էր: Անգլիան չափազանց «ակտիվ» էր թուրքական կառավարությունից հայերի օգտին բարենորոգումներ պահանջելու գործում: Իրականում այդ ամենը խաղ էր: Թուրքիայում անգլիական դեսպան Լայարդի համար հայկական ազգության հաստատումը մի վտանգ էր, որը կանխելը նա համարում էր բրիտանական կառավարության խնդիրը:

Սուլթանը համոզված էր, որ անգլիական կառավարությունը հայոց օգտին ոչ մի գործնական քայլի չէր դիմելու և անում էր այն, ինչը բխում էր իր պետության շահերից: Իսկ բարենորոգումների իրականացման մասին սուլթանի բոլոր խոստումները խաբեություն էին:

1894-96 թթ. հայկական կոտորածների հետևանքով Օսմանյան կայսրությունում սպանվեց շուրջ 300 հազար հայ, 100 հազար հայ բռնի մահմեդականություն ընդունեց և 100 հազար հայ տարագրվեց Ռուսաստան, աշխարհի տարբեր երկրներ:

Սուլթան Աբդուլ Համիդ 2-ին հաջողվեց հասնել իր նպատակին՝ պահպանել փտած ֆեոդալական-միահեծան ռեժիմը և ազգային-կրոնական ճնշումը: Պաշտոնական Արևմուտքը միայն ոգեշնչեց մեծ մարդասպանին, ոչնչով չկանխեց հայ ժողովրդի ողբերգությունը: Ռուսական, անգլիական, ամերիկյան հասարակական կարծիքը, քրիստոնեասեր եկեղեցականների բողոքներն ու համակրանքի հոգոցները անզոր եղան արևմտյան աշխարհի տնօրենների հակաժողովրդական քաղքերի առջև:

20-րդ դարի սկզբին անգլիական իմպերիալիզմը շարունակում էր նույն քաղաքականությունն վարել Մերձավոր Արևելքում և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի հարցում: Անգլիական քաղաքագետները վաղուց արդեն ապացուցել էին Հայաստանի աշխարհագրական-ռազմավարական բացառիկ դիրքի նշանակությունը: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Անգլիան գործնական ծրագրեր էր մշակել Եգիպտոսից մինչև Հնդկաստան իրենց կախյալ երկրների մի անընդմեջ շղթա ստեղծելու համար:

1913 թ. մայիսին կնքված անգլո-թուրքական համաձայնագրով Անգլիան հասավ այն բանին, որ Բաղդադի երկաթուղին չշարունակվի Բասրայից այն կողմ, որտեղ սկսվում էր անգլիական ազդեցության շրջանը: Այս համաձայնագրով Թուրքիան նրան էր զիջում Քուվեյթը, որի վրա հաստատվում էր անգլիական պրոտեկտորատ: Դրա փոխարեն Անգլիան պարտավորվում էր Թուրքիայի առջև հայերին հանգստացնելու և թույլ չտալու օտարերկրյա ոչ մի միջամտություն Հայկական հարցի պատրվակի տակ, խոստանում էր երեք միլիոն ֆունտ ստեռլինգ տրամադրել թուրքական բանակի վերակազմման ու ադմինիստրացիայի վերափոխման նպատակին, վերջապես քառասուն տարով երաշխավորում էր Թուրքիայի ասիական տարածքների անձեռնմխելիությունը:

Այն պահին, երբ Ռուսաստանի համառ ջանքերի շնորհիվ 1914 թ. փետրվարի 8-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ, մեկ օր առաջ, փետրվարի 7-ին, անգլիական գաղութարարներին հաջողվեց վավերացնել Թուրքիայի հետ իրենց կնքած համաձայնագիրը: Ռուս-թուրքական համաձայնագրով Ռուսաստանը շատ չնչին բանի հասավ: Անգլիան, ինչպես մյուս իմպե-





րիալիստական տերությունները, լրիվ անտարբեր էր հայկական բարենորոգումների հարցի նկատմամբ: Նրանք հետաքրքրում էին միայն իր սեփական, կայսերապաշտական շահերը:

Ինչպես ճշմարտացիորեն նշում է Ա.Նասիբյանը, արդեն պատերազմի նախօրյակին Հայկական հարցը կարելի էր «լուծված» համարել ի վնաս հայ ժողովրդի:

Պատերազմ հայտարարելով Գերմանիայի դաշնակից Թուրքիային, Անտանտի տերությունները լրիվ հնարավորություն ունեին կարճ ժամանակում ջախջախելու թուրքական բանակը: Բայց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները ոչ միայն չէին ուզում օգտվել Թուրքիայի ռազմական թուլությունից, այլև խանգարում էին Ռուսաստանի ակտիվ գործողություններին ինչպես կովկասյան ճակատում, այնպես էլ Սև ծովի ավազանում:

1915 թ. մայիս-հունիս ամիսներին անգլո-ֆրանսիական դեսանտային ուժերի նկատմամբ տարված հաղթանակը արբեցրեց մինչև այդ խուճապի մատնված թուրք կառավարողներին, ոգեշնչեց ու ձերբազատեց նրանց: Երկրի ներքին կյանքում թուրքական կառավարողներն ավելի սանձարձակ դարձան հայ ժողովրդի դեմ իրենց ոճրապարտ ծրագրերը լիովին իրագործելու և այդ ամենը ռազմական ծանր կացությամբ պատճառաբանելու գործում:

Ռուսաստանի ակտիվ գործողությունները կովկասյան ճակատում խրտնեցրին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին: Երբ Լոնդոնում 1916 թ. փետրվարին Ռուսաստանից գաղտնի անգլո-ֆրանսիական բանակցություններ էին տեղի ունենում Արաբական հարցի և Ասիական Թուրքիայի բաժանման շուրջ, ռուսական բանակը վճռական հարձակումով գրավեց Էրզրումը, այնուհետև Բիթլիսը, Քերմանշահը, Սպահանը և սպառնում էր գրավել Դիարբեքիրը, շարժվել դեպի Մոսուլ և Բաղդադ: Ռուսական զենքի հաջողությամբ զուգընթաց պարտություն կրեց անգլիական էքսպեդիցիոն կորպուսը Քուտ էլ Ամարայի տակ: Ռազմական անհաջողությունը դիվանագիտական ճանապարհով կանխելու նպատակով էր, որ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները նախաձեռնող դարձան... 

բակնության հաղթանակը, արգելել Ռուսաստանին խորանալու Մերձավոր Արևելք:

Այդ բանակցությունները դիվանագիտության պատմության մեջ կապված են անգլիացի Սայքսի և ֆրանսիացի Պիկոյի անունների հետ: Անգլո-ֆրանսիական նախագծով հսկայական տարածքներ էին անցնելու Ֆրանսիային և Անգլիային, Հայաստան կամ Հայկական հարց տերմինները ընդհանրապես դուրս էին թողնված փաստաթղթերից:

Ռուսական կառավարությունը դժգոհ էր Սայքս-Պիկոյի առաջադրած պայմաններից: Սկսվեցին դիվանագիտական երկար-բարակ նոր բանակցություններ ու առևտուր: Վերջապես ռուսական կառավարությունը համաձայնվեց: 1916 թ. ապրիլի 20-ին ռուս-ֆրանսիական համաձայնագրի կնքմանը մայիսի 9-ին և 16-ին հետևեցին անգլո-ֆրանսիական համաձայնությունները: Անգլիան ստանալու էր Միջագետքը, Արաբիայի մեծ մասը, Հայֆա և Ակրա նավահանգիստները և այլն: Ֆրանսիան ստանալու էր Սիրիան, Փոքր Հայքը, Կիլիկիան և նույնիսկ Արևմտյան Հայաստանի վիլայեթներից որոշ տարածք: Ռուսաստանին էր անցնում Տրապիզոնի, Էրզրումի, Բայազետի, Վանի, Բիթլիսի շրջանները, Հյուսիսային Քուրդիստանի տարածությունը, Կ.Պոլիսը, և նեղուցները Ռուսաստանին հանձնելու մասին տրված խոստումը մնում էր ուժի մեջ:

Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների մեկը մյուսի հետևից փոխվող ղեկավարները պաշտոնական և ոչ պաշտոնական հայտարարություններում շարունակում էին փարիսեցիորեն խոսել այն մասին, թե պատերազմի նպատակներից մեկը հայերի ազատագրումն է օսմանյան լծից: Իսկ գործնականում դիվանագիտական բանակցությունները տենդորեն շարունակվում էին Մերձավոր Արևելքը, այդ թվում և Հայաստանը միմյանց միջև բաժանելու հարցերի շուրջ: Վերջին դեպքում Հայաստանի ինքնավարության կամ ինքնուրույնության մասին ոչ մի հիշատակություն չէր կարող լինել:

Սայքս-Պիկոյի համաձայնագրերը շատ չնչին երաշխիք էին իմպերիալիստական գիշատիչների կատաղի պայքարում: Անհրաժեշտ էր ռազմական ուժով ապահովել դրանց իրականացումը: Անգլիական կառավարությունը 1916 թ. վերջին հատուկ զորախումբ ստեղծեց գեներալ Մոդի հրամանատարությամբ, որը շտապեց հարձակում սկսել թուրքական բանակի դեմ Միջագետքում: Անգլիական զորքերին հաջողվեց 1917 թ. փետրվարին գրավել Քութ էլ Ամարան, մարտին՝ Բաղդադը և ապրիլի սկզբին՝ Կիզիլ Ռաբաթում հանդիպել ռուսական գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն ջոկատին: Փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բուրժուական կառավարությունն անկարող գտնվեց որևէ ռազմական հաջողության հասնել այդ ճակատում: Եվ նորից անգլիական իմպերիալիզմն անտարբերությամբ համակվեց Արևելյան Թուրքիայում տեղի ունեցող անցուդարձի նկատմամբ: Այդ պահին այլ բան էին թելադրում «քրիստոնեական գաղութատիրական» շահերը, և Մեծ Բրիտանիան դիտողի դերում էր, անգլիական մոնոպոլիստներին զբաղեցնողը նավթն էր: 1918 թ. Անգլիան նորից ասպարեզ իջավ Անդրկովկասում իր տիրապետությունը հաստատելու, այնտեղի հակահեղափոխությունը հովանավորելու և հակախորհրդային պատվար ստեղծելու համար:

Պատերազմի ընթացքում Անտանտայի ղեկավարներ Լլոյդ Ջորջն ու Կլեմանսոն, Վիլսոնն ու Սոնինոն և մյուսները չէին խորշում հայանպաստ հայտարարություններից, խոստացումներ դատապարտում էին երիտթուրքերին, բայց գործով, ինչպես ավելի բացորոշ դարձավ 1918-ին, 1919-ին, 1920-ին և հետո, նրանք ոչինչ չարեցին մահացու հարված ստացած հայ ժողովրդին օգնելու համար:

Հետպատերազմյան պայմանագրերում և համաժողովներում Հայկական հարցի արծարծման մասին Ա.Նասիբյանը «Բրիտանական երկնտրանք, Մուդրոսից Սևր» և «Պատրանք. Սևրից Լոզան» գլուխներում գրում է, որ պատերազմի տարիներին Հայկական հարցի լուծումը որոշ չափով համապատասխանում էր բրիտանական կառավարության շահերին: Պատերազմից հետո Անգլիան կանգնեց խոշոր երկընտրանքի առջև, մի կողմից՝ նա ամբողջությամբ պատասխանատու էր և մեղավոր Արևմտյան Հայաստանում կատարվածի համար, մյուս կողմից՝ Հայաստանը ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում անգլիական կառավարությանը: «Դա մի ամայի երկիր էր, որը հարուստ էր միայն իր տավարությանը: «Դա մի ամայի երկիր էր, որը հարուստ էր միայն իր տառապանքներով»: «Այսպիսով, - եզրակացնում է Ա.Նասիբյանը, - պատերազմի ավարտին Հայկական հարցը մի ավելորդ պարտավորություն էր դարձել բրիտանական պետության համար»:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում զինադադար

կնքվեց Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև: Այս դիվանագիտական փաստաթղթի համաձայն, Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան մնում էին Թուրքիայի տիրապետության տակ: Անտանտի տերություններին իրավունք էր վերապահվում գրավել Բաթումը և Բաքուն, ինչպես նաև հայկական վեց վիլայեթները՝ նրանցից «որևէ մեկում անկարգություններ ծագելու դեպքում»: Սակայն ինչ «անկարգությունների» մասին կարող էր լինել խոսքը, երբ այդ տարածքում այլևս հայ բնակչություն չկար:

Հայկական հարցը անտարբերության մատնվեց Անգլիայի կողմից նաև 1920 թ. ապրիլին կայացած Անտանտի տերությունների գերագույն խորհրդի նիստում՝ Սան Ռեմոյի կոնֆերանսում: Տերությունների ներկայացուցիչները որոշեցին դիմել ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին Հայաստանի մանդատը ստանձնելու և հանդես գալու որպես միջնորդ նրա վերջնական սահմանների ճշտման հարցում: Կոնֆերանսը հաստատեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը, որը դրվեց Սևրի հաշտության պայմանագրի (!920 թ. օգոստոսի 10) հիմքում:

Պայմանագրի համաձայն՝ Թուրքիան ճանաչում էր Հայաստան պետության ինքնուրույն գոյությունը, հաստատում հայ ժողովրդի պատմական արդարացի հողային իրավունքները: «Սևրի պայմանագիրը, - գրում է Ա.Նասիբյանը, - Բրիտանիայի և նրա դաշնակիցների կողմից Հայաստանի ազատագրության վերաբերյալ տրված խոստումների իրագործումն էր թղթի վրա, անհիմն պատասխանը զայրացած հասարակական կարծիքին»:

Սակայն թուրքական կառավարությունը ոչ միայն չճանաչեց Սևրի հաշտության պայմանագիրը, այլև հմտորեն օգտագործեց այդ դիվանագիտական փաստաթղթի վերանայման շուրջը Անգլիայի ու Ֆրանսիայի միջև ծագած սուր հակասությունները:

Մերձավոր Արևելքում հետապնդելով շահադիտական նպատակներ, Լոզանի կոնֆերանսում Անգլիան քայլ առ քայլ տեղի էր տալիս թուրքական պատվիրակության համառության առջև՝ զոհելով Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավունքները: Ի վերջո, Լոզանի պայմանագրի վերջնական տեքստում այդպես էլ տեղ չգտնվեց ո՛չ հայերի և ո՛չ էլ Հայաստանի համար:

Ա.Նասիբյանի աշխատության «Հայասիրական շարժումը մինչև





1918-ը» և «Հայասերների հուսախաբությունը 1918-ից հետո» գլուխները, մեր կարծիքով, ամենակարևորն ու ամենաարժեքավորն են, քանի որ համաշխարհային և, մասնավորապես, անգլիական հասարակական կարծիքի դերը Հայկական հարցում դեռևս բավականին լավ ուսումնասիրված չէ: Ցավոք, առ այսօր որոշ ուսումնասիրություններում և հրապարակումներում սխալմամբ հավասարության նշան է դրվում իմպերիալիստական տերությունների քաղաքականության և այդ երկրների հասարակական կարծիքի միջև: Այդպիսի մոտեցումը թույլ չի տալիս ճշտագույնս ըմբռնելու պատմական իրադարձությունների էությունը:

Ա.Նասիբյանի աշխատության հիմնական նպատակներից մեկն է ցույց տալ Հայկական հարցի շուրջը տեղի ունեցող պայքարը բրիտանական հասարակական-քաղաքական շրջաններում: Գիրքը պատկերացում է տալիս կառավարության արտաքին քաղաքականության կուրսի վրա անգլիական հասարակական կարծիքի ունեցած ներգործության աստիճանի, անցյալ դարի վերջին, 20-րդ դ. սկզբին Անգլիայի հասարակայնության առաջադիմական և հետադիմական հոսանքների միջև ծավալված պայքարի մասին:

Ա.Նասիբյանը ցույց է տալիս այն մեծ աշխատանքը, որ տարվում էր անգլիական հասարակական-քաղաքական շրջաններում Հայկական հարցի շուրջը հասարակական կարծիք ստեղծելու, հայ ժողովրդի օգտին կառավարության վրա ճնշում գործադրելու, Օսմանյան կայսրությունում տուժած հայ բնակչությանը ֆինանսական և նյութական օգնություն կազմակերպելու ուղղությամբ: Պատերազմից հետո անգլիական առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանների ակտիվությունը Հայկական հարցում փոխարինվում է խորը հիասթափության զգացումով սեփական կառավարության արտաքին քաղաքականության, ամենազոր Ալբիոնի հանդեպ:

Իր աշխատությունը գրելիս Ա.Նասիբյանն օգտագործել է ոչ միայն դասական դարձած բազմապիսի և բազմալեզու գրականություն, այլև դեռևս չուսումնասիրված անգլիական արշրջանառության մեջ է դրվել դեռևս չուսումնասիրված անգլիական արխիվային փաստաթղթեր, ձեռագրեր, հուշեր, վավերագրեր, պաշտոնական թղթեր, նոթագրություններ, որոնք լրացուցիչ լույս են սփռում թուրքական պետականության հայահալած քաղաքականության վրա, պատ-

կերացում են տալիս արևմտաեվրոպական և, մասնավորապես, անգլիական դիվանագիտության գործողությունների մասին:

Թեև հեղինակի ոչ բոլոր գնահատականների հետ կարելի է համաձայնվել, այնուամենայնիվ, աշխատությունը մեծ ավանդ է Հայկական հարցում իմպերիալիստական տերությունների քաղաքականության, հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշման ուսումնասիրման գործում: Այդ մասին են վկայում նաև սփյուռքահայ մամուլում տպագրված գրախոսականները (Կ.Փափազյան՝ «Հայկական հարցին շուրջ նոր հրատարակություն մը», *Զարթոնք*, 1985, 9 փետրվարի. Ռ.Պողոսյան՝ «Անգլիան և Հայկական հարցը», *Զարթոնք*, 1985, 26 հունվարի. Ա.Պեյլերյան՝ «Բրիտանիան և Հայկական հարցը: 1915-23», *Լրաբեր*, 1986, 15 մարտի): Ի դեպ, պետք է նշել, որ սփյուռքահայ պատմաբանները դեռ մեծ անելիքներ ունեն արտասահմանյան արխիվներում, գրադարաններում պահվող Հայկական հարցի վերաբերյալ փաստաթղթերն ու նյութերը վերհանելու, պարզաբանելու և մեկնաբանելու ուղղությամբ: Այս առումով խիստ կարևոր է իմանալ թե՛ անցյալում և թե՛ մեր օրերում արևմտյան մամուլը, գիտական, հասարակական-քաղաքական շրջանները ինչպես են ընկալում հայ ժողովրդի քաղաքական պատմության հարցերը, ինչպիսի մոտեցում, դիրքորոշում ունեն սփյուռքահայության, Հայաստան-Սփյուռք փոխհարաբերության դրսևորումների նկատմամբ:

## 3. БЛИЖНЕВОСТОЧНЫЙ КРИЗИС 1895-97 ГГ., АРМЕНИЯ И ПОЛИТИКА США*

В середине последнего десятилетия 19-го столетия перед армянским населением Османской империи возникла угроза полного физического истребления. Правительство турецкого султана Абдул Гамида 2-го организовало резню армян: поводом послужили попытки народа к освобождению из-под многовекового османского ига. По мере того, как в течение 19-го века усилилась зависимость Турции от европейских держав, происходило резкое ухуд-

* Вопросы Востоковедения, Вып. 1-2, Ереван, 1983, с. 212-221.





шение положения угнетенных народов империи. В христианском населении султанское правительство усматривало опасность для будущего своей многонациональной страны.

В ближневосточной политике скрещивались интересы Англии и России, Франции и Германии, Австро-Венгрии и Италии. Каждая из этих держав руководствовалась своими интересами и не желала допускать политического или экономического преобладания соперников в Османской империи с тем, чтобы при возможном ее разделе приобрести "лакомый" для себя кусок. Резню же армянского населения 1894-96 гг. правительства европейских держав использовали для дипломатического нажима на Высокую Порту и вмешательства в ее внутренние дела.

Добившись на Берлинском конгрессе 1878 г. ослабления влияния России на проведение реформ в Западной Армении и обязавшись следить за улучшением условий жизни христиан, Великобритания ничего не предприняла для облегчения положения армянского населения Османской империи. Сменявшие друг друга кабинеты английского правительства использовали состояние армян как средство для нажима на султана, добиваясь от него новых политических и территориальных уступок.

В момент ближневосточного кризиса 1895-97 гг. Великобритания оказалась в трудном международном положении. Обострились как англо-германские, англо-русские, так и англо-французские отношения. Борьба шла за раздел мира в Африке, на Дальнем, Ближнем и Среднем Востоке. В расчеты английского правительства входили следующие основные задачи: укрепление британского владычества в Индии и во всей Азии, ослабление англорусских противоречий, обострение русско-германского антагонизма, ослабление русско-французского союза[1]. Османская империя служила для английского правительства той ареной, на которой дипломаты Лондона с успехом играли на противоречиях евро-

1 Бондаревский Г.А., Английская политика и международные отношения в бассейне Персидсого залива (конец 19-го века). М., 1968, с. 27-28.

пейских держав, осуществляя доктрину "блестящей изоляции" премьер-министра Роберта Солсбери.

Однако на ближневосточную политику Великобритании оказывали определенное влияние англо-американские противоречия, обострившиеся в середине 90-х гг. 19-го века[1]. Правительство США использовало избиение армянского населения как удобный случай для вмешательства в дела европейских держав и нападок на Великобританию.

Антиармянская политика султана Абдул Гамида 2-го вызывала беспокойство у американцев армянского происхождения. Издававшиеся в Нью-Йорке и Бостоне армянские газеты широко освещали происходившие в Турции события, бурно реагировали на организованные султанским правительством кровавые погромы армянского населения. Основывались первые армянские общества, созывались собрания и митинги в защиту прав многострадального народа. Все это, естественно, не могло не привлечь внимания правящих кругов США.

В очередном послании Конгрессу в декабре 1893 г. президент США Стивен Гровер Кливленд коснулся вопроса об американо-турецких отношениях по поводу учиненного фанатичной мусульманской чернью грабежа и поджога здания американского Анатолийского колледжа в Марзване. Президент указывал на "необыкновенное равнодушие", с которым отнеслось к этому событию султанское правительство. Он обвинил турецкие власти в соучастии, потребовал наказать преступников и возместить нанесенный

1 В конце 19-го столетия колониальные интересы Великобритании и США сталкивались во многих частях мира. Особенно ярко проявилось это соперничество двух держав в период англо-венесуэльского конфликта 1895-96 гг., когда Великобритания захватила спорную территорию между Венесуэлой и Британской Гвианой. Используя в качестве орудия экспансионизма доктрину Монро, правительство США выступило в роли посредника в конфликте. В ноте правительства Великобритании от 20-го июля 1895 г. государственный секретарь США Ричард Олни заявил, что захват какой-либо части венесуэльской территории Англией является нарушением доктрины Монро и пригрозил войной.



ими ущерб[1]. Президент поставил Конгресс в известность, что он уже дал указание своему представителю в Турции Александру Террелу обратиться к Высокой Порте с требованием относиться с уважением к армянам с американским гражданством и не подвергать их "излишним строгостям"[2].

Вместе с тем президент Кливленд обвинил армян-эмигрантов в том, что они используют американское гражданство для беспрепятственного въезда в Османскую империю и организации борьбы против султанской власти. Он ознакомил Конгресс с решением Высокой Порты о высылке из страны армян, принявших гражданство США с 1868 г[3]. В связи с этим Кливленд отрицательно отозвался о деятельности армянской газеты "*Հայր*", которая якобы призывала армян Западной Армении к восстанию, вызывая раздражение султанского правительства[4]. В ответ на обвинения президента редактор газеты, известный общественно-политический деятель Смбат Габриелян написал ему письмо (1893, 12 декабря), в котором доказывал, что действия армян направлены не против султанского правительства, а преследуют цель улучшить положение армянского населения, провести в Западной Армении необходимые реформы. Редактор отрицал, что на страницах газеты когда-либо публиковались призывы к восстанию. По его убеждению, совместные дипломатические акции держав – единственный путь для улучшения состояния армянского народа. Он просил президента оказать содействие в деле осуществления 61-й статьи Берлинского договора, так как Высокая Порта старалась всеми силами воспрепятствовать "стараниям армян" добиться обещанных реформ[5]. В доказательство того, что армяне Османской империи страдали от деспотического режима султана, С.Габриелян ссылался на американский журнал "*Outlook*" (1893, 28 октября), в кото-

1 *Հայր* /Նյու Յորք/, 1893, 15 դեկտեմբերի, էջ 357:
2 Там же, с. 360.
3 Там же.
4 Там же, с. 357.
5 Там же, с. 361-362.

ром были опубликованы путевые заметки американца Ф.Кларка. В них были приведены многочисленные факты и свидетельства о жестоком обращении султанских властей с подданными армянского происхождения[1].

Ни президент Кливленд, ни государственный секретарь Олни не верили в достоверность сведений о Сасунской резне, полученных от корреспондентов газет и дипломата Террела. Так, Олни заявлял, что "сообщения печати о резне армян намного преувеличены"[2], а президент утверждал, что правительство США не подписывало Берлинского договора и поэтому не имеет права на вмешательство в дела Османской империи. Вместе с тем правительство США заявляло, что будет участвовать во всех совместных действиях европейских держав в Армянском вопросе. 3-го декабря 1894 г. Сенат США вынес резолюцию, в которой предлагалось совместно с европейскими державами обратиться к султану с требованием немедленно прекратить кровавое побоище[3]. Американский миссионер Эдвин Блисс с гордостью отмечал, что когда султанское правительство пригласило американского представителя посетить комиссию по расследованию событий в Сасуне, президент Кливленд якобы сам склонялся осуществить эту миссию[4]. Действия правительства США вызвали недовольство правящих кругов Великобритании и Франции. В те дни "*Times*" называла политику США в Армянском вопросе "загадочной"[5].

Согласно новой империалистической доктрине Олни, правительство США могло вмешаться в дела Европы лишь в том случае, если, во-первых, европейские державы станут открыто пренебрегать взаимными обязательствами и, во-вторых, если христианское население любой части мира будет лишено должного за-

1 Там же, с. 363.
2 Gordon L.G., American Relations with Turkey (1830-1930), Philadelphia, 1932, p. 26.
3 Ibid, p. 24.
4 Bliss E., Turkey and Armenian Atrocities, Philadelphia, 1896, pp. 384-385.
5 *Նոր Դար* /Թիֆլիս/, 1895, 13 հունվարի:





конного покровительства[1]. В своем послании Конгрессу в декабре 1895 г. Кливленд обрушился на правительство Великобритании с грозными обвинениями в связи с англо-венесуэльским конфликтом и Армянским вопросом. Он называл Великобританию главной виновницей трагедии армянского народа, ответственной за "кровавые оргии" Абдул Гамида. Оправдывая равнодушие правительства Великобритании в Армянском вопросе, английский журнал "*Spectator*" писал, что послание президента Конгрессу сыграло весьма отрицательную роль в судьбе армянского населения Османской империи. По мнению журнала, оно "...явилось смертным приговором для армян, так как Великобритания, которая должна была явиться главным их спасителем, оказалась связанной по рукам и ногам"[2].

Угроза со стороны США в связи с обострением англо-американских противоречий в Центральной Америке препятствовала активизации восточной политики Великобритании. В случае выхода Англии из европейского концерта держав или же в случае возникновения войны в Европе, враждебное отношение со стороны США затрудняло положение британского правительства и ставило под угрозу его колониальные владения. Как писал "*Spectator*", султан отлично понимал, что обострившиеся англо-американские противоречия свели к нулю возможную угрозу его империи, которая исходила со стороны Великобритании. С одной стороны, журнал считал, что в данный момент лишь США могли оказать действенное давление на Высокую Порту, так как не были обременены "европейскими противоречиями"[3], а с другой стороны, не верил, что правительство США протянет руку помощи "...несчастным людям, которые лишились крова и влачат жалкое существование в горах Армении"[4]. Это мнение поддерживал и

1 Godkin E.L., The Armenian Resolutions. – *The Nation*, 1896 vol. 62, January 30, p. 93.
2 The Death Warrant of Armenia. – *The Spectator*, 1895, vol. 75, December 21, pp. 885-886.
3 Ibid, p. 886.
4 Americans and Armenians. – *The Spectator*, 1896 vol. 76, February 1, pp. 156-157.

нью-йоркский журнал *"Nation"*, когда писал, что защита прав христианского населения Османской империи неосуществима со стороны моря, так как американский флот может принять участие в бомбардировке Константинополя лишь при содействии флотов европейских держав[1].

В правительственных и общественных кругах США придавалось большое значение Армянскому вопросу, как средству для устрашения султана и усиления американского влияния среди христианского населения Османской империи. В Белом доме и Конгрессе проходило больше обсуждений по Армянскому вопросу, чем по вопросу о Венесуэле[2]. В своем официальном заявлении президенту США сенатор Джордж Фрисби Гор требовал определить главную линию правительства для наказания лиц, причастных к организации всеобщей резни армян, назвав их "разбойниками" и "врагами человечества"[3].

4-го декабря 1895 г., когда стало известно, что от зверств турецких властей пострадали также американские миссионеры, Сенат принял резолюцию, которая требовала от Высокой Порты немедленной компенсации за нанесенный ущерб[4]. В ход были пущены уже и угроза, и военные корабли[5], и дипломатия. В конце концов правительство США получило от Высокой Порты компенсацию на 95 тыс. долларов[6].

Резня армянского населения Османской империи в 1894-96 гг. вызвала волну протеста в США. Передовицы газет *"New York Herald"*, *"New York Times"*, *"Christian Register"*, *"Daily News"*, *"Tribune"*, многочисленные статьи, материалы и письма общественно-политических деятелей США, опубликованные на страни-

1 Godkin E.L., Op.cit., p. 93.
2 Ibid, p. 93.
3 Rational Sympathy. – *The Nation*, 1895, vol. 61, p. 384.
4 Gordon L.J., Op.cit., p. 26.
5 К берегам Турции был послан военный корабль "Кентукки".
6 Шпилькова В.И., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920), М., 1960, с. 29.





цах американских журналов, свидетельствовали о сильном возмущении американской общественности антиармянской политикой султанского правительства.

С целью оказания материальной и финансовой помощи армянскому населению Османской империи в США были основаны армяно-американские благотворительные организации и комитеты. Эти организации содействовали проведению в стране многочисленных митингов и собраний по Армянскому вопросу. Так, 18-го декабря 1894 г. в Нью-Йорке, в Чикринг-холле был проведен многолюдный митинг протеста по поводу резни в Сасуне. Главным оратором на митинге был известный американский востоковед Уильям Уорд, который обвинил султанское правительство в преднамеренной организации резни. Другой оратор – Эдвин Блисс, подробно рассказал о кровавых событиях в Битлисе, Ване, Мосуле и потребовал от правительства США немедленного вмешательства и защиты армян от ударов "турецкого ятагана"[1].

Большую работу в стране проводило бостонское общество "Друзья Армении" ("Friends of Armenia"). В конце 1894 г. представители этой организации Самюэль Барроу (редактор еженедельника *"Christian Register"*), Генри Блэкуэлл (редактор издания *"Woman's Journal"*) и др. посетили госсекретаря Уолтера Грешама и просили содействия правительства в Армянском вопросе. Госсекретарь объяснял позицию правительства отсутствием американской подписи под Берлинским договором 1878 г[2]. Та же депутация была принята в Белом Доме президентом Кливлендом. Ему была выражена благодарность за симпатию, проявленную им в отношении армян[3].

24-го февраля 1895 г. состоялось собрание "Друзей Армении", которое избрало председателем общества знаменитую поэтессу Джулию Уорд Хау. Заместителями председателя были избраны Алиса Блэкуэлл, Генри Блэкуэлл, профессор Пибоди и поэтесса Алиса Блэкуэлл, Генри Блэкуэлл, профессор Пибоди и

1 *Հայր*, 1894, 30 նոյեմբերի, էջ 236-238:
2 *Նոր Դար*, 1895, 6 հունվարի:
3 *Նոր Դար*, 1895, 13 հունվարի:

Генри Ален. Секретарем общества являлся известный общественный деятель М.Гюлесян[1].

Летом 1895 г. "Друзья Армении" объединились с двумя другими обществами и таким образом была основана новая организация "Союз друзей Армении" ("United Friends of Armenia"). Благодаря деятельности этой организации по всей стране проводились митинги протеста против антинародной политики султанского правительства, равнодушной позиции держав в Армянском вопросе[2].

В июне 1895 г. в Нью-Йорке была основана "Патриотическая федерация армян", председателем которой являлся Смбат Габриелян. Целью этой организации было "объединение всех усилий" для организации борьбы за освобождение Западной Армении из-под султанского ига при "содействии Европы"[3].

Большую работу проделал основанный в 1895 г. армянскими студентами Бостона клуб, который ставил перед собой задачу ознакомить американскую общественность с прошлым и настоящим армянского народа[4].

"Американское общество Красного Креста" ("Red Cross Society"), "Армянская ассоциация помощи" ("Armenian Relief Fund") и "Евангелийский союз" ("Evangelical Alliance") объединили свои усилия для сбора пожертвований в помощь армянскому населению Османской империи. На состоявшемся в одной из вашингтонских церквей митинге, президент Национального общества Красного Креста Клара Бартон говорила о необходимости ускорить сбор пожертвований. Нью-йоркский журнал "*Outlook*" также призывал своих читателей жертвовать в помощь угнетенному народу. Чтобы послужить примером, редакция журнала пожертвовала 250 долларов[5].

1 *Նոր Դար*, 1895, 11 մարտի:
2 *Նոր Դար*, 1895, 3 հունիսի:
3 *Հայք*, 1895, 15 մարտի:
4 *Նոր Դար*, 1895, 8 ապրիլի:
5 Aid for Armenia. – *The Outlook*, 1895, vol. 53, p. 93.





В резолюции, принятой по предложению миссионера Сайруса Гамлина на бостонском митинге 1895 г., от правительства США требовалось поддержать американскую общественность в деле оказания материальной поддержки армянскому населению Османской империи[1].

В нью-йоркском журнале "*Review of Reviews*" от 1896 г. была помещена статья американской женщины-миссионера Грейс Кимбалл, которая с благодарностью писала о средствах, полученных ею от комитетов помощи для голодающего армянского населения Вана. Всего Кимбалл получила 12 тыс. 136 долларов[2].

Цели активной деятельности американских миссионеров не ограничивались лишь поддержкой и покровительством христиан Османской империи. Американское миссионерство проводило также работу по обращению христианского населения Османской империи в протестантскую веру и его соответствующему воспитанию. Активизация миссионерской деятельности была связана также с борьбой колониальных держав за раздел и передел мира. Миссионерство являлось проводником политики правительства США и подготавливало почву для утверждения в будущем сильного американского влияния в разваливающейся Османской империи. Разговаривая с американским миссионером Памли, вице-консул России в Ризе А.И. Гиппиус отмечал: "По моему мнению, вся эта усиленная армянская агитация последнего времени способна лишь погубить всю будущность армян. Для их же собственной пользы следовало им поступать наоборот: сидеть смирно, дружить с турками, стараться размножаться, развиваться умственно и нравственно, богатеть. Поставленные освобождением от воинской повинности в более благоприятные условия, нежели мусульмане, армяне через несколько десятков лет перетянули бы центр тяжести фактического значения на свою сторону, и тогда силою вещей

1 *Նոր Դար*, 1895, 22 փետրվարի:
2 An American Heroine in the Heart of Armenia. – *The Review of Reviews*, 1896, vol. 13, p. 449.

настал бы туркам конец". К большому удивлению Гиппиуса, Памли ответил: "Знаете ли, что в постепенной подготовке этого переворота и заключается наша главная задача?!"

В конце 19-го столетия главными учебными заведениями США являлись Роберт колледж (Константинополь), Центральный турецкий колледж (Айнтаб), Евфратский колледж (Харберд) и Анатолийский колледж (Марзван). По свидетельству американского журналиста Лимана Эббота, американские миссионеры в Османской империи имели 621 учебное заведение, на содержание которых правительство США ежегодно тратило полмиллиона долларов[2].

Результатом активной миссионерской деятельности можно считать эмиграцию в Соединенные Штаты бежавших от гонений султанского правительства армян. В течение 1891-98 гг. из Османской империи в США эмигрировало приблизительно 12 тыс. 500 армян[3].

Несмотря на активные проармянские выступления американской общественности, правящие круги США отнеслись с равнодушием к трагедии армян в 90-х гг. 19-го века. Послания и обращения правительства США по поводу армянских погромов носили формальный характер. Американские правящие круги использовали Армянский вопрос для обеспечения своих интересов.

1 ЦГИА Армении, Фонд Коллекция копий и выписок документов, опись 1, дело 339, часть 2, с. 117-118.
2 Abbott L., Armenian Question. – *The Outlook*, 1896, vol. 54, p. 1037.
3 Mirak R., Armenian Emigration to the United States to 1915. – *Journal of Armenian Studies*, vol. 1, 1975, Autumn, pp. 33-34.





## 4. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ*

Համահեղինակ՝ Արտյոմ Օհանջանյան

19-րդ դարի վերջին Ավստրո-Հունգարիան Օսմանյան կայսրության նկատմամբ վարում էր նրա ամբողջականության պահպանման քաղաքականություն, քանի որ փլուզված Թուրքիայի տեղում սլավոնական անկախ պետությունների ստեղծումը կարող էր սպառնալ ավստրո-հունգարական բազմազգ կայսրության գոյությանը: Դեռևս 18-րդ դարի կեսին ավստրիական կայսրուհի Մարիա Թերեզան կողմնակից էր Թուրքիայի հետ Ավստրիայի կայուն ու տևական դաշինքին՝ իր կայսրությունն ու Եվրոպան սլավոնական ազդեցությունից զերծ պահելու համար: Բալկանները ամբողջապես իր քաղաքական ազդեցությանը ենթարկելու Ավստրո-Հունգարիայի քաղաքականությանը խոչընդոտում էր Ռուսաստանը, որը նրա մրցակիցն էր այդ շրջանում: Ավստրո-Հունգարիան երկյուղում էր ինչպես Օսմանյան կայսրության ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներից, այնպես էլ իր սահմանների վրա սլավոնական խոշոր պետության ստեղծումից: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքները (որոնք համընկնում էին արևմտահայերի կենսական շահերի հետ) մեծ անհանգստություն առաջ բերեցին ավստրիական կառավարությունում: Ռուսական ազդեցության չեզոքացումն ու Օսմանյան կայսրության հնարավոր քայքայումից առավելագույն օգուտներ քաղելը դարձան ավստրո-հունգարական դիվանագիտության գլխավոր հոգսն ու գործողությունների ծրագիրը: 1878-ի փետրվարի 5-ին վարչապետ Դյուլա Անդրաշին հայտագիր հղեց 1856 թ. Փարիզի և 1871 թ. Լոնդոնի կոնվենցիան ստորագրած պետություններին՝ առաջարկելով Վիեննայում եվրոպական համաժողով հրավիրել՝ քննարկելու ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ծագած վիճելի հարցերը: Անդրաշին համոզված էր, որ Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի տարած հաղթանակի արդյունքները նվազեցնելու համար անհրաժեշտ է հակառուսական անգլո-ավստրիական համաձայնու-

* Հայկական Հարց. Հանրագիտարան, Երևան. Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1992 /ռուս./, 1996, էջ 46-47:

թյուն: Եվ 1878 թ. Բեռլինի կոնգրեսում Ավստրո-Հունգարիայի դիրքորոշումը նպաստեց 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով փոխարինելուն, ինչը խիստ աննպաստ եղավ հայերի համար: Հետագայում Ավստրո-Հունգարիայի կառավարությունը Մեծ Բրիտանիայի և եվրոպական մյուս տերությունների հետ համատեղ բազմիցս հանդես եկավ՝ Բարձր Դռնից պահանջելով իրագործել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու իր ստանձնած պարտավորությունները: Թուրքիայում ավստրո-հունգարական դեսպան Հենրիխ Կալիցեն ստորագրեց սուլթանական կառավարությանն ուղղված տերությունների՝ 1880 թ. հուլիսի 2-ի և 11-ի համատեղ նոտաները: 1895-97 թթ. մերձավորարևելյան ճգնաժամի օրերին ավստրո-հունգարական կառավարությունն ամեն կերպ պաշտպանում էր Գերմանիայի քաղաքականությունը՝ միաժամանակ ջանալով համերաշխություն ցույց տալ Մեծ Բրիտանիայի գործողություններին Հայկական հարցում: 1895 թ. Ավստրո-Հունգարիան իր դժգոհությունը հայտնեց Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի միակողմանի քայլերի առթիվ, մասնավորապես՝ Բարձր Դռանը ներկայացված Արևմտյան Հայաստանի բարենորոգումների նախագծի կապակցությամբ: Արտգործնախարար կոմս Ագենոր Գոլուխովսկին անգլիական կառավարությանն առաջարկեց այդ հարցին մասնակից դարձնել բոլոր տերություններին, ստեղծել վեց մեծ տերությունների հանձնաժողով, որը կհսկեր բարենորոգումների իրագործումն Արևմտյան Հայաստանում: 1895 թ. հոկտեմբերի 2-ին Կոստանդնուպոլսի ավստրո-հունգարական դեսպանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ տերությունների դեսպանների հանդիպում, որի ժամանակ որոշվեց բողոքի նոտա ներկայացնել Բարձր Դռանը՝ մայրաքաղաքի հայ բնակչության ջարդերի կապակցությամբ: Ա.Գոլուխովսկին մեծ տերությունների Կոստանդնուպոլսի դեսպաններին հղեց հեռագրեր, որոնցով պահանջում էր վճռական միջոցների դիմել սուլթանական կառավարության նկատմամբ, քանի որ «Օսմանյան կայսրության քրիստոնյաների վիճակը աղետալի է»: Ավստրո-Հունգարիան մասնակցեց նաև մեծ տերությունների կողմից թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու համար Կոստանդնուպոլիս ռազմանավեր ուղարկելու համատեղ





քայլերին: Չնայած Գոլուխովսկին «դժբախտությունը կանխելու», հայերին տառապանքներից փրկելու կոչեր էր անում, միաժամանակ գտնում էր, որ Հայկական հարցի լուծումը պետք է լիովին վստահել սուլթանին: 1897 թ. դեկտեմբերի 17-ին նա տերություններին խորհուրդ էր տալիս սպասել, սուլթանին հնարավորություն տալ՝ «կարգուկանոնը վերականգնելու» իր խոստումը կատարելու համար, աշխատում էր ամեն կերպ չսրել ճգնաժամը, որը միաժամանակ կարող էր շեղել Ռուսաստանի ուշադրությունը Հեռավոր Արևելքից: Ավստրո-հունգարական կառավարությունն ավելի շատ երկյուղում էր «բարենորոգումների կրակից», որը տարածվելով կարող էր սասանել կամ հիմնովին կործանել թուրքական տիրապետության խարխուլ շենքը:

1912-14 թթ. հայկական բարենորոգումների հարցի քննարկման ժամանակ Ավստրո-Հունգարիան լիովին պաշտպանում էր իր դաշնակցին՝ Գերմանիային: Ա.Մանդելշտամի ռուսական ծրագիրը Կոստանդնուպոլսի դեսպաններին ներկայացնելուց հետո ավստրո-հունգարական կառավարությունն ամեն գնով խոչընդոտում էր բարենորոգումների հարցի քննարկմանը: Միաժամանակ նա Վիեննայի մամուլում քարոզչական լայն աշխատանք էր տանում Արևմտյան Հայաստանում ռուսների «զավթողական ծրագրերի» դեմ՝ բազմիցս հայտարարելով, թե Ռուսաստանը սպառնում է Թուրքիայի ամբողջականությանը: Կոստանդնուպոլսի դեսպանաժողովի առաջին իսկ նիստում (1913 թ. հունիս) ավստրիական դեսպան Ի.Պալավիչինին, գերմանական դեսպան Հ.Վանգենհայմի աջակցությամբ, նպատակահարմար դիտեց քննարկել նաև բարենորոգումների թուրքական նախագիծը: Սակայն ռուսական կողմը դժգոհեց այդ առաջարկից և հաջորդ նիստում, հունիսի 24-ին, ավստրիական ներկայացուցիչը հանդես եկավ ռուսական նախագծի հիմնական դրույթների խիստ քննադատությամբ և մերժեց Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից (վիլայեթներից) մի ամբողջական հայկական մարզ ստեղծելու գաղափարը, որը, իբրև թե, «ոտնահարում էր սուլթանի իրավունքները»: Չնայած ավստրիական պաշտոնական շրջանների նման դիրքորոշմանը Հայկական հարցում, ավստրո-հունգարական հասարակայնության որոշակի մասը դատապարտում էր կառավարության թուրքամետ քաղաքականությունը, պահանջում պաշտպանել Արևմտյան Հա-

յաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցը: 1913 թ. նոյեմբերին Փարիզում տեղի ունեցած հայապաշտպան համաժողովում այս ոգով հանդես եկավ ավստրիական հասարակայնության ներկայացուցիչ Անտոն Հերմանը: 1914-18 թթ. առաջին համաշխարհային պատերազմում լինելով Թուրքիայի դաշնակիցը՝ Ավստրո-Հունգարիան անտարբեր գտնվեց հայերի զանգվածային ջարդերի և տեղահանությունների հանդեպ: 1915 թ. գարնանային ամիսների ավստրո-հունգարական դիվանագետների զեկուցագրերում հայերի նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը դիտվում էր որպես պատասխան քայլ սկված «համահայկական ապստամբության», «հայկական վտանգի», «հայերի դավաճանության»: Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայերի ձերբակալությունների առթիվ ավստրիական դեսպանությունը (1915 թ. ապրիլի 29-ին) Վիեննային տեղեկացնում էր, որ «Կոստանդնուպոլիսը վերջնականապես մաքրվել է կասկածելի հայերից»: Ավստրիական կառավարությունը երբեք հանդես չեկավ երիտթուրքական կառավարության չարագործությունների դատապարտմամբ: Եվ միայն 1915 թ. մայիսի 2-ին, Թուրքիայում ամերիկյան դեսպան Հ.Մորգենթաուի բազմակի խնդրանքներից ու պահանջներից հետո, Պալավիչինին «բարեբախտաբար» Թալեաթին նախազգուշացրեց հայ կանանց ու երեխաների «հալածանքների» մասին, փաստ, որը, նրա կարծիքով, կարող էին «օգտագործել» Թուրքիայի թշնամիները: 1915 թ. հունիսի 24-ին Ավստրո-Հունգարիայի արտգործնախարարությունը գրում էր, թե «թուրքերի բիրտ քաղաքականության հետևանքով հայերն ընկան ռուսների ձեռքը»: Թեև 1915 թ. վերջին ավստրո-հունգարական դիվանագետների հաղորդագրություններում երևաց հայ ժողովրդի «բնաջնջում» արտահայտությունը, իսկ 1916 թ. մարտին Պալավիչինին հայերի ջարդերն ու տեղահանությունը բնորոշեց որպես «թուրքական կառավարության խայտառակություն», ոչ դեսպանությունը, ոչ էլ կառավարությունը չդիմեցին կոնկրետ միջոցների՝ հայերի ողբերգությունը կանխելու և Թուրքիայի տարաբախտ հայ բնակչությանն օգնելու համար:

1918 թ. փետրվարին Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի աջակցությամբ ու պաշտպանությամբ, Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա: Մարտի 3-ին Ավստրո-Հունգարիան Գերմանիայի և Թուրքիայի





հետ ստորագրեց 1918 թ. Բրեստի հաշտության պայմանագիրը, որի 4-րդ հոդվածի համաձայն, Ռուսաստանը պետք է «մաքրվեր Արևելյան Անատոլիայի գավառների դատարկումն ու կանոնավոր հանձնումը Թուրքիային»: Հայաստանի Հանրապետության՝ ավստրիական կառավարությանը ռազմական օգնության խնդրանքին (1918 թ. օգոստոսի 11) ի պատասխան Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական ներկայացուցիչը հայկական պատվիրակությանը հայտնեց, որ պատրաստ է օգնել Հայաստանին և կարող է լեհերից բաղկացած երկու ավստրիական գումարտակ ուղարկել Երևան: Այդ օրերին Թուրքիայում ավստրիական ներկայացուցիչները մշտապես շոշափում էին Հայաստանի նկատմամբ ավստրո-հունգարական խնամակալություն հաստատելու գաղափարը՝ վկայակոչելով այն փաստը, թե Ավստրո-Հունգարիան միակ պետությունն է, որ բարեկամական հարաբերություններ է պահպանում Թուրքիայի հետ: Հավատացնում էին, թե Ավստրիան լավ է վերաբերվում հայերին՝ շնորհիվ Մխիթարյան միաբանության, և որ չի առարկի, եթե իր էրցհերցոգներից մեկը նստի հայկական գահին: 1918 թ. օգոստոսի 13-ին Վիեննայում գտնվող հայկական պատվիրակությանը հայտնվեց, որ կուղարկվի միայն ավստրիական հատուկ առաքելություն՝ զինվորական մեկ հարյուրյակի ուղեկցությամբ, իսկ ավելի մեծաքանակ զորամասեր ուղարկելու հարցը օրակարգից հանվում է:

Ավստրո-Հունգարիայի արտգործնախարարի հետ հայկական պատվիրակության անդամ Համո Օհանջանյանի հանդիպման ժամանակ նախարարը պատրաստակամություն հայտնեց իր կառավարությանն առընթեր ունենալ հայկական ներկայացուցչություն և արտահայտվեց հօգուտ Հայաստանի անկախության պահպանման ու գաղթականների հայրենադարձման: Եվ, չնայած նման հայտարարություններին, ավստրիական կառավարությունը գործուն քայլեր չձեռնարկեց՝ կանխելու թուրքական բանակի կողմից հայկական տարածքների զավթումն ու հայ բնակչության ջարդերը:

*Գ-րկ. Կիրակոսյան Ա.Ջ., Ավստրո-հունգարական քաղաքականությունը Հայկական հարցում (1895-1897), Լրաբեր հասարակական գիտությունների, 1984, Հ. 1; Степанян С.С., Армения в политике империалистической Гер-*

*манци (конец XIX – начало XX века), Е., 1975; The Armenian Genocide, Vol. 2, Munchen, 1988; Ohandjanian A., Ostereich-Ungarn und Armenien 1914-1918, Wien, 1988.*

## 4. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ (1895-97 թթ.)*

19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունը դարձել էր մեծ տերությունների միջև ծավալված մրցակցային սուր պայքարի ասպարեզ: Գտնվելով օտարերկրյա կապիտալի ֆինանսական հսկողության տակ՝ այն վերածվեց կիսագաղութի, մեծ տերությունների ագրարային հումքային կցորդի: Այդուհանդերձ մեծ տերությունների մրցակցությունը ստեղծում էր որոշակի հավասարակշռություն, որը խոչընդոտում էր նրա վերջնական վերածումը որևէ տերության գաղութի: Սուլթանի իշխանությունը շարունակվում էր, իսկ եվրոպական կառավարություններն առաջվա նման կայսրության շահագործումն իրականացնում էին միևնույն տարածքային ամբողջականության ստատուս քվոյի սկզբունքով: Սուլթանական ինքնակալության հետադիմական ներքին քաղաքականությունից առավել տուժում էին ճնշված ոչ թուրք ժողովուրդները: Իրենց ծավալապաշտական ծրագրերին համապատասխան օգտագործելով այդ ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը և խուսափելով հանդես գալով նրանց ճնշումներին կիրառված ջարդերն ու հալածանքները դատապարտողի դերում, արևմտաեվրոպական տերությունները գործնականում ոչ միայն չէին բարելավում, այլև վատթարացնում էին նրանց վիճակը: Այսպես, երբ 1894-96 թթ. սուլթանական կառավարությունը հրահրեց կայսրության հայ բնակչության զանգվածային կոտորած, մեծ տերությունները հանդես եկան լոկ դիտողի դերում:

Ներկա հոդվածում մենք կփորձենք վերլուծել Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը Հայկական հարցում:

Ավստրո-հունգարական կառավարությունը ձգտում էր իր լիակատար

* Հայաստանի Գիտությունների ակադեմիայի *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1984, հ. 1, էջ 28-31; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1984, 1 սեպտեմբերի:





քաղաքական ազդեցությունը տարածել Բալկանյան թերակղզու վրա: Այդ ճանապարհին նա պետք է հաղթահարեր նախ և առաջ Ռուսաստանի գործոնը: Հարաբերական կայունությունն ու անդորրը տարածաշրջանում ապահովվում էր Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի խաչաձևվող շահերի միջոցով: Բալկաններում ռուսական ազդեցության ուժեղացման դեմ հանդես եկող Ավստրո-Հունգարիան 19-րդ դարի վերջին զուսպ կուրսով էր վերաբերվում Ռուսաստանի գործուն քաղաքականությանը Հեռավոր Արևելքում, երբեք էլ չհրաժարվելով Օսմանյան կայսրությունից որևէ յուղալի պատառ պոկելու մտքից: Դեռևս 1878 թ. ավստրիական թագաժառանգ Ռուդոլֆը հայտարարում էր, որ Ավստրո-Հունգարիան թույլ կտա Ռուսաստանին գրավելու Կոստանդնուպոլիսը, եթե միաժամանակ Հաբսբուրգների դրոշը ծածանվի Սալոնիկի վրա[1]: Բնութագրելով իր կառավարության արևելյան քաղաքականությունը, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար կոմս Գոլուխովսկին 1896 թ. հայտարարում էր, թե իրը այն հանգում է Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունն ու ամբողջականությունը հարգելուն, օտարերկրյա ազդեցությունից Բալկանյան թերակղզու երկրների անկախ զարգացումը պահպանելուն[2]:

1895-97 թթ. մերձավորարևելյան ճգնաժամի պահին Ավստրո-Հունգարիայի կառավարությունը մի քանի անգամ փորձել էր ճշտել, թե ինչ դիրք կգրավի Գերմանիան՝ Ռուսաստանի կողմից Կոստանդնուպոլիսը գրավելու դեպքում: Ի պատասխան Ավստրո-Հունգարիայի հարցումներին, 1896 թ. հունվարին Վիեննայում գերմանական դեսպան Էյլենբերգը հայտարարեց, որ համաձայն 1879 թ. երկու երկրների միջև կնքված դաշնակցային պայմանագրի՝ Գերմանիան միայն այն դեպքում կմիջամտի իրադարձություններին, եթե Ռուսաստանը հարձակվի Ավստրո-Հունգարիայի վրա[3]: Այդ իսկ պատճառով ավստրո-հունգարական կառավարությունը սկսեց փորձեր կատարել մերձենալու Մեծ Բրիտանիա-

1 Bliss E.M., Turkey and the Armenian Atrocities, Philadelphia, 1896, pp. 535-536; В. Майский, Германия и Ближний Восток, *Русские записки*, 1916, т. 1, с. 200.

2 *Вестник Европы*, 1896, т. 4, кн. 7, с. 430-431; *Русский Вестник*, 1896, т. 245, с. 347-348.

3 Ротштейн Ф.А., Международные отношения в конце XIX века, М.-Л., 1960, с. 365.

յի հետ՝ ընդդեմ Բալկաններում իր գլխավոր հակառակորդ Ռուսաստանի: Սակայն անգլո-գերմանական հարաբերությունների վատթարացման պատճառով ավստրիական կառավարությունը մերժում է ստանում ինչպես Անգլիայի լիբերալ, այնպես էլ նրան փոխարինած պահպանողական կառավարությունից, չնայած լորդ Սոլսբերին Ավստրո-Հունգարիան համարում էր Անգլիայի միակ իրական դաշնակիցը Եվրոպայում[1]: Տեսնելով, որ Բալկանների հարցում ո՛չ Գերմանիայի և ո՛չ էլ Անգլիայի հետ համաձայնության գալ չհաջողվեց, Ավստրո-Հունգարիան 1897 թ. համաձայնագիր կնքեց Ռուսաստանի հետ, որով բացառվում էր կողմերից որևէ մեկի ամեն մի հարձակողական գործողություն Բալկաններում[2]:

Հայկական հարցում ավստրիական կառավարությունը հանդես էր գալիս Անգլիայի հետ համերաշխության նշանաբանով: Ավստրիայում Անգլիայի դեսպան Մոնսոնը 1895 թ. նոյեմբերի 9-ին լորդ Սոլսբերիին հաղորդում է կոմս Գոլուխովսկու հետ իր հանդիպման մասին, որը նրան հայտնել էր Ավստրո-Հունգարիայի ցանկությունը և պատրաստակամությունը՝ Անգլիայի հետ համագործակցելու Հայկական հարցում՝ «չափազանց անհետաձգելի գործում»[3]: Ավստրո-հունգարական մամուլը և հասարակական կարծիքը քննադատում էին օսմանյան ներքին կյանքի խոցերը, շատախոսում քրիստոնյաների իրավունքների պաշտպանության մասին, սակայն գործնականում կառավարությունը փաստորեն ոչինչ չէր անում սուլթանի հակահայկական գործողությունները կանխելու համար: Սկզբնական շրջանում մի պահ կարող էր թվալ, թե Ավստրո-Հունգարիան խորքից անցնում է կոնկրետ գործողությունների: Դրա ար-

1 Jefferson M.M., Lord Salisbury and the Eastern Question. - *The Slavonic and East European Review*, 1960, December, p. 51.

2 Сборник договоров России с другими государствами (1856-1917). М, 1952, с. 303-304. Այդ առիթով Վ.Խվոստովը գրել է. «Վիեննայում և Բուդապեշտում թանկ էին գնահատում Լոնդոնի հետ ունեցած համագործակցությունը, սակայն կառավարությունը հարկադրված էր պայմանավորվել Ռուսաստանի հետ: 1894-97 թթ. Մերձավորարևելյան ճգնաժամի ընթացքում Բալկաններում status quo-ն պահպանելու խնդիրը հեշտանում էր միացյալ ջանքերի շնորհիվ» (История дипломатии, т. 2, М., 1963, с. 349):

3 Blue Book, Turkey, No. 2 (1896), London, 1896, p. 38.





տահայտությունը եղավ հետևյալ քայլը. 1895 թ. Կոստանդնուպոլսի հայ բնակչության սարսափելի ջարդից հետո Ավստրիան հանդես եկավ սեփական առաջարկով՝ հարկադրական միջոցների դիմելու համար: Ըստ Մոնսոնի հաղորդագրության, կոմս Գոլուխովսկին չափազանց անհանգստացած էր Կ.Պոլսից և Տրապիզոնից ստացված հեռագրերից, որտեղ նկարագրվում էր մահմեդականների կատաղի մոլեռանդությունը հայ բնակչության նկատմամբ: Կոմս Գոլուխովսկին Մոնսոնին հայտնել էր, որ հեռագրեր է ղրկել Օսմանյան կայսրությունում մեծ տերությունների դեսպաններին՝ պահանջելով վճռական գործողությունների դիմել սուլթանական կառավարության նկատմամբ: Արտաքին գործերի նախարարը խոստովանել էր, որ Ավստրո-Հունգարիան իրեն հեռու էր պահում այդ հարցից մինչև որ աղետը չընդունեց լուրջ բնույթ[1]: Հոկտեմբերի 2-ին Կ.Պոլսում ավստրո-հունգարական դեսպանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ռուսաստանի, Անգլիայի, Գերմանիայի դեսպանների հանդիպում, որտեղ որոշվեց Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարին բողոք ներկայացնել մայրաքաղաքում տիրող իրավիճակի համար[2]: Ավստրո-Հունգարիան մասնակցեց նաև մեծ տերությունների կողմից թուրքական ջրերը ռազմանավեր ուղարկելու գործին: 1895 թ. նոյեմբերի 16-ին Մոնսոնն անգլիական կառավարությանը հաղորդում էր, որ հինգ ռազմանավերից բաղկացած ավստրիական նավատորմը ծովակալ Սիմանի հրամանատարությամբ դուրս է եկել Միջերկրական ծով[3]: Նավատորմիղը մոտեցել էր Սալոնիկին, որն Ավստրո-Հունգարիան իր համար ավար էր նախատեսել Օսմանյան կայսրության փլուզման դեպքում[4]:

Կոմս Գոլուխովսկին երեսպաշտորեն եվրոպական տերությունների քաղաքականությունն անվանում էր «անտարբեր», «ցինիկ», խոսում էր հայերի նկատմամբ թուրքերի «անսիրտ դաժանության» մասին և կոչ էր անում «կանխել դժբախտությունը», փրկել հայերին տառապանքներից: Սակայն միևնույն ժամանակ նա Հայկական հարցի լուծումն ամբողջա-

1 Նույն տեղում, էջ 43:

2 Նույն տեղում, էջ 30-32:

3 Նույն տեղում, էջ 132:

4 Ротштейн Ф.А., նշվ. աշխ., էջ 312:

պես թողնում էր սուլթան Աբդուլ Համիդի հայեցողությանը: 1896 թ. դեկտեմբերի 17-ին բրիտանական դեսպանի հետ հանդիպման ժամանակ կոմս Գոլուխովսկին խորհուրդ էր տալիս սպասել, սուլթանին հնարավորություն տալ կատարելու իր խոստումը՝ «կարգը վերականգնելու ուղղությամբ»: Նա ասում էր, որ թեև «հեռանկարը հուսադրող չէ», բայց և այնպես տերությունները պետք է սուլթանին հնարավորություն տան «անել այն, ինչը որ նա պետքական է համարում»[1]: Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարը նշում էր նաև, որ շատ երկրների հասարակական կարծիքը չափազանց վրդովված է և հայ բնակչության պաշտպանության նպատակով պահանջում էր անհապաղ միջամտել Օսմանյան կայսրության գործերին: Սակայն, միաժամանակ, նա գտնում էր, թե ամեն տեսակի միջամտությունը վնաս կհասցնի Կ.Պոլսում լուրջ ազդեցություն ունեցող որոշ տերությունների շահերին[2]:

Ավստրո-Հունգարիան չէր ցանկանում սրել ճգնաժամը, որը կարող էր Ռուսաստանին շեղել Հեռավոր Արևելքից: Նա ամենից շատ վախենում էր «ռեֆորմների կրակից, որոնք կարող էին տեղաշարժ անել, կամ խպառ տապալել թուրքական տիրապետության առանց այդ էլ փտած շենքը և այսպիսով կհանդիսանային թուրքական ժառանգության համար եվրոպական պայքարի նախերգանքը կամ էլ սուլթանին կստիպեին նետվելու ռուսների գիրկը»[3]: Իսկ Ռուսաստանի հսկողությունը Թուրքիայի եվրոպական մասի վրա, Սոլսբերիի խոսքերով, «կխախտեր հավասարակշռությունն ավստրիական կայսրության սլավոնական և ոչ սլավոնական տարրերի միջև»[4]: Սուլթան Աբդուլ Համիդն ուշադրությամբ հետևում էր միջազգային իրադրությանը և հմտորեն օգտագործում եվրոպական տերությունների հակասությունները: Եվ պատահական չէ, որ 1896 թ. արյունալի ջարդերի պահին ավստրո-հունգարական կայսր Ֆրանց Իոսիֆը պերճանքի և անտիկ թանկարժեք առարկաներ կաշառք ստացավ թուրքական սուլթանից[5]:

1 Armenia and the Powers. - *The Contemporary Review*, 1896, vol. 69, p. 629-630.
2 Blue Book, Turkey, No. 2 (1896), London, 1896, p. 109.
3 Ротштейн Ф.А., Նշվ. աշխ., էջ 307:
4 Lord Salisbury's *Conversations with the Tsar at Balmoral, 27 and 29 September, 1896.* - *The Slavonic and East European Review*, 1960, December, p. 219.
5 Кавказ, 1896, 19 ноября.





Այսպիսով, Օսմանյան կայսրության ստատուս քվոյի պահպանումը 19-րդ դարի վերջին մնում էր ավստրո-հունգարական պետության մերձավորարևելյան քաղաքականության գլխավոր սկզբունքը, քանի որ Թուրքիայի եվրոպական մասի տրոհումը կարող էր ռեալ վտանգ հանդիսանալ Հաբսբուրգների կայսրության գոյության համար: Բանն այն է, որ Հաբսբուրգների իշխանությունը ենթակա էր շուրջ 17 միլիոն սլավոն, այսինքն՝ երկրի բնակչության 45%-ը[1] և Թուրքիայի փլատակների վրա առաջացած անկախ սլավոնական պետությունները կարող էին դառնալ սպառնալիք բազմազգ կայսրության գոյության համար: Այդ էր գլխավոր պատճառը, որ Ավստրո-Հունգարիայի կառավարությունը դեմ էր Բարձր Դռան վրա որևէ ճնշում գործադրելուն և անտարբերությամբ էր վերաբերվում Օսմանյան կայսրությունում քրիստոնյա, մասնավորապես՝ հայ բնակչության դեմ սուլթանի սանձազերծած ջարդերին:

## 5. ԻՏԱԼԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ*

### Համահեղինակ՝ Սեդրակ Մանուկյան

Հայկական հարցը Իտալիայի արտաքին քաղաքականության ոլորտ է մտել 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից և 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրում արտացոլվելուց հետո: Պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը նրա քայքայման սպառնալիք էր ստեղծում, և Իտալիան երկյուղում էր զրկվել Միջերկրական ծովի շրջակայքում իր առավելություններից, եթե տերություններից որևէ մեկն իր ազդեցությունն ուժեղացներ Բալկանյան թերակղզում: Այդ իսկ պատճառով Իտալիան դեմ էր արտահայտվում Սան Ստեֆանոյի պայմանագրին, բայց զերծ էր մնում հակառուսական խմբավորման մեջ մտնելուց: 1878 թ. մարտին Մեծ Բրիտանիայի կառավարությունը Հռոմում իր դես-

1 Тамамшев И., Политическая судьба Константинополя, балканских народов и отношение их к России и западноевропейским государствам, СПб, 1887, с. 83-84.
* Հայկական Հարց. Հանրագիտարան, Երևան. Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1992 /ռուս./, 1996, էջ 152-153:

պանին ցուցում տվեց՝ ներազդել իտալական կառավարության վրա, որպեսզի նա միանա Մեծ Բրիտանիային, Ավստրո-Հունգարիային և Հունաստանին՝ Միջերկրականում ու սևծովյան նեղուցների շրջանում իրենց առևտրական ու քաղաքական շահերը «պաշտպանելու» համար: Իտալիայի արտգործնախարար Ի.Կորտին մերժեց առաջարկը՝ պատճառաբանելով, թե Իտալիան չեզոքություն է պահպանում եվրոպական գործերում: Բացի այդ, Իտալիան ձգտում էր թույլ չտալ Ավստրո-Հունգարիայի ազդեցության ուժեղացումն Օսմանյան կայսրությունում և, մասնավորապես, Բալկաններում:

1878 թ. Բեռլինի կոնգրեսի նախօրյակին եվրոպական առաջին մայրաքաղաքը, ուր այցելել էր Մկրտիչ Խրիմյանի գլխավորած հայ ազգային պատվիրակությունը, Հռոմն էր: 1878 թ. մարտի 27-ին պատվիրակությունն ընդունեց արտգործնախարար Ի.Կորտին: Պարզվեց, որ Իտալիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը բավականին աղոտ պատկերացում ուներ հայերի պահանջատիրության մասին: Համապատասխան պարզաբանումներ ստանալուց և ներկայացված փաստաթղթերին ծանոթանալուց հետո, Կորտին ընդհանուր արտահայտություններով խոստացել է պաշտպանել հայերի պահանջները: Իսկ երբ Բեռլինի կոնգրեսի երկրորդ նիստում որոշվել էր, որ առանց տերությունների որևէ մեկի լիազոր ներկայացուցչի միջնորդության քննարկման չի դրվի որևէ դիմում կամ զեկուցագիր, հայկական պատվիրակությունը հունիսի 25-ին իտալական պատվիրակության ղեկավար Ի.Կորտիին հանձնեց իր խնդրագիրը, Հայաստանի ինքնավարության ծրագիրը և վիճակագրական տվյալներ Թուրքիայի հայկական նահանգների մասին: Սակայն այդ փաստաթղթերն ուշադրության չարժանացան: Տերություններից և ոչ մեկը, այդ թվում՝ Իտալիան, չպնդեց Հայկական հարցը մտցնել կոնգրեսի օրակարգ:

Հետագայում իտալական կառավարությունը մասնակցեց Արևմտյան Հայաստանի բարենորոգումների իրականացումը պահանջող տերությունների համատեղ գործողություններին: Մասնավորապես, Օսմանյան կայսրությունում իտալական դեսպանը ստորագրեց 1880 թ. հուլիսի 2-ին և սեպտեմբերի 11-ին մեծ տերությունների կողմից սուլթանական կառավարությանը ներկայացված հայտագրերը: 1890-ական թթ.





կեսերին, Հայկական հարցի սրման պահին, իտալական կառավարությունը սուլթանից պահանջեց իրագործել հայկական բարենորոգումները, ապահովել Օսմանյան կայսրության քրիստոնյաների կյանքի անվտանգությունը. եվրոպական մյուս տերությունների հետ համատեղ քայլեր ձեռնարկեց հայերի նոր ջարդեր թույլ չտալու ուղղությամբ: 1896 թ. նոյեմբերի 1-ին իտալական դեսպանորդ Պանսային ընդունեց Աբդուլ Համիդ 2-րդը. իտալական դեսպանորդը սուլթանին համառորեն համոզում էր, որ կայսրությունում կարգուկանոնը վերականգնելու միակ միջոցը՝ հայկական բարենորոգումներին ընթացք տալն է: 1895-96 թթ. Իտալիայի կառավարությունը քանիցս իր դեսպանին հորդորել է համատեղ քայլերի դիմել եվրոպական մյուս երկրների հետ Հայկական հարցում:

1912-14 թթ. հայկական բարենորոգումների հարցի քննարկման ժամանակ Իտալիան պաշտպանեց իր դաշնակիցներին՝ Գերմանիային և Ավստրո-Հունգարիային (1882 թ.-ից Իտալիան հարել էր ավստրո-գերմանական դաշինքին), հանդես եկավ բարենորոգումների ռուսական նախագծի դեմ, մերժեց վեց վիլայեթներից հայկական միասնական մարզ ստեղծելու գաղափարը՝ պնդելով քննարկման հիմքում դնել թուրքական նախագիծը ևն:

1914-16 թթ., սկսված համաշխարհային պատերազմի պայմաններում, Արևմտյան Հայաստանի քաղաքներում հավատարմագրված իտալական հյուպատոսությունները կանոնավոր կերպով իրենց կառավարությանը տեղեկացրել են հայ բնակչության ջարդերի ու տեղահանության մասին: Վանում իտալական հյուպատոս Գ.Սպորդոնը 1915 թ. մայիսի 31-ի զեկուցագրում մանրամասն և անկողմնակալ կերպով լուսաբանել է Վան քաղաքի և Վանի նահանգի 1915 թ. ապրիլ-մայիսի իրադարձությունները: Հայերի տեղահանության և ցեղասպանության մասին հարուստ տեղեկություններ կան Տրապիզոնում իտալական հյուպատոս Ջ.Գորինիի զեկուցագրերում: Եվ, այդուհանդերձ, Իտալիայի կառավարությունը չքողոքեց երիտթուրքական կառավարության այդ հանցավոր քաղաքականության դեմ՝ Հայկական հարցում միշտ որդեգրելով զգուշավոր դիրքորոշում:

1915 թ. մայիսին Իտալիան պատերազմ հայտարարեց Գերմանիային, Անտանտայի երկրները համաձայնագիր կնքեցին Իտալիայի հետ,

որը հաշվի էր առնում իտալական պահանջատիրությունը Թուրքիայի որոշ տարածքների նկատմամբ: 1916 թ. Սայքս Պիկոյի համաձայնագրի վրա երևան եկավ «կանաչ» գոտին (Հարավարևմտյան Անատոլիա) և «C» գոտին (Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի մի մասը), որոնք ճանաչվում էին Իտալիայի ազդեցության ոլորտ:

1919 թ. փետրվարին Իտալիայի վարչապետ Վ.Օռլանդոն համաձայնեց Մեծ Բրիտանիայի առաջարկությանը՝ «օրինականություն և կարգուկանոն հաստատելու համար» իտալական 2 դիվիզիա ուղարկել Հայաստան: Բայց նրա կառավարության անկումից հետո նոր վարչապետ Ֆ.Նիտտին հրաժարվեց այդ գաղափարից: 1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսում Նիտտին հանդես եկավ Թուրքիայի հանդեպ «ավելի մեղմ» վերաբերմունքի օգտին և դեմ արտահայտվեց Հայաստանի Հանրապետության տարածքը Թուրքիայի հաշվին ընդարձակելուն և դեպի Սև ծով նրան ելք տրամադրելուն: 1918-20 թթ. Իտալիայի արտգործնախարարի լիազոր ներկայացուցիչը Թիֆլիսում և Երևանում համակարգում էր Հայաստանի Հանրապետության ու արևմտահայ փախստականներին ցուցաբերվող իտալական օգնության աշխատանքները:

*Գրկ. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1923), Երևան, 1972; Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1991; Si veda ad esempio F.Mainardi, Un'altra vittima dei Franco-Inglesi, gli Armeni, Roma, 1939; Sidari F., La Questione Armena nella politica delle grandi potenze, Padova, 1962.*

## 6. И ВСЕ-ТАКИ ОН ВЕРИЛ... *

Имя Алексея Карповича Дживелегова (1875-1952), члена-корреспондента Академии наук Армении, крупнейшего ученого в области истории стран Западной Европы, искусствоведа, театроведа и литературоведа, широко известно читателям. Однако не все зна-

* *Эпоха*, 1992, 20 февраля.





ют, что в его научном творчестве, в публицистической деятельности особое место занимали проблемы политической истории армянского народа — политика держав в Армянском вопросе, геноцид и депортация армян, судьба армянских беженцев из Турции, армяно-русские, армяно-турецкие отношения, создание единого и независимого армянского государства и т.д.

Являясь ученым с широчайшим диапазоном научных интересов, А.К. Дживелегов не стоял в стороне от политических проблем и судеб армянского народа. В самые тяжелые периоды жизни своего народа он живо откликался на его нужды, служил ему своим пером, организаторскими способностями. Проблемам политической арменистики посвящены книги А.К.Дживелегова "Армяне в России" (1946), около 40 статей на страницах редактируемого им еженедельника "Армянский вестник".

Работы А.К.Дживелегова и сегодня не потеряли своего научного и политического значения и, по нашему убеждению, должны быть полностью опубликованы.

Ниже представляем читателю текст выступления А.К.Дживелегова в российском предпарламенте — Временном совете Российской республики (совещательный орган при Временном правительстве) 20 октября (2 ноября) 1917 г. по поводу судьбы Западной Армении (Речь в Совете республики 20 октября 1917 г. — *Армянский вестник*, 1917, No. 43-44, с. 3-5).

А.К.Дживелегов искренне приветствовал Февральскую революцию в России, связывал с ней большие надежды. В начале 1917 г. он писал: "Армянский народ приветствует революцию...Турецкая Армения должна быть свободна и должна получить право политического самоопределения. Требование автономии Армении, требование чистое, как снег на вершинах Масиса, загрязнено клеветой, недоброжелательными ревнивыми подозрениями, шовинистическими предосторожностями. Свободная Россия должна смыть всю эту грязь и признать за армянским народом в Турции право на автономию" ("Русская революция в Армении" — *Армянский*

*вестник*, 1917, No. 10-11, с. 3). Если соотнести эти слова А.К.Дживелегова с проблемой Нагорного Карабаха, то они могли бы сегодня прозвучать весьма актуально.

Осенью 1917 г. оптимизм ученого сменился на критику в адрес Временного правительства. Он понял, что политика России в Армянском вопросе не претерпела особых изменений.

В своем выступлении в российском предпарламенте А.К.Дживелегов критикует Министерство иностранных дел России за позицию, занятую в Армянском вопросе, призывает демократическую общественность России оказать помощь и содействие армянскому народу.

## РЕЧЬ А.К.ДЖИВЕЛЕГОВА В СОВЕТЕ РЕСПУБЛИКИ 20-го ОКТЯБРЯ 1917 г.

Господа, я уполномочен от армянской группы временного совета указать на один существенный пробел в речи министра иностранных дел, пробел, касающийся положения Турецкой Армении. Армянский народ без различия партий и политических направлений ожидал услышать от министра иностранных дел, что русская иностранная политика отныне решительно разрывает со старым отношением к армянскому народу. Этого армянский народ не услышал в речи министра иностранных дел и этого армянский народ не может понять иначе, как желание Министерства иностранных дел держаться по отношению к армянскому народу такой же политики, которая процветала до революции.

Политика старого русского правительства по отношению к Турции заключалась в том, что Турция во всех столкновениях с Россией и даже в моменты, когда никаких столкновений с Россией не существует, должна быть ослаблена. Политика ослабления Турции принимала разные формы в зависимости от того, насколько Россия чувствовала себя сильной. Эта политика русского правительства была полной противоположностью той политики, ко-





торой придерживалась Англия до Эдуарда 7-го, до появления идеи стратегического окружения Германии, и политики Германии, которая началась в момент получения первых больших концессий Турецкой империи. Политика старой Англии и новой Германии заключалась в том, чтобы удержать Турцию как единый хозяйственный комплекс, такой хозяйственный комплекс, к которому могут быть применены экономические силы английского и германского капитала. Россия, слабая в экономическом отношении, Россия, которая никогда не была уверена в том, что ее производительные силы найдут достаточное применение в Турции, не могла этой политики держаться. Ее собственная политика заключалась в том, чтобы ослаблять Турцию как политическое единство и добиваться по мере возможности отчленения от Турции отдельных кусков ее территории. Насколько эта политика старой власти последовательно ею проводилась, видно из того, что даже в моменты, когда русское правительство вело всячески борьбу с революцией, - и тогда Россия была готова поддерживать революционные и свободолюбивые течения в Турецкой империи для того, чтобы добиться осуществления своих основных целей, - ослабления Турции.

Александр 1-й — творец и главный вдохновитель Священного союза, Николай 1-й — один из пророков принципов легитимизма, все-таки поддерживали греческую революцию и все-таки старались, чтобы Греция в своем стремлении освободиться от Турции получила поддержку в той или иной форме от России. Александр 1-й покровительствовал обоим Ипсиланти и гетеристам, Николай 1-й послал флот в Наварин. Эта политика в последнее время стала встречать все больше и больше противодействия в той широкой международной комбинации, которая создавалась начиная с середины 19-го века. И в те моменты, когда Россия не могла рассчитывать на то, чтобы прямой силой отобрать от Турции тот или другой клочок ее территории, Россия поддерживала автономические освободительные стремления в Турции. Так велась русская

политика по отношению к Македонии, так она велась и по отношению к Армении. По отношению к Армении русский взгляд на то, что Армения должна быть автономна, ведет свое начало с войны 1877 г. В Сан-Стефанских прелиминариях был пункт, где говорилось о том, что Армения должна получить административную автономию. В 1895 г. Россия вместе с другими западными державами подняла вопрос о настолько широкой реформе, что она граничила с дарованием армянским областям автономии. Наконец, последний из этих моментов, протокол 26-го января 1914 г., тоже ставил вопрос о реформах, так что дело явно шло к автономии.

Какую же роль играли сами турецкие армяне во всей этой политической игре русского правительства? Армяне всегда были жертвами русско-турецкой политики. Жертва внутри самой Турции, армяне должны были поневоле сделаться жертвой и русской политики. Постоянно приносимая на алтарь турецкой государственной необходимости, на алтарь идеи пантюркизма, Армения, которая оказалась клином в тюркской территории, была бельмом на глазу турецкого правительства, и оно в последнее время стремилось искоренить армянский народ, чтобы тем самым разрешить все экономические и политические задачи, лежащие перед ним. Эта политика Турции была совершенно одинакова у старой турецкой власти и у новых руководителей политики младотурок, которые после недолгого колебания вернулись на тот путь, на котором стоял Абдул Гамид.

Для России армяне были также жертвой; Россия играла армянскими интересами, как и турецкое правительство. Вы, вероятно, помните злую фразу одного из русских послов в Константинополе, князя Лобанова-Ростовского, который говорил, что он ничего не имеет против Армении без армян. Вы помните, что еще в начале войны, еще когда министром иностранных дел был Сазонов, в отношениях русского правительства к армянам и Армянскому вопросу было странное колебание, которое не позволяло русскому правительству найти надлежащую линию. И сейчас, в то время, когда власть принадлежит уже правительству революционному, мы видим в политике министерства иностранных дел отголосок старых приемов иностранной политики, отголосок старого отношения России к армянскому народу. Еще на днях в министерстве иностранных дел рассматривался вопрос об освобождении армянских военнопленных, взятых в плен среди турецких войск. Вопрос этот пока был решен отрицательно. И это после того, как армяне дали десятки тысяч добровольцев, после того, как армянские части в настоящее время несут тяжелую ответственную стратегическую задачу: охраняют турецко-персидский плацдарм и проходы, там находящиеся. Теперь, когда в России переменился строй, армяне не могут постигнуть, каким образом хотя бы отголосок старой политики русского правительства по отношению к Армении может еще держаться. От демократической России армяне ждут другого отношения, от демократической России армяне ждут другой политики по отношению к Турецкой Армении. Армяне надеятся, что демократическая Россия сумеет понять те стремления к самоопределению, которые присущи армянскому народу и которые армянский народ провозглашает с тех пор, как начал сознавать себя политически. Демократическая Россия доказала, что выполнение тех задач, которые были не под силу старому правительству, ей под силу. Демократическая Россия разрешила польский вопрос, над разрешением которого безуспешно и бессильно билась старая власть. И армяне надеятся, что и в армянской политике, в отношении к Армянскому вопросу русская демократия сумеет указать министерству иностранных дел новые пути.

Долг русского народа, достоинство русской демократии повелительно требуют, чтобы Армения не была оставлена на произвол судьбы, чтобы взгляд на Армению, как на полноправного члена семьи малых народов, был министерством иностранных дел вверен в систему своей политики.

Как же представляют себе в настоящее время армяне свой бу-

дущий политический статут? Армяне думают, что полная автономия Турецкой Армении есть единственное возможное разрешение Армянского вопроса. Армяне считают, что свободная Армения должна обнимать 6 армянских вилайетов – Эрзерум, Ван, Битлис, Харпут, Диарбекир, Сивас, и к этим 6 вилайетам Великой и Малой Армении должна быть присоединена территория Киликии. Вместе с тем от этих 6 вилайетов и от Киликии должны быть отрезаны те окраинные части, которые были искусственно присоединены к армянской области после войны 1877 г., присоединены с тем, чтобы изменить численное соотношение между армянским и неармянским населением в ущерб армянскому.

Каким образом может быть установлена территория новой, свободной Турецкой Армении? Армянский народ считает, что свободная Армения должна быть образована решением международного конгресса. Армяне надеятся, что международный конгресс, который кончит наконец эту войну, даст армянам неоценимый дар, который когда-то Швейцария получила от венского конгресса, - вечный нейтралитет, и что этот вечный нейтралитет будет гарантирован Армении общим решением всех держав. Международная гарантия в этом отношении является единственным ручательством за то, что никогда и ни при каких условиях этот нейтралитет не может быть нарушен. Но армяне прекрасно понимают, что прямо сейчас же после окончания войны ввести это новое политическое устройство является делом очень трудным, и потому армяне думают, что после окончания войны должен быть введен некоторый интерим, промежуточное политическое состояние, которое должно быть гарантировано всеми державами. Каким образом гарантия того, что за время этого интерима армянский народ сумеет приступить к устройству своего национального дела и к устройству своего политического быта, будет обеспечена? Единственным решением этого вопроса был бы мандат, врученный от международного конгресса какой-нибудь державе или какой-нибудь группе держав, и армянский народ приветствовал бы,



если бы державой, которой будет вручен этот мандат, была бы Российская республика.

Я думаю, что я не встречу с вашей стороны никаких возражений, если я скажу, что старая вековая культура армянского народа, роль Армении в передней Азии, как защитницы европейской культуры, как страны демократической общественности, какой Армения была в свободные времена своего существования, когда она представляла собою независимое государство, и тогда, когда она попала под турецкое иго, дает ей право на то, чтобы сейчас в семье свободных малых народов Армения могла занять подобающее ей место. И еще другой титул на то, что Армения должна получить свое новое свободное устройство заключается в том, что во имя культуры, во имя свободы, во имя тех идеалов защиты прав малых народностей, из-за которых началась война, Армения принесла столько жертв. Мне нет необходимости воспроизводить перед вами то, что происходило в 1915 г. в Турции; мне нет необходимости восстанавливать перед вашими глазами те потрясающие жестокости, те неописуемые варварства, которые творились над армянами. Нет необходимости указывать и на то, что существование на границах Российской республики свободной Армении ни в коем случае не является угрозой для России, ни о каких ирредентистских чаяниях со стороны русской Армении не может быть и речи. Не может быть речи по двум причинам – и объективно и субъективно: объективно потому, что никогда ирредента не возникала в державе сильной, малая часть которой потянула к державе слабой. Ирредента всегда рождалась в сильной державе, всегда питалась мечтами о расчленении слабой державы. Вот почему в отношениях между Россией и Арменией объективных причин, которые могли бы питать ирредентизм, которые могли бы вызывать среди вас ирредентистские опасения, не существует. Но нет и субъективных причин. Армянский народ так долго и тяжело выносил иго старого режима, так много страдал от царизма и притеснений его, что ни у кого из русских армян, населяющих терри-

торию Закавказья, не может явиться мысли поднять оружие против новой России или начать пропаганду отторжения от России, но этот вопрос уже чисто российский, вопрос о Русской Армении: он совершенно самостоятелен, и, может быть, когда-нибудь в совете мы будем обсуждать и его. В настоящее же время речь идет только о Турецкой Армении, речь идет только об устройстве той части Армении, которая изнывает под турецким игом.

Мне хочется еще раз подтвердить, что для России устройство свободной Турецкой Армении ни с какой точки зрения не является угрозой.

На своем хребте в течение веков армянский народ испытывал все прелести старого режима в России, переносил невозможные мучительства в Турции как старого режима, так и режима нового, и он должен получить то, что ему по праву принадлежит, - место среди свободных народов. Армянский народ всем своим служением культуре и всем своим демократическим бытом поставил свою историю и свою общественную и политическую работу как в России, так и в Турции в уровень требований своего времени, в уровень требований демократического развития. Эта работа армянского народа должна заслужить с вашей стороны то признание, которое ему принадлежит по праву. Армения должна быть свободна, и русская демократия в этом отношении должна ей помочь. Если это случится, если русская демократия своим могучим словом скажет, что Турецкая Армения должна быть свободна, - это навсегда закрепит моральную связь между Турецкой Арменией и Российской демократической республикой. (Рукоплескания).



# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ

## 1. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Ժողովուրդների Մշտական Ատյանը ստեղծվել է 1976 թ., Հռոմում: Հիմնադիր փաստաթղթերում նշված է, որ Ատյանի գործունեությունը պետք է աջակցի ժողովուրդների գիտակցության անշեղ աճին, նպաստի քաղաքական որոշակի խնդիրների ավելի լավ ընկալմանը համաշխարհային հասարակայնության կողմից, ժողովուրդների համերաշխության ամրապնդմանը ժողովուրդներին ոգեշնչի պայքարելու իրենց իրավունքների համար: Սակայն Ատյանի որոշումները կրում են երաշխավորական բնույթ, այն ըստ էության հասարակայնության դատարան է, որի կազմի մեջ մտնում են աշխարհի շատ երկրների նշանավոր գիտնականներ, մանկավարժներ, լրագրողներ, քաղաքական և հասարակական գործիչներ: Նրանցից են խաղաղության Նոբելյան դափնեկիր, իրավաբան Շոն Մաք-Բրայդը (Իռլանդիա), Նոբելյան մրցանակի դափնեկիր, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջորջ Ուալդը (ԱՄՆ), Ալժիրի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Մաջիթ Բենշիխը (Ալժիր), խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Ադոլֆո Պերես Էսքիվելը (Արգենտինա), Հռոմի համալսարանի միջազգային իրավունքի

* *Ակունք*, 1991, հ. 5-6, էջ 8-11:

պրոֆեսոր Անդրեան Ժիարդինան (Իտալիա), Պրինստոնի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ռիչարդ Ֆալկը (ԱՄՆ), Փարիզի բողոքականության ինստիտուտի աստվածաբանության պրոֆեսոր Ժորժ Կասալին (Ֆրանսիա), Ավստրալիայի խորհրդարանի անդամ Քեն Ֆրայը (Ավստրալիա), դիվանագետ Արալդ Էդելսթամը (Շվեդիա), տնտեսագետ, լրագրող Աջիթ Ռոյը (Հնդկաստան) և ուրիշներ:

Նախագահն է Լուվենի համալսարանի իրավունքի պրոֆեսոր Ֆրանսուա Ռիգոն (Բելգիա):

1983 թ. «Ազգային փոքրամասնությունների իրավունքների խումբ» (Փարիզ, Ֆրանսիա), «Մշակութային գոյատևում» (Քեմբրիջ, ԱՄՆ), «Սպառնալիքի ենթակա ժողովուրդների օգնության ասոցիացիա» (Գյոթինգեն, ԳՖՀ) կազմակերպությունները դիմեցին Ժողովուրդների Մշտական Ատյան՝ միջնորդելով, որ այն իր նստաշրջանից մեկը նվիրի հայերի ցեղասպանության խնդրին և պատասխան տա հետևյալ հարցերին.

1. Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայ ժողովուրդը ենթարկվե՞լ է, արդյոք, բռնագաղթի և կոտորածի:
2. Ցեղասպանությո՞ւն են, արդյոք, այդ գործողություններն այն իմաստով, ինչպես սահմանվել են ցեղասպանության հանցագործության կանխման և պատժի միջազգային կոնվենցիայով (1948 թ.) և պատժի ենթակա՞ են, արդյոք, դրանք Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ գործված հանցագործությունների համար պատժի ենթարկելու անխուսափելիության 1968 թ. կոնվենցիայում նախատեսված կարգով:
3. Որո՞նք են դրա հետևանքները թե՛ միջազգային ընկերակցության և թե՛ դիմակայող կողմերի հարաբերությամբ:

Ժողովուրդների Մշտական Ատյանի նախագահությունը քննության առավ հարցը և որոշեց այն մտցնել հերթական նստաշրջանի օրակարգ: Նստաշրջանը տեղի ունեցավ 1984 թ. ապրիլի 13-ից 16-ը, Փարիզում: Թուրքական պետությանն առաջարկվել էր նստաշրջան ուղարկել իր փորձագետներից կամ էլ ներկայացնել իր դիրքորոշումը բովանդակող գրավոր փաստաթղթեր: Թուրքիայի մերժման պատճառով Ատյանը





ստիպված եղավ իբրև թուրքական տեսակետ քննության առնել «Հայկական հարց, ինը հարց, ինը պատասխան» փաստաթուղթը, որը պատրաստել էր Անկարայի միջազգային քաղաքականության ինստիտուտը, ինչպես նաև Անկարայի համալսարանի պրոֆեսոր Թուրքայա Աթայովի գրավոր ցուցմունքները, որոնք արտացոլում էին տվյալ խնդրում թուրքական կառավարության քաղաքականությունը:

Քննարկման ընթացքում լսվեցին Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի (ԱՄՆ), Քեմբրիջի Հայկական հետազոտությունների և փաստաթղթերի ինստիտուտի տնօրեն Ժիրայր Լիպարիտյանի (ԱՄՆ), պատմաբան Քրիստոֆեր Ուոքերի (Մեծ Բրիտանիա), պրոֆեսոր Տեսսա Հոֆմանի (ԳՖՀ), պատմաբան և գրող Իվ Տերնոնի (Ֆրանսիա), Լուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր Ջե Վերնևի (Բելգիա), Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Տիգրան Կույումջյանի (ԱՄՆ)՝ Արևմտյան Հայաստանի տարածքում հայկական պատմական հուշարձանների ավերման խնդիրներին վերաբերող զեկույցները: Ցուցմունքներ տվեցին իրադարձությունների ականատեսներ Ինջիրաբյանը, Գյուզելյանը (Ֆրանսիա), Բոյաջյանը, Նահապետյանը (ԱՄՆ): Նստաշրջանում 1915-16 թթ. իրադարձությունների վերաբերմամբ «ցեղասպանություն» հասկացության կիրառելիության մասին հաղորդումով հանդես եկավ Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Լեո Կուպերը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ստորաբաժանման նախկին տնօրեն Թեո Վան Բովենը ծանոթություն տվեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովում ցեղասպանության հարցի ուսումնասիրման ժամանակ հայերի ցեղասպանությունը չհիշատակելու փաստի մասին:

Իր ելույթում Ատյանի նախագահ Ֆ.Ռիգոն ընդգծեց, որ ցեղասպանությունն իրականացնելու համար պետք է պատասխանատվության ենթարկվեն ոչ միայն մասնավոր անձինք, այլև առանձին պետություններ և կազմակերպություններ: Այս կապակցությամբ նա վկայակոչեց Թուրքիայում Գերմանիայի նախկին դեսպան Վանգենհայմին, որը 1915 թ. հուլիսի 7-ին նշել է. «Փաստերը վկայում են, որ կառավարությունը նպատակ է հետապնդում Օսմանյան կայսրությունում վերացնել հայ ազգը»:

Ֆ.Ռիգոն հրապարակեց նաև թուրք հայտնի ռեժիսոր, ազգությամբ քուրդ Յըլմազ Գյունեի նամակը, որը մեջ ենք բերում հատվածաբար.

«Պարոն նախագահ,

Հետաքրքրությամբ իմացա, որ Ձեր հարգարժան Ատյանը պատրաստվում է իր նիստերից մեկը նվիրել հայերի ցեղասպանությանը: Այդ հարցը չի կարող անտարբեր թողնել հանուն արդարության պայքարող մարդկանց, առավել ևս այն մարդկանց, ովքեր, ինչպես ես, սերում են Թուրքիայից: Ահա թե ինչու Ձեր ուշադրությանն եմ ուզում ներկայացնել մի քանի նկատառում: Այդ ցեղասպանության իրական լինելը, իմ կարծիքով, որևէ կասկած չի հարուցում: Թունավոր ազգայնամոլությամբ առաջնորդվող ժամանակի թուրքական ղեկավարները երազում էին ստեղծել պանթուրանական կայսրություն, որը պետք է տարածվեր Թուրքիայից մինչև Միջին Ասիայի տափաստանները: Այն ժամանակ Թուրքիայի տարածքը, որը բնակեցված էր թուրքերով և Հյուսիսային Կովկասի ու Միջին Ասիայի տարածքները, որ բնակեցված էին թյուրքալեզու ժողովուրդներով, միմյանցից բաժանված էին քրդական և հայաբնակ շրջաններով: Որպեսզի վերացնի այդ «արգելքը», «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի կառավրությունը որոշեց ֆիզիկապես ոչնչացնել այս երկու ժողովուրդներին:

1915 թ. սկսած համընդհանուր կոտորածի և զանգվածային բռնագաղթի ծրագրված քաղաքականությունը հանգեցրեց Թուրքիայում հայերի իսպառ վերացման: Առաջին աշխարհամարտի տարիներին նույն քաղաքականության հետևանքով 700 հազար քրդեր բռնագաղթի ենթարկվեցին դեպի Կենտրոնական Անատոլիա:

Ժողովրդավարական վարչակարգը, անկասկած, կճանաչեր պատմական իրողությունը, կդատապարտեր այդ հանցագործության հեղինակներին, որոնք իրենց անմիտ արկածախնդրությամբ քիչ մնաց աղետի հասցնեին նաև թուրք ժողովրդին: Այդ վարչակարգը գոնե գլուխ կխոնարհեր տառապյալ հայ ժողովրդի հիշատակի առջև: Արդարության և պատվի զգացումը նրան կդրդեր Անկարայում գումարել Ձեր Ատյանի նման մի ատյան, որպեսզի բացահայտեր և հռչակեր ճշմարտությունը:

Պատմական ճշմարտության ընդունումը չէր հանգեցնի ռասայական ատելության բորբոքմանը երկրամասում, առանց այն էլ շատ դժբախ-





տություններ տեսած ժողովուրդների ընդդիմությանը: Այսօրվա թուրքերին ոչ որ պատասխանատու չէր համարի իրենց նախորդների՝ քայքայվող կայսրության բռնակալական հանցավոր վարչակարգի, ավելի քան 60 տարի առաջ կատարած հանցագործությունների համար: Հակաթուրքական ռասիզմը ես համարում եմ նույնքան դատապարտելի, որքան Անկարայի ղեկավարների հակահայկական և հակաքրդական հիստերիան:

Այս դիտողությունների հետ, պարոն Նախագահ, թույլ տվեք նաև ցանկություն հայտնել, որ Ձեր Ատյանի որոշումն ուշադրության առնվեր միջազգային ատյաններում և այն, ինչ լռության և անտարբերության մթնոլորտում կատարվել է հայ ժողովրդի հանդեպ, այլևս ոչ մի տեղ հնարավոր չլիներ իրագործել»:

Ժողովուրդների Մշտական Ատյանի նստաշրջանն ավարտվեց եզրափակիչ փաստաթղթի ընդունմամբ: Նշվեց, որ չկա ավելի լուրջ հանցագործություն, քան ազգային պատկանելության համար ժողովրդի սիստեմատիկ ոչնչացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Ատյանի կարծիքով, 1915 թ. ցեղասպանության փաստերը արժանի են մանրազնին ուսումնասիրման: Հայ ժողովուրդն իրավունք ունի հաստամանրազնին ... 

Ատյանը ցավով նշեց, որ հրաժարումը ցեղասպանության փաստի ընդունումից հանգեցնում է թուրք դիվանագետների և այլ անձանց դեմ ահաբեկչական գործողությունների: Տվյալ հարցում առավել բացասական հանգամանքներից մեկն Ատյանը համարեց այն փաստը, որ շատ պետություններ, աշխարհաքաղաքական նկատառումներով, պաշտպանում են տվյալ խնդրով որևէ անաչառ հետազոտություն բացառելու և խնդրի իրավական որոշումը խոչընդոտելու՝ թուրքական կառավարության ջանքերը:

Փաստաթղթի առաջին բաժնում տրված է համառոտ տեղեկանք 4-րդ դարից սկսած Հայաստանի պատմական զարգացման հիմնական ուղեգծերի մասին՝ հիշատակելով Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի մասին՝ հիշատակելով Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմաններ ...

քական կուսակցությունների առաջացումը, հայերի դրությունը սուլթան Աբդուլ Համիդի կառավարման տարիներին, 1895-96 թթ. կոտորածները և երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելը:

«Ցեղասպանություն» ենթաբաժնում մանրամասնորեն նկարագրված է իրադարձությունների ընթացքը սկսած 1915 թ. հունվարից, ընդգծված է Օսմանյան կայսրության հայ բնակչության զանգվածային ոչնչացումը նախատեսող ծրագրի կանխամտածվածությունը: Մասնավորապես նշված է, որ բռնագաղթն ըստ էության հայերի բնաջնջման քողարկված ձև էր:

Այնուհետև ասվում է, որ բոլոր կառավարությունների իրենց ներկայացուցիչների՝ Լլոյդ Ջորջի, Կլեմանսոյի, Վիլսոնի և այլոց միջոցով բազմիցս հանդիսավորությամբ խոստացել են արդարացի լուծել «հայ տառապյալ ժողովրդի» հարցը: 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյի կոնֆերանսը Միացյալ Նահանգներին առաջարկել է ընդունել Հայաստանի մանդատը և որոշել ապագա հայկական պետության սահմանները: Դրանք պետք է ճանաչվեին և ամրապնդվեին թուրքերի հետ կնքվելիք խաղաղության պայմանագրով: Սակայն 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագիրը, որը ճանաչեց Հայկական պետության անկախությունը և պրեզիդենտ Վիլսոնի որոշած սահմանները, խնդիրը չլուծեց, քանի որ Թուրքիան չհաստատեց այդ պայմանագիրը: Մեծ տերությունների և Թուրքական նոր հանրապետության 1923 թ. ստորագրած Լոզանի պայմանագրում չի հիշատակված նույնիսկ «Հայաստան» բառը: Այսպիսով, Հայկական հարցը օրակարգից հանվեց:

«Ապացույցներ» ենթաբաժնում վկայակոչվում են ցեղասպանության փաստն ապացուցող հիմնական աղբյուրները: Այդ աղբյուրների գրեթե սպառիչ մատենագիտությունը կազմել է Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Ռ.Հովհաննիսյանն իր «Հայկական ցեղասպանությունը» աշխատության մեջ:

Փաստաթղթում շարադրված է նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու ուղղությամբ կազմված զեկույցի քննարկման ընթացքը, զեկույց, որն արդեն 10 տարի է, հավանության չի արժանանում, քանի որ դրա մեջ հիշատակվում է Թուրքիայի կողմից չճանաչված հայերի ցեղասպանությունը:





Ատյանի որոշումներում շարադրված է նաև ցեղասպանության խնդրի վերաբերյալ թուրքական տեսակետը, որը տեղ է գտել համապատասխան փաստաթղթերում: Մասնավորապես նշվում է, որ թուրքական կառավարության հրաժարումը հայերի ցեղասպանությունն ընդունելուց բացատրվում է հիմնականում հետևյալ փաստարկներով՝ զոհերի թիվն ավելի պակաս է, քան պնդում են. բախման համար պատասխանատվություն են կրում հայ հեղափոխականները. շատ մեղադրանքներ ապացուցված չեն. հայերի դեմ ուղղված գործողությունները կանխամտածված չեն եղել. մահմեդականները ևս զգալի կորուստներ են ունեցել:

Հայոց պատրիարքի վիճակագրության համաձայն՝ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թիվը 1914 թ. 2 մլն 100 հազար էր, ըստ Թուրքիի՝ մեկ միլիոն 800 հազար և թուրքական տվյալներով՝ մեկ մլն 300 հազար: Չնայած այս տարաձայնությանը, ինչպես հայկական, այնպես էլ արևմտյան աղբյուրները ցեղասպանության զոհերի թիվը գնահատում են հայ բնակչության ընդհանուր թվի երկու երրորդի չափով: Մինչդեռ թուրքերը գտնում են, որ զոհվել է հայ բնակչության ընդամենը 20-25 տոկոսը և այն էլ պատերազմական ժամանակների վատ պայմանների հետևանքով: Սակայն փաստն այն է, որ հայերը լիովին անհետացել են Անատոլիայից: Ներկայումս Թուրքիայի բնակչությունը շուրջ 45 միլիոն է, որից հայերը՝ 100 հազարից էլ պակաս:

Քննության առնելով հայերի խռովության և դավաճանության վերաբերյալ թուրքական կառավարության փաստարկները, Ատյանը նշեց, որ Օսմանյան կայսրության ներսում զինված գործողություններ են եղել լոկ Սասունի և Վանի 1915 թ. ապրիլի ապստամբությունները:

Թուրքական պետությունը հայերին մեղադրում է թուրքերի դեմ գործադրված ցեղասպանության համար, նշելով, որ 1917 թ. հայկական խմբավորումները թուրքական մի քանի գյուղ են ոչնչացրել: Ատյանը գտնում է, որ այդ գործողությունները դատապարտելի են, սակայն ցեղասպանություն չեն: Բացի այդ, դրանք կատարվել են հայերի զանգվածային սպանություններից հետո:

Ելնելով 1948 թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, 1948 թ. դեկտեմբերի 9-ի՝ Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիայից, Միջազգային

իրավունքի համաձայնությամբ ձևակերպած և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1951 թ. հավանության արժանացած Նյուրնբերգյան սկզբունքներից, Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ գործադրված հանցագործությունների պատժի անխուսափելիության մասին 1968 թ. կոնվենցիայից, Ժողովուրդների իրավունքների համընդհանուր հռչակագրից (Ալժիր, 1976 թ. հուլիսի 4), Ժողովուրդների Մշտական Ատյանի 1979 թ. հունիսի 24-ի կարգավիճակից, հաշվի առնելով զեկուցողների ցուցմունքներն հաստատող մեծ քանակությամբ փաստաթղթերի և ապացույցների առկայությունը, Ժողովուրդների Մշտական Ատյանը որոշեց.

1. Հայ ժողովուրդը մի ժողովուրդ է, որի հիմնարար և անհատական իրավունքները պետք է պահպանվեին և այսօր էլ պետք է պահպանվեն միջազգային իրավունքին համապատասխան:
2. Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի սահմանմամբ հայ ժողովրդի բնաջնջումը բռնագաղթի և զանգվածային սպանությունների միջոցով, ցեղասպանություն է:
3. Երիտթուրքերի կառավարությունը պատասխանատվություն է կրում այդ ցեղասպանության, 1915-17 թթ. կատարած գործողությունների համար:
4. Հայերի ցեղասպանությունը նաև «միջազգային հանցագործություն» է, որի պատասխանատվությունը պետք է կրի թուրքական պետությունը՝ չխուսափելով դրանից այն ժամանակվա և ներկայիս թուրքական պետության հաջորդայնության բացակայության պատճառաբանությամբ:
5. Այդ պատասխանատվությունը պարտավորեցնում է պաշտոնապես ճանաչել ցեղասպանության փաստը և իբրև հետևանք՝ հատուցել հայ ժողովրդին պատճառած վնասը:
6. ՄԱԿ-ը և նրա յուրաքանչյուր անդամ իրավասու են պահանջել այդպիսի ճանաչում և այդ գործում աջակցել հայ ժողովրդին:

Գնահատական տալով այս որոշմանը, անհրաժեշտ է ընդգծել, որ միջազգային ներկայացուցչական հասարակական կազմակերպություններից մեկը՝ Ժողովուրդների Մշտական Ատյանը, հայերի բնաջնջումը





Օսմանյան կայսրությունում առաջին աշխարհամարտի տարիներին ամենայն որոշակիությամբ որակեց իբրև ցեղասպանություն: Դրանով իսկ կարևոր քայլ արվեց հայերի ցեղասպանության փաստի միջազգային իրավական ճանաչման և համաշխարհային ընկերակցության կողմից դրա դատապարտման ճանապարհին:

## 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ»*

**Համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան**

Եվրոպական խորհրդարանը Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) ղեկավար մարմիններից է, ստեղծվել է 1957 թ. Հռոմի պայմանագրով և օժտված է խորհրդատվական իրավունքով: Օրենսդրական նախաձեռնության իրավունք չունի, բայց կարող է հանձնարարականներ մշակել ընդհանուր քաղաքական հարցերի վերաբերյալ: Ունի 434 պատգամավոր, որոնք ընտրվում են 5 տարին մեկ՝ ընդհանուր ուղղակի ընտրությունների միջոցով: Խորհրդարանում ֆրակցիաները կազմված են կուսակցականության սկզբունքով: Միջխորհրդարանային կապեր է պահպանում տարբեր ազգությունների հետ: Նստաշրջանները տեղի են ունենում Ստրասբուրգում (Ֆրանսիա), Լյուքսեմբուրգում, Բրյուսելում (Բելգիա):

Հայերի ցեղասպանության հարցը Եվրախորհրդարանում սկսել է քննարկվել 1983 թ. սեպտեմբերի 19-ից, երբ սոցիալիստական ֆրակցիայի ներկայացուցիչներ Պաուլա Դյուպոնը (Ֆրանսիա) և Եռնեստ Գլինը (Բելգիա) քննարկման ներկայացրին Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ օրինագիծ: 1984 թ. հունվարի 22-ին այն քննարկվեց Եվրախորհրդարանի քաղաքական հարցերի հանձնաժողովի նիստում: Օրինագծում մատնանշվում էր, որ Եվրախորհրդարանը «ԵՏՀ-ի

* Հայկական Հարց. Հանրագիտարան, Երևան. Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն /1992, ռուս./, 1996, էջ 119-120; О решении Европейского Парламента по вопросу Геноцида армян. – *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1988, 2, с. 54-58:

նախարարների խորհրդից պահանջում է. ա. հայտարարել ցեղասպանությունը ճանաչելու մասին, բ. հասնել այն բանին, որպեսզի թուրքական կառավարությունն ընդունի 1915 թ. ցեղասպանության պատմական փաստը, գ. համոզել Թուրքիայի կառավարությանը, որ թուրք-հայկական խնդրի արդարացի ու հիմնավոր լուծումը հնարավոր է միայն քաղաքական երկխոսության միջոցով, դ. հասնել նրան, որ ՄԱԿ-ը նույնպես ընդունի նույնանման հայտարարություն»:

Քննարկման ժամանակ Հանձնաժողովի որոշ անդամներ առաջարկեցին տվյալ հարցը ընդգրկել Թուրքիայի վերաբերյալ Եվրախորհրդարանին ներկայացվելիք ընդհանուր զեկուցագրի մեջ: Սակայն Թուրքիայի կողմից Գ.ՖՀ կառավարության վրա գործադրված դիվանագիտական ճնշման հետևանքով Գ.ՖՀ-ից ընտրված պատգամավորները առաջարկեցին և հասան այն բանին, որ Հանձնաժողովը հետաձգի տվյալ օրինագծի քննարկումը մինչև 1984 թ. հունիսը՝ խորհրդարանական ընտրությունների ավարտը: 1984 թ. հոկտեմբերի 16-ին սոցիալիստական ֆրակցիայի նախագահ Անրի Սաքին (Ֆրանսիա), քաղաքական հարցերի հանձնաժողովի փոխնախագահ Ժիզել Շարզատը, Եռնեստ Գլինը և ուրիշներ կրկին Եվրախորհրդարանի քննարկմանը ներկայացրին Հայկական հարցի մասին օրինագիծը: 1984 թ. դեկտեմբերին Հանձնաժողովը հանձնարարեց էթնիկական խնդիրների հայտնի մասնագետ Ժակ Վանդեմյուլբրուքին (Բելգիա) համակողմանիորեն դիտարկել հարցը և նախապատրաստել համապատասխան զեկուցագիր: Աշխատանքի ընթացքում նա ենթարկվեց թուրքական պաշտոնատար անձանց ու լրագրողների ուժեղ ճնշմանը: Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը հանդես եկավ հայտարարությամբ, որում նա սպառնում էր վերանայել Թուրքիայի տնտեսական քաղաքականությունն այն երկրների հետ, որոնց ներկայացուցիչները դեմ կլինեն Թուրքիայի՝ Եվրախորհրդարան մտնելուն: 1985 թ. դեկտեմբերին Ժ.Վանդեմյուլբրուքը զեկուցագիրը ներկայացրեց Հանձնաժողովի քննարկմանը: Միաժամանակ գիտության ու մշակույթի մի շարք ականավոր գործիչներ դիմեցին Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանին՝ խնդրելով հայերի ցեղասպանությունը դատապարտող օրինագիծ ներկայացնել Եվրոպական խորհրդի հերթական նիստին, որը կայանալու էր Լյուքսեմբուրգում: Դիմումը ստորագրել





էին Ալբերտո Մորավիան (Իտալիա), խաղաղության Նոբելյան և լենինյան մրցանակների դափնեկիր Շոն Մաք Բրայդը (Իռլանդիա), Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Ադոլֆո Պերես Էսքիվելը (Արգենտինա), Ջորջ Ուայլդը (ԱՄՆ) և ուրիշներ: 1986 թ. փետրվարին հարցի քննարկումը կրկին հետաձգվեց Հանձնաժողովի անդամների կողմից տեքստում բազմաթիվ ուղղումներ մտցնելու պատրվակով, ընդ որին 32 ուղղումներից 21-ը ներկայացրել էին Գ.ՖՀ-ի և Դանիայի պատգամավորները: Վերջապես, 1987 թ. փետրվարի 25-ին Հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ (25 կողմ, 23 դեմ) հավանություն տվեց ներկայացված օրինագծին: 1987 թ. հունիսին Եվրախորհրդարանի պատգամավորներին դիմեց «Ֆրանս-հայկական համերաշխություն» հասարակական կազմակերպությունը, որի կոչի տակ իրենց ստորագրություններն էին դրել գրողներ Ֆրանսուազ Սագանը, Էժեն Իոնեսկոն և Անրի Թրուայան, երգիչ Շառլ Ազնավուրը, պատմաբան Իվ Տերնոնը, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Անդրեյ Լվոֆն ու Լուի Նոելը և ուրիշներ: Նրանք խորհրդարանին կոչ էին անում «որպես ցեղասպանություն որակել բնաջնջման այն ծրագիրը, որն իրականացվել էր հայերի նկատմամբ, և այդպիսով տեղ հատկացրել մարդկության ու Եվրոպայի հիշողության մեջ նրանց, ովքեր դեռևս գերեզման չունեն այս աշխարհում»: Օրինագիծը մտցվեց Եվրախորհրդարանի նստաշրջանի օրակարգի մեջ, որը տեղի ունեցավ 1987 թ. հունիսի 15-19-ը, Ստրասբուրգում: Հարցի առթիվ նախաձեռնությամբ համատեղ հանդես եկան համայնավարական ու ընկերվարական ֆրակցիաները և, հունիսի 18-ին Եվրախորհրդարանը 68 կողմով և 60 դեմով հավանություն տվեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևին:

Փաստաթղթի ներածականում նշվում էր, «որ թուրքական կառավարությունը մինչև օրս հրաժարվելով ընդունել 1915 թ. ցեղասպանությունը, դրանով շարունակում է հայ ժողովրդին զրկել սեփական պատմություն ունենալու իրավունքից..., որ հայերի պատմականորեն ապացուցված ցեղասպանությունը մինչև օրս չի ստացել ո՛չ քաղաքական դատապարտում, ո՛չ համապատասխան հատուցում..., որ Թուրքիայի կողմից ցեղասպանության ընդունումը հետայսու կդիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական ռեաբիլիտացիայի խորապես մարդկային քայլ, որը

միայն պատիվ կբերի թուրքական կառավարությանը...»: Բանաձևի առավել կարևոր դրույթներից է հետևյալ կետը. «...Օսմանյան կայսրության մեջ հայ բնակչության հանդեպ 1915-17 թթ. գործադրված ողբերգական իրադարձությունները համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի, հանդիսանում է ցեղասպանություն»: Եվրախորհրդարանը Եվրոպական խորհրդից պահանջում էր ճնշում գործադրել թուրքական ներկա կառավարության վրա՝ 1915-17 թթ. կազմակերպված հայերի ցեղասպանությունը ճանաչելու համար և նպաստել Թուրքիայի և հայերի լիազոր ներկայացուցիչների միջև քաղաքական երկխոսություն հաստատելու գործին: Նշվում էր, որ ԵՏՀ-ի մեջ Թուրքիայի ընդունումն ուղղակի կախման մեջ է հայերի ցեղասպանության փաստի ընդունման հարցում նրա կառավարության դիրքորոշումից: Բանաձևի համաձայն, ԵՏՀ-ի մեջ Թուրքիայի մտնելու համար խոչընդոտ կլինեն նաև «Հունաստանի հետ վիճելի հարցերի լուծման ժամանակ միջազգային իրավական նորմերի կիրառումից նրա հրաժարումը, թուրքական օկուպացիոն զորքերի ներկայությունը Կիպրոսում, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը»: Մատնանշվում էին մարդու իրավունքների խախտումները, ժողովրդավարության բացակայությունը Թուրքիայում: Բանաձևը պահանջում էր, որպեսզի «Թուրքիայում ապրող հայկական փոքրամասնության նկատմամբ արդարացի վերաբերմունք լինի նրա ազգային ինքնատիպության, լեզվի, դավանանքի, մշակույթի և կրթական համակարգի հարցում...»: Որոշակի տեղ էր տրվում պատմական հուշարձանների պահպանությունը բարելավելու անհրաժեշտությանը: Եվրախորհրդարանը ԵՏՀ անդամ երկրներին կոչ էր անում հռչակել «20-րդ դարում գործադրված ցեղասպանության ու մարդկության դեմ հանցագործությունների զոհերի հիշատակի օր», մասնավորապես, այն հանցանքների, որոնց զոհը դարձան հայերն ու հրեաները:

Բանաձևը գոհունակությամբ ընդունվեց աշխարհի շատ երկրների առաջադեմ հասարակայնության կողմից: Թուրքական կառավարության վերաբերմունքը խիստ բացասական էր: Այդ առթիվ կառավարական հայտարարության մեջ, որը տարածեց ԵՏՀ-ին առընթեր թուրքա-





կան մշտական պատվիրակությունը, բանաձևը բնութագրվում էր որպես «կողմնակալ» ու «ռասիստական» փաստաթուղթ, «ատելությամբ լի» թուրք ժողովրդի հանդեպ, որը մերժվում է թուրքական կառավարության կողմից: 1987 թ. օգոստոսի 10-ին ամերիկյան «Թայմ» շաբաթաթերթը հրապարակեց թուրքական 13 ընկերակցությունների «Ուղերձը Եվրոպական խորհրդարանի անդամներին», որում իր արտահայտությունն էր գտել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ թուրքական պաշտոնական պատմագրության և քարոզչության կողմից առավելապես կեղծված ու խեղաթյուրված այն տեսակետը, թե հայերը դարձել են պատերազմական անհրաժեշտությամբ իրականացված տեղահանության ու հիվանդությունների զոհ, և ոչ մի ցեղասպանություն էլ չի գործադրվել նրանց նկատմամբ:

Եվրախորհրդարանի բանաձևը միջպետական կազմակերպության կողմից ընդունված առաջին պաշտոնական փաստաթուղթն էր, որի մեջ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության հանցավոր գործողությունները Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ որակվում են որպես ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայով սահմանված ցեղասպանության դրսևորում:

*Գ-րկ. Parlement Européen. Le point de la session. Strasbourg, 15-19 Juin 1987, Doc. A2-33/87, p. 41-43; Le Mond, 10 Juin, 1987; Time, No. 6, 1987; Եվրապառլամենտի 1987 թվականի հունիսի 18-ի բանաձևը: - Բանբեր Հայաստանի Արխիվների, 1989, Հ. 2, էջ 6-12; Киракосян А.Дж., Сафрастян Р.А., О решении Европейского Парламента по вопросу Геноцида армян. - Բանբեր Հայաստանի Արխիվների, 1988, հ. 2, էջ 54-58.*

## 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԻ» ՄՈՒԹ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ*

**Համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան**

Ամերիկյան ազդեցիկ «Թայմ» շաբաթաթերթը 1987 թ. օգոստոսի 10-ի համարում տպագրել է «Ատլանտյան դաշինքի թուրքական ընկերակցություն», «Թուրք խորհրդարանականների միություն», «Թուրք լրագրողների միություն» և այլ, թվով 13 թուրքական միությունների և կազմակերպությունների «Ուղերձը եվրոպական խորհրդարանի անդամներին»:

Ուղերձը փաստորեն պատասխան է Եվրոպական խորհրդարանի հունիսի 15-19-ը Ստրասբուրգում տեղի ունեցած նստաշրջանի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևին:

Բանաձևում նշվում է, որ «ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-17 թթ. Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայերի կյանքում, հանդիսանում են ցեղասպանություն» և պահանջվում է, որպեսզի ներկայիս թուրքական կառավարությունը ճանաչի այդ փաստը: Ընդ որում Թուրքիայի անդամակցությունը Եվրոպական տնտեսական համագործակցությանը (ԵՏՀ), որին Անկարան եռամյա է լինում շարունակ, ըստ վերոհիշյալ բանաձևի՝ պայմանավորված է նաև խնդրո առարկա հարցում թուրքական կառավարության դիրքորոշմամբ: Եվ ապա Եվրախորհրդարանի ընդունած փաստաթղթում առաջարկվում է, որ ԵՏՀ-ի անդամ պետությունները սահմանեն 20-րդ դարում իրագործված ցեղասպանությունների զոհերի հիշատակի օր:

Բանաձևում խոսվում է ոչ միայն հայերի մասին: Եվրախորհրդարանի պատգամավորների համոզմամբ՝ ԵՏՀ-ին Թուրքիայի անդամագրվելուն խոչընդոտում է նաև «Հունաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդրում Թուրքիայի կողմից միջազգային օրենքների խախտումը, թուրքական օկուպացիոն զորքերի առկայությունը Կիպրոսում», ինչպես նաև «քրդական իրադարձությունների» անտեսումը, այսինքն քրդերի ազատագրական պայքարի փաստի հերքումը Անկարայի պաշ-

* *Հայրենիքի ձայն*, 1987, 7 հոկտեմբերի:





տոնական շրջանակների կողմից: Փաստաթղթում հիշատակվում է նաև, որ Թուրքիայում ոտնահարվում են մարդու իրավունքները:

Սրանք են, ընդհանուր գծերով, Եվրախորհրդարանի Բանաձևի հիմնական դրույթները: Գնահատելով այս փաստաթուղթը, անհրաժեշտ է ընդգծել, որ առաջին անգամ միջազգային հեղինակավոր մի կազմակերպություն ընդունեց բանաձև, որտեղ երիտթուրքերի ոճրագործությունը ամենայն որոշակիությամբ որակվեց որպես ցեղասպանություն հայ ժողովրդի հանդեպ:

Օսմանյան Թուրքիայի կառավարողների գործած արյունալի ոճիրը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» հատուկ կոնվենցիայի բնորոշմանը, ըստ որի «Ցեղասպանության տակ հասկացվում են այն գործողությունները, որոնք կատարվում են լրիվ կամ մասնակիորեն այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը ոչնչացնելու մտադրությամբ»:

Հայկական ցեղասպանությունը պատմական իրականության անվիճելի փաստ է: Պատմական գիտությունը վերականգնել է հայ ժողովրդի ապրած ողբերգության ճշմարտացի, փաստարկված պատկերը: Դեռ մինչև այսօր էլ շարունակվում են նորանոր փաստեր հայտնաբերվել երիտթուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի ծրագրված, կանխամտածված ոչնչացման վերաբերյալ:

Երիտթուրքական վարչակարգի փլուզումից հետո համաշխարհային հասարակայնության սեփականությունը դարձան թուրքական իշխանությունների և «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի գաղտնի փաստաթղթերը: Դրանք ամբողջովին երևան հանեցին այդ զարհուրելի չարագործության հեղինակներին և իրագործողներին: Այսպես, երիտթուրքական կուսակցության ղեկավարներից մեկի՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի 1915 թ. մարտի 9-ի հրամանում գրված է. «Լիովին չեղյալ է հայտարարվում թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը: Սրան համապատասխան՝ կառավարությունն իր վրա է վերցնում ողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ մանուկներին օրորոցներում»:

Թուրքական իշխանությունները ժամանակին իրենք են ընդունել հայկական կոտորածների փաստը, իրենք դատել ու դատապարտել երիտթուրքերի բարբարոսական գործողությունները: 1919 թ. Ստամբուլում անցկացվեց «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների դատավարությունը: Հակառակ նրան, որ դատաքննությունը կատարյալ չէր, սակայն նույնիսկ դրա ընթացքում վեր հանվեցին երիտթուրքերի վարած հայատյաց քաղաքականության մի շարք փաստեր (մանրամասն տես՝ Ջ.Ս.Կիրակոսյան, «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», Երևան, 1983, էջ 157-235):

Վերջին տարիներին նկատվում են հայկական ցեղասպանության խնդրի նկատմամբ նոր միտումներ և մոտեցումներ: Դրանցից մեկը համաշխարհային հասարակայնության հետաքրքրության մեծացումն է այդ հարցի հանդեպ: Այդ հետաքրքրությունն իր արտահայտությունն է գտնում զանազան համաժողովներում՝ նշված հարցի քննարկման փաստի մեջ: Այստեղ կարելի է հիշատակել 1984 թ. ապրիլին Փարիզում տեղի ունեցած Ժողովուրդների մշտական ատյանի նստաշրջանը՝ նվիրված հատկապես այդ խնդրին: Նստաշրջանի որոշման մեջ նշվում է. «ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի ձևակերպմամբ՝ հայ ժողովրդի ոչնչացումը բռնի տեղահանության և զանգվածային սպանությունների միջոցով իրենից ներկայացնում է ցեղասպանություն, հայկական ցեղասպանությունը համարվում է միջազգային ոճրագործություն, որի համար պատասխանատվությունը պետք է կրի թուրքական կառավարությունը, որը չպետք է խույս տա պատասխանատվությունից այն պատրվակով, թե իբր չկա ժառանգորդություն այն ժամանակվա և ներկայիս թուրքական պետությունների միջև. այդ պատասխանատվությունը պարտավորեցնում է ընդունել եղեռնի պաշտոնական փաստը և իբրև հետևանք՝ փոխհատուցել այն վնասը, որ հասցվել է հայ ժողովրդին. ՄԱԿ-ը և նրա յուրաքանչյուր անդամ իրավունք ունեն պահանջել նման պատասխանատվության ընդունում և այս հարցում աջակցել հայ ժողովրդին»:

Միաժամանակ հայերի ցեղասպանության խնդիրը դառնում է միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի՝ ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնախմբի քննարկման առարկա: Այդ ենթահանձնախմբի պատվերով՝ Ռուանդայի ներկայացուցիչ Ն.Ռուհաշիանքիկոյի 1978 թ. պատրաստած հատուկ մի ուսումնասիրության մեջ Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ջարդը որակվում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և նշվում, որ այդ մասին գոյություն ունի «փաստաթղթերի բավական մեծ հավաքականություն»: 1985 թ. աշնանը նույն ենթահանձնախմբի նիստում լսվեց Բ.Վիտակերի զեկույցը՝ նվիրված ցեղասպանության ոճրի կանխմանը և նրա համար պատժի հարցին, որտեղ հայերի ցեղասպանությանը նվիրված էր հատուկ կետ:

Ի՞նչ նպատակ է հետապնդում վերը նշված ուղերձը, որ տպագրվել է «Թայմ» շաբաթաթերթի էջերում: Գուցե նրա տակ ստորագրած միությունները ու կազմակերպությունները որոշել են վերջապես ամբողջ ձայնով դատապարտե՞լ հայերի ցեղասպանության ոճիրը կամ խարանե՞լ չարագործության հեղինակներին: Ամենևին՝ ոչ:

Ուղերձում պնդվում է, որ դարերի ընթացքում Օսմանյան կայսրության հայ բնակչությունը թուրքերի հետ ապրել է հաշտ ու խաղաղ, բայց 1915 թ. երկրի հյուսիսարևելյան մասում ապստամբել է օսմանյան իշխանությունների դեմ: Ռուսական բանակի կազմում գտնվող «հայկական ահաբեկչական հրոսակախմբերը», որոնք կռվում էին Թուրքիայի դեմ, իբր ոչնչացրել են տասնյակ հազարավոր անմեղ մարդկանց. որպեսզի ապահովեն հայ բնակչության գերակշռությունը երկրի արևելքում: Դրա հետևանքով, կարդում ենք ուղերձում, թուրքական կառավարությունն ստիպված էր կազմակերպել մերձռազմաճակատային գոտու հայ բնակչության տեղահանում:

Ուղերձի հեղինակները չեն բացառում այն բանի հավանականությունը, որ ռազմական դրության, փոխադրամիջոցների բացակայության, կլիմայական պայմանների և համաճարակի պատճառով զոհվել են որոշ քանակությամբ հայեր: Միաժամանակ «պարզվում է», որ Օսմանյան կայսրության մնացած մասերում հայ բնակչությունը «շարունակել է ապրել խաղաղության և անվտանգության մեջ»: Ահա թե ինչ չափերի են հասնում թուրքական քարոզչության ժամանակակից ներկայացուցիչների սուտն ու ամբոխավարական շաղակրատանքը:

Ուղերձի հեղինակները բացահայտորեն կեղծում են իրողությունները՝

պնդելով թե իբր հայերին ձեռք չեն տվել այն շրջաններում, որոնք ռազմական գործողությունների թատերաբեմ չեն եղել: Հայերի ցեղասպանությունը և բռնի տեղահանությունն իրականացվեց գործնականում Օսմանյան կայսրության ողջ տարածքում, ներառյալ նաև պետության մայրաքաղաքը: Վերջիվերջո բոլորովին էլ ոչ պատերազմական ժամանակներում ծրագրվեց և իրականացվեց հայ բնակչության զանգվածային ջարդը 1894-96 թթ., որին զոհ դարձավ ավելի քան 300 հազար մարդ: Միայն պետության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում 1896 թ. կոտորվեց մոտ 10 հազար հայ: Եվ վերջապես Ադանա քաղաքը, որտեղ 1909 թ. երիտթուրքերը կազմակերպեցին 40 հազար հայերի ջարդը, գտնվում է ռուս-թուրքական սահմանից շատ հեռու:

Թուրքական քարոզչությունը կրկնելով իր հանկերգը՝ միշտ էլ Ռուսաստանին մեղադրում է ճնշված ազգերին սատար լինելու համար: Կովկասյան ճակատում ռուսական բանակի ռազմական գործողությունները, որի կազմում մարտնչում էին նաև արևելահայ կամավորներ, ունեին նաև ազատագրական բնույթ: Ռուսաստանի քաղաքականությունը համապատասխանում էր արևմտահայության ձգտումներին և շահերին: Ուղերձի հեղինակների պնդումներն այն մասին, թե ռազմական գործողությունների ընթացքում տեղի էր ունենում թուրք բնակչության կոտորած, բացահայտ կեղծիք են և չեն հիմնավորվում փաստերով:

Ուղերձում նշվում է, որ «Թուրքական քաղաքակրթությունը երբևիցե չի ունեցել ռասիստական միտումներ և որպես հետևանք՝ ցեղասպանության որևէ արտահայտություն»: Այնուհետև՝ «Օսմանյան կայսրությունը բազմազգ պետություն էր: Պատմությունը հավաստում է թուրքերի ավանդական հանդուրժողականությունը կայսրության մյուս ազգերի հանդեպ»: Այս կեղծարարություններին պատասխան կարող է ծառայել թեկուզ և տասնամյակների ընթացքում թուրքական պետության ղեկավարների կողմից պաշտոնապես որդեգրած ռասիստական և շովինիստական քաղաքական ուսմունքների լոկ թվարկումը՝ օսմանիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ, պանիսլամիզմ: Իսկ ներկայիս Թուրքիայում լայն տարածում են ստացել բազմաթիվ ազգայնամոլական և կիսաֆաշիստական կազմակերպություններ ու կուսակցություններ:





Ժողովուրդների հիշողությունը վկայում է, որ հակառակ օսմանյան պետության ղեկավարների «խաղաղասիրության», դարերի ընթացքում թուրքական լծի տակ ոչնչացվում էին ոչ միայն հայերը, այլև սերբերը, չեռնոգորցիները, հույները, բուլղարները, ասորիները, քրդերը, արաբները: Մասնավորապես, այդ բանը նշվում է նաև 1987 թ. մայիսի 19-20-ին Աթենքում տեղի ունեցած «Հայկական հարցը և թուրքական զավթողամոլությունը» միջազգային համաժողովի հայտարարության մեջ: Համաժողովին մասնակցում էին Սիրիայի, Բուլղարիայի, Պաղեստինի, Կիպրոսի, Հորդանանի և այլ երկրների հասարակայնության ներկայացուցիչները, որոնք ոչ միայն դատապարտեցին Օսմանյան կայսրությունում բնակվող ժողովուրդների նկատմամբ թուրքական կառավարողների վարած դաժան քաղաքականությունն, այլև ներկայիս Թուրքիայի ծավալապաշտական նկրտումները:

Փաստ է նաև, որ թուրքական իշխանությունների կողմից հայկական ցեղասպանության կազմակերպման և համակենտրոնացման ճամբարների ստեղծման դժոխային փորձը ուսումնասիրվում էր ֆաշիստական Գերմանիայի պարագլուխների կողմից Արևելյան Եվրոպայի երկրներում ցեղասպանության քաղաքականության իրագործումը ծրագրելիս: Պատահական չէ, որ 1939 թ. օգոստոսին Օբերզալցբուրգում տեղի ունեցած ֆաշիստական վերնախավի խորհրդակցության ընթացքում Հիտլերը լպիրշորեն հայտարարում էր. «Այժմ, մեր ժամանակներում այլևս ո՞վ է հիշում Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»:

Օսմանյան կայսրության շովինիստական և ծավալապաշտական ավանդական քաղաքականության շարունակության վառ օրինակ է նաև թուրքական բանակի ներխուժումը Կիպրոս 1974 թ.: Այս նվաճողական քաղաքականության հետևանքով զավթվել է Կիպրոսի տարածքի շուրջ 40 տոկոսը, ոտնահարվում են կիպրական ժողովրդի իրավունքները, իսկ ՄԱԿ-ի համապատասխան բանաձևերը թուրքական կառավարությունը բացահայտորեն արհամարհում է:

Ուղերձն ամբողջությամբ հերքում է Թուրքիայում քրդերի գոյության փաստը, իսկ երկրի հարավարևելյան նահանգներում տիրող լարված իրադրությունը բացատրվում է ոչ թե ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող ազգահալած քաղաքականությամբ, այլ հարևան

երկրներից թափանցող ահաբեկիչների և ավազակախմբերի գործունեությամբ:

Այս հարցում նույնպես ուղերձի հեղինակները փորձում են խեղաթյուրել գոյություն ունեցող իրավիճակը: Քրդերը Թուրքիայում գտնվում են ծայրաստիճան ծանր վիճակում: Թուրքական իշխանությունները հերքում են անգամ քուրդ ազգության գոյությունը: Քրդերը ոչ միայն զրկված են սեփական մամուլ ունենալու, այլև մայրենի լեզվով խոսելու իրավունքից: Քրդական շարժումը վերաճել է թուրքական իշխանությունների դեմ զինված պայքարի:

Ուղերձի վերջում հեղինակները զգուշացնում են Եվրախորհրդարանի անդամներին. «Մի մոռացեք: Թուրքիան կանգնած է ձեր և քաոսային, պայթյունավտանգ Մերձավոր Արևելքի միջև, հանդիսանալով այս շրջանի միակ կայուն և զորեղ երկիրը... Նա անդամակցում է բոլոր արևմտյան կազմակերպություններին, ներառյալ Ատլանտյան միությանը, որի կազմում պահում է եվրոպական երկրների ամենամեծ բանակը»:

Ակնհայտ է, որ Ուղերձի հեղինակները դիմում են քաղաքական շանտաժի, փորձելով հերթական անգամ զգուշացնել իրենց դաշնակիցներին: Կրկին առաջ են քաշվում Թուրքիայի ռազմավարական կարևոր նշանակության, «ՆԱՏO-ի հարավային թևի միջնաբերդ լինելու» հանգամանքը, «սովետական սպառնալիքի» մասին բազմիցս ծեծված հայտարարությունները:

Այս Ուղերձը մաս է կազմում արևմտյան որոշակի շրջանների կողմից որդեգրած այն քաղաքականության, որի նպատակն է վարկաբեկել ցեղասպանության բուն խնդիրը: Թուրքական գիտնականների և քաղաքագետների, հրապարակախոսների և լրագրողների մի մասն առաջարկում են այս խնդրի իրենց «առանձնահատուկ» մեկնաբանություն: Այսպես՝ ընդգծված կանխակալ տեսակետներ են առաջ քաշում թուրքերի պաշտոնական շրջանները, բազմաթիվ գիտական կազմակերպություններ (Թուրքական պատմական ընկերություն, Թուրքական մշակույթի ուսումնասիրության ինստիտուտ և այլն), մամուլը (հատկապես աչքի են ընկնում *Թերջյումանի, Հյուրրիեթ, Միլլիեթ* թերթերը), ռադիոն և հեռուստատեսությունը: Այդ տեսակետները աղաղակող հակասության մեջ են պատմական իրականության հետ:





Թուրք պատմաբանների թվում առանձնացել են մի ամբողջ շարք այսպես կոչված «գիտնականներ», որոնք, մոռանալով իրենց մասնագիտական նախասիրությունները, ներկայումս իրենց «գիտելիքներն» օգտագործում են հայկական ցեղասպանության հարցը խեղաթյուրելու նպատակով: Կարելի է հիշատակել Թյուրքքայա Աթայովի, Բիլյալ Շիմշիրի, Սալահի Սոնիելի, Քյամուրան Գյուրունի, Մյումթազ Սոյսալի և այլոց անունները: Սրանց ջանքերի շնորհիվ ստեղծվել է ցեղասպանության խեղաթյուրված մի կոնցեպցիա, որն իր ամբողջական արտահայտությունն է գտել վերոհիշյալ Ուղերձում:

Սխալ կլիներ կարծել, թե թուրքական կեղծարարների «վարժանքները» մնում են գիտական հրատարակությունների նեղ շրջանակներում: Դրանք լույս են տեսնում մեծ տպաքանակներով՝ բրոշյուրների և գրքերի տեսքով, ոչ միայն թուրքերեն, այլև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ լեզուներով և ուղարկվում աշխարհի շատ երկրների թերթերի և ամսագրերի խմբագրություններին, համալսարաններին և գիտական կենտրոններին, ինչպես նաև քաղաքական և պետական գործիչներին:

Թուրքական ռադիոյի արտասահմանյան ծառայությունը, նպատակ ունենալով աշխարհի ժողովուրդների մեջ սերմանել հակահայկական տրամադրություններ, արևելյան և արևմտյան մի շարք լեզուներով տրվող հաղորդումներով ողողել է եթերը: Հակահայկական ճամարտակություններին մասնակցում է նաև երկրի հեռուստատեսությունը: Այսպես, 1986 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներկայացվեց «Արյունը պատի վրա» գեղարվեստական ֆիլմը, որտեղ առավել խտացված ձևով արտահայտված է ցեղասպանության մասին թուրքական կեղծ վարկածը:

Ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստերը վկայում են, որ թուրքական որոշակի շրջաններ վերջին տարիներին բուռն գործունեություն են ծավալել, նպատակ ունենալով ծուռ հայելու մեջ ներկայացնել Հայկական հարցը: Ընդ որում հաճախ այս գործունեությունը վերածվում է հայ ժողովրդի դեմ ուղղված լայնածավալ սադրանքների: Մի կողմից հերքվում է հայկական ցեղասպանությունը, մյուս կողմից փորձեր են արվում հայ ժողովրդի մաշխարհային հասարակական կարծիքը տոգորելու հայ ժողովրդի նկատմամբ թշնամանքի ոգով: Այս փորձերից վերջինը Եվրախորհրդարանի անդամներին ուղղված Ուղերձն է:

Այս կեղծարարությունը պաշտպանություն է գտնում ՆԱՏՕ-ի երկրների որոշ հետադեմ քաղաքագետների և պատմաբանների կողմից (Մայքլ Գյունտեր, Ուիլյամ Հաու, Սթենֆորդ Շոու, Ջասթին Մակկարտի, Նորման Ռասիչ և ուրիշներ): 1986 թ. թուրք-ամերիկյան ընկերակցությունը Վաշինգտոնում լույս ընծայեց «Հայերի պնդումները. առասպել և իրականություն (փաստեր և փաստաթղթեր)» գիրքը՝ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շյուքրու Էլեքդաղի առաջաբանով: Սա պատմությունը, ժամանակակից միջազգային իրադրությունը և ԽՍՀՄ-ի արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը խեղաթյուրելու հակախորհրդային, հակառուսական և հակահայկական ճկրտումների մի քնորոշ օրինակ է, որտեղ ի մի են բերված ամերիկյան քաղաքական գործիչներ Ջորջ Շուլցի, Կասպար Ուայնբերգերի, Պոլ Հենցիի, Ռոբերտ Ստրաուս-Հյուփի և այլոց ելույթները, նամակները և հոդվածները, որոնցում հեղինակները ամբողջությամբ պաշտպանում են Թուրքիայի դիրքորոշումը հայկական ցեղասպանության հարցում:

Այս մասին է վկայում նաև ԱՄՆ-ի Կոնգրեսում հայկական ցեղասպանության փաստի ընդունման հարցի քննարկումը: Մի քանի տարի առաջ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում քննարկման էր ներկայացվել ապրիլի 24-ը որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի և հայկական կոտորածների զոհերի միջազգային օր սահմանելու» հարցը: Թուրքական կառավարության ճնշման տակ հարցի քննարկումը տարեցտարի հետաձգվում էր: Թուրք ղեկավարները բազմիցս զգուշացնում էին Սպիտակ տանը, որ վերոհիշյալ որոշման ընդունման դեպքում հնարավոր են լուրջ բարդություններ թուրք-ամերիկյան հարաբերություններում, ընդհուպ մինչև Թուրքիայի դուրս գալը ՆԱՏՕ-ից:

Այսպիսով ամերիկյան Կոնգրեսի կողմից հայկական ցեղասպանության վերաբերյալ որոշման ընդունումն ի սկզբանե դատապարտված էր ձախողման: Կոնգրեսը չէր կարող ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակցի պատիվը «վիրավորող» փաստաթուղթ հաստատել: 1987 թ. օգոստոսի 7-ին երկժամյա բանավեճերից և 18 կոնգրեսմենների ելույթներից հետո Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 20 ձայնի տարբերությամբ մերժեց բանաձևը: Պատահական չէ, որ «Ուղերձը եվրոպական պառլա-





մենտի անդամներին» «*Թայմում*» հրապարակվեց ներկայացուցիչների պալատում հայկական ցեղասպանության վերաբերյալ հարցի քննարկումից երեք օր անց:

20-րդ դարի առաջին ցեղասպանությունից հետո անցել է ավելի քան յոթ տասնամյակ: Պատմությունն արդեն տվել է իր արդարացի դատավճիռը: Ինչպես նշել է «*Պրավդան*», «...ցեղասպանության մեծագույն ակտերից էր իմպերիալիզմի ծնած հաշվեհարդարը, որ օսմանյան Թուրքիայի ղեկավարներն իրականացրին հայկական բնակչության նկատմամբ» («*Պրավդա*», 1985, 24 ապրիլի):

«Եվրախորհրդարանի անդամներին ուղղված ուղերձը» թուրքական քարոզչության հերթական փորձն է՝ խեղաթյուրելու և սևացնելու պատմական ճշմարտությունը: Սակայն այն դատապարտված է ձախողման: Ժողովուրդների խիղճը ոչ միայն դատապարտում է հայկական ցեղասպանությունը, այլև վրդովվում է հետադեմ գաղափարախոսների և կեղծարարների՝ մարդկության պատմության էջերից արդարությունը և ճշմարտությունը ջնջելու զուր փորձերից:

# 4. ГЕНОЦИД АРМЯН И ОСМАНСКИЕ АРХИВЫ*

**Соавтор – Рубен Сафрастян**

Геноцид армян, осуществленный младотурецким правительством Османской империи в годы первой мировой войны, является неоспоримым фактом исторической действительности. В результате этого тягчайшего преступления Западная Армения полностью лишилась своего автохтонного населения, оставшаяся в живых часть западноармянского народа рассеялась по всему миру, образовав в странах Европы, Америки, Ближнего Востока, Австралии многочисленные колонии – армянскую диаспору.

Геноцид оставил глубокий след в памяти армянского народа, стал частью духовной жизни каждого армянина. Сегодня весь ар-

* *Коммунист*, 1990, 18 апреля.

мянский народ, общественность многих стран мира требуют осуждения и признания мировым сообществом факта геноцида армян, восстановления исторической справедливости. Совершенные в 1988-90 гг. в Азербайджане преступления против армянского населения, явившиеся ответом на справедливые требования армян Арцаха о воссоединении с Арменией, воскресили в народной памяти страшные картины прошлого и сделали еще более настоятельной необходимость осуждения политики геноцида в отношении этнических групп и целых народов независимо от времени и места его осуществления. Выражением справедливых требований и чувств армянского народа явился закон Армянской ССР от 22 ноября 1988 г. "Об осуждении геноцида армян 1915 года в Османской Турции".

Геноцид армян полностью подпадает под принятое Генеральной Ассамблеей ООН в 1948 г. определение конвенции "О предупреждении преступления геноцида и наказании за него". В ней сказано, что геноцид – это "действия, совершаемые с намерением уничтожить, полностью или частично, какую-либо национальную, этническую, расовую или религиозную группу как таковую". Если о резне и депортации армянского населения Османской империи судить исходя из двух основных пунктов статьи 6-ой Устава Нюрнбергского международного военного трибунала, то становится очевидной идентичность преступлений, совершенных младотурками и нацистами: убийства, истязания, увод в рабство гражданского населения, массовый грабеж и вандализм. Геноцид армян осужден Всемирным конгрессом мира, состоявшимся в Хельсинки в июле 1965 г.

Проблема геноцида армян остается предметом обсуждений в органе ООН – Подкомиссии по предупреждению дискриминации и защите национальных меньшинств Комиссии по правам человека. Она заняла особое место в 30-ом параграфе предварительного специального исследования по вопросу о предупреждении геноцида и наказании за него, представленном подкомиссии представителем Руанды Никодемом Рухашианкико в 1973 г. В нем массовое истребление армян в Османской империи квалифицировалось как "первый геноцид 20-го века". При обсуждении доклада на 26-ой сессии подкомиссии, затем на 30-ой сессии Комиссии ООН по правам человека представитель Турции потребовал опустить указание на геноцид армян. Из окончательного варианта доклада, представленного в 1878 г. 31-ой сессии подкомиссии, была исключена вся историческая часть вместе с упоминанием о геноциде армян. Исследование было передано на рассмотрение 35-ой сессии Комиссии ООН по правам человека (февраль – март 1979 г.). В ходе обсуждения подавляющее число делегаций выступило за восстановление в исследовании упоминания о геноциде армян. Подкомиссией было поручено представителю Великобритании Бенджамену Уайтекеру подготовить новое исследование по вопросу о предупреждении преступления геноцида и наказании за него. На заседании подкомиссии в Женеве в 1985 г. был заслушан доклад Б.Уайтекера по данному вопросу, однако в результате дискуссий по ряду причин подкомиссия отвергла проект резолюции и ограничилась лишь принятием доклада к сведению. Вместе с тем в исторической части доклада специально было отведено место резне армянского населения Османской империи в годы первой мировой войны – первому геноциду XX века. При этом отмечалось, что по данной проблеме существует обширная документация.

Начиная с 1983 г. проблема геноцида армян рассматривается в Европарламенте. 18 июня 1987 г. Европарламент большинством голосов принял резолюцию "О политическом решении Армянского вопроса". Впервые представительный международный орган проголосовал за резолюцию, в которой преступление младотурецкого правительства со всей определенностью квалифицировано как геноцид в отношении армянского народа. В преамбуле резолюции отмечалось, "что турецкое правительство, отказываясь признать геноцид 1915 г., продолжает тем самым лишать армян-

ский народ права на собственную историю". Тем самым Европарламент осудил не только антиармянскую политику правящих кругов современной Турции, но и фальсифицированную версию геноцида армян, широко пропагандируемую турецкими историками в последнее время.

Примечательно, что резолюция не ограничивается голословным осуждением политики турецких властей; в ней особо отмечается, что принятие Турции в Европейское Экономическое Сообщество находится в прямой зависимости от позиции ее правительства в вопросе признания факта геноцида армян. Это довольно серьезное средство оказания давления на Турцию, ибо она уже многие годы добивается вступления в это сообщество, ассоциированным членом которого является еще с 1963 г.

Одна из новых тенденций последних лет состоит в усилении интереса мировой общественности к проблеме геноцида армян, что находит выражение в ее обсуждении на различных международных научных и общественных форумах, конференциях, симпозиумах. Отметим, например, специально посвященную этой проблеме сессию Постоянного трибунала народов в Париже (апрель 1984 г.), международную конференцию "Армянский вопрос и турецкий экспанционизм" (Афины, май 1987 г.). В мае 1989 г. в американском городе Сан-Антонио проходил съезд Всемирного совета церквей. Съезд единогласно (350 представителей) принял резолюцию, содержащую воззвание ко всем церквам - членам совета, "обратиться к правительствам своих стран с призывом оказать давление на Турцию с целью признания ею факта геноцида армян". Резолюция потребовала от Турции "освободить захваченную Армению и обеспечить право армян диаспоры возвратиться на свою родину", "приступить к восстановлению и реконструкции свыше двух тысяч храмов и церквей, разрушенных в стране в течение последних 75 лет".

Вопрос о признании и осуждении мировым сообществом факта геноцида армян поддерживают некоторые государства, такие, как Франция, Греция, Аргентина и др. В течение ряда последних





лет на повестку дня сената и палаты представителей конгресса США регулярно выносятся резолюции о геноциде армян в Османской империи. Выдвигаемые в предыдущие годы на рассмотрение конгресса резолюции по Армянскому вопросу не набирали здесь необходимого количества голосов и отклонялись на разных этапах слушаний. Обычно решающую роль при этом играла позиция государственного департамента, департамента по обороне и президента США, которые последовательно выступали против принятия резолюции.

Руководители турецкого государства постоянно предупреждают правительство США о возможности возникновения серьезных осложнений в турецко-американских отношениях, вплоть до выхода из военного блока НАТО в случае принятия резолюции. При этом ими подчеркивается стратегически важное значение Турции в системе политики Запада как "бастиона южного фланга НАТО", защищающего одну треть 3600-мильной границы со странами Варшавского Договора, указывается, что Турция имеет крупнейшую армию среди европейских членов блока, контролирует проливы Босфор и Дарданеллы.

7 декабря 1987 г. палата представителей конгресса США в очередной раз отклонила представленную членами демократической партии США резолюцию о проведении 24 апреля каждого года "Международного дня памяти жертв бесчеловечного отношения человека к человеку и армянской резни". В сентябре 1989 г. подобная резолюция была представлена в сенат США представителем республиканской партии, сенатором Робертом Доулом. Несмотря на то, что в октябре законодательная комиссия сената США одобрила представленную резолюцию, президент США Джордж Буш под сильнейшим давлением турецких властей (введение 25 октября 1989 г. санкций против американского присутствия в Турции) был вынужден предупредить конгресс о возможных последствиях принятия резолюции. 27 февраля 1990 г. сенат США отказался от обсуждения и голосования по резолюции о геноциде армян.

Массированная пропагандистская кампания по дискредитации и фальсификации проблемы геноцида армян проводится сегодня в Турции. Ее основы были заложены уже непосредственно после осуществления программы уничтожения армян. Она заметно усилилась с середины 70-х гг., когда оказалась возведенной в ранг турецкой государственной политики. Подчеркнуто тенденциозную политику, идущую вразрез с исторической действительностью, занимают многие турецкие научные организации (например, турецкое историческое общество, институт изучения тюркской культуры, факультет истории и литературы Стамбульского университета и др.), органы печати (особо выделяются газеты *Терджюман, Хюрриет, Миллиет*), телевидение и радио этой страны. Среди турецких историков оформилась целая группа "ученых", которая, забыв о своих прежних пристрастиях, переключилась на проблему геноцида армян. Следует отметить имена Тюрккая Атаева, Салахи Сониэля, Кямурана Гюрюна, Мюмтаза Сойсала и др. Именно их усилиями была сформулирована фальсифицированная концепция геноцида. Вот ее основные положения: 1) геноцида армян не было, имело лишь место высылка части армянского населения из прифронтовой полосы; 2) по дороге незначительная часть из них погибла вследствие голода, болезней и других лишений военного времени; 3) в годы первой мировой войны турецкий народ дал значительно больше жертв, чем армяне; при этом большинство из мирных турецких жителей погибло от рук армянских убийц; 4) многочисленные факты, документы, свидетельства очевидцев сфабрикованы самими армянами.

Остановимся поподробнее на последнем положении турецкой концепции, которое имеет непосредственное отношение к основной теме данной статьи – открытию османских архивов в Турции.

В течение прошедших со времени первой мировой войны более семи десятка лет опубликовано большое число архивных документов, относящихся к геноциду армян. Первые 52 документа, представляющие собой секретные указы Талаата по поводу выселения и уничтожения армянского населения Османской империи,





были опубликованы впервые в 1920 г. в Лондоне армянским писателем и публицистом Арамом Антоняном. Документы были переданы ему главным секретарем комитета по выселению г. Алеппо Наим-беем. Современные турецкие историки Тюрккая Атаев, Шинаси Орел, Сюррейа Юдж и другие не признают подлинности этих документов, считая их "сфабрикованной армянами фальшивкой". Однако недавно историк Ваагн Дадрян (США) убедительно доказал их подлинность.

Как в советских, так и в зарубежных архивах хранится большое количество документов (дипломатическая переписка, свидетельства очевидцев и т.д.), относящихся к данной проблеме. К сожалению, издана лишь часть из них. Так, из опубликованных в Москве сборников, где содержатся относящиеся к Армянскому вопросу документы, можно отметить "Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. 1878-1917" (М., 1931-40), "Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего Министерства иностранных дел" (М., 1924) и др. В Армении опубликованы сборники "Геноцид армян в Османской империи" (под ред. М.Нерсисяна, Ереван, 1966), "Армения в документах международной дипломатии и советской внешней политики" (под ред. Дж.Киракосяна, Ереван, 1972), "Геноцид армян по материалам судебного процесса над младотурками" (сост. А.Папазян, Ереван, 1989), на основании архивных документов изданы десятки монографий, многочисленные статьи.

В последнее время во Франции, ФРГ, США, Великобритании, Аргентине, Уругвае и других странах ведется большая работа по выявлению и публикации документов, относящихся к проблеме геноцида армян. Среди сборников документов, опубликованных за рубежом, следует отметить "Армянский геноцид" (по материалам американской прессы времен первой мировой войны, сост. Т.Клоян, Нью-Йорк, 1980), "Великие державы, Османская империя и армяне в архивах Франции. 1914-1918" (сост. А.Бейлерян,

Париж, 1983), два тома "Армянский геноцид" Института Армянского вопроса (Мюнхен, 1987, 1988), причем второй из них содержит только австро-венгерские документы периода первой мировой войны и др. Краткое перечисление опубликованных основных сборников документов по данной проблеме приводит к естественному вопросу: неужели сегодня турецкая сторона считает, что сможет убедить мировую общественность в том, будто армяне сумели сфабриковать такое количество архивных материалов, хранящихся в архивах различных стран мира?

Существование обширной документации по проблеме геноцида армян, требования армянского народа и общественности многих стран мира признать и осудить факт имевшего место геноцида, особенно принятие Европарламентом резолюции "О политическом решении Армянского вопроса", заставили турецкие власти подумать о необходимости открыть османские архивы. Однако при этом, как мы еще убедимся, заранее поставлена задача показать всему миру, что документов, свидетельствующих о планомерной политике геноцида в отношении армянского населения Османской империи, в турецких архивах нет и быть не может. Такое поведение турецкой стороны можно рассматривать как попытку дезориентировать мировое общественное мнение, как пример международной демагогии.

Выступая в начале января 1989 г. в программе турецкого телевидения "32-й день", бывший министр иностранных дел Турции Месут Йылмаз заявил, что готовится открытие доступа исследователей к османским архивным документам, касающимся Армянского вопроса, в частности, периоду первой мировой войны. Он подчеркнул, что цель открытия архивов состоит в том, чтобы "научная правда об Армянском вопросе, наконец, была признана" (*Миллиет*, 1989, 4 января). С аналогичным заявлением выступил также представитель МИД Турции Инал Бату: "Турецкое правительство открывает архивы с целью добиться ясности в научной стороне проблемы геноцида" (*Миллиет*, 1989, 7 января).





Так что же представляют собой османские архивы? Прежде всего необходимо уточнить, что под выражением "османские архивы" следует понимать центральные государственные архивы Османской империи, содержащие документацию, связанную с деятельностью высших государственных учреждений (канцелярии султана, садразама, различных министерств и ведомств, их переписка с провинциальными органами управления, личные архивы султанов и отдельных высших сановников и т.п.). Все эти документы хранятся в семи зданиях, расположенных в Стамбуле. Их общее число составляет 100-150 млн. единиц хранения. К этому числу необходимо добавить еще 120 тыс. документов, находящихся в музее султанского дворца Топкапы. Часть документов военного ведомства в республиканский период была перевезена в Анкару. Большое количество документов находится в музеях различных городов, являвшихся в свое время центрами вилайетов бывшей Османской империи. Однако эти коллекции в понятие "османские архивы" не включаются.

Османские архивы считаются одними из богатейших в мире. Они представляют большую ценность не только с точки зрения истории собственно Турции, но и многих народов, входивших в разное время в состав империи османов.

Могут ли в османских архивах находиться документы по проблеме геноцида армян? Чтобы ответить на этот вопрос, необходимо учесть следующие обстоятельства:

1. Решение о массовом уничтожении и депортации армян было принято узкой группой лиц, принадлежащих в основном к руководящему ядру партии "Единение и прогресс" в ходе ряда тайных совещаний. Эти совещания носили неофициальный характер, поэтому их протоколы в османских государственных архивах должны, по всей вероятности, отсутствовать.
2. Депортация и резня осуществлялись в основном т.н. "специальной организацией" ("тешкилят-и максусе") и армией.

"Специальная организация" была создана младотурками для ведения секретной подрывной работы за границей. Непосредственно перед началом депортации в структуре "специальной организации" было создано сверхсекретное подразделение для ее осуществления. Оно подчинялось непосредственно ЦК партии "Единение и прогресс", причем некоторые члены ЦК о ее существовании даже не знали. Так что основная часть документации по депортации и уничтожению армян проходила по каналам партийной связи и осела, вероятнее всего, в архивах ЦК партии младотурок. А архивы военного министерства, как уже отмечалось, хранятся в Анкаре и считаются секретными. Доступ к ним закрыт.

3. В 1931 г. часть османских архивов турецкое правительство продало Болгарии в качестве простой бумаги. Там они были переданы в библиотеку им. Кирилла и Мефодия, составив основу коллекций восточных рукописей этой библиотеки. В настоящее время они уже в основном классифицированы и интенсивно изучаются болгарскими османистами. Среди документов есть такие, которые представляют немалый интерес для изучения истории армянского народа в средние века, однако документов по проблеме геноцида среди них нет. Часть из проданных Болгарии османских документов попала в Ватикан, однако и там маловероятно, что будут обнаружены прямые свидетельства о геноциде 1915 г.

Приведенные выше соображения хотя и делают маловероятным, что в османских архивах могут находиться соответствующие документы, однако исключить полностью эту возможность не следует. По нашему мнению, следы этого преступления младотурок можно найти в переписке центральных органов власти с губернаторами вилайетов и в других фондах. У турецкого правительства уже в 1986 г. имелись точные сведения о наличии в османских архивах документов, проливающих свет на обстоятельства геноцида





армян. Именно в том году все эти документы были выявлены, собраны в здании Главного управления государственных архивов в Стамбуле и помещены в специальные стальные сейфы, которые, как сообщала турецкая газета "*Гюнеш*" (1986, 10 августа) в течение 24-х часов находятся под непрерывным наблюдением специальных электронных следящих устройств. Можно предположить, что в настоящее время часть этих документов – наиболее "опасная" с точки зрения правительства – уже уничтожена.

Однако ту истину, что османские архивы могут представлять Турцию в невыгодном свете, правительство осознало довольно рано. Именно этим объясняется его стремление уже начиная с 1960-х гг. резко ограничить доступ специалистов в османские архивы. Лишь единицам из них предоставлялось право работать в них.

Заметим, что в Турции практически не ведется исследований в области истории и культуры национальных меньшинств Османской империи, в частности, армянского народа. Обращение к данной проблематике не только нежелательно, но и фактически запрещено. По заявлению одного турецкого ученого, пожелавшего остаться инкогнито, некоторые исследователи "постоянно чувствовали близость Дамоклова меча, повисшего над ними, и опасались, что публикация антитурецких материалов раз и навсегда лишит их права заниматься научной деятельностью" (*Гардиан*, 1989, 17 января). Подобная "избирательность" турецких властей вызывала законное недовольство в международных научных и общественных кругах и наносила серьезный удар по авторитету страны. Обозреватель газеты "*Миллиет*" Мехмед Али Биранд недавно признался, что "мы ставили такие преграды перед желающими пользоваться архивами, что нас называли страной, которая стремится скрыть истину" (*Миллиет*, 1989, 13 января).

Уже в начале 80-х гг. ряд турецких деятелей выступил с призывом открыть для иностранцев турецкие архивы. Так, известный ученый и журналист, обозреватель газеты "*Миллиет*" Мюмтаз Сойсал писал в 1981 г., что открытие архивов прибавит "уваже-

ния" к Турции (*Миллиет*, 1981, 30 мая). С заявлением о необходимости этого шага выступали также президент Турции Кенан Эврен и премьер-министр Тургут Озал (*Миллиет*, 1989, 13 января).

Работы по обработке османских архивов были начаты еще в 1981 г. (*Миллиет*, 1989, 13 января). Однако шли годы, а архивы все еще оставались под замком. В чем же причина? Завесу приоткрыла публикация репортажа Жана Говарда из Анкары в английской газете "*Гардиан*". В нем подробно рассказывалось о том, как под руководством генерального директора Главного архивного управления Турции Исмета Мироглу развернулась работа по отбору и классификации архивных документов. К этой работе было привлечено около 400 человек, обученных чтению на османском языке, а также "добрая дюжина архивариусов" (*Гардиан*, 1989, 17 января). Нетрудно догадаться, какие цели были поставлены перед ними. Ведь сам М.Йылмаз в своем упомянутом выше заявлении подчеркнул, что "только часть документов, касающаяся Армянского вопроса, будет предоставлена в распоряжение ученых, дабы разоблачить армянскую версию о геноциде 1915 г." Таким образом, уже изначально перед архивными специалистами была поставлена цель "разоблачить армянскую версию". Если сопоставить это с промелькнувшим на страницах турецкой демократической прессы, издающейся в эмиграции в Западной Европе, сообщением о том, что содержащие правдивую информацию о событиях 1914-18 гг. документы и книги библиотек и архивов Стамбула, Анкары и Эрзерума были сожжены в печах парового отопления, причем эта "операция" проводилась под руководством офицерских чинов в форме (*Тюркие постасы*, 1984, 13 января), то станет ясно, что открытие архивов является очередной акцией турецкого правительства в развернутой им широкой кампании, имеющей цель ввести в заблуждение мировую общественность.

Заявление об открытии османских архивов получило широкий резонанс как в Турции, так и за рубежом. Турецкие газеты опубликовали множество статей на эту тему, авторы которых в один





голос заявляли, что теперь-то, наконец, восторжествует справедливость и "...с Турции будет снято позорное обвинение в организации геноцида". Из этих публикаций выделяются две статьи М.А.Биранда, озаглавленные им весьма характерно – "Османские архивы полны опасности" (*Миллиет*, 1989, 13 января) и "Такое открытие архивов делу не поможет" (*Миллиет*, 14 января). Автор вынужден признать, что "открытие османских архивов – последний козырь в наших руках". Поэтому он призывает отнестись к этому со всей возможной серьезностью и не совершать никаких ошибок, что значительно усложнило бы задачу противостояния "утверждениям армян о геноциде". По его мнению, турецкая сторона близка к тому, чтобы совершить ряд ошибок. К первой он относит то обстоятельство, что в 1989 г. будут открыты архивы периода 1691-1894 гг., затем в течение последующих лет будет открыт доступ к документам, относящимся к 1894-1922 гг. Это обстоятельство, по мнению турецкого журналиста, даст возможность армянам утверждать, что тем самым турецкое правительство стремится скрыть истину. Дабы избежать этой опасности, он предлагает сразу же, в текущем году, открыть для доступа исследователей именно те документы, которые относятся непосредственно к проблеме геноцида. При этом он делает следующее "глубокомысленное" заключение: "Во всяком деле так: первое впечатление самое важное. Если упустить этот момент, то потом, что бы ни делал, все равно хорошего результата не достигнуть".

М.А.Биранд считает, что необходимо обеспечить доступ к документам любого желающего, в том числе армянина.

Наиболее примечательным является его предложение о том, чтобы создать специальную комиссию из туркологов США и Англии, известных своими туркофильскими работами, и поставить перед ними задачу отобрать необходимые документы и издать отдельной книгой. По утверждению Биранда, это произведет значительно более благоприятный эффект, чем если сборник издаст и будет распространять турецкое правительство и стоящие близко к нему ученые.

Основываясь на изложенных выше соображениях, Биранд делает следующий вывод: недостаточно открыть архивы, нужно также суметь хорошо "преподнести" и "продать" документы. Ну что же, яснее и не скажешь. Турецкому журналисту в искренности не откажешь. Примерно те же мысли высказываются в статьях обозревателя газеты "*Миллиет*" Хасана Пулура (*Миллиет*, 1989, 2 января) и посла в отставке Саджита Сомеля (*Джумхуррием*, 1989, 27 января).

16 мая 1989 г. турецкое правительство официально объявило об открытии османских архивов. Как ранее неоднократно отмечалось в турецкой прессе и официальных заявлениях, был открыт доступ исследователей лишь к документам об армянах, относящимся к периоду истории с 1691 по 1984 гг. Причем из 7 млн. архивных единиц, классифицированных специальной комиссией в течение 1987-89 гг., доступ открыт всего лишь к 10 тыс. документов. Было также заявлено, что в течение последующих трех лет будут открыты для исследователей еще 20 тыс. документов, относящихся к периоду истории с 1894 по 1922 гг. (*Монд*, 1989, 19 мая). Следует отметить, что решение это относится лишь к правительственным документам. Что касается военных архивов, где находится большинство документов, относящихся к данной проблеме, то доступ к ним до сих пор остается возможным только по особому разрешению.

Во время торжественной церемонии открытия архивов Мироглу обратился к армянам с демагогическим призывом также открыть свои архивы для окончательного решения проблемы геноцида (*Арминиен Андейт*, 1989, май-июнь, с. 3).

К открытию архивов был приурочен показ по турецкому телевидению двух документальных фильмов. Первый из них, многосерийный – "Память государств – архивы", рассказывает об османских архивах, об условиях хранения в них документов и пользовании ими ученых. Выступающие в нем ученые жалуются, в частности, на то, что процедура получения разрешения для работы в





архиве очень усложнена, и что каждый исследователь имеет право получить ксерокопии объемом не более 100 единиц.

Второй фильм, продолжительностью 12 минут, посвящен специально документам по истории армянского народа, находящимся в османских архивах. Этот фильм призван поддержать официальную точку зрения и является частью пропагандистской кампании по поводу открытия османских архивов. При этом фильм не содержит каких-либо конкретных сведений, проливающих свет на содержание этих документов.

В июне 1989 г. координатор исследовательской комиссии архивов турецкого правительства Орел выступил с заявлением, в котором вновь напомнил, что турецкая сторона открыла для иностранных исследователей, включая армянских ученых, османские архивы периода 1691-1894 гг. По его словам, открыт доступ к документам, которые собраны в 17 томах под общим названием "Армяне в османских документах", а через три года количество таких документов возрастет до 55. Он заявил также, что Армянский вопрос является не политическим, а историческим, и потому должен обсуждаться в кругу ученых, но не политиков. Орел отметил также, что инициатива турецкой стороны по открытию соответствующих архивов "стала хорошим ответом на утверждения о геноциде".

Вскоре, 29 июня 1989 г., представители посольства Турции в США не замедлили представить библиотеке конгресса США в Вашингтоне микрофильмы открытых архивных документов (*Арминиен Андейт*, 1989, май-июнь).

В интервью с журналистом Эмином Чолашаном турецкий историк Атаев заявил, что в открытых Турцией архивах периода 1691-1894 гг. не обнаружено ни одного (?) документа, свидетельствующего о жестокой политике турецких властей в отношении армянского населения. При этом ом отметил, что турецкая сторона даже при большом желании якобы не сможет скрыть от общественности какой-либо документ, так как все они друг с другом взаимосвязаны. Турецкий историк вновь заявил, что ни один до-

кумент, ранее опубликованный армянами, не соответствует действительности, является фальшивкой (Ашхар, 1989, 3 октября). Напомним Атаеву, что еще в 1982 г. в Анкаре турецким историком Билялом Шимширем издан двухтомный сборник документов "Британские документы об османских архивах (1856-1890)", в котором, несмотря на некоторый тенденциозный подход составителя, содержится значительное число документов (сообщения британских консулов, свидетельства миссионеров и т.д.), свидетельствующих о жестоком отношении турецких властей к подданным армянского происхождения.

В вышеупомянутом интервью Атаев утверждает, что армянская сторона сильна лишь своей пропагандой, имеет большие связи в западных странах, богатое лобби, с помощью которого и осуществляет свою антитурецкую кампанию (*Ашхар*, 1989, 3 октября). Мы не собираемся комментировать высказывания турецких историков относительно проводимой якобы армянами "антитурецкой кампании". Отметим лишь, что требования армянского народа направлены вовсе не против турецкого народа, а против официальной позиции турецкой стороны.

Армянские ученые как в Армении, так и за рубежом готовы принять предложение турецкой стороны о предоставлении права работать в османских архивах. Более того, еще в мае 1989 г. институт Зорьяна (США) официально обратился к турецким властям о готовности направить в Турцию ряд специалистов (в том числе и одного из авторов данной статьи) для изучения открытых османских архивов. Однако до сих пор ответа не последовало. Вместе с тем недавно по турецкому телевидению было заявлено, что архивы Турции уже посетило большое число исследователей-иностранцев, но армянских ученых среди них не оказалось, что свидетельствует якобы о лживости армянской версии событий.

Не исключена возможность того, что рано или поздно доступ к османским архивам для специалистов по проблеме геноцида армян будет открыт. Вряд ли можно сомневаться в том, что доку-





ментов, подтверждающих вину турецких властей в этом преступлении, там уже не окажется. Однако это никоим образом не может поставить под сомнение не только сам факт геноцида армян, но и ответственность турецкого правительства за его организацию и осуществление.

## 5. ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՌԱՑՎԱԾ ՉԷ*

### Համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան

Մարդկության պատմությանը հայտնի են ոչ քիչ թվով դեպքեր, որոնց անասելի ողբերգականությունը անխուսափելիորեն ստիպում է մեր հավաքական խղճին և բանականությանը դարձյալ ու դարձյալ վերադառնալ նրանց քննությանը՝ հասկանալու այդ ողբերգությունները սնող պատճառները և ճշավակելու նրանց հանցավոր հեղինակներին: Եվ այդ ամենը նրա համար, որպեսզի այլևս երբեք չկրկնվի նման մի չարիք:

Պատմության այդպիսի սև էջերին է պատկանում հայերի ցեղասպանությունը, որն իրագործվեց 1915-22 թթ. Օսմանյան Թուրքիայի երիտթուրքական կառավարողների և նրանց հետնորդների՝ քեմալականների կողմից: Այդ տարիների ընթացքում բարբարոսաբար ոչնչացվեց և բռնի տեղահանման ենթարկվեց ընդհանուր հաշվով մոտ երկու միլիոն մարդ՝ Արևմտյան և Արևելյան (այդ թվում նաև Արցախի) Հայաստանի, Կիլիկիայի քաղաքների ու գյուղերի, Մշո և Զեյթունի, Շուշիի և Շապին-Կարահիսարի, Մարաշի և Կարսի խաղաղ բնակչությունը:

Այդ ոճրագործությունների կազմակերպիչների հաշվարկները չարդարացան, նրանց չհաջողվեց երկրի երեսից վերացնել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկին: Հայ ժողովուրդը ոչ միայն կարողացավ պահպանել իր ֆիզիկական գոյությունն, այլև Արևելյան Հայաստանի տարածքի մի մասի վրա վերստեղծել իր պետականությունը:

Եղեռնը խոր հետք թողեց հայ ժողովրդի հիշողության մեջ, դարձավ

* *Խորհրդային Ղարաբաղ*, 1989, 24 ապրիլի:

ամեն հայի հոգևոր կյանքի անբաժանելի մասը: 1988 թ. սումգայիթյան արյունալի ոճրագործությունը, որն ըստ էության պատասխանն էր Արցախի հայության մայր հայրենիքի հետ վերամիավորման մասին արդարացի պահանջին, ժողովրդի հիշողության մեջ վերածնեց անցյալի սահմռկելի պատկերները և էլ ավելի հաստատակամ դարձրեց էթնիկական խմբերի ու մի ամբողջ ժողովրդի ցեղասպանության քաղաքականության դատապարտումը՝ անկախ նրա իրագործման ժամանակից և տեղից:

Հայ ժողովրդի ընդհանուր զգացմունքների արտահայտությունը հանդիսացավ 1988 թ. նոյեմբերի 22-ին ընդունված Հայկական ԽՍՀ «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին» օրենքը: Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը որոշեց. «Դատապարտելով 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Հայերի ցեղասպանության խնդիրը այսօր էլ չի կորցրել իր ոչ հասարակական-քաղաքական, ոչ էլ գիտական հրատապությունը: Խորհրդային Հայաստանում հայերի ցեղասպանության հետ կապված գիտական հարցերի լայն ուսումնասիրությունը սկսվեց 60-ական թթ. կեսերից: Հրատարակվեցին «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» և «Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում» վավերագրերի ժողովածուները, ինչպես նաև Ծ.Պ.Աղայանի, Մ.Վ.Արզումանյանի, Գ.Ա.Գալոյանի, Գ.Հ.Ինճիկյանի, Մ.Գ.Ներսիսյանի, Ջ.Ս.Կիրակոսյանի, Ս.Մ.Հակոբյանի, Գ.Բ.Ղարիբջանյանի, Ա.Մ.Մնացականյանի, Ս.Կ.Պողոսյանի, Ե.Ղ.Սարգսյանի, Ռ.Գ.Սահակյանի, Հ.Ռ.Սիմոնյանի և ուրիշների հետազոտությունները:

Նրանցում վերստեղծված է հայ ժողովրդի ողբերգության ճշմարտացի, փաստավավերագրված պատկերը: Այսօր էր ի հայտ են գալիս նորանոր արխիվային փաստաթղթեր, որոնք հաստատում են հայերի կանխամտածված ոչնչացման ծրագրի իրականացման փաստը:

Վերջին ժամանակներս հայերի ցեղասպանության խնդիրը դարձավ





արտասահմանյան երկրների գիտական, հասարակական և քաղաքական շրջանակների քննարկման և բանավեճերի առարկա:

Այս հարցով հիմնավոր կերպով զբաղվողներից են սփյուռքի հասարակական-քաղաքական գործիչներ և գիտնականներ Արթուր Բեյլերյանը, Ժերար Շալյանը, Ժան Մարի Կառզուն (Ֆրանսիա), Ռիչարդ Հովհաննիսյանը, Ռիչարդ Կլոյանը, Տիգրան Բոյաջյանը (ԱՄՆ), Ագապի Նասիբյանը (Կիպրոս), Ռուբեն Պողոսյանը (Սիրիա), Շավարշ Թորիկյանը (Լիբանան), Արտյոմ Օհանջանյանը (Ավստրիա), Պասկուալ Օհանյանը (Արգենտինա), ինչպես նաև որոշ արևմտյան պատմաբաններ՝ Դևիդ Մարշալ Լենգը, Քրիստոֆեր Ուոքերը (Մեծ Բրիտանիա), Իվ Տեռնոնը (Ֆրանսիա): Նրանց կողմից հրատարակված փաստաթղթերի ժողովածուներում, ուսումնասիրություններում օգտագործվում են նոր փաստավավերագրական նյութեր, ինչպես նաև վերահրատարակվում են դեպքերի ականատես հեղինակների աշխատություններ: Պետք է ասել, որ այդ ուսումնասիրությունները հիմնականում կառուցված են պատմական փաստերի հանդեպ անկանխակալ մոտեցման և գիտական ճշմարտությանը հասնելու ձգտման վրա:

Հայերի ցեղասպանությունը պատմական իրողության անժխտելի փաստ է և լիովին համապատասխանում է 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության ոճրագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայում տրված սահմանմանը: Այս փաստաթղթում ասված է, որ «ցեղասպանության տակ հասկացվում են այն գործողությունները, որոնք կատարվում են լրիվ կամ մասնակիորեն այս կամ այն ազգային, էթնիկական, ռասսայական կամ կրոնական խումբը ոչնչացնելու մտադրությամբ»:

Այս կապակցությամբ հայերի ցեղասպանության խնդիրը մնում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնախմբի քննարկման առարկա: Ռուանդայի ներկայացուցիչ Ն.Ռուխաշիանկիկոյի կողմից 1978 թ. ենթահանձնախմբի 31-րդ նստաշրջանի համար պատրաստված հատուկ ուսումնասիրության մեջ Օսմանյան կայսրության հայերի զանգվածային ջարդը որակվում էր որպես «20-րդ դարի առաջին ցեղասպա-

նություն» և նշվում, որ այդ մասին գոյություն ունի «փաստաթղթերի բավականին մեծ հավաքածու»: 1985 թ. նույն ենթահանձնախմբի նիստում լսվեց Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Բ.Վիտակերի զեկույցը՝ նվիրված ցեղասպանության ոճրի կանխարգելմանն ու նրա համար պատժի հարցին, որում հատուկ տեղ էր հատկացվել հայերի ցեղասպանությանը:

Սկսած 1981 թ. այդ խնդիրը քննարկվում է Եվրոպական համագործակցության երկրների ղեկավար մարմիններից մեկում՝ Եվրախորհրդարանում: Այդ մասին օրենքի նախագիծ մտցվեց Ստրասբուրգում, 1987 թ. հունիսի 15-19-ը կայացած Եվրախորհրդարանի նստաշրջանի օրակարգում: Այն քննարկվեց հունիսի 18-ի նիստում: Վիճաբանություններից հետո՝ ձայների մեծամասնությամբ ընդունվեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը:

Բանաձևի կարևորագույն հիմնադրույթներից է. «...Ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-17 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին»: Բանաձևում ասվում է. Թուրքիայում բնակվող հայերի «ազգային ինքնության իրավունքի ճանաչմանը», նրանց լեզվի, կրոնի, մշակույթի, կրթության համակարգի», ինչպես նաև պատմական հուշարձանների պահպանության մասին:

Ուշագրավ է, որ Եվրախորհրդարանը չի սահմանափակվում թուրքական իշխանությունների քաղաքականության լոկ բառացի դատապարտմամբ: Բանաձևում հատուկ նշվում է, որ Թուրքիայի անդամակցությունը Եվրոպական տնտեսական համագործակցությանը («Ընդհանուր շուկա») ուղղակիորեն պայմանավորված է խնդրո առարկա հարցում թուրքական կառավարության դիրքորոշմամբ:

Այն կապակցությամբ, որ վերջին տարիներին մարդու իրավունքների ու դրանց խախտման մասին հարցը գտնվել է միջազգային հասարակայնության ուշադրության կենտրոնում, աճել է նաև հետաքրքրությունը հայերի ցեղասպանության խնդրի նկատմամբ: Այն բարձրացվում է մի-





ջազգային զանազան գիտական և հասարակական համաժողովներում, կոնֆերանսներում և գիտաժողովներում:

Այստեղ կարելի է, մասնավորապես, հիշատակել 1984 թ. ապրիլին Փարիզում տեղի ունեցած Ժողովուրդների մշտական ատյանի նստաշր- ջանը՝ հատուկ նվիրված այդ խնդրին: Այս կազմակերպությունը տարբեր երկրների ներկայացուցիչներից կազմված հասարակայնության դատա- կան ատյան է: Նստաշրջանի որոշման մեջ նշված է. «ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի ձևակերպմամբ՝ բռնի տեղահանության և զանգվածային սպանությունների միջոցով հայ ժողովրդի ոչնչացումը հանդիսանում է ցեղասպանություն, որի պատասխանատվությունը պետք է կրի թուրքա- կան կառավարությունը, որը չպետք է խույս տա պատասխանատվու- թյունից, պատրվակ համարելով այն, որ իբր չկա ժառանգականություն այն ժամանակվա և ներկայիս թուրքական պետությունների միջև: Այդ պատասխանատվությունը պարտավորեցնում է ընդունել ցեղասպանու- թյան պաշտոնական փաստը և իբրև հետևանք՝ փոխհատուցել այն վնասը, որ հասցվել է հայ ժողովրդին...»:

1987 թ. մայիսի 10-20-ը Աթենքում տեղի ունեցավ «Հայկական հարցը և թուրքական ծավալապաշտությունը» միջազգային համաժողովը: Նրա աշխատանքներին մասնակցած աշխարհի բազմաթիվ երկրների հասա- րակայնության ներկայացուցիչները դատապարտեցին Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայ և այլ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ թուրք կառավարողների դաժան քաղաքականությունը:

Համաշխարհային ընկերակցության կողմից հայերի ցեղասպանու- թյան փաստի ճանաչման և դատապարտման հարցին սատար են կանգ- նում որոշ արևմտյան պետություններ: Այսպես, օրինակ, 1987 թ. Արգեն- տինայի ազգային կոնգրեսը հայերի ցեղասպանությունը դատապար- տող որոշում ընդունեց: Արգենտինայի արտաքին գործերի նախարարու- թյանը հանձնարարվեց հայկական ցեղասպանության միջազգային ճա- նաչմանն ու դատապարտմանը նպաստող քաղաքական ուղեգիծ որդեգ- րել:

Վերջին ժամանակներս արտասահմանյան մամուլի էջերում հաղորդ- վեց ԱՄՆ-ի կոնգրեսում հայկական ցեղասպանության փաստի ընդուն- ման հարցի քննարկման մասին: 1983 թ. կոնգրեսի ներկայացուցիչների

պալատի քննարկմանը ներկայացվեց ապրիլի 24-ը որպես «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի և հայկական կոտորածների զոհերի միջազգային օր» սահմանելու մասին բանաձևի նախագիծը: Սակայն թուրքական կառավարության ճնշման տակ հարցի քննարկումը տարեց տարի հետաձգվում էր, քանի որ Միացյալ Նահանգների վարչակազմը բազմիցս զգուշացնում էր, որ վերոհիշյալ բանաձևի ընդունման դեպքում հնարավոր են լուրջ բարդություններ թուրք-ամերիկյան հարաբերություններում, ընդհուպ մինչև Թուրքիայի դուրս գալը ՆԱՏՕ-ից:

Այդ կապակցությամբ կոնգրեսի ներկայացուցիչների պալատի սպիկեր Թ.Օ՚Նիլին 1985 թ. մարտի 4-ին ուղղված իր նամակում պետական քարտուղար Ջ.Շուլցը նշում էր, որ ԱՄՆ-ը պետք է ամեն դեպքում գնահատի Թուրքիայի հետ համագործակցությունը և լրջորեն վերաբերվի թուրքական կառավարության նախազգուշացումներին:

1987 թ. օգոստոսի 7-ին ամերիկյան կոնգրեսի ներկայացուցիչների պալատը հերթական անգամ մերժեց ներկայացված բանաձևը:

Միաժամանակ Թուրքիայի կողմից տարվում է քարոզչական լայն աշխատանք, որի նպատակն է հայկական ցեղասպանության խնդրի վարկաբեկումն ու խեղաթյուրումը: Այդ քաղաքականության հիմնաքարը դրվել էր հայերի բնաջնջման ծրագրի իրականացումից անմիջապես հետո: Այն նկատելի կերպով ուժեղացավ 70-ական թթ. կեսերից: Ընդգծված կանխակալ, պատմական ճշմարտությանը հակասող տեսակետներ են առաջ քաշում թուրքական պաշտոնական շրջանները, բազմաթիվ գիտական կազմակերպություններ (Թուրքական պատմական ընկերություն, Թուրքական մշակույթի ուսումնասիրության ինստիտուտ, Ստամբուլի համալսարանի պատմության և գրականության ֆակուլտետ ևն), այդ երկրի մամուլը (հատկապես աչքի են ընկնում *«Թերջյումաև»*, *«Հյուրիեթ»*, *«Միլլիեթ»* լրագրերը), ռադիոն, հեռուստատեսությունը:

Թուրք պատմաբանների թվում առանձնացել են մի ամբողջ շարք այսպես կոչված «գիտնականներ», որոնք, մոռանալով իրենց մասնագիտական նախասիրությունները, ներկայումս զբաղված են հայկական ցեղասպանության հարցով: Կարելի է հիշատակել Թուրքքայա Աթայովի, Բիլալ Շիմշիրի, Սալահի Սոնիելի, Քյամյուրան Գյուրյունի, Մյումթազ Սոյսալի և այլոց անուններ: Սրանց ջանքերի շնորհիվ ստեղծվել է ցեղասպանության խեղաթյուրված ըմբռնում:





Նրա հիմնական դրույթները հետևյալն են.

1. Հայերի ցեղասպանություն չի եղել, տեղի է ունեցել միայն հայ բնակչության մի մասի արտաքսում ռազմաճակատային գոտուց.
2. Ճանապարհին նրանց մի աննշան մասը զոհվել է սովի, հիվանդությունների և պատերազմական իրավիճակից բխող այլ զրկանքների հետևանքով.
3. Բազմաթիվ փաստերը, վավերագրերը, ականատեսների վկայությունները սարքված են հենց իրենց՝ հայերի կողմից.
4. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրք ժողովուրդը տվեց շատ ավելի զոհեր, քան հայերը, ընդ որում, թուրք խաղաղ բնակչության մեծ մասը սպանվեց հայ մարդասպանների կողմից:

Թուրք կեղծարարների «վարժանքները» չեն մնում գիտական հրատարակությունների նեղ շրջանակներում, այլ լույս են տեսնում մեծ տպաքանակներով՝ բրոշյուրների ու գրքերի տեսքով, ոչ միայն թուրքերեն, այլև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով, ուղարկվում աշխարհի շատ երկրների թերթերի ու ամսագրերի խմբագրություններին, համալսարաններին և գիտական կենտրոններին, ինչպես նաև քաղաքական ու պետական գործիչներին:

Թուրքական ռադիոյի արտասահմանյան ծառայությունը արաբերենով, պարսկերենով, ադրբեջաներենով, ռուսերենով, մի շարք արևմտյան լեզուներով հաղորդումներ է վարում, քարոզելով Անկարայի տեսակետը սույն հարցի վերաբերյալ: 1986 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թուրքական հեռուստատեսությամբ ցուցադրվեց «Արյունը պատի վրա» գեղարվեստական ֆիլմը, որտեղ առավել խտացված ձևով արտահայտված է ցեղասպանության մասին թուրքական կեղծ վարկածը:

Լիովին ժխտելով Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարողների կազմակերպած հայերի ցեղասպանության պատմական փաստը, *«Միլլիեթ»* թերթը 1988 թ. մարտի 12-ի համարում այն կարծիքն է հայտնում, որ «հայերն ամեն կերպ ջանում են Թուրքիան ներքաշել

հայ-ադրբեջանական բախման մեջ»՝ Սումգայիթը շարունակ համեմատելով «հայերի այսպես կոչված ցեղասպանության» հետ: Նույն թերթը «Մենք ձայնի իրավունք ունենք Ադրբեջանում» հոդվածում հասնում է սրբապիղծ հայտարարությունների, թե իբր «1914-18 թթ. հայերը թուրք բնակչության կոտորած էին կազմակերպել ինչպես Օսմանյան կայսրության մեջ, այնպես էլ Ադրբեջանում»:

20-րդ դ. առաջին ցեղասպանության իրագործումից անցել է ավելի քան 7 տասնամյակ: Պատմությունը արդեն տվել է իր արդարացի դատավճիռը: Սակայն տեղի ունեցած եղեռնագործության փաստի շուրջ պայքարը շարունակվում է մինչև օրս. ոճրագործությունը մոռացված չէ:

## 6. ПАСКВИЛЬ АДВОКАТА ДЕ МАЛЬВИЛЯ*

### Соавтор – Рубен Саакян

Азербайджанские власти сегодня используют все возможности и средства для сохранения выгодной для себя напряженности в Нагорном Карабахе, всячески избегая переговоров с целью достижения компромисса в установлении мира и спокойствия в регионе. Этим объясняется продолжение публикации газетных материалов, статей и книг, искажающих настоящее и прошлое Армении, оскорбляющих национальное достоинство армянского народа. Заметим, что мы давно уже перестали реагировать и отвечать на подобного рода “научные” опусы, однако обойти вниманием факт переиздания в Баку явно тенденциозной книги иностранного автора мы не смогли.

Итак, в прошлом году бакинское издательство “*Элм*” и информационно-издательское предприятие “*Туран*” (?!)[1] выпустили в свет на русском языке книгу французского адвоката Жоржа де Мальвиля (на титульном листе почему-то Малевил. – Р.С., А.К.)

* *Литературная Армения*, 1991, No. 10, с. 102-114.

1 Согласно пантюркистской идеологии Туран – гипотетическая родина-империя всех тюркоязычных народов – Прим. Р.С., А.К.





“Армянская трагедия 1915 года” (*Georges de Malleville. La tragedie arménienne de 1915. Paris, 1988*)[1].

На первый взгляд может показаться, что издатели книги поставили перед собой наконец-то добрую цель – ознакомить русскоязычного читателя с историей соседнего армянского народа. Ознакомить-то ознакомили (тираж 70 тыс. экземпляров в условиях бумажного дефицита), но не с истинной историей армянского народа начала нынешнего столетия, а с искаженной ее интерпретацией, целиком и полностью повторяющей официальную турецкую версию геноцида армян.

Называя себя “совершенно независимым наблюдателем”, автор пытается оспаривать факт геноцида армян и оказывается на самом деле в полной зависимости от турецкой официальной точки зрения и необъективных турецких источников. Все основные положения Мальвиля вытекают из тенденциозных суждений современных турецких историков Сониэля, Гюрюна, Шимшира, Орела, Юджа и др.

В небольшом предисловии книги французский историк Жан Поль Ру, известный своими тенденциозными взглядами на существо проблемы, пишет: “Поступок метра де Мальвиля – это поступок человека свободного; человека, который говорит открыто и честно то, что он хочет сказать, не заботясь о вкусах и течениях. И я полагаю, что то, во что верит его душа и совесть, - правда”. Мы согласны с тем, что при наличии души и совести свободный человек верит только в правду, что любой человек, в том числе и Жорж де Мальвиль может высказать свою точку зрения по поводу того или иного события. Однако когда речь идет об истории целого народа, можно высказывать суждения лишь опираясь на историческую истину, на объективные и достоверные факты. Посмотрим, на чем же основана “правда” адвоката де Мальвиля и его бакинских почитателей, выразивших ему благодарность “за любезное согласие на издание книги”.

1 Жорж де Мальвиль. Армянская трагедия 1915 года. Баку, 1990, с. 123.

Во введении к книге де Мальвиль пишет, что французская общественность якобы открыла для себя армян и армянское искусство в конце 1970 г., ознакомившись с выставкой достижений Советской Армении. По его мнению, "об армянах помнили то, что они, как копты, составляли христианскую секту и так же, как копты, жили изолировано где-то далеко в горах, но не в Африке, а на краю света, на Кавказе...Больше ничего о них не знали..." (с. 7). Согласно логике де Мальвиля, армяне дали о себе знать лишь после совершения ими террористических актов против представителей Турции в 1975 г., сопровождаемых пропагандой о забытом геноциде, "...которая основана на лжи и искажении отдельных фактов" (с. 12). Автор пишет: "Сторонний очевидец насилий, осуществляемых сегодня армянами, будь то словесное насилие или физическое, не может избежать впечатления фальши. У него появляется подозрение, что перед ним сценарий, смонтированный из отдельных кусочков для скрытых целей тайными режиссерами, и что актеры в этом сценарии, будь то ученые-историки или наемные убийцы, декламируют роли, которые они выучили наизусть" (с. 11). Видимо, именно поэтому де Мальвиль решил, будучи не специалистом-историком, "совершенно независимо" и "опираясь на истину", "восстановить" историческую правду, разоблачить армянских "тайных режиссеров".

В первой главе – "Исторические рамки событий", де Мальвиль позволяет себе весьма произвольно, не опираясь на какие-либо источники, излагать краткую историю армянского народа. Причем вся глава изобилует неточностями, слишком явно прослеживается тенденциозный подход автора к историческим событиям. Так, де Мальвиль считает, что Республика Армения 1918-20 гг. "единственное независимое армянское государство, которое было определенным образом зафиксировано в истории", что царь Тигран не является "армянским" в том смысле, в котором мы сегодня употребляем это слово..." (с. 15). По его утверждению, "армянский этнос – такой, каким мы его знаем сегодня: с его языком,





физическим типом и религией, по всей видимости, сформировался в период раннего средневековья. Поэтому стремление сделать из Тиграна "армянского монарха" является ...мифическим" (с. 15-16). Считая бесполезным академический спор с предубежденным адвокатом, перечислим лишь ряд подобных "перлов", которые сродни обычным житейским сплетням: армяне "весьма охотно в течение восьми веков принимали сначала сельджукское, а затем оттоманское господство" (с. 17); "армянские лидеры систематически подавляли мусульманское большинство местного населения для того, чтобы суметь захватить территорию"; "нигде в Оттоманской империи армянское население, которое рассеялось ...добровольно, не составляло даже незначительного большинства, которое могло бы позволить создать автономную армянскую область" (с. 24). Эти и другие подобные нелепые и противоречивые суждения характерны для всей книги французского автора.

В главе "Так называемый армянский геноцид" представлена фактически турецкая официальная версия геноцида армян, хотя автор пишет, что "мы предпринимаем эти исследования, не отдавая предпочтения ни одной из сторон..." (с. 31).

Де Мальвиль полностью оправдывает депортацию всего западноармянского населения, считает ее вполне закономерным явлением в условиях "сговора между армянскими партиями и врагами Турции" (с. 33) и мятежа армянского населения по всей восточной Анатолии якобы в феврале 1915 г. Умалчивая о тяжелейшем положении основной массы армянского населения Османской империи, об имевших место и ранее (1894-96, 1909 гг.) массовых погромах мирного населения, не воспринимая при этом естественного стремления каждого народа к национальному самоопределению, автор связывает выступление армян исключительно с вмешательством извне, приводя в качестве основного примера вооруженную самооборону армянского населения Вана в апреле-мае 1915 г., происходившую уже в условиях массовой депортации и избиения по всей стране.

Арест 24 апреля 1915 г. видных представителей армянской интеллигенции в Константинополе, в том числе членов оттоманского парламента, де Мальвиль считает всего лишь заключением в тюрьму членов мятежных армянских партий, деятельность которых необходимо было остановить. При этом он считает, что "все авторы, враждебно настроенные к туркам, переписывая один у другого, упорно повторяют эту легенду" (с. 34).

Излагая давно уже отвергнутую историей версию о том, что якобы массовая депортация армян носила "временный" характер и, основываясь главным образом на книгу турецкого дипломата Камюрана Гюрюна "Армянское досье" (Париж, 1983), де Мальвиль пишет: "...Познакомившись с этими подобными распоряжениями, отданными самыми высокими правительственными инстанциями Оттоманской империи, невозможно подвергать сомнению ни чистосердечие, ни добрую волю турецкого правительства по отношению к армянскому населению, депортировать которое его вынудили обстоятельства военного времени" (с. 41). При этом де Мальвиль ссылается на шифрованные телеграммы Талаата-паши, которые якобы обязывали местные власти обеспечить безопасность имущества и личности армян, снабжать их продовольствием, предоставить им возможность для отдыха на протяжении всего пути (с. 39). Как бы сознавая всю несерьезность приведенного документа, т.е. инструкций и приказов Талаата-паши, автор добавляет: "Нет ни малейших оснований сомневаться в искренности этих указаний, поскольку они были зашифрованы и подразумевалось, что они останутся секретными" (с. 39).

Следует заметить, что недобросовестность французского адвоката бросается в глаза. Ни один из достоверных выдержавших экзамен истории документов, подтверждающих истинную цель насильственных депортаций армян, не нашел место в его книге. Ни вывод его соотечественника, известного историка Рене Пинона, сделанный еще в 1916 г. о том, что "депортация армян – женщин, стариков и детей, была ни чем иным, как коварно замаскирован-





ным смертным приговором", ни телеграмма верного друга турецкого правительства, германского посла в Константинополе Вангенгейма о том, что путем депортаций "правительство действительно имеет своей целью уничтожить весь армянский род в турецком государстве", ни сотни других документов, в том числе шифрованные телеграммы об уничтожении депортированных армян.

По мнению де Мальвиля, решение о депортации армян было вполне законным, но его осуществление – губительным и драматичным. "Последствия мер, принятых по отношению к армянам в мае 1915 г., были ужасными, - великодушно соглашается автор. – Любой объективный человек должен это признать, и сам Талаат согласился с этим во время последнего съезда партии "Единение и прогресс" 1 ноября 1918 г." (с. 47).

Итак, последствия депортации были ужасными для армян. Значит ли это, что автор осуждает преступление младотурок, учитывая неопровергнутое никем доказательство, что депортация армян была замаскированной формой уничтожения? Нисколько. Он лишь сожалеет, что в обстановке войны произошла трагедия армян. Однако при чем тут турецкое правительство того времени, если бессовестные чиновники и жандармы не выполнили "искренние" инструкции и распоряжения Талаата и Энвера?

Как видим, спустя 75 лет после геноцида находятся люди, высказывающие подобные суждения. Приведем еще одну выдержку из книги де Мальвиля: "Правительство предусматривало, чтобы во время депортации были обеспечены безопасность жизни и сохранность имущества армян: оно предписывало, чтобы по пути им было предоставлено продовольствие, а по прибытии в места расселения – выданы определенные материальные средства для восстановления.

Ничего этого сделано не было. Колонны армян были уничтожены по дороге на юг, а оставшиеся в живых добрались до Месопотамии, где ничего не было подготовлено к их приезду; они бы-

ли вынужденны жить на берегах рек в импровизированных лагерях, и огромное количество армян умерло от голода и истощения" (с. 47-48).

Однако после этого автор вновь, со всей серьезностью продолжает убеждать читателя, что младотурецкое правительство не только не думало разрешить Армянский вопрос путем уничтожения армян, но и позаботилось об их безопасном и надежном "путешествии". И он делает вывод, что если армяне погибли не по вине правительства, а из-за безответственности чиновников, то трагедию армян ни в коем случае нельзя считать геноцидом, ибо отсутствует преднамеренность совершившегося.

Считая главной причиной депортации армянского населения деятельность армянских "мятежников", де Мальвиль пишет: "Злой рок распорядился так, что несчастные жертвы заплатили в Сирии, в обстановке безразличия и презрения, за преступления, совершенные в Анатолии армянскими революционерами, многие из которых спокойно продолжали жить за границей, пописывая мстительные мемуары от имени народа, который они же сами и повели на гибель" (с. 88). Данные строки де Мальвиля удивительным образом совпадают с интерпретацией азербайджанской официальной пропагандой карабахских событий, мотивов убийств мирных армянских жителей Сумгаита, Кировабада, Баку, армянских сел Азербайджана.

В заключительной третьей главе книги – "Последние события в армянском деле" – де Мальвиль "клеймит" армян за организацию в течение последних десятилетий кампании по признанию и осуждению мировым сообществом геноцида армян 1915 г., "критикует различные международные организации (Постоянный трибунал народов, ООН, Европейский парламент) за принятие решений, осуждающих геноцид армян. Он пишет: "Настоящая кампания мести и лжи продолжает развиваться, армянская пропаганда добивается все новых успехов, которые сразу же раздуваются, и в результате положения европейских правительств, традиционно





дружественных Турции, рискует стать весьма тяжелым, так как им приходится считаться со своим общественным мнением" (с. 114).

Выбор книги де Мальвиля бакинскими издателями таким образом не случаен. Однако подобного рода "исследования" по армянскому геноциду весьма редкое исключение среди изданных во Франции многих десятков томов, в основном объективно и правдиво отображающих историю армянской трагедии 1915 г. Но бакинских издателей интересует другое – в условиях продолжающегося армяно-азербайджанского конфликта, путем издания и распространения подобных пасквилей очернить армянскую сторону, оправдать антиармянские действия азербайджанских властей в глазах русскоязычного читателя.

## 7. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ*

Համահեղինակներ՝ Լեւոն Էյրամջյանց, Ռուբեն Սաֆրաստյան

Լեռնային Ղարաբաղի խնդիրն այսօր լայն արձագանք ունի համաշխարհային մամուլի էջերում: Ընդ որում ԼՂԻՄ-ի խնդիրներին առնչվող իրադարձությունների լուսաբանմանն առանձնակի ուշադրություն են նվիրում Թուրքիայի զանգվածային լրատվամիջոցները: Այդ առթիվ զարմանալ չարժե: Թուրքիան ԽՍՀՄ-ի այդ շրջանների անմիջական սահմանակիցն է, ՆԱՏՕ-ի առավել ակտիվ անդամներից մեկը, և, իհարկե, մեր երկրում եղած ամեն մի հիմնախնդիր, էլ չենք խոսում Ադրբեջանում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին, այնտեղ սուր հետաքրքրություն է առաջ բերում: Բացի այդ, խորհրդա-թուրքական հարաբերությունների պատմությունը վկայում է Անդրկովկասի տարածաշրջանի նկատմամբ հարավային հարևանի ամենևին էլ ոչ ան-

* *Արարատ* /Բեյրութ/, 1989, 23,24 հունվարի; *Զարթոնք* /Բեյրութ/, 1989, 20, 21 հունվարի; *Ասպարեզ* /Բոստոն/, 1989, 28 հունվարի; *Ալիք* /Թեհրան/, 1989, 25, 26, 27 ապրիլի; *Коммунист*, 1989, 8 июля.

տարբեր վերաբերմունքի մասին: Հիշենք թուրքական ագրեսիան Անդրկովկաս 1918-21 թթ., երբ համաթուրքական զառանցանքային գաղափարներով արբեցած Օսմանյան կայսրության, իսկ հետո նաև քեմալական Թուրքիայի զորքերը ներխուժեցին այդ երկրամասի խորքային շրջանները, ամենուրեք սփռելով մահ ու ավեր: Անդրկովկասի զավթման, խորհրդային արևելքի վրա իր ազդեցության տարածման համաթուրքական գաղափարները Թուրքիայում աշխուժացան նաև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Թուրքական հետադիմական շրջանները սերտ կապեր հաստատեցին ինչպես ֆաշիստական Գերմանիայի, այնպես էլ Իտալիայի և Ճապոնիայի հետ, փորձելով իրականացնել իրենց զավթողական ծրագրերը: Ստալինգրադի մոտ խորհրդային զորքերի հաղթանակը զսպեց Խորհրդային Միության նկատմամբ համաթուրքականության ջատագովների ախորժակները, նրանց ստիպելով բավարարվել «Մեծ Թուրանի» մասին հայրենամոլական խոսակցություններով միայն: Հետպատերազմյան տարիներին էլ Թուրքիայի բնակչությունը, ուրիշ երկրների թուրքախոս ժողովուրդները շարունակում էին մշտապես ենթարկվել համապատասխան քարոզչության ազդեցությանը, զանգվածային լրատվության թուրքական միջոցները կանոնավորապես հանդես էին գալիս տեղական և արևմտյան նմուշի կեղծագրերով:

Իսկ ինչպիսի՞ տեղեկատվություն է ստանում Թուրքիայի շարքային բնակիչը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող և նրան առնչվող իրադարձությունների մասին: Ինչպե՞ս են դրանք մեկնաբանվում թերթերի էջերում, ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդումներում:

Զանգվածային լրատվության թուրքական միջոցների նյութերի մի մասը տեղեկատվական բնույթ է կրում: Դրանք հիմնականում ստացվում են արևմտյան լրատվական գործակալությունների միջոցով և հրապարակվում կամ եթեր են արձակվում դրանց վկայակոչմամբ: Մասնավորապես, այդ կարգի նյութեր ամենից հաճախ հանդիպում են «*Ջումհուրիեթ*» («Հանրապետություն») թերթի էջերում, որը հայտնի է որպես ժամանակակից Թուրքիայի առավել լուրջ պարբերական հրատարակություն: Թուրքական հեռուստատեսությունը, նորությունների ամենօրյա թողարկումներում և «32-րդ օր» ամենամսյա տեղեկատվական ծրագ-





րում լուսաբանելով ղարաբաղյան իրադարձությունները, հիմնականում ջանում է քաղաքական գնահատականներից խուսափելու ծգտման պատրանք ստեղծել: Ռադիոն ու հեռուստատեսությունը նախընտրում են ոչ մեծ հաղորդումներ Լեռնային Ղարաբաղի մասին, ռեպորտաժներ Երևանի թատերական հրապարակում բազմահազարանոց ցույցերի մասին, թեև առիթը բաց չեն թողնում, ասես միամտաբար, շեշտն այլ հանգամանքների վրա փոխադրելու համար՝ ինչ-որ շատ էական բան մոռանալու կամ էլ ոչ բնորոշ մանրամասնը առանձնահատուկի տեղ ներկայացնելու համար: Ավելին, թուրքական ռադիոյի հրազենման ծառայության վերջին հաղորդումներից մեկում, որ նախատեսված էր Ադրբեջանի բնակչության համար, առանց որևէ մեկնաբանության հաղորդվում էր, որ վերջին ողբերգական իրադարձությունների զոհերի մեծ մասն ադրբեջանական ազգության անձինք են:

Այդ առումով հատկանշական է նաև 1988 թ. դեկտեմբերի 5-ին եթեր արձակված «32-րդ օր» ծրագիրը: Ծրագրի նկարահանման խումբը նախօրեին եղել էր Մոսկվայում, Բաքվում և Սումգայիթում: Անաչառ տեղեկատվությանը զուգընթաց ծրագիրը պարունակում էր իրականությանը չհամապատասխանող մի շարք երանգներ: Օրինակ, խոսվում էր այն մասին, թե հայերն իբր վերահսկում են արևմտյան մամուլը, որն այդ պատճառով ղարաբաղյան իրադարձությունները լուսաբանում է նրանց տեսանկյունից:

Լրագրային հրապարակումների մի մասի հեղինակները ձգտում են իրենց մեկնաբանությունը տալ Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին, իրենց մեկնաբանությունը տալ Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին, իրադարձությունների հրասակայն միաժամանակ հանդես են բերում իրադարձությունների «անտեղյակություն»: Հակառակ պատճառների ու բնույթի լիակատար «անտեղյակություն»: Հաճախ թուրքական թերթերի նյութերը բացահայտորեն միտումնավոր և ճախ թուրքական թերթերի նյութերը բացահայտորեն միտումնավոր և հրահրիչ բնույթ են կրում: Բանը հասնում է նրան, որ թուրքական լրատվամիջոցները դիտավորյալ ձգտում են աղավաղել իրականությունը, ընթերցողին մատուցել սադրիչ բնույթի նյութեր, ձգտում են ԼՂՀՄ-ում և Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների ամբողջ մեղքը բարդել հայերի, սփյուռքահայ կազմակերպությունների ու եկեղեցու վրա, ընդ որում աշխատելով զրպարտությունն ամրագրել անհեթեթ տեսական ենթադրություններով: Թուրքական առաջատար լրագրողներից մեկը՝

Ալի Մեհմեդ Բիրանդը, օրինակ, գտնում է, որ հայերի ու ադրբեջանցիների հարաբերությունները սկսել են վատանալ գլխավորապես 70-ական թթ. կեսերից, «այսպես կոչված հայերի ցեղասպանության մասին» պնդումների կապակցությամբ հակաթուրքական քարոզարշավի ուժեղացմանը զուգընթաց (*Միլլիեթ*, 1988, 11 մարտի): Իսկ պրոֆեսոր Հասան Քենին (*Միլլիեթ*, 1988, 11 մարտի) և հայտնի մեկնաբան Սամի Քոենը (*Միլլիեթ*, 1988, 12 մարտի) ցինիկաբար հայտարարում են, թե օգտվելով խորհրդային նոր ղեկավարության հրապարակայնության քաղաքականությունից և ոգևորվելով 1987 թ. Եվրախորհրդարանի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի ընդունմամբ, հայերը եկեղեցու, արտասահմանյան կուսակցությունների, ծայրահեղական և ահաբեկչական կազմակերպությունների աջակցությամբ վճռեցին բարձրացնել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միավորելու հարցը:

Բիրանդն այդ առթիվ գրում է. «Արևմուտքի պահպանողական շատ շրջաններ բացահայտորեն հրահրում են (միութենական) հանրապետություններում այդ կարգի երևույթները: Դրա օրինակն են հանդիսանում վերջին իրադարձությունները, որոնց հրահրման գործում առանձնակի դեր է խաղում հայ եկեղեցին»: Չհասկանալով կամ չարամտորեն քողարկելով խնդրի էությունը, Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների համար մեղքը բարդելով «արևմուտքի ձեռքի» վրա, թուրք լրագրողն ավելի հեռուն է գնում, ձգտելով հավասարության նշան դնել Արևմուտքի պահպանողական շրջանների և հայ եկեղեցու միջև, վերջինիս ներկայացնելով որպես այդ շրջանների կամակատարը (*Միլլիեթ*, 1988, 12 մարտի):

Կան նաև այլ կարգի սադրանքներ: 1988 թ. մարտի 7-ի համարում «*Միլլիեթ*» թերթը զետեղել է թուրքական «*Անադոլու Աժանսի*» գործակալության թղթակցի ադրբեջանցի Ալու հետ Մոսկվայում իբր տեղի ունեցած զրույցի մասին: Մեջբերումներ անենք տեքստից. «Նրանք (Մոսկվան) չեն համարձակվի Ղարաբաղը տալ հայերին, քանի որ գիտեն, որ պատերազմ կսկսվի... Եվ մենք վստահ ենք, որ Թուրքիայի մեր եղբայրները կօգնեն մեզ... Հայերը սկսեցին Կիրովաբադի, Սումգայիթի, Բաքվի միջադեպերը: Նրանք սկսեցին այրել տներն ու սպանել երեխաներին: ...Եթե հայերը չեն ուզում մեզ հետ մեր հողի վրա ապրել որպես եղբայրներ, ապա թող հեռանան: Մենք նրանց մեր հողը չենք տա: Ողբերգական հետևանքների հանգեցրած իրադարձությունների մեղավորները հայերն են ու նրանց «Դաշնակցություն» կուսակցությունը: Բեռնատարներով կաղամբ են բերում Ղարաբաղ, որի տակ զենք ու ռազմամթերք է թաքցված: Դրանք ուղարկում է «Դաշնակցությունը»:» Կարծում ենք, իմաստ չկա մեր ընթերցողին բացատրել նման անհեթեթ հրապարակումների հրահրիչ էությունը: Մեզ քաջ հայտնի են ինչպես ղարաբաղյան շարժման իրական պատճառները, այնպես էլ ճշմարտությունը Սումգայիթում և Ադրբեջանի այլ շրջաններում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների մասին: Նկատենք միայն, որ Հայաստանից սպիտակեղենով, պարենամթերքով ու շինանյութով բեռնված ավտոմեքենաները, որոնք նախատեսված են Սումգայիթից գաղթած հայերի համար, մեծ դժվարությամբ են հասնում Լեռնային Ղարաբաղ:

Թուրքական մամուլի էջերում երբեմն նյութեր են հայտնվում իբր ի պաշտպանություն հայ ժողովրդի: Թուրքական քարոզչության այդ ուղղությունը միայն առաջին հայացքից է զառանցանք կամ առնվազն միամիտ թվում, սակայն ընդհանուր առմամբ ցայտուն հակախորհրդային բնույթ ունի: Այսպես, հուլիսյան համարներից մեկում «*Թերջյուման*» թերթը զետեղել էր լրագրող Էրգյուն Ղեջեի ստորագրած «Դիմում հայ ժողովրդին» թղթակցությունը: Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին, հեղինակը պնդում է, թե «ռուսները խաբում են հայերին», իսկ նրանք իրենց չմտածված գործողություններով իրենց դեմ են լարում ոչ միայն ԽՍՀՄ-ի թուրք ժողովուրդներին, այլև ողջ թուրքական աշխարհը: «Դիմումի» հեղինակը հայ ժողովրդին կոչ է անում պայքարել «իր հայրենիքը երկաթե վարագույրի հետևից հանելու» համար: Ընդ որում, Ղեջեն ցինիկաբար հայտարարում է, թե թուրքերը պատրաստ են հայերին աջակցություն տրամադրել այդ գործում:

Թուրքական մամուլը բավականաչափ ուշադրություն է հատկացնում Սումգայիթում տեղի ունեցած դեպքերին: Որոշ թերթեր ճանաչում են, որ այդ քաղաքում «ադրբեջանցիները հարձակվել են հայերի վրա» (*Միլլիեթ*, 1988, 2 մարտի) կամ «Ադրբեջանի թուրքերը խոշոր ընդհարումներ են կազմակերպել» (*Հյուրրիեթ*, 1988, 11 մարտի): Դրա հետ մեկտեղ բազմիցս հայտարարություններ են արվում, թե ջարդերը հրահրվել էին

կենտրոնական խորհրդային իշխանությունների կողմից: «*Թերջուման*»-ը ընդմիշտ միանգամայն անառարկելի տոնով պնդում է, թե «իշխանությունները ցանկանում են մեղքը ռուս ժողովրդի ուսերից բարդել ադրբեջանցիների, ավելի ճիշտ՝ ադրբեջանական երիտասարդության վրա» (1988, 13 ապրիլի): Ուշադրություն է գրավում թուրք լրագրողների ծայր աստիճանի մտահոգությունը գոյություն ունեցող այն տեսակետի հետ, որ Սումգայիթի ողբերգությունը նման է առաջին համաշխարհային պատերազմի իրադարձություններին՝ 1915 թ. ցեղասպանությանը: Ամբողջությամբ ժխտելով Օսմանյան կայսրության երիտթուրքական ղեկավարների կազմակերպած ցեղասպանության պատմական փաստը, դարձյալ նույն Բիրանդն այն կարծիքին է, թե «հայերն ամեն կերպ փորձում են Թուրքիան ներքաշել հայ-ադրբեջանական կոնֆլիկտի մեջ», Սումգայիթում տեղի ունեցած դեպքերը շարունակ համեմատելով «հայերի այսպես կոչված ցեղասպանության» հետ (*Միլլիեթ*, 1988, 12 փետրվարի): Ավելին, զուգահեռ անցկացնելով առաջին աշխարհամարտի իրադարձությունների և Սումգայիթի միջև, թուրք լրագրուհի Նիլուֆեր Յալչինը «Մենք ձայնի իրավունք ունենք Ադրբեջանում» հոդվածում հասնում է սրտապղծ այնպիսի հայտարարությունների, թե իբր «1914-18 թթ. հայերը թուրք բնակչության կոտորած էին կազմակերպել ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Ադրբեջանում» (*Միլլիեթ*, 1988, 12 մարտի): Կարծում ենք, որ մեր կողմից անլուրջ կլինի այս կապակցությամբ ընթերցողին շեղել որևէ մեկնաբանությամբ:

Թուրքական մամուլի կողմից Լեռնային Ղարաբաղի և նրան առնչվող իրադարձությունների մեկնաբանման հիմքում ընկած է ավանդական հակախորհրդային, հակառուսական գաղափարախոսական հիմնադրույթը, որը նպատակաուղղված է համապատասխան տրամադրություններ ստեղծել ինչպես Թուրքիայում, այնպես էլ թյուրքալեզու երկրներում: Խորհրդային Միությունը ներկայացվում է որպես պետություն-ագրեսոր, որը փորձում է սարկացնել թուրք և թյուրքալեզու մյուս ժողովուրդներին: Ընդ որում այս պարագայում լայնորեն օգտագործվում են համաթյուրքականության և համամահմեդականության հետադիմական վարդապետությունների դրույթներն ու գաղափարները: Այստեղ հատկապես աչքի է ընկնում «*Թերջուման*»-ը, որը ներկայացնում է թուրք խոշոր բուրժուա-





զիայի շահերը: Ապրիլի 18-ի համարում թերթը գրում է, թե «Ղարաբաղի հարցը հրահրվել է Մոսկվայի կողմից...», թե այն «թուրք ազգի դեմ ուղղված խորհուրդների խաչակրաց արշավանքի սկիզբն է»: Թերթը հայտարարում է, թե իբր ԽՍՀՄ-ը ադրբեջանական ժողովրդին նեղելու քաղաքականություն է վարում: Ընդ որում նա հակաադրբեջանական տրամադրություններ է տեսնում նույնիսկ «ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի միջավայրում», որի աշխատակիցները ձգտում են «սևացնել ադրբեջանցիներին», նրանց մեղադրել «անմաքրաբարոյության մեջ»:

Մոսկվայի «հայամետ» քաղաքականության դիրքերից են հանդես գալիս նաև «լիբերալ» համարվող «*Ջումհուրիեթ*», «*Միլլիեթ*», «*Հուրրիեթ*» թերթերը: Այսպես, օրինակ, «*Հուրրիեթ*»-ն այն կարծիքին է, թե Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը բռնությամբ Խորհրդային Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկվելուց հետո Հայաստանի սահմանները ընդարձակվեցին ի վնաս Ադրբեջանի, իսկ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրվեց հօգուտ հայերի (1988, 11 մարտի):

Փորձելով իր ընթերցողներին «բացատրել» ԽՍՀՄ ղեկավարության «հակաադրբեջանական» դիրքորոշման պատճառները, 1988 թ. հունիսի 16-ի «Երևանյան խեղկատակություն» հոդվածում «*Թերջուման*»-ը գտնում է, որ Հայաստանի կազմի մեջ ԼՂԻՄ-ի մտնելուն համաձայնություն տալու մասին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի 1988 թ. 15-ի որոշումը և «Հանրապետության խորհրդարանում նմանօրինակ քվեարկություն անցկացնելու մասին» Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս.Գ.Հարությունյանի դիրքորոշումը հրահանգված էին Մոսկվայի կողմից:

Այդ պնդումը թերթը հիմնավորում է նրանով, թե «նման հարցերում Մոսկվան հրապարակայնություն չի ճանաչում, և եթե չլիներ նրա համաձայնությունը, ապա ոչ ոք չէր էլ խոսի նմանօրինակ քվեարկության մասին»: Բերենք ևս մի «փաստարկ» այդ նույն հոդվածից: Բանից պարզվում է, որ Ղարաբաղի հարցում պաշտպանելով հայերին, Ռուսաստանն իր գործողություններով ձգտում է թուլացնել Թուրքիայի դիրքերը, քանի որ ՆԱՏՕ-ին «ձեռնտու է թուրք բնակչության առկայությունը սահմանամերձ շրջաններում»: Այդպիսով, «*Թերջուման*»-ը փաստորեն «բերանից խոսք է թռցրել» Խորհրդային Միության նկատմամբ Թուրքիայի վարած

քաղաքականության առաջնային խնդիրներից մեկի մասին: Իսկ հոդվածի վերջում բերբը թուրքական ժողովուրդներին, որոնք «ստրկության են դատապարտված Խորհրդային Միությունում», կոչ է անում չմոռանալ, որ «ռուսները կարող են բռնություններ սկսել ադրբեջանցիների նկատմամբ»: Թերթի կարծիքով, այդ բռնությունները «իբր ռուսները կարող են կազմակերպել Երևանի օգնությամբ», ուստի և անհրաժեշտ է «ամբողջ աշխարհին բացատրել այն վիճակը, որի մեջ հայտնվել է Ադրբեջանը, և պաշտպան կանգնել ադրբեջանցի եղբայրներին»: Թերթը նույնիսկ դավաղրություն է նկատում ԽՍՀՄ-ում Ռուսիայի մկրտության 1000-ամյակի լայն տոնակատարության մեջ, դրանում առիթ տեսնելով հայերին ադրբեջանցիների դեմ տրամադրելու համար:

Թուրքական մամուլի էջերում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի պնդումների, թե իբր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծմամբ ամենաշահագրգռված պետությունը Խորհրդային Միությունից հետո Թուրքիան է, թե Ղարաբաղի հարցը ընդհանուր Հայկական հարցի մի մասն է և անմիջականորեն ուղղված է Թուրքիայի դեմ: Մի շարք թուրք դիտորդների կարծիքով, եթե Լեռնային Ղարաբաղը միացվի Հայաստանին, ապա «իբրև հաջորդ քայլ հայերը տարածքային պահանջներ կներկայացնեն Թուրքիային» («*Միլլիեթ*», 1988, 2 ապրիլի, «*Ջումհուրիեթ*», 1988, 18 հուլիսի): «*Միլլիեթ*»-ը հասնում է նրան, որ հայտարարում է, թե «հայ-ադրբեջանական բախումը կարգավորելիս խորհուրդները պետք է հաշվի առնեն նախ և առաջ Թուրքիայի դիրքորոշումն այդ հարցում» (1988, 2 ապրիլի): Ավելին, թուրքական մամուլը երբեմն դիմում է անգամ Թուրքիայի պաշտոնական ներկայացուցիչների հայտարարությունների գիտակցված կեղծմանը: Այսպես, «*Հուրրիեթ*»-ը, մեջբերելով Թուրքիայի արտաքին գործերի նախարարության լրատվական ծառայության ղեկավար Ի.Բիթսիի այն հայտարարությունը, թե «Թուրքիան ձայնի իրավունք ունի Նախիջևանի հարցում», իր կողմից այդ իրավունքը տարածում է «և ԼՂԻՄ-ի և Զանգեզուրի վրա» (1988, 18 ապրիլի): Նկատենք, որ Մոսկվայի 1921 թ. պայմանագրի մեջ հիշատակություն իսկ չկա Լեռնային Ղարաբաղի ու Զանգեզուրի մասին, ուստի և թուրքական մամուլի նմանօրինակ պնդումները որևէ հիմք չունեն: «Թուրքիան արդյոք պետք է զորավի՞գ լինի ԽՍՀՄ-ում տեղի ունեցող հուզումներին»





հոդվածի հեղինակը խոստովանում է, որ «թուրքական որոշակի շրջանակներում տարածված է այն համոզմունքը, որ անհրաժեշտ է միջամտել Ղարաբաղի իրադարձություններին և աջակից լինել ընդհարվող կողմերից մեկին»: Այդ առնչությամբ հեղինակը խորհուրդ է տալիս «վտանգի չդիմել, հրաժարվել բացահայտ աջակցությունից և սպասողական դիրք գրավել» («*Միլլիեթ*», 1988, 12 մարտի): Սակայն թուրքական մամուլի հրապարակումները վկայում են միանգամայն հակառակ պատկերի մասին:

«*Թերջուման*»-ն իր էջերում հաղորդում է զետեղել վերջերս Անկարայում հիմնված այսպես կոչված «Ադրբեջանի ազգային կենտրոնի» նախագահ Մեհմետ Արալի 1988 թ. մարտի 5-ին Անկարայում կայացած մամլո ասուլիսի մասին, որը նվիրված է եղել Ղարաբաղի հարցին: Արալը հայտարարել է, որ «Արաքսի, Քռի և Կասպիականի փաղնջական թուրքական հողերը երբեք չեն պատկանելու ոչ հայերին և ոչ էլ ռուսներին: Հայերը խորապես սխալվում են, եթե կարծում են, թե Գորբաչովի, Աղանբեկյանի և ուրիշների աջակցությամբ իրենք կկարողանան ստանալ Ղարաբաղն ու Նախիջևանը: Մոտ է այն օրը, երբ այդ հայկական շարժումը կճզմվի հյուսիսային և հարավային Ադրբեջանի 22 միլիոն ադրբեջանցիների «երկաթյա ձեռքով»:

Նկատենք, որ Թուրքիայում նման կազմակերպության ստեղծման փաստը, որն իրեն Ադրբեջանի վտարանդի կառավարություն է համարում, հավասարապես նաև նրա նախագահի նմանօրինակ հայտարարությունները, Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի խախտում են, մի փաստաթղթի, որի մասին այդքան հաճախ ճամարտակում է թուրքական մամուլը: Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ ՌԽՖՍՀ-ն և Թուրքիան պարտավորվել են թույլ չտալ իրենց տարածքում ստեղծելու և գրանցելու այնպիսի կազմակերպություններ և խմբեր, որոնք նպատակ են հետապնդում հավակնելու մյուս կողմի կառավարության դերին կամ նրա տարածքի մի մասին, ինչպես նաև պայքարելու նրա դեմ: Այնպես որ հրապարակումներից մեկում օգտագործված «արևմուտքի ձեռք» բնորոշումը վստահությամբ կարելի է վերագրել թուրքական կողմի դիրքորոշմանը Լեռնային Ղարաբաղի հարցում:

Վերլուծելով Թուրքիայի զանգվածային լրատվամիջոցների նյութերը

Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ, կարելի է հանգել հետևյալ եզրակացության: Դրանց կողմից Լեռնային Ղարաբաղի խնդրի լուսաբանումը Խորհրդային Միության ներքին գործերին միջամտելու, բազմազգ երկրի ժողովուրդներին միմյանց դեմ լարելու, հայ ժողովրդի պատմական անցյալը ննեգափոխելու, այդ թվում 1915 թ. ցեղասպանությունը ժխտելու՝ Թուրքիայի վարած ավանդաբար հակախորհրդային շարժման մի մասն է: Թվում էր, թե մեր օրերին, երբ աշխարհում հետզհետե ավելի է ուժեղանում ընդհանուր քաղաքական իրադրության առողջացման, ժողովուրդների և պետությունների փոխվստահության ամրապնդման միտումը, Թուրքիայի լրատվամիջոցները կարող էին առավելագույն զսպվածություն դրսևորել մի այնպիսի բարդ հարց լուսաբանելիս, ինչպիսին է Լեռնային Ղարաբաղի խնդիրը, որը լիովին ենթակա է Խորհրդային Միության իրավասությանը, և չհայտնվեին դրացի պետության ներքին գործերին միջամտելու մեջ մեղադրվողների դերում:

## 8. ЗАКЛЮЧЕНИЕ К КНИГЕ ДЖОНА КИРАКОСЯНА "МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ"*

Прошло более четырех лет со дня кончины автора монографии "Младотурки перед судом истории" – доктора исторических наук, профессора Дж.С.Киракосяна. Вместе с тем проблема признания и осуждения мировым сообществом первого геноцида 20-го столетия – массового уничтожения в годы первой мировой войны армянского населения Османской империи, осуществленного младотурецким правительством, - продолжает оставаться актуальной и по сей день. Книга и сегодня нужна читателю, она не потеряла ни своего научного, ни политического значения. Не исключено, что сейчас, в эпоху гласности и перестройки, Джон Киракосян дал бы иные оценки тем или иным историческим личностям и событиям, добавил бы новые, не публиковавшиеся ранее материалы. Но увы, к сожалению, Джона Киракосяна сегодня с нами нет.

* Киракосян Дж.С., Младотурки перед судом истории, Ереван, 1989, с. 479-487.





Вместе с тем со дня издания монографии "Младотурки перед судом истории" на русском языке вокруг проблемы геноцида армян произошли события, которые являются логическим продолжением затрагиваемых в десятой главе книги вопросов. Поэтому, публикуя второе издание книги, мы решили дополнить ее нижеизложенными фактами.

Проблема геноцида армян остается на повестке дня работы Подкомиссии по предупреждению дискриминации и защите национальных меньшинств Комиссии по правам человека ООН. Подкомиссией было поручено представителю Великобритании Бенджамену Уайтекеру подготовить исследование по вопросу о предупреждении преступления геноцида и о наказании за него. На заседании Подкомиссии в Женеве в ноябре 1985 г. был заслушан доклад Уайтекера по данному вопросу, однако в результате дискуссий Подкомиссия по ряду причин отвергла проект резолюции и ограничилась лишь принятием доклада к сведению. Вместе с тем в исторической части доклада специально было отведено место резне армянского населения Османской империи в годы первой мировой войны – первому геноциду 20-го века. Во время дискуссий наблюдатель от Пакистана попытался оправдать геноцид армян ссылкой на "фактор внешнего вмешательства." В ответ советский представитель В.Софинский в своем выступлении подчеркнул, что чудовищный акт геноцида, совершенный против армян тогдашними правителями Турции, ничем не может быть оправдан (*Известия*, 1985, 18 ноября).

В 1985-87 гг. вопрос геноцида армян продолжал оставаться в поле зрения европейских парламентариев. Комиссия по политическим вопросам Европейского парламента поручила известному специалисту по этническим проблемам Жаку Вандемелбруку (Бельгия) всесторонне рассмотреть этот вопрос и подготовить соответствующий доклад. В ходе работы над докладом ему пришлось столкнуться с сильнейшим давлением со стороны турецких официальных лиц и журналистов. С нападками и угрозами в ад-

рес Европарламента выступил премьер-министр Турции Тургут Озал.

Организованная турецкими правящими кругами кампания против обсуждения проблемы в Европарламенте встретила противодействие со стороны передовой общественности многих стран мира, требующей осуждения преступлений младотурецкого правительства в годы первой мировой войны. В этой связи следует отметить обращение в декабре 1985 г. ряда видных деятелей науки и культуры к президенту Франции Франсуа Миттерану с просьбой представить на очередное заседание Европейского Совета в Люксембурге законопроект, осуждающий геноцид армян. Обращение подписали итальянский писатель Альберто Моравиа, лауреат Нобелевской и Ленинской премий мира, юрист Шон Мак-Брайд (Ирландия), лауреаты Нобелевской премии Адольфо Перес Эскивел (Аргентина), Джордж Уайлд (США) и др.

Широкий резонанс получило обращение к депутатам Европарламента, с которым выступила накануне заседания общественная организация "Франко-армянская солидарность." Под ним стояли подписи многих известных представителей французской общественности, таких, как писатели Франсуаза Саган, Эжен Ионеско и Анри Труайа, певец Шарль Азнавур, историк Ив Тернон, лауреаты Нобелевской премии Андре Львофф, Луи Неэль и др. В обращении, озаглавленном "За истину в вопросе геноцида армян", в частности, подчеркивалось, что исторический факт геноцида армян не вызывает никаких сомнений. "Мы призываем Европейский парламент, - говорилось в обращении, - квалифицировать как геноцид тот план уничтожения, который был осуществлен в отношении армян, и представить тем самым место в памяти человеческой и в памяти Европы тем, которые все еще не имеют могилы в земле" (*Le Mond*, 10 Juin, 1987).

Наконец, соответствующий законопроект был внесен в повестку дня сессии Европарламента, проходившей 15-19 июня 1987 г. в Страсбурге. С инициативой по этому вопросу выступили совмест-





но коммунистическая и социалистическая фракции Европарламента. Законопроект был рассмотрен на заседании от 18 июня, в этот же день Европарламент большинством голосов одобрил резолюцию "О политическом решении Армянского вопроса".

Наиболее важным положением резолюции является следующий пункт: "...Трагические события, имевшие место в 1915-17 гг. в отношении армянского населения Османской империи, являются геноцидом в соответствии с конвенцией о преступлении геноцида и наказании за него, принятой Генеральной Ассамблеей ООН 9 декабря 1948 г.".

В резолюции определенное место отводится также вопросу о необходимости признания за проживающими в Турции армянами права на "национальную самобытность", сохранения их "языка, веры, культуры и системы образования", а также исторических (в том числе религиозно-архитектурных) памятников.

Особо следует отметить пункт преамбулы о том, "что турецкое правительство, отказываясь признать геноцид 1915 г., продолжает тем самым лишать армянский народ права на собственную историю". Тем самым Европарламент осуждает не только антиармянскую политику правящих кругов современной Турции, но и фальсифицированную версию геноцида армян, широко пропагандируемую турецкими историками в последнее время.

Примечательно, что резолюция не ограничивается голословным осуждением политики турецких властей; в ней особо отмечается, что принятие Турции в Европейское экономическое сообщество находится в прямой зависимости от позиции ее правительства в вопросе признания факта геноцида армян. Конечно, это довольно серьезное средство оказания давления на Турцию, ибо она уже многие годы добивается вступления в Европейское экономическое сообщество, ассоциированным членом которого является еще с 1963 г.

Европарламент отметил, что препятствием для вступления Турции в Европейское экономическое сообщество являются так же "отказ от применения международных правовых норм при реше-

нии спорных вопросов с Грецией, пребывание турецких оккупационных войск на Кипре, равно как и отрицание курдских событий" (т.е. факта освободительной борьбы курдского народа). При этом указывалось на нарушение прав человека в Турции, отсутствие демократии (*Parlement Européen. Le point de la session. Strasbourg, 15-19 juin 1987. Doc. A2-33/87, p. 39-43*).

Давая оценку резолюции Европарламента "О политическом решении Армянского вопроса", необходимо подчеркнуть, что впервые авторитетный международный орган проголосовал за резолюцию, в которой преступление младотурецкого правительства со всей определенностью квалифицировано как геноцид в отношении части армянского народа, проживавшего на территории Османской империи, в Западной Армении. Тем самым сделан важный шаг вперед в международно-правовом признании факта геноцида армян и его осуждении. Думается, что данная резолюция Европарламента будет способствовать дальнейшему осуждению мировым сообществом политики геноцида в отношении этнических групп и целых народов независимо от времени и места его осуществления, восстановлению исторической справедливости (Подробнее см.: Киракосян А.Дж., Сафрастян Р.А., О некоторых аспектах проблемы геноцида армян на Западе. – *Вестник общественных наук АН Арм.ССР*, 1988, No. 5, с. 3-12; их же: О решении Европейского парламента по вопросу геноцида армян. – *Вестник архивов Армении*, 1988, No. 2, с. 54-59).

10 августа 1987 г. американский еженедельник "*Тайм*" опубликовал "Послание членам Европейского парламента", подписанное 13 турецкими союзами и организациями, в том числе "Ассоциацией турецкого атлантического пакта", "Союзом турецких парламентариев", "Ассоциацией турецких промышленников и бизнесменов", "Союзом турецких журналистов" и т.д. В послании утверждается, что на протяжении веков армянское население Османской империи жило в мире и согласии с турками, однако в 1915 г., якобы подстрекаемое Россией, оно организовало восстание про-





тив Османской империи на северо-востоке страны. Сражаясь в составе русской армии против Турции, "армянские террористические банды" якобы уничтожили десятки тысяч невинных людей, дабы обеспечить армянское большинство на востоке страны. В результате, читаем в тексте послания, турецкое правительство было вынуждено организовать высылку армянского населения из прифронтовой зоны. Авторы послания не исключают вероятности того, что в условиях военного времени, отсутствия транспортных средств, неблагоприятного климата и эпидемий погибло много армян. Причем, оказывается, в остальных частях Османской империи армянское население "продолжало жить в мире и безопасности". Пытаясь подвести базу под свою псевдонаучную концепцию, авторы послания делают исторический экскурс, утверждая, что "турецкая государственность когда-либо не порождала расистских тенденций, и, как следствие этого, каких-либо проявлений геноцида", что на протяжении веков она всегда относилась терпимо ко всем народам полиэтнической и поликонфессиональной Османской империи (*A Message to Members of the European Parliament who directly or undirectly supported the «Armenian Resolution». - Time, 1987, August 10, vol. 130, No. 6, p. 1*).

Таким образом, в послании получила наиболее полное выражение сформулированная турецкой пропагандой фальсифицированная версия исторических событий периода первой мировой войны. Это послание является лишь частью развернутой сегодня в Турции пропагандистской кампании по дискредитации проблемы геноцида армян. В дело обработки широких народных масс Турции в антиармянском духе вносит свою лепту турецкое телевидение. Так, в ноябре-декабре 1986 г. демонстрировался многосерийный художественный фильм "Кровь на стене", в котором в наиболее концентрированной форме была выражена фальсифицированная версия о геноциде. Такой же характер носят документальные ленты, показ которых турецкое телевидение специально приурочивает к апрелю каждого года.

Вместе с тем прогрессивные силы современной Турции пытаются разъяснить историческую правду своим соотечественникам. Так, 19 апреля 1985 г. ЦК Компартии Турции выступил с заявлением в связи с 70-й годовщиной геноцида армян. В нем содержится призыв ко всем турецким патриотам не закрывать глаза на факты истории, не предавать забвению это преступление, не забывать его виновников – Энвера и Талаата, "которые покрыли черным пятном чело турецкого народа" (*Atilim, 1983, 27.08)*. В октябре 1987 г. генеральный секретарь Компартии Турции Хайдар Кутлу еще раз подтвердил позицию турецких коммунистов в вопросе признания геноцида армян (*Milliyet, 1987, 08.11*).

Начиная с 1965 г. на повестку дня Сената и Палаты представителей Конгресса США регулярно выносятся резолюции о геноциде армян в Османской империи. Выдвигаемые в предыдущие годы на рассмотрение Конгресса резолюции по Армянскому вопросу не набирали в соответствии с процедурными требованиями необходимого количества голосов и отклонялись на разных этапах слушаний. Обычно решающую роль в этом играла позиция Государственного департамента, Министерства обороны США и президента, которые последовательно выступали против принятия резолюции. Руководители турецкого государства неоднократно предупреждали США о возможности возникновения серьезных осложнений в турецко-американских отношениях, вплоть до выхода из военного блока НАТО, в случае принятия резолюции (*Milliyet*, 1987, 10.03; 1987, 25.04). При этом ими подчеркивалось стратегически важное значение Турции в системе политики Запада как "бастиона южного фланга НАТО", защищающего одну треть 3600-мильной границы со странами Варшавского договора. Указывалось, что Турция имеет крупнейшую армию среди европейских членов блока, что она контролирует проливы Босфор и Дарданеллы, которые являются единственным проходом для одной трети военных судов и 60 % торгового флота СССР в Средиземное море. В письме спикеру Палаты представителей Конгрес-





са Томасу О'Нилу от 4 марта 1985 г. государственный секретарь США Джордж Шульц отмечал, что Соединенные Штаты должны во всех случаях ценить сотрудничество с Турцией, которая играет важную роль в деле обороны Европы и Юго-Западной Азии. "Мы должны, - продолжал Шульц, - серьезно отнестись к предупреждению турецкого правительства относительно возможного принятия Конгрессом резолюции о геноциде армян и не нарушать сложившихся между нашими странами дружественных отношений" (*Armenian Allegations: Myth and Reality. A Handbook of Facts and Documents. Washington, 1986, pp. 1-3*).

Новой тенденцией, проявившейся в последнее время, является поддержка проводимой пропагандистской машиной Турции фальсификаторской кампании со стороны отдельных западных политологов и историков. Примерами тенденциозного, а порой и просто фальсифицированного отношения исторических событий могут служить работы Стенфорда Шоу, Джастина Маккарти, Майкла Гюнтера, Нормана Равича и др. Более того, в 1986 г. турецко-американская ассоциация издала в Вашингтоне книгу "Утверждения армян: миф и реальность (факты и документы)" с предисловием посла Турции в США Шюкрю Элекдага, которая представляет собой собрание тенденциозных антиармянских материалов, искажающих историю, современное международное положение. В книге приведены выдержки из выступлений, писем, статей американских политических деятелей Джорджа Шульца, Каспара Уайнбергера, Поля Хенци, Роберта Штрауса-Хюпа, целиком и полностью поддерживающих позицию Турции в вопросе геноцида армян (*Armenian Allegations: Myth and Reality. A Handbook of Facts and Documents. Washington, 1986, 189 p.*).

В феврале 1987 г. резолюция об объявлении 24 апреля Днем памяти жертв геноцида армян вновь была включена в повестку дня очередного 100-го созыва Конгресса США. В палату представителей резолюцию No. 132 официально представили конгрессмены Ричард Леман (Калифорния) и Альфонсом Д'Амато (Нью-Йорк).

В резолюции, в частности, отмечалось: "24 апреля объявляется национальным днем памяти жертв геноцида армян 1915-23 гг. Президенту поручается призвать американский народ в этот день почтить память 1,5 млн. армян, ставших жертвами геноцида, осуществленного правителями Османской империи в 1915-23 гг., до образования Турецкой республики".

Турецкое правительство восприняло известие о готовящихся слушаниях в Конгрессе с чувством крайнего раздражения и недовольства. В марте 1987 г. турецким меджлисом была принята специальная резолюция, в которой указывалось, что предложения законодателей США преследуют цель нанести ущерб турецко-американским отношениям, приписать турецкому народу организацию геноцида армян и способствовать дальнейшим требованиям со стороны армян, угрожающим территориальной целостности страны. Министр иностранных дел Турции В.Халефоглу заявил в Вашингтоне, "возможно неожиданное развитие событий в отношениях между двумя странами". В беседе с ним Дж.Шульц подчеркнул, что "администрация является противником рассмотрения в Конгрессе армянского вопроса, и заверил, что в случае, если даже законопроект будет принят, президент Рональд Рейган наложит на него вето" (*Milliyet, 1987, 19.03*). Принятие Конгрессом резолюции о геноциде армян с самого начала было обречено на провал. Вашингтон не мог принять документ, "оскорбляющий" честь своего верного союзника. 7 августа 1987 г. Палата представителей Конгресса большинством голосов (201 против 189) отклонила представленную резолюцию.

Таким образом, в течение последних лет в западных странах значительно возрос интерес к проблеме геноцида армян. Активизировалась деятельность армянской диаспоры и прогрессивных общественно-политических сил Запада по изучению и освещению трагедии армянского народа. Одновременно усилилась и достигла беспрецедентных масштабов инспирированная правящими кругами Турции пропагандистская кампания, направленная на фальсификацию исторической правды.





Геноцид оставил глубокий след в памяти армянского народа, стал частью духовной жизни каждого армянина. Совершенное в Сумгаите преступление против армянского населения, явившееся ответом на справедливые требования армян Арцаха о воссоединении с Арменией, воскресило в народной памяти страшные картины прошлого и сделало еще более настоятельной необходимость осуждения политики геноцида в отношении этнических групп и целых народов независимо от времени и места его осуществления. Выражением справедливых требований и чувств армянского народа явился закон Армянской ССР от 22 ноября 1988 г. "Об осуждении геноцида армян 1915 года в Османской Турции". Верховный Совет Армянской ССР постановил: Осуждая геноцид армян 1915 года в Османской Турции, как тягчайшее преступление против человечества, объявить 24 апреля Днем памяти жертв геноцида армян".

# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

## ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ*

Յամահեղինակ՝ Գառնիկ Ասատրյան

«Արևմտյան Հայաստան»... Այս անվանումը յուրաքանչյուր հայի հոգում՝ հայրենաբնակ թե սփյուռքահայ, ծնում է հայությունից խլված զուրկ, կորսված հայրենիքի համարյա միանշանակ պատկեր: Այդ պատկերը, սակայն, միայն առաջին հայացքից է համապատասխանում իրականությանը: Քչերին է հայտնի, որ բացի քարակերտ վկաներից՝ պատմական հուշարձաններից, հայերի՝ այս աշխարհի հնամենի բնակիչների աներկբայելի «հետքը» պարզորոշ երևում է նաև երկրի ներկայիս բնակիչների՝ քրդերի, թուրքերի, զազաների լեզուներում, կենցաղում, հոգևոր և նյութական մշակույթի տարբեր ոլորտներում, էլ չասենք, որ Արևմտյան Հայաստանի քրդերի, թուրքերի և զազաների (Դերսիմի՝ Բարձր Հայքի հյուսիսարևմտյան մասի բնակիչների) մի մասի երակներում հայկական արյուն է հոսում: Հայկական դրոշմը պարզորոշ դիտելի է ներկայիս Արևելյան Թուրքիայի ամբողջ տարածքում: Բացի հսկայական թիվ կազմող բառային հայկաբանություններից, հայկականին չափազանց մոտ է այս շրջանում ապրող քրդերի և զազաների բարբառների հնչյունական համակարգը՝ ցայտուն ապացույց նրանց լեզուներում հայկական ենթաշերտի (սուբստրատի) առկայության: Արևելյան թուրքական բարբառների բառապաշարը նույնպես զգալիորեն հագեցած է հայկական փոխառություններով:

* *Գրական թերթ*, 1989, 20 ապրիլի; *Փյունիկ*, 1990, 30 հոկտեմբերի:





Բայց մենք ունենք նաև նման «ավանդի» ուղղակի (կենդանի) վկայություններ: Բուն Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի կենտրոնական շրջաններում գոյություն ունեն հայկական առանձին կղզյակներ: Թուրքականության քաղաքականության հետևանքով հայերը ժամանակի ընթացքում ստիպված են եղել մասամբ մահմեդականություն ընդունել, ապաստանել քրդական միջավայրում: Արտաքնապես մահմեդականացած՝ նրանք, այդուհանդերձ, որոշ չափով պահպանել են իրենց ազգային ինքնագիտակցությունը, թաքուն գործածում են իրենց լեզուն, մի քանի ծեսեր և աղոթքներ: Նման հայերի քանակի և տեղայնացման պարզումը կապված է տարբեր բնույթի դժվարությունների հետ: Երկրաբնակ ծպտյալ կամ որոշ չափով հայտնի հայ բնակչությունը, ցավոք, աստիճանաբար կորցնում է իր ազգային պատկանելիությունը՝ ձուլվելով էթնիկական գերակշիռ միավորների կազմում: Նիդեռլանդցի արևելագետ Մարտին Բրույնեսենը, օրինակ, գրել է. «1975-76 թթ. ես որոշ ժամանակ անցկացրի Բիթլիսի նահանգի զազայաբնակ մի գյուղում: Գյուղի բնակիչները թեև համարվում են զազաներ, սակայն իրենց հայերենախառն բարբառով և մարդաբանական տիպով ամբողջովին տարբերվում են այլ զազաներից և, անկասկած, նախկինում եղել են հայեր» (անձնական նամակ Գ.Ասատրյանին, 20.11.1984 թ.):

Թուրքիայի տարածքում պահպանված հայերի թվին կարելի է դասել նաև, այսպես կոչված, համշենցիներին՝ մահմեդականություն ընդունած համշենահայերին, որոնք լիովին պահպանել են իրենց բարբառը և սովորությունները: Նրանք ապրում են մեկուսացած և խուսափում են թուրքերի հետ խառն ամուսնություններից:

Վերջին շրջանում Արևմուտքի առաջադեմ հասարակայնությունը, գիտական միտքը մտահոգություն են անում այն փաստը, որ Թուրքիայում հայերը շարունակում են ենթարկվել բազմաթիվ ճնշումների՝ նրանց կրոնական ակտիվությունը, մանավանդ գավառներում, գտնվում է մշտական սպառնալիքի տակ, կրթություն ստանալու նրանց հնարավորությունները խիստ սահմանափակ են: 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանի ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» հայտնի բանաձևում պահանջվում է, «որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և

կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք...» Եվրախորհրդարանը կոչ է անում Թուրքիային «անշեղորեն իրագործել իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ դա պարտադրում են նրան 1923 թ. Լոզանի դաշնագրի 37-45-րդ հոդվածները...»:

Այս առումով ինչպես Խորհրդային Հայաստանի համապատասխան մարմինները, այնպես էլ սփյուռքահայությունը, մեծ անելիքներ ունեն: Մենք բարոյական իրավունք չունենք լռելու, բարձրաձայն չխոսելու Թուրքիայում բնակվող մեր հայրենակիցների ներկա վիճակի և մանավանդ ապագայի մասին: Երկրաբնակ ձուլված, կամ ձուլման եզրին կանգնած մեր հայրենակիցների գոյապահպանման համար մեծ դեր կարող են խաղալ Երևանից տրվող քրդերեն և թուրքերեն ռադիոհաղորդումները, որոնք մատչելի են Թուրքիայի ամբողջ տարածքի համար:

Ստորև ներկայացվող նամակի հեղինակը ուծացումից հրաշքով փրկված հայ մարդ է, որը սակայն, այժմ ապրում է օտարության մեջ: Նամակը ժամանակին ուղղված է եղել Հայաստանի արտաքին գործերի նախարար, անվանի պատմաբան Ջոն Կիրակոսյանին՝ վերջինիս աշխատություններից մի քանիսը ստանալու ակնկալիքով: Հեղինակի անձնավորության մասին մենք չենք խոսում, այն բավականաչափ արտացոլված է նամակում, որը գրված է գեղեցիկ ու պատկերավոր հայերենով:

ՀԽՍ Հանրապետության
Արտաքին Գործերի Նախարար
Ջոն Կիրակոսյանին
Նոյեմբերի 5, 1982
Երևան

Հարգելի ընկեր Կիրակոսյան,

Վստահ լինելով, որ մեր հայրենիքի պետական ապարատի բյուրոկրատիան մեծ չափով տարբերվում է ինձ ծանոթ Եվրոպայի բուրժուական պետությունների դանդաղագործ բյուրոկրատիայից, հավատում եմ, թե այս նամակս Ձեր ձեռքն անցնելու է:





Վստահություն և հավատք. ահա երկու գործոն, որոնք քաջալերում են ինձ ձեզ՝ հայրենիքիս Արտաքին Գործերի Մինիստրին, ուղղել այս նամակս:

Ուզում եմ նախապես իմ խորին շնորհակալություններս հայտնել Ձեզ, Ձեզ անհայտ Ձեր այն բարիքի համար, որը իմաստավորել է իմ կյանքս, ինձ փրկելով կորուստից:

Թե ինչպե՞ս: Այս հարցին կատարյալ պատասխան տալ չեմ կարող, առանց անձիս մասին համառոտ մի տեղեկություն տալու: Ուրեմն.

Ծնվել եմ 1955 թվին, Սղերտի քրդաբնակ Շիրնաք գավառում, որտեղ ապրում էին մոտավորապես 50 հայ ընտանիք, որոնց նախկին բնակավայրերի մասին պակասում են ամեն տեսակի փաստեր:

Ասվում էր, թե մեր նախահայրերը «առաջին հայկական ֆերմանին» (1894-1895-ի համիդյան ջարդերին) Հայաստանից տեղահանվելով եկել, Քրդստան էին հաստատվել:

Պապս զենք էր շինում և ահա իր այդ թանկ արհեստի շնորհիվ էլ տեղային աղաների-ցեղապետների կողմից պահպանվել էր ու, շիտակն ասած, լավ էլ անուն էր թողել այդ շրջավայրում:

Մեծ Եղեռնի ահռելի տարիներին Սեփո (Ստեփան) պապս, իր ընտանիքը թողնելով վստահելի մի քուրդ բարեկամի մոտ, մի քանի հայ բարեկամների հետ եկել-հասել էր ռուսաց զորքերին և նրանց օգնությամբ էլ հասել հայրենիք: Մի ժամանակ հետո վերադարձել են նրանք՝ առնել տանելու համար իրենց հարազատները և ապա մեզ անհայտ մի պատճառով զամվել մնացել են հոն:

Մինչ այդ Շիրնաք գավառի մնացած հայ բնակչությանը պարտադրվել է կրոնափոխ լինել՝ մահմեդական դառնալ: Թեև գավառիս հայության մեծ մասը դրանից 2 տարի հետո դարձել է իր նախկին Քրիստոնյա կրոնին, սակայն տարիների ընթացքին մոռացել է իր հայության հետ առնչություն ունեցող ամեն ինչ: Այլ խոսքով՝ մի տեսակ քրիստոնյա քրդեր էինք դարձել: Ասվում էր, թե Շիրնաքում եղել է մի հայկական վարժարան, որը միայն 3 տարի գործելուց հետո 1915-ին փակվել է:

Սեփո պապիս տեսնելու բախտն չեմ ունեցել, բայց լավ եմ հիշում պապիս ժամանակակից հայ ալեհերների գաղտագողի զրույցները, որոնց ընթացքում համախակիորեն խոսվում էր տառապյալ հայ ժողովրդի իսկական բարեկամ, իրենց տերմինով «ուռուսի» մասին: Հիշյալ սերնդից շատերը մահացան՝ աչքերը հառած հյուսիսին՝ միշտ հավատալով և հուսալով, թե ազատարար ուռուսը,

Թումանյանի խոսքով՝ հյուսիսի արծիվը, ոչ թե կանուխ, բայց անպայման գալու էր նրանց ազատություն բերելու: Երանի նրանց, որ հավատով մեռան:

Նրանց աչքերի գոցվելով՝ մեկընդմիշտ փակվել է հայության տունը Շիրնաքում: Մոռացության են ենթարկվել հայոց լեզուն և սովորույթները, փոխվել են հայ անունները: Թուրքիայում ազգային ճնշումն անհամեմատելի չափերին հասնելով, բառիս բուն իմաստով, ստրկացվել էին մեր հայերը: Նրանք աղաների համար գործ էին վարում, պահանջված ժամին փող (դրամ) էին հրամցնում, աղաների մեջլիսներում բաչ̣քե էին պատրաստում, հյուրերին բաժանում ևն, ևն.:

Այս դժբախտությունը ուներ սակայն մի բարեբախտություն, որն էր՝ տեղային մահմեդական բնակչությունը հայերին անվանում էին ֆլս (քրիստոնյա) կամ երմենի, նույնիսկ երբ վերջինները «Զեմզեմի» ջրով լվացված և նրանից 10 անգամ ավելի մաքուր մահմեդական դառնային: Տեղային հասարակության այս դիրքավորումը մեր կիսահայ գոյատևման գլխավոր պատճառներից մին էր կազմում:

Այսպես էր ընթանում կյանքը մեր գավառի հայության, մինչև 1963 թվին, երբ հորեղբայրս՝ Յուսուֆը, Պոլիս մեկնելով, ուղին հարթեց մեր երիտասարդ սերնդի Իսթամբուլ տեղափոխման: Ստորագրյալս 1966-ին մեկնեցա Պոլիս, որտեղ տեղավորվեցա Սկյուտարի Ս.Խ.Դպրեվանքի Ա. դասարանում ու հետագա 6 տարիներին հետևեցա նրա ընթացքին:

Այդ 6 երկար տարիներին մեզ չտրվեց կամ չստացանք անհրաժեշտ մինիմում ազգային սնունդ, որուն իբրև ուղղակի հետևանք՝ պետք է խոստովանել, թե մենք՝ տարգլուխ ուսանողներս, զանազան առարկաներին հայերեն դասավանդության հաճախ դեմ էինք լինում, ելնելով այն բանից, թե մեր հետագա բարձրագույն ուսումը լինելու էր թրքերեն և ոչ հայերեն: Այսպես յուղ էինք գցում հայկական ազգային վարժարանները փակելու պատճառ որոնող թրքական պետության հացին:

Մեր դպրոցը Սկյուտարում ծանոթ էր իբրև վանականների ուսումնարան, իսկ պոլսահայ Կ.Արմանի նման «ազգային ջոջերը այն անվանում էին »անիշխանականների« (հեղափոխականների) բույն: Շատերս ավարտում էինք Դպրեվանքի շրջանը իբրև հումանիստ կամ ինտերնացիոնալիստ՝ երբեք չմտաբերելով, թե մենք էլ պատկանում էինք այդ ինտերնացիոնալի մաս կազմող (իրավահավասար) մի նացիոնի՝ հայ ազգին: Այս թերի ըմբռնումի հետևանքով հայերեն խոսողներին ծաղրողներ անգամ անպակաս էին: 21 տարիքին ավարտելով Իս-





թամբուլի համալսարանի ղեկավարչության ֆակուլտետը (Business administration), 1976-ին մեկնեցա Լոնդոն, ապա հաստատվեցա Նիդեռլանդիայում:

Հոս է, որ ձեռքս պիտի անցներ Ձեր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատությունը, որը լույս պիտի բռներ ինքնաճանաչմանս:

Ձեր այս աշխատությունը ինձ մղեց հետազոտություններ կատարելու, օգնեց վերոգրյալ դառն անցյալս վերհիշելու, մի տեսակ պարտադրեց հայրենիք գալու, որ պիտի ծանոթանայի Ծիծեռնակաբերդին ու Սարդարապատին, Մատենադարանին, Գ.եղարդին ու մեծ Լենինի անունը հավերժացնող հրապարակին և ալե-
լին՝ իր հացը քարից հանող իսկական աշխատավոր ժողովրդին:

Երևանում շատ եմ աշխատել մի քանի պատմագրքեր ճարելու և դժբախտաբար այդ ինձ չհաջողվեց: Սուտ չի լինի, եթե ասեմ՝ եղել եմ Երևանի համարյա բոլոր գրախանութներում և հարցրել «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թրքական բռնապետության դեմ» – Մ.Ներսիսյան, «Ա. համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» – Ջ.Կիրակոսյան, «Կառլ Լիբկնեխտը և Ռ.Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին» - Գ.Ղարիբջանյան աշխատություններ և Խորհրդային Հայաստանի Հանրագիտարանի հրատարակված հատոր-
ների համար ու միշտ ժխտական պատասխան եմ ստացել:
ների համար ու միշտ ժխտական պատասխան եմ ստացել:

Վերջերս բախտ ունեցա մի տեղ կարդալու Ձեր նոր լույս տեսած երկհատոր «Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև» աշխատության մասին:

Եվ հույս ունեմ, թե աներեսություն չեք համարի, եթե Ձեզ իբրև վերջին հույս դիմելու համարձակությունը ունենամ, որպեսզի կամ ուղարկեք գոնե Ձեր գրչին պատկանող գրքերը և կամ մի հասցե տաք, ուրկից ինձ պիտի հաջողվի հայթայթել հիշյալ գրականությունը:

Հուսով եմ, որ ինձ պատասխանելու ժամանակ կունենաք, ու մաղթում եմ Ձեզ նորանոր հաջողություններ:

Հարգանոք՝

**ՆՈՒԲԱՐ ՉԱՔՄԱՔՋՅԱՆ**

# ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿ

1. Антиармянская политика Абдул-Гамида в оценке западных авторов (середина 90-х гг. XIX в.). - *Երիտասարդ գիտաշխատող*, 1979, հ.1, էջ 3-12:

2. Из истории русско-английских отношений по Армянскому вопросу (середина 90-х гг. XIX в.). - *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1979, հ.3, էջ 87-100:

3. Հայկական հարցը ԱՄՆ ամսագրերի էջերում /19-րդ դարի 90-ական թթ. կեսեր/: - Հայաստանի Գիտությունների ակադեմիայի (ԳԱ) *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1980, Հ.3, էջ 37-48; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1980, 18 հոկտեմբերի, 25 հոկտեմբերի, 1 նոյեմբերի:

4. Армянский вопрос на страницах журналов Великобритании (середина 90-х гг. XIX в.). - Հայաստանի ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն /ՀԳԳԻԿ/, 1980, 37 էջ:

5. Ближневосточный кризис 1895-1897 гг. и США. - Երիտասարդ արևելագետների 7-րդ գիտական նստաշրջան, 1981, 21-23 մայիսի, Երևան, 1981, էջ 30-32:

6. Английская политика в отношении Западной Армении и общественное мнение Великобритании (90-е гг. XIX в.). - Թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատ, Երևան, 1981, 26 էջ:

7. Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника "*Спектейтор*" (90-е гг. XIX в.). - Հայաստանի ԳԱ ՀԳԳԻԿ, 1982, 24 էջ; *Կանչ* (Բեյրութ), 1982, 19 դեկտեմբերի, 1983, 1 հունվարի; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1982, 18, 25 դեկտեմբերի, 1983, 1 հունվարի:

8. Հայկական հարցի [անգլերեն] գրականության մատենագիտություն (1890-1900): - Հայաստանի ԳԱ ՀԳԳԻԿ, 1983, Հ. 9, 31 էջ:

9. Ближневосточный кризис 1895-1897 гг., Армения и политика США. — Вопросы востоковедения, Ереван: Изд-во Ереванского университета, 1983, Выпуск 1-2, с. 212-221.

10. Հայկական հարցի պատմությունից: - Հայաստանի ԳԱ ՀԳԳԻԿ, 1984, հ. 4, 24 էջ:

11. Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը Հայկական հարցում (1895-1897): - Հայաստանի ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1984, հ. 1, էջ 28-31; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1984, 1 սեպտեմբերի:

12. Հայկական հարցը: 1878-1983 (Ռուսերեն լեզվով գրականության մատենագիտություն): - Հայաստանի ԳԱ ՀԳԳԻԿ, 1985, հ. 1, 64 էջ:





13. Геноцид армян 1915 г. в зарубежной литературе (1975-1985). — Институт научной информации по общественным наукам Академии наук СССР, Москва, 1985, 61 с.

14. Սուլթերի: - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, էջ 492-493:

15. Арменоведческая информация и организация контрпропаганды как главное направление деятельности ЦНИОН АН Армении. — Материалы 4-го всесоюзного семинара руководящих работников республиканских центров научной информации по общественным наукам (Киев, 1984, 5-7 декабря), Москва, 1986, с. 81-88 (համահեղինակ՝ Սվետլանա Սարգսյան):

16. Սուլթան Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականությունը և 1894-1896 թթ. հայկական ջարդերը: - *Լրաբեր* (Լոս Անջելես), 1986, 19 ապրիլի; *Ազգային մշակույթ* (Բեյրութ), 1986, 16, 23 մարտի:

17. Трагедия армян Османской империи в 1915-1916 гг. в освещении буржуазной историографии. — *Вопросы истории*, 1986, No. 5, с. 147-154; Օսմանյան կայսրության հայերի 1915-1916 թթ. ողբերգությունը բուրժուական պատմագրության լույսի ներքո. - *Սովետական Հայաստան* (ամսագիր), 1986, հ. 11, էջ 27-30; *Կոչնակ*, 1986, հ. 11, էջ 20-24; *Արև* (Կահիրե), 1987, 10-16 հուլիսի (համահեղինակներ՝ Ջոն Կիրակոսյան, Անդրանիկ Միհրանյան):

18. Р.А.Сафрастян. Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70-е гг. XIX в.). – Հայաստանի ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1986, Հ. 7, էջ 88-91; Թուրքագիտական ուշագրավ ուսումնասիրություն (Ա.Սաֆրաստյան: Օսմանիզմի դոկտրինան Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում (19-րդ դ. 50-70-ական թթ.): - *Հայրենիքի ձայն*, 1986, 19 նոյեմբերի; *Լրաբեր* (Լոս Անջելես), 1987, 10 հունվարի:

19. Անգլիան և Հայկական հարցը (Ա.Նասիբյանի «Բրիտանիան և Հայկական հարցը 1915-1923» գրքի մասին): - *Սովետական Հայաստան* (ամսագիր), 1987, հ. 5, էջ 28-30; *Կոչնակ*, 1987, հ. 5, էջ 14-17, 22:

20. Հայկական ցեղասպանության հարցը «թուրքական ուղերձի կեղծ հայելու մեջ»: - *Հայրենիքի ձայն*, 1987, 7 հոկտեմբերի; *Ազգային մշակույթ* (Բեյրութ), 1987, 25-27 հոկտեմբերի; *Երևան* (Սոֆիա), 1987, 16, 17 հոկտեմբերի; *Արարատ* (Բեյրութ), 1987, 25 հոկտեմբերի, 1 նոյեմբերի; *Հուսաբեր*? — *Հրայր* (Վիեննա), 1987, Հ. 5-8, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 17-20, 24 (համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան):

21. Հայկական հարցի պատմությունից: - Հայաստանի ԳԱ ՀԳԳԻԿ, 1987, հ. 8:

22. Англо-турецкие отношения и вопрос о реформах в Западной Армении (1895). – *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1987, 3, էջ 56-64.

23. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը: Ազգային-ազատագրական շարժումներ: - Հայկական սովետական հանրագիտարան, հ. «Սովետական Հայաստան», 1987, էջ 146-149:

24. О некоторых аспектах освещения проблемы геноцида армян на Западе. – Հայաստանի ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1988, հ. 5, էջ 3-12 (համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան):

25. О решении Европейского Парламента по вопросу Геноцида армян. – *Բանբեր Հայաստանի արխիվների*, 1988, 2, էջ 54-58 (համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան).

26. Լեռնային Ղարաբաղի հարցում Թուրքիայի զանգվածային լրատվական միջոցների դիրքի մասին: - *Արարատ* (Բեյրութ), 1989, 23,24 հունվարի; *Զարթոնք* (Բեյրութ), 1989, 20, 21 հունվարի; *Ասպարեզ* (Բոստոն), 1989, 28 հունվարի; *Ալիք* (Թեհրան), 1989, 23, 24 ապրիլի (համահեղինակներ՝ Լևոն Էյրամջյանց, Ռուբեն Սաֆրաստյան):

27. Նամակ Թուրքիայից: - *Գրական թերթ*, 1989, 20 ապրիլի; *Փյունիկ*, 1990, 30 հոկտեմբերի (համահեղինակ՝ Գառնիկ Ասատրյան):

28. Հանցագործությունը մոռացված չէ: - *Սովետական Ղարաբաղ*, 1989, 24 ապրիլի (համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան); Преступление не забыто. — *Советский Карабах*, 1989, 24 апреля (соавтор — Рубен Сафрастян).

29. К вопросу о константинопольской резне 1896 года. — *Литературная Армения*, 1989, No. 4, с. 98-103.

30. Փաստարկված ուսումնասիրություն (Մ.Քոչարի «Հայ-թուրքական հասարակական-քաղաքական հարաբերությունները և Հայկական հարցը 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին» գրքի մասին): - *Լենինյան ուղիով*, 1989, հ. 5, էջ 92-96:

31. Англо-русские переговоры 1896 г. и Армянский вопрос. – Հայաստանի ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1989, հ. 5, էջ 66-72:

32. НКАО в зеркале турецкой пропаганды. — *Коммунист*, 1989, 8 июля (համահեղինակներ՝ Լևոն Էյրամջյանց, Ռուբեն Սաֆրաստյան).

33. Вместо послесловия. — Киракосян Дж., Младотурки перед судом истории, Ереван, 1989, с. 479-487.

34. Геноцид армян и османские архивы. — *Коммунист*, 1990, 18 апреля (համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան).







35. Չլուսաբանված էջեր (Ավետիս Նազարբեկ: Ջեյրուն): - *Երեկոյան Երևան*, 1990, 14 մայիսի; *Հնչակ Հայաստանի*, 1990, 30 հոկտեմբերի:

36. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պատմությունից: - *Պիոներ կանչ*, 1990, 25, 27 ապրիլի (համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան):

37. Великобритания и Армянский вопрос (90-е гг. 19-го в.). Ереван, 1990, 240 с.

38. Հարցազրույց պատմաբան Արման Կիրակոսյանի հետ: - *Էրեբունի* (Լոնդոն), 1990, 2 հունիսի:

39. Հայ-ամերիկյան պատմական կապերը: - Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, 1990, էջ 156:

40. Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին: - *Հայրենիքի ձայն*, 1991, 16 հոկտեմբերի; Հայաստանի ԳԱ *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1991, հ. 4:

41. Հայկական հարցը Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի պատմագրության լուսաբանմամբ: - *Ազգ*, 1991, 15 հունիսի:

42. Ժողովուրդների մշտական ատյանը հայերի ցեղասպանության մասին: - *Ակունք*, 1991, հ. 5-6, էջ 8-11:

43. И все-таки он верил. Речь А.К.Дживелегова в Совете республики от 20-го октября 1917 года. — *Эпоха*, 1992, 20 февраля.

44. Пасквиль адвоката де Мальвиля. — *Литературная Армения*, 1991, No. 10, с. 102-114 (համահեղինակ՝ Ռուբեն Սահակյան).

Армянский вопрос. *Энциклопедия*, Ереван: Главная редакция Армянской энциклопедии, 1991. 348 с.;

Հայկական հարց: Հանրագիտարան, Երևան. Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1996, 527 էջ:


**Статьи:**

**Հոդվածներ.**


45. Аббот Лиман, с. 7; Աբբոտ Լիման, էջ 7:

46. Англо-германские переговоры о разделе Османской империи 1895, с. 26; Անգլո-գերմանական բանակցությունները Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ, 1895, էջ 35:

47. Англо-армянские ассоциации, с. 26; Անգլո-հայկական միությունները, էջ 35-36:

48. Англо-русское соглашение 1878, с. 26; Անգլո-ռուսական համաձայնագիր, 1878, էջ 36:

49. Первая мировая война и Армения, с. 259-260; Առաջին համաշխարհային պատերազմը և Հայաստանը, էջ 41-44:

50. Австро-Венгрия и Армянский вопрос, с. 8-9 (соавтор – А.Оганджанян); Ավստրո-Հունգարիան և Հայկական հարցը, էջ 46-47 (համահեղինակ՝ Ա.Օհանջանյան):

51. Аргайльский Джордж, с. 30-31; Արգայլ Ջորջ, էջ 54:

52. Бальморальские переговоры 1896, с. 73; Բալմորալի բանակցությունները, 1896, էջ 74:

53. Бальфур Артур, с. 73; Բալֆուր Արթուր, էջ 74-75:

54. Бакстон Гарольд, с. 72; Բաքստոն Հարոլդ, էջ 79:

55. Бакстон, Ноел, с. 72; Բաքստոն Նոել, էջ 79:

56. Бент Джеймс, с. 79; Բենտ Ջեյմս, էջ 80:

57. Бонар Лоу, с. 83-83; Բոնար Լոու, էջ 88:

58. Британо-армянский комитет, с. 87; Բրիտանա-հայկական կոմիտե, էջ 97:

59. Габриелян Смбат, с. 106; Գաբրիելյան Սմբատ, էջ 93:

60. Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջան, էջ 100:

61. Гладстон Уильям, с. 147-148; Գլադստոն Ուիլյամ, էջ 103:

62. Годкин Эдвин, с. 149; Գոդկին Էդվին, էջ 105:

63. Горчаков Александр, с. 150-151; Գորչակով Ալեքսանդր, էջ 107:

64. Грин Фредерик, с. 154; Գրին Ֆրեդերիկ, էջ 107-108:

65. Дизраэли Бенджамин, с. 167; Դիզրայելի Բենջամին, էջ 114-115:

66. Диллон Эмиль, с. 167; Դիլոն Էմիլ, էջ 115:

67. Девисон Ренделл, с. 159; Դևիսոն Ռենդել, էջ 113:

68. Резолюция Всемирного совета церквей по вопросу геноцида армян, с. 105; Եկեղեցիների համաշխարհային խորհրդի որոշումը հայերի ցեղասպանության մասին, էջ 118:

69. Резолюция Европейского парламента от 18 июня 1987 г. "О политическом решении Армянского вопроса", с. 169-170; Եվրոպական խորհրդարանի բանաձևը «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին», 1987 թ. հունիսի 18, էջ 119-120:





70. Константинопольская конференция послов европейских держав, 1896-1897, с. 209-210; Եվրոպական տերությունների դեսպանների կոնֆերանս, 1896-1897, էջ 121:

71. Постоянный трибунал народов, решение сессии от 13-16 апреля 1984 г. о геноциде армян, с. 267-268; Ժողովուրդների մշտական ատյանի բանաձև, էջ 147-148:

72. Италия и Армянский вопрос, с. 188-189; Իտալիան և Հայկական հարցը, էջ 152-153 /համահեղինակ՝ Ս.Մանուկյան/:

73. Лэнг Дэвид, с. 217-218; Լանգ Դեյվիդ, էջ 154:

74. Кавендиш Фредерик, с. 190; Կավենդիշ Ֆրեդերիկ, էջ 176:

75. Гамлин Сайрус, с. 107; Համլին Սայրուս, էջ 198:

76. "Армения в документах международной дипломатии и советской внешней политики" (1828-1923), с. 34; «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1973)», էջ 209:

77. "Друзья Армении", с. 169; «Հայաստանի բարեկամները», էջ 211-212:

78. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году", с. 266-267; «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը 1895 թ.», էջ 218-219:

79. Армянский вопрос, с. 38-43; Հայկական հարց, էջ 232-238:

80. Английская историография, с. 50-51; Անգլիական պատմագրությունը, էջ 266-268:

81. Историография США, с. 51-52; ԱՄՆ-ի պատմագրությունը, էջ 268-270:

82. Гаррис Джеймс, с. 108; Հարրիս Ջեյմս, էջ 283:

83. Гивернат Генри, с. 147; Հիվերնատ Հենրի, էջ 284:

84. Макколь Малькольм, с. 219; Մակկոլ Մալքոլմ, էջ 299:

85. Великобритания и Армянский вопрос, с. 95-99; Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը, էջ 300-303:

86. Моргентау Генри, с. 230; Մորգենթաու, Հենրի, էջ 341:

87. Насибян Акаби, с. 238-239; Նասիբյան Ակաբի, էջ 354:

88. Нелидов Александр, с. 244-245; Նելիդով Ալեքսանդր, էջ 354:

89. Дживелегов Алексей, с. 162-163; Ջիվելեգով Ալեքսեյ, էջ 382:

90. Рамсей Уильям, с. 272; Ռամսեյ Ուիլյամ, էջ 383:

91. Рассел Джордж, с. 272; Ռասսել Ջորջ, էջ 384:

92. Розбери Арчибальд, с. 277; Ռոզբերի Արչիբալդ, էջ 385-386:

93. Ротштейн Федор, с. 283; Ռոտշտեյն Ֆյոդոր, էջ 387:

94. Сайкс-Пико соглашение 1916, с. 286-287; Սայքս-Պիկոյի համաձայնագիր, 1916, էջ 397-398:

95. Сесил Роберт, с. 300-301; Սեսիլ Ռոբերտ, էջ 409:

96. Стивенсон Фрэнсис, с. 307; Սթիվենսոն Ֆրենսիս, էջ 414:

97. Солсбери Роберт, с. 305; Սոլսբերի Ռոբերտ, էջ 416-417:

98. Уильямс Аневрин, с. 321; Ուիլյամ Անևրին, էջ 450:

99. Уокер Кристофер, с. 321; Ուոքեր Քրիստոֆեր, էջ 450:

100. Пирс Эдвин, с. 262; Փիրս Էդվին, էջ 454:

101. Карри Филипп, с. 192-193; Քարրի Ֆիլիպ, էջ 456-457:

102. Шувалов Петр, с. 343; Շուվալով Պյոտր, էջ 368:

103. Epilogue. – John S. Kirakossian, The Armenian Genocide. The Young Turks before the Judgment of History, Madison, Connecticut: Sphinx Press, Inc., 1992, pp. 235-238.

104. Նախաբան: - Առնոլդ Թոյնբի: Հայկական սարսափները: Ազգի սպանությունը: Արևնը, 1995, էջ 7-12 /համառոտ/:

105. Բրիտանական դիվանագիտությունը և հայկական բարենորոգումների խնդիրը 1912-1914 թթ. – Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու, Երևանի պետական համալսարան, 1999, էջ 8-11:

106. Արևմտահայության խնդիրը և բրիտանական դիվանագիտությունը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.): - Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցելու ատենախոսության սեղմագիր, Երևան, 1999, էջ 37:

107. Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.): Երևան, 1999, 509 էջ:

108. British Diplomacy and the Armenian Question, from the 1830's to 1914. Princeton and London: Gomidas Institute Books, 2003, 365 p.

109. Հունաստան: – Հայ Սփյուռք. Հանրագիտարան: Երևան. Հայկական Հանրագիտարանի Գլխավոր Խմբագրություն, 2003, էջ 369-378:

110. Introduction: Armenian Studies and Its Future. – Rethinking Armenian Studies, A Special Issue of the Journal of Armenian Studies, Vol. VII, No. 2 (2003), pp. 1-6.







111. The Armenian Massacres 1894-1896. US Media Testimony. Detroit: Wayne State University Press, 2004, 317 p.

112. «Մարտադաշտի հրեշտակի» հայկական առաքելությունը: - *Ազգ*, 2006, 17 փետրվարի; *Ասպարեզ* (Լոս Անջելես), 2006, 4 մարտի:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ........ 3

**ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ ........ 5

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ** ........ 23

1. ՈՒՇԱԳՐԱՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ........ 23
2. 1877-78 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ........ 27
3. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ........ 31
4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՄՆ-Ի ԱՄՍԱԳՐԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ (19-րդ դարի 90-ական թվականների կեսեր) ........ 37
5. ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1894-96 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ (ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՈՒԼԹԱՆԻ ՄՏՔԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՋԻՆԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ) ........ 53
6. ՉԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԷՋԵՐ. ԶԵՅԹՈՒՆ ........ 61

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ** ........ 81

1. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ........ 81
2. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻ 1915-16 ԹԹ. ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ (Համահեղինակներ՝ Ջոն Կիրակոսյան, Անդրանիկ Միհրանյան) ........ 86
3. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆ ........ 103
4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ԱՄՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ ........ 110

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

**ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ** ........ 120

1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ........ 120
2. ԱՆԳԼԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ........ 130
3. БЛИЖНЕВОСТОЧНЫЙ КРИЗИС 1895-97 ГГ., АРМЕНИЯ И ПОЛИТИКА США ........ 142
3. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (Համահեղինակ՝ Արտյոմ Օհանջանյան) ........ 153
4. ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ (1895-97) ........ 158
5. ԻՏԱԼԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (Համահեղինակ՝ Սեդրակ Մանուկյան) ........ 163
6. И ВСЕ-ТАКИ ОН ВЕРИЛ... РЕЧЬ А.К.ДЖИВЕЛЕГОВА В СОВЕТЕ РЕСПУБЛИКИ 20-го ОКТЯБРЯ 1917 Г. ........ 166

**ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ**

**ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ** ........ 175

1. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ........ 175
2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԸ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ» (Համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան) ........ 183
3. ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԻ» ԾՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ (Համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան) ........ 188
4. ГЕНОЦИД АРМЯН И ОСМАНСКИЕ АРХИВЫ (Соавтор — Рубен Сафрастян) ........ 197
5. ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՌԱՑՎԱԾ ՉԷ (Համահեղինակ՝ Ռուբեն Սաֆրաստյան) ........ 213
6. ПАСКВИЛЬ АДВОКАТА ДЕ МАЛЬВИЛЯ (Соавтор — Рубен Саакян) ........ 220

7. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ
(Համահեղինակներ՝ Լևոն Էյրամջյանց, Ռուբեն Սաֆրաստյան) . . . . . . . 227

8. ЗАКЛЮЧЕНИЕ К КНИГЕ ДЖОНА КИРАКОСЯНА "МЛАДОТУРКИ ПЕРЕД СУДОМ ИСТОРИИ" . . . . . . . . . . . . . . 236

**ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ**
ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ
(Համահեղինակ՝ Գառնիկ Ասատրյան). . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 246

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿ. . . . . . . . . . . . 252

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ԱԿՆԱՐԿՆԵՐ
## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ԵՂԵՌՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Պատվեր՝ 514: Տպաքանակ՝ 500:
Չափսը՝ 60x84/16: 16.5 տպ. մամուլ:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում

9(47.925)
Կ-53

Արման Ջոնի Կիրակոսյանը [illegible] սեպտեմբերի 10-ին, Երևանում: [illegible]տել է Խաչատուր Աբովյանի անվ[illegible] պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և աշխարհագրության ֆակուլտետը, իսկ 1980 թ.-ին՝ նույն ինստիտուտի ասպիրանտուրան: 1981 թ. պաշտպանել է իր թեկնածուական թեզը:

1980-86 թթ. աշխատել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում որպես «Հայագիտությունը արտասահմանում» բաժնի վարիչ:

1986-90 թթ. եղել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի իրահանգիչ, արտաքին կապերի գծով խորհրդատու:

Պատասխանատու դիվանագիտական աշխատանքի անցնելուց առաջ, 1990-91 թթ., կրկին աշխատել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի համակարգում՝ Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի ուսումնասիրման բաժնում որպես գիտական թեմայի ղեկավար:

1991-94 թթ. եղել է ՀՀ Արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ, իսկ 1992 թ. հոկտեմբերից 1993 թ. մարտը՝ արտգործնախարարի պաշտոնակատար:

1994-99 թթ. եղել է Հունաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, կատարել է Աթենքում հավատարմագրված դեսպանների ավագի՝ դուայենի պարտականությունները: Միաժամանակ համատեղության կարգով հանդիսացել է ՀՀ դեսպանը Կիպրոսում, Սլովենիայում, Խորվաթիայում, Ալբանիայում և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունում:

1999-2005 թթ. վարել է ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը: 2001թ.-ից ՀՀ մշտական ներկայացուցիչն էր Ամերիկյան պետությունների կազմակերպությունում:

Պաշտպանելով 1999 թ. «Արևմտահայության խնդիրը և բրիտանական դիվանագիտությունը (1830-ական թթ.–1914 թ.)» թեզը, ստացել է պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Հայկական հարցի պատմությանն առնչվող 100-ից ավելի գրքերի և գիտական աշխատությունների հեղինակ է:

2005 թ. կրկին նշանակվել է ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնում: Ունի արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

Դասավանդում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ԵՊՀ խորհրդի անդամ է:

Ամուսնացած է, ունի մեկ որդի: